Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891·99
U-88

6 DEC 20

1865—1871

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

ՆՈՒԷՐ
«Մշակի» բաժանորդներին

ԹԻՖԼԻՍ
1904

891.99
Ա-88
01 JAN 2009
PA
69467

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

1865—1871

Հրատարակութիւն «Մշակ»-ի խմբագրութեան

ԹԻՖԼԻՍ
Տպարան Վրաց Հր. Ընկ. || Типог. Груз. Изд. Т-ва.
1904

Гос Библиотека Арм. ССР им. А. Мясникяна

22 2013
32005

Дозволено цензурою. Тифлисъ, 7 мая 1903 года.

3883-86

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գ ր ի գ ո ր Ա ր ծ ր ո ւ ն ի

(ուսանող ժամանակ)

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

—

Ներկայ հատորով սկիզբն ենք դնում Գրիգոր Արծրունու աշխատութիւնների հրատարակութեան։

Առաջին հատորի մէջ զետեղված են այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչև «Մշակ» լրագրի հրատարակութիւնը։ Այդ յօդուածները վերաբերում են 1865—1871 թուականների շրջանին և տպված են եղել մասամբ «Մեղու Հայաստանի» լրագրում, իսկ մասամբ «Հայկական Աշխարհ» ամսագրում։

Յօդուածների մի տեղ ժողովելը որոշ դժուարութիւնների հանդիպեց այն պատճառով, որ հին պարբերական թերթերի օրինակներ շատ քիչ են մնացել թէ Թիֆլիսի հասարակաց գրադարանում և թէ մասնաւոր անձանց մօտ։ Հարկաւոր եղաւ բոլոր յօդուածները արտագրել տալ և ապա այդ արտագրածը յանձնել տպագրութեան։ Թէև արտագրութիւնը կատարված է խնամքով, բայց գուցէ պատահեն սխալաթիւնէր, որովհետև սրբագրական համեմատութիւնը ըստ մեծի մասին արված է արտագրութիւնների հետ։

Ուղղագրութիւնը, կէտադրութիւնը և ոճական չեղումները թողված են նոյն գրութեան մէջ, ինչպէս եղել են առաջին տպագրութեան մէջ։ Եւ որովհետև նախկին խմբագրութիւնները ըստ երևոյթին բաւական անտարբեր են եղել վերաբերվելիս դէպի որոշ կանոնների պահպանութեան խնդիրը, ուստի մենք չենք տեսնում որոշ սիստեմ և օրէնք նոյն իսկ մի և նոյն թերթի զանազան յօդուածների մէջ։ Մենք թողինք եղածը անփոփոխ։

Հրատարակված յօդուածների մէջ կան կարևորները և աննշանները։ Մենք աշխատեցինք Գրիգոր Արծրունու գործունէութեան առաջին շրջանի բ ո լ ո ր գրուածները ներկայացնել ընթերցողին, աչքի առաջ ունենալով հետևեալ երկու հանգամանքը։ Ինչպէս յայտնի է՝ «Մշակ» լրագրի սկսվելուց յետոյ Արծրունու ամբողջ գրական գործունէութիւնը կենտրոնացաւ «Մշակի» մէջ և այդ գործունէութեան հետ ծանօթանալ ցանկացողները կարող են դիմել այդ լրագրի հին համարներին և այնտեղ գտնել ամեն տեսակ մանրամասնութիւններ։ Իսկ մինչև «Մշակի» հրատարակութիւնը՝ նրա արած աշխատութիւնները ցրված են հին թերթերի զանազան տարիների համարներում, որոնց հետ ծանօթանալը մեծ դժուարութիւններ է առաջ բերում նոյն իսկ ներկայումս, իսկ ապագայում կը դառնայ անհնարին։ Միւս կողմից մենք կարծում ենք, որ «Մշակի» հիմնադրի սկզբնական գրական գործունէութեան լիակատար ներ-

կայացնելը կունենայ այն նշանակութիւնը, որ աւելի որոշ գաղափար տուած կը լինենք այն նախապատրաստական տարրերի և այն տրամադրութիւնների հետ, որոնցով հանդէս եկաւ Գրիգոր Արծրունին՝ գլուխ կանգնելով մի հասարակական օրգանի, որին վիճակված էր այնքան կարևոր դեր կատարելու հայ գրականութեան ասպարէզում։

Այժմ, երբ երեսուն—քառասուն տարիների երկար մի շրջանով մենք հեռու ենք ներկայ հատորի յօդուածների ժամանակից, աչքի են ընկնում գրուածքների տեխնիկական թերութիւնները, բայց այժմ էլ երիտասարդ Արծրունու յօդուածները գրաւում են իրանց վրա ուշադրութիւն և նրանց մի մասը իր բովանդակութեամբ, իր որոշ ձևակերպութիւններով չէ կորցրել իր թարմութիւնը նոյն իսկ մեր ժամանակակից հասարակութեան համար։

Մի փոքրիկ ծանօթութիւն։ Պատահաբար «Գերմանիա և Ֆրանսիա» վերնագրով յօդուածներից առաջինը ընկել է երկրորդ և երրորդ յօդուածներից յետոյ։

«Մշակի» խմբագրութիւն

1903.

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ։

Դու չես կարող մի մեծ բան
շինել,
Ուահա սկսում ես փոքր
բանից։

Գէօթէ (Ֆաուստ)։

Մենք ամէնքս գիտենք, որ երեխերանց հարկաւոր է ուսուցանել, բայց ինչ ուսուցանել և ինչպէս, այս է հարցմունքը։ Մինչև հիմի Ռուսաստանում անգամ չարունակվում է վէճը, թէ ինչ ուղղութիւն պէտք է տալ ուսման, կլասիկական, թէ րէալական. այսինքն սկզբնական ուսման մէջ ինչ պէտք է բռնի առաջին տեղը. լեզուներ թէ բնական գիտութիւնները։ Ինչու ենք ուսուցանում երեխերանց, որ բացենք նրանց միտքը և գատողութիւնը. որ պատրաստենք նրանց կեանքի համար և հաստատ հիմք դնենք նրանց մէջ, գիտութիւններ ստանալու համար։ Անկարելի է, որ մարդ չհամաձայնվի այս ամերիկացիների դաստիարակութեան կանոնի հետ. «Դաստիարակութեան մէջ չպէտք է

այնքան ուշադրութիւն դարձնել գիտութիւնների ստանալու, ինչքան մտքի զարգացնելու վերայ» 1)։ Եթէ դաստիարակութեան նպատակն է երեխայի միտք զարգացնելը, և ոչ թէ լցնել նրա գլուխը չոր գիտութիւններով, որոնք, ինչպէս ասում է Միխայլովը, այնքան վնասակար են երեխայի համար, ինչքան պարարտ կերակուրը և օղի 2), ուրեմն այն գիտութիւնները պէտք է բռնեն առաջին տեղ դաստիարակութեան մէջ, որոնք ամենից լաւ են բացում երեխի միտքը։ Ուրեմն, հարցնում ես. ինչ է զարգացնում աւելի մեր միտքը սկզբնական ուսման մէջ, լեզուները թէ բնական պատմութիւնը։ Կարելի է, որ շատերը կասեն ինձ, թէ իզուր եմ խօսում ես լեզուների ու վերացեալ գիտութիւնների վերայ, էնդուր, որ այսպիսի դաստիարակութիւնը ամենևին նման չէ մեր հայերի դաստիարակութեան։ Ապա դուք մոռացաք, պատասխան եմ տալիս ես, որ մենք էլ ունենք լատիներէն լեզուի նման մի լեզու, մեր գրաբարը, որ ունինք էլ աստուածաշունչ, քրիստոնէական հրահանգ և այլն, որոնք թէպէտ շատ հետաքրքիր և օգտաւէտ առարկաներ են, բայց երեխերանց համար, անհասկանալի և ուրեմն վերացեալ 3)։

1) Положеніе женщинъ въ Америкѣ. Адольфъ Колечекъ.

2) Օրագիր „Учитель" 1862 ամի, № 9

3) Իմ կարծիքովս գրաբարի քերականութիւնը, քրիստոնէական հրահանգը և այլն պէտք է ուսուցանել երեխին այն ժամանակ, երբ որ նրա միտքը քիչ թէ շատ

Եւ ճշմարիտ ամենին մեզանից յայտնի է, ինչ դժուար է և ձանձրալի է երեխի համար գրաբարի հոլովմունքներ և խոնարհմունք սովորել, կամ թէ Մսերի գրքով Աստուած բառի նշանակութիւն մեկնել, թէպէտ անկարելի է հասկանալ երեխին այնպիսի խրթին բացատրութիւնը, կամ թէ մեկնել ինչ է քերականութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն և այլն, մի տեղեկութիւն էլ չունենալով այս գիտութիւնների վերայ, և հետևելով բառ առ բառ ձեռնարկութեան։ Ամենքս էլ գիտենք, ինչպէս քիչ օգուտ են քաղում այսպիսի ուսումից երեխերք։ Այսպիսի ուսումի նպատակն է երեխայոց մէջ յիշողութիւն բաց անելը, աւելի ոչինչ։ Լաւ է արդեօք այսպիսի դաստիարակութեան ուղղութիւնը։ Այն մարդկերանց է հաւանելի այսպիսի ուղղութիւնը, որոնք մոռանում են, թէ այս երեխերք ապագայ սերունդ պէտք է կազմեն, որին մենք պարտական ենք պատրաստել առողջ, խելօք և բացված, և ոչ թէ սպանել նրանց անդադար հնազանդութեան տակ։ Այսպիսի հին ուղղութեան հետևողների, ասելու ժամանակը թէ այս լաւ է կամ այն վատ, այն երեխան, որ չէ հաւատում խօսքին, առանց ապացուցի, պատիժ է կրում։ Եթէ ուզում էք, որ ձեր երեխան իր թարմ միտքը վարժի, առաջարկեցէք նրան այնպիսի մտքեր, որոնք նրա հասկացո-

բացված կլինի, թէ չէ նա կսովորի միայն խօսքերը, առանց նրանց միտքը հասկանալու։

ղութիւնից վեր չլինեն, բայց ոչ թէ խօսէք նրա հետ եկեղեցական խորհրդի կամ մարդկերանց պարտաւորութեան վերայ, այն էլ Մօսէի գըրքով, կամ քննէք նրա հետ քերականութեան կանոնները։ «Երեխին ամենեւին չեն հետաքրքրական քերականութեան կանոնները և դժուարութիւնները, ասում է Կարլ Ֆօխտ, բայց արտաքին աշխարհի առարկաները, բոլորը ինչ որ կայ նրա չորս կողմը գրաւում են նրան։ Նա կամենում է մեկնել իրան ամեն տպաւորութիւնները, որոնք ներգործում են նրա զգացողութեան վերայ։ Ամեն բանի համար նա պատրաստ ունի հարցմունք. ինչու է այդպէս» [1])։ Տեսէք երբ որ երեխան սկսում է միայն հասկանալ, նա ինչ բաների մեկնութիւն է սկզբից պահանջում։ Անշուշտ նա չի հարցնի ինչ է քերականութիւնը կամ կար արդեօք հարիւր տարի առաջ այն քաղաքը, որի մէջ նա բնակվում է։ Բայց նա կհարցնի ինչու է գալիս անձրև, նա ուշադրութիւն կդարձնի բոլոր շրջակայ բաների վրայ և կպահանջի դոցա մեկնութիւնը։

«Երեխան, ասում է Ֆօխտը, ուզում է իմանալ ինչո՞ւ է ամպը գոռում, ինչո՞ւ է փայլում կայծակը, ինչո՞ւ ջուրը չէ բարձրանում սարի վերայ, ինչո՞ւ երէկ անձրև էր գալիս, իսկ այսօր արեգակն է փայլում։ Բայց փոխանակ երեխին մեկնելու այս ամենը, նրան սովորաբար պատասխան են տալիս, թէ այսպէս կարգել է

[1]) Физіологическія письма. Карлъ Фохтъ.

Տէր Աստուածը» [1])։ Շարունակենք համեմատութիւնը։ Եթէ երեխային չեն հետաքրքրական ոչ լեզուի կանոնները, ոչ մարդկերանց պարտաւորութեան գաղափարը, ոչ էլ անցած ժամանակի վերայ կարծիքը, ուրեմն նրան չէ հետաքրքրական ոչ քերականութիւնը, ոչ իմաստասիրութիւնը և ոչ պատմութիւնը։ Բայց նրան գրաւում է բնութիւնը։ Ուրեմն առողջ դատողութիւնը պահանջում է սկսել երեխի հետ ուսումը այն առարկաներից, որոնք նրան գրաւում են։ Իսկ ինչպէս են անում առհասարակ. սկսում են այն բաներից, դէպի որոնք երեխան ամենեւին չէ ցոյց տալիս համակրութիւնը։ Նրա յաճախ հարցերին բնութեան վերայ պատասխան չեն տալիս, էնդուր որ չեն իմանում, ինչ պատասխան տան. ուրեմն թոյլ չեն տալիս նրա մտածողութեան զարգանալու. և մի և նոյն ժամանակ ստիպում են երեխին այն գիտութիւններով պարապել, որոնք նա չէ սիրում։ Այսպիսի ուղղութիւնը պատճառ է լինում, որ երեխան ստանում է ատելութիւն դէպի ուսումը։ Տեսնենք ինչ է ասում Ֆօխտը։

«Փոխանակ, ասում է նա, բաւականութիւն տալու այն բնական ուսումնասիրութեան, որ երեխան ունի դէպի արտաքին աշխարհի առարկաները, փոխանակ նրա խելքին միշտ նոր կերակուր տալու, մեկնելով այն ամէն առարկաները, որոնք հետաքրքրական են նրան, այս

[1]) Физіологическія письма. Карлъ Фохтъ.

բնական ձգտողութիւնը խափանում են առհասարակ կամ մրմնջալով, կամ ուրիշ կողմ դարձնելով, մեծ մասամբ սեպհական տգիտութիւնը ծածկելու համար։ Սրանից ծնվում է անտեղի սովորութիւնը հինգ կամ վեց տարեւայ երեխին լատիներէն սովորցնել [1]. սրանից դուրս է գալիս կոպիտ տգիտութիւնով լի համոզմունքը, թէ բնական գիտութիւնները չունին դաստիարակական արժանաւորութիւն, և ներկայացնում են ժողոված չնչին փաստեր, որոնք ներգործում են միայն յիշողութեան վերայ և որոնց պէտք է մտքին, որքան կարելի է, ուշ առաջարկել» [2]։

Նկատել էք դուք, որ մարդը միշտ այն բաների մէջ է յառաջադիմութիւն անում, և ուրեմն իր և ուրիշներին աւելի օգուտ է բերում, որոնք նրան աւելի դուր են գալիս կամ դիւրահաս են լինում նրա համար։ Եթէ բնութիւնը երեխին ամենից շատ է հետաքրքրական, ուրեմն և բնութեան ուսմունքը նրա խելքին ամենից շատ օգուտ կբերի։ Եթէ մէկ բան երեխին գրաւում է և հետաքրքրական է, այս նշանակում է, թէ այս բանը նրա խելքին և մտածողութեան հասանելի է, թէ չէ, այն չէր էլ կարող նրա հետաքրքրութիւնը շարժել։ Ինչ որ աւելի հասանելի է մտքին, աւելի էլ կարող է

1) Իսկ մեզ մօտ գրեթէ այս հասակում սկսում են գրաբառ սովորցնել։

2) Բայց վատ վարժապետի ձեռքին, բնական գիտութիւնները, ինչպէս ամեն գիտութիւններ, կարող են կորցնել իրանց դաստիարակական արժանաւորութիւնը։

ունենալ ազդեցութիւն մտքի զարգացման վերայ։ Վերացեալ առարկաներ ուսանելու ժամանակը, երեխայի միտքը պէտք է թռչի երկրից և կերակրվի երևակայութիւններով, որոնք շատ են վնասում մտքի կանոնաւոր զարգացմանը։ Լեզուի ուսմունքը ունի իր կողմից դժուարութիւններ, որոնք վեր են չբացված հասկացողութիւնից։ Իսկ բնական պատմութիւնը և մատեմատիկան ունեն այն արժանաւորութիւնը, որ կարողութիւն են տալիս երեխին տեսական կերպիւ ամեն բանի վերայ իր դատողութիւնը անել, սովորցնում են ամեն միտք փորձով վերստուգել։ Այս արժանաւորութիւնը փոքր արժանաւորութիւն չէ, էնդուր որ երեխան սովորում է չհաւատալ առանց հակառակելու ամէն խօսքին, այլ դատողութիւն անելուց յետոյ կամ ընդունել կամ ոչ։ Ուրեմն երեխան սովորում է մտածել։ Այսպիսի ուղղութիւնը յարմար է Ամերիկացիների հայեցուածքին դաստիարակութեան վերայ։ «Հարկաւոր է, ասում են ամերիկացիները, ազատութիւն տալ երեխի ընդունակութիւնների զարգանալուն, և հարկաւոր է, որ վարժապետը երեխերանց այնտեղ հասցնի, որ նրանք իրանց սեպհական դատողութիւնով ընդունեն սովորցրածը» [1]։ Մենք գտնում ենք Միխայլովի յօդուածումը յետագայ խօսքերը, որոնք հաստատում են մեր կարծիքը բնական գիտութիւնների մասին։

1) Օրագիր „Учитель“ 1862 ամի № 9.

Гос. Библиотека … им. А. Мясникяна

Բնական պատմութիւնը ուսումը, ասում է Միխայլովը, բաց է անում աշակերտի մէջ դիտողականութիւն (наблюдательность) դարձնելով նրա ուշադրութիւնը և հայեցուածքը այն մանր բաների վերայ, որոնք կթռչէին նրանից, եթէ չէին ուսուցանել նրան այս գիտութիւնը. բնական պատմութիւնը ծանօթացնում է նրան առարկաների բազմատեսակ ձևերի հետ, որոնք գտնվում են բնութեան մէջ. աշխատում է ոչնչացնել աւելորդ երևակայութիւնը, և ցնորքը, ծանօթացնելով երեխին իսկական առարկաների հետ և նրա ուշք ու միտքը դարձնելով դէպի այս կեանքը. ցոյց է տալիս ձևերի յարաբերութիւն և կապակցութիւնը միմեանց հետ, ուսուցանում է մասների ձևերը քննելով դատողութիւն անել նրանց նշանակութեան և յատկութիւնների վերայ։ Վերջապէս բնական պատմութիւնը բարեկամացնելով երեխին բնութեան հետ, բաց է անում նրա մէջ էսթէտիկական ճաշակը (գեղեցկութեան ճաշակ) էնդուր որ բնութիւնը ամեն գեղեցկութեան աղբիւրն է» [1]։ Գերմանացի ուսումնական Րօսմէսլէր, հաստատելով բնական գիտութիւնների այդպիսի արժանաւորութիւնը, տալիս է նրանց աւելի էլ մեծ նշանակութիւն։ Նա ասում է, թէ առանց գոնեայ մի փոքր տեղեկութիւն ունենալու բնական գիտութիւնների վրայ, մարդ չէ կարող կանոնաւոր քաղաքացի

[1]) Значеніе естественныхъ наукъ въ образованіи. Россмеслеръ.

և հասարակութեան օգտաւէտ անդամ լինել։ «Երեխան, ասում է նա, ծնելուց յետոյ ոչ Պրուսացի է, ոչ էլ Աւստրիացի, թէպէտ նրա հայրը այս կամ այն ազգի անդամ լինէր։ Անց է կենում ժամանակ, մինչև որ երեխան մի տեղեկութիւն կունենար իր քաղաքական հայրենիքի մասին։ Մի ազգի անդամ լինելուց առաջ այս փոքր արարածը մարդկութեան անդամն է, նա մարդ է, և երկիրը նորա հայրենիքն է» [1]։ Սրանից յետոյ Րօսմէսլէր բացատրում է այն կարծիքը, որ ամեն մէկը մեզանից կամենալով մեր երեխերանցից օրինաւոր քաղաքացիներ պատրաստել, պարտաւորութիւն ենք համարում քիչ թէ շատ ծանօթացնել նրանց թէ մեր հայրենիքի պատմութեան հետ և թէ քաղաքական օրէնքների ու կառավարութեան ձևի հետ, և թէ մեր հարստութեան աղբիւրների հետ։ «Բայց մի՞թէ մեր երկրի բնութիւնը, շարունակում է նա, մեր ընդհանուր մարդկային հայրենիքի բնութիւնը չունի նոյնպէս իր պատմութիւնը, իր օրէնսդրութիւնը, իր կեանքի աղբիւրները և ձևերը կառավարութեան։ Կարելի՞ է արդեօք իսկական մարդ անուանվել, կարելի՞ է մի հայրենիքի քաղաքացի լինել, չիմանալով նրա պատմութիւնը, որի ազդիւնքը մենք իրանքս ենք կազմում, չիմանալով նրա օրէնքները, որի տէրութիւնից մենք մի րոպէ չենք կարող ազատ-

[1]) Значеніе естественныхъ наукъ въ образованіи. Росмесслеръ.

վել, չիմանալով կեանքի աղբիւրները, որոնք մենակ բաւականութիւն են տալիս մեր պիտոյքներին—չիմանալով վերջապէս նրա կառավարութեան ձևերը, որոնցից մենք կարող ենք հասկանալ և մեկնել մեզ մեր դրութիւնը»։

Ի՞նչպէս կարելի է համաձայն չլինել այս կարծիքի հետ։ Ծանօթացէք երկրի պատմութեան հետ, այսինքն բնական պատմութեան հետ, և ձեզ համար աւելի հեշտ կլինի ուսանել ձեր ազգի պատմութիւնը. աւելի հեշտ էլ կլինի հասկանալ ձեր քաղաքական օրէնքները, որոնք մարդու բնական պիտոյքներին յարմարեցրած կանոններ են։ Եւ աւելի հեշտութեամբ էլ կը ծանօթանաք դուք վաճառաշահութեան հետ, երբ որ մէկ քանի տեղեկութիւններ կունենաք թէ երկրի առհասարակ և թէ ձեր հայրենիքի բնական արդիւնքների վերայ։ Ուրիշ տեղ Ռօսմեսսլեր ասում է թէ «օտար լինել բնութեան մէջ, որ է մեր հայրենիքը, ոչ թէ միայն ամօթ է, բայց և վնասակար է»։ Եւ ճշմարիտ վնասակար է։ Այդ վնասը մենք տեսնում ենք և մերերի վերայ։ Մեր հասարակութիւնը չունի մինչև անգամ ամենահարկաւոր բնութեան վերայ տեղեկութիւնները և տեսէք ինչպէս վնասում է նրան այդպիսի տգիտութիւնը և ինչ վատ ներգործում է նա մեր դաստիարակութեան վերայ։ Մեր դաստիարակութեան արժանաւորութիւնը այն է, որ նա սպանում է երեխի մէջ առողջ միտք, բարոյականութիւն և մարմինը։ Ուսումնարանի մէջ դաստիարակութեան ուղ-

ղութիւնը անտանելի է. տան մէջ ուսումնարանից էլ վատ։ Ինչու եմ ասում, թէ մեր տնային դաստիարակութիւնը ուսումնարանից վատ է։ Ինդուր որ ծնողներից պէտք է պահանջել աւելի հոգացողութիւն իրանց երեխերանց համար քան թէ ուսումնարանից։ Ուսումնարանը չէ կարող աչք ունենալ ամենի վերայ. իսկ ծնողներին աւելի դիւրահաս է ճշտութեամբ կատարել դաստիարակութեան սուրբ պարտաւորութիւնը։ Ամեն տեղ, ամեն ազգերի մօտ երեխերանց դաստիարակութիւնը մօր պարտաւորութիւնն է։ Մայրը պարտաւոր է ուղղել իր երեխի առաջին քայլերը, մայրը պէտք է բաց անի նրա միտքը և զարգացնի նրա բարոյական կողմը. նոյնպէս էլ մօր պարտաւորութիւնն է երեխայի առողջութեան համար հոգս քաշել։ Ճըշմարիտ է ասում Ադօլֆ Կօլաչէկը, թէ «կնամարդը գերդաստանի քահանայապետն է, որի վիճակը նրանից է կախված։ Նա է տալիս ուղղութիւն իր գերդաստանի, նա է հաստատում և սահմանում նրա հոգևոր կեանքը»։ Ասացէք ինձ, խնդրեմ, կարող է կատարել արդեօք իր պարտաւորութիւնը այն մայրը, որ տգէտ է։ Տեսէք, ինչքան կորցնում է երեխերանց ամենի ծանօթ սովորութիւնը, որ ժամանակով սովորութիւնից հիւանդութիւն է դառնում, իսկ մայրերը ոչինչ տեղեկութիւն էլ չունենալով մարդու մարմնի կազմուածքի և կատարմունքների վերայ, յայտնի բան է, չի էլ կարող այսպիսի սովորութիւնից իրենց երեխե-

խերանց ազատել։ Խեղճ հայոց կանայք, կարծում են թէ ձեզ հարկաւոր չէ կրթութիւնը. ձեր հայրերը չեն տուել ձեզ կրթութիւն և չեն էլ տալիս մինչև հիմի։ Բայց չեն մտածում այն բանի վերայ, որ մայր դառնալով նա, չէ կարող օրինաւոր դաստիարակութիւն տալ իր որդկերանց, ընդուր որ ինքն տգէտ է, չունի մինչև անգամ մի թեթև հասկացողութիւն մարդու բնութեան վերայ, կեանքի և դաստիարակութեան վերայ։ Մարդու բնութիւնը, կասեն ինձ, միթէ կարելի է մի ջահիլ աղջկայ ձեռքին տալ գիրք, որի բովանդակութիւնը լինի Անատոմիա և Ֆիզիօլօգիա, այսինքն մարդու մարմնի և կեանքի ուսումը. միթէ այդ ամօթ չէ։ Ինչու է ամօթ, պատասխան եմ տալիս ես, ինչի էք կարծում, որ աղջկերք տգէտ պէտք է լինեն և տղայոց նման չպէտք է ուսում առնեն. ինչու.... բայց ինձ չեն էլ ուզում լսել և կրկնում են— ամօթ է. ամօթ. ուրեմն եթէ այդպէս է, պատրաստեցէք մի անպիտան սերունդ, անպիտան թէ հոգով և թէ մարմնով. այս երևի ամօթ չէ։ «Շատ կարելի է, ասում է Կարլ Ֆօխտը, չիմանալով ֆիզիօլօգիական օրէնքները, կամ նրանց վերայ ուշադրութիւն չդարձնելով՝ վնասել կազմուածքին և մինչև անգամ սպանել մարմինը։ Բայց այս չէ տալիս մեզ իրաւունք մեր հիւանդութիւնների մէջ մեր սերունդներին էլ ձգել։ Ամեն տեղ լսում են գանգատներ, թէ թուլանում է մարդկային ազգը, բայց ոչինչ չեն անում նրան այդ թուլութիւնից ազատելու հա-

մար։ Թոյլ տուեցին տարածուելու անօգուտ գրականութեան, և չեն մտածել այն բանի վերայ, որ յետագայ ցեղերը նոյնպէս ունեն իրաւունքը իրանց համար առողջ և ծաղկաւէտ կեանք պահանջելու։ Կարելի է, որ կան մարդիկ, որոնք հասկանում են հարկաւորութիւնը ծանօթանալ և իրանց երեխերանց ծանօթացնել բնութեան հետ. կարելի է, որ կան մայրեր, որոնք զգում են իրանց տգիտութիւնը, և կուզենային իրանց երեխերանց մի ուրիշ ուսման ուղղութիւն տալ, բայց կամ նրանք չեն համարձակվում հասարակութեան նախապաշարմունքների դէմ գնալ, կամ իրանք էլ նախապաշարմունքներով լիքն են, և ինչպէս ասում է Լուիսը. «Թէպէտ և զգում են մարդու բնութեան ուսման հարկաւորութիւնը, բայց չեն կարող յաղթել իրանց մէջ անյաղթելի զզուանքը դէպի անատոմիական պարագայքը» [1])։

Բայց սովորեցրէք երեխերանց փոքր հասակից բնական պատմութիւնը. և նրանք կստանան մի ուրիշ ուղղութիւն, մի ուրիշ ոգի. նրանք կունենան ուղիղ հայեցուածք աշխարհի և կեանքի վերայ։ Բացի այս, բնական գիտութիւնների ուսանիլը մօտիկ ծանօթացնելով մեզ բնութեան հետ դնում է մեր մէջ անսահման սէր դէպի բնութիւնը, ուրեմն և դէպի բնութեան Արարիչը։

Եւ մի և նոյն ժամանակ բնական գիտութիւնները ազատում են մեզ սնոտիապաշտու-

---

1) Физіологія обыденной жизни. Льюсъ.

թիւնից և նախապաշարմունքներից, որոնց մէջ եթէ կմնայ ազգը, նա չէ կարող անել ոչ մի քայլ դէպի յառաջադիմութիւն։

Աւարտենք մեր խօսակցութիւնը Հերշելի խօսքերով. «Յառաջադիմութեան համար ոչ թէ միայն շատ բաներ է հարկաւոր ուսանիլ մարդուս, բայց և հարկաւոր է նրան շատ բաներ մոռանալ»։

«Մեղու Հայաստանի»,
1865, № 13—14.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԱՂՋԿԵՐԱՆՑ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ։

Ճշմարտութիւնը ունի իր անտարաժամ իրաւունքները, որոնք երբէք ուշ չէ պաշտպանելը։

Վ.օլթէր։

—

Ծանօթ էք դուք մեր աղջկերանց դաստիարակութեան կանոնների հետ։ Այս կանոնները շատ հեշտ է մտքում պահել։ Ով որ կարողութիւն ունի, պարտաւորութիւն պէտք է համարի սովորցնել իր աղջկան ֆրանսերէն լեզու, պիանո ածելը, լաւ ճաշակ ունենալ շորեր ընտրելու ժամանակ և գլխաւոր բանը—մունջ կենալ։ Ահա մեր կրթութեան ուղղութիւնը։ Ահա ամենամեծ կրթութեան աստիճանը, որին մերերի կարծիքով կարող է հասնել կնամարդը։ Իսկ ես կ՚ասեմ, որ այդպիսի կրթութիւնը—կրթութիւն չէ։

Ի՞նչ ենք պահանջում կնամարդուց։ Մենք պահանջում ենք նրանից, որ նա օգուտ բերի

հասարակութեան. իսկ այդ կերպով կրթած կնամարդը երբէք օգուտ չէ կարող բերել, որովհետև նրա ստացած կրթութիւնը չէ բաւականացնում հասարակութեան պիտոյքներին։

Մենք ունենք երկու տեսակ աղջկերանց կրթութիւն. մէկը—հասարակաց, և միւսը տընային. հասարակաց—այսինքն, դպրոցների ու պանսիոնների կրթութիւնը, ինչպէս ամեն տեղեր էլ բաւական անբաւարարիչ դրութեան մէջն է։ Բոլոր ուսման ժամանակը աղջկերք սովորում են մեծ աշխատասիրութիւնով իրանց դասերը, խօսում են ֆրանսըզերէն, կորցնում են մեծ մասը իրանց առողջութիւնը, լցնում են իրանց գլխները դարդակ բաներով ու նախապաշարմունքներով. իսկ իրանց մտքի զարգացումը շատ քիչ են առաջ տանում։ Սովորում են բառ առ բառ ձեռնարկութեան գրքի խօսքերը. շատ անգամ առանց նրանց միտքն էլ հասկանալու, իսկ վարժապետները այսպիսի հանգամանքների մէջ պարտաւորութիւն են համարում իսկական իրողութիւնների միտքը չ'մեկնել նոցա։ Եւ այն աղջիկը, որ կուզենայ այս կամ այն իրողութեան վերայ դատողութիւն անել, կ'համարվի ազատախօս կամ յիմար։ Կամենում են, որ նոքա մտքում պահեն բոլոր իրողութիւնները, առանց նրանց վերայ մի ուղիղ հայեացուածք ունենալու։ Ի՞նչ օգուտ այսպիսի ուսումից, ոչինչ։ Այն մարդը, որ շատ իրողութիւններ գիտէ, ասում է Բօկլը, կարող չէ կրթած անվանվել, եթէ

նա այդ ստացած իրողութիւններից օգուտ չէ կարող քաղել [1]։

Այդպիսի ուսումը ստանալուց յետոյ աղջըկերք չունին մինչև անգամ ամենաթեթև հասկացողութիւն կնամարդու կոչման կամ մօր պարտաւորութեան վերայ. չունին էլ մի իսկական տեղեկութիւն այն առարկաների վերայ, որոնք այնքան տարի սովորել են։

Այսպիսի կրթութեան ուղղութիւնը ոչ թէ միայն չի զարգացնում աղջկերանց մէջ սեպհական դատողութիւն, այլ և շատ անգամ սպանում է նոցա մէջ բնական միտքը։ Ուրեմն այսպիսի ուսումը վնաս է, և ոչ թէ օգուտ։ Այդ կողմից ցածր դասի կանայք մինչև անգամ վեր են այդ տեսակ կրթած կնամարդերից. ցածր դասի կնամարդը չէ կորցրել գոնեայ իր բնական խելքը, իսկ այն կրթեալ կոչվողներին շատ անգամ տիրապետում է մի դարդակ ուղղութիւն, որ յարուցանում է նոցա մէջ զզուանք դէպի մտաւոր և մարմնաւոր աշխատանքը, սպանում է նրանց մէջ ուղիղ հայեցուածքը կեանքի վերայ, զարթուցանելով միայն սէր դէպի անդադար զբօսանք և դատարկ պճնասիրութիւն։

Բայց կարելի է, որ կան մարդիկ, որոնք կարծում են թէ կնամարդը ընդունակ չէ մի օրինաւոր կրթութեան ուղղութիւն ստանալու։ Այդ սուտ է։ Կնամարդը ընդունակ է (տղամար-

3883-86

[1]) Вліяніе же[illegible] успѣхи знанія.—Бокль.

դու նման) կրթութեան ուղղութիւն առնալու և այդ բաւական չէ. փորձով կարելի է ապացուցանել, որ ուրիշ կողմից էլ կնամարդու բնութեան խելքը տղամարդու բնական խելքից բարձր է։ Կնամարդու խելքի այս արժանաւորութիւնն է շուտ մտածելը։ Բոկլը հաստատում է այս միտքը յետագայ խօսքերով. «Կնամարդը տղամարդուց շուտ է մտածում. ճշմարիտ է, որ կնամարդերի խելքի այդ արժանաւորութիւնը խափանվում է վատ դաստիարակութեան ուղղութեամբ, որ աշխատում է հեռացնել նրանցից ամէն տեսակ օգտաւէտ գիտութիւնները, ուսուցանելով նրանց դարդակ ու անհեթեթ բաներ. այնպէս որ նրանց գեղեցիկ ու քնքոյշ խելքերը կորցնում են անդառնալի իրանց բնական պարզութիւնը։ Ընդուր էլ ցածր դասի կանանց մէջ շատ անգամ երեւում է աւելի մեծ մտածողութեան արագութիւնը, քան թէ վերին դասերումը [1])։ Մի բժիշկ, Կիրրի անունով, յիշում է իր նամակներումը, թէ ամէն անգամ երբ որ գալիս էին նրա մօտ չինականներ իրանց կանանց հետ բժշկվելու համար, նա միշտ կնամարդերից էր առնում հիւանդութեան վերաբերեալ ամենապարզ և հասկանալի պատասխանները. իսկ տղամարդիկ աւելի էին դժուա-

[1]) Մինչև անգամ մեզ մօտ ցածր դասումը, որտեղ որ տիրապետում է ասիական ուղղութիւնը, էլի կնամարդերի մէջ կարելի է նկատել բնական խելքի զօրութիւնը և մտածողութեան արագութիւնը։

րանում պարզապէս յայտնելու իրանց ցաւերի պատճառը։ Այստեղ ես կ'աւելացնեմ մէկ քանի ճանապարհորդների նկատողութիւններն էլ, որոնց ճշմարտութիւնը ամէնքը կարող են փորձով վերաստուգել։ Երբ որ օտար երկրի մէջ լինելով և չիմանալով այն երկրի լեզուն, դուք կամենալով ձեր միտքը յայտնել ստիպուած էիք նշաններով խօսել, դուք կ'համոզվէիք, որ կնամարդիկ աւելի լաւ կ'հասկանային ձեր խօսակցութիւնը քան թէ տղամարդիկ։ Նոյնպէս օտար քաղաքի մէջ ճանապարհ կորցնելու ժամանակը ձեր ուղիղ ճանապարհի մասին ամենապարզ տեղեկութիւն կ'ստանաք, դառնալով դէպի կնամարդիկը։ Իսկ տղամարդիկ այդ տեսակ հանգամանքների մէջ ցոյց են տալիս սոհասարակ բաւական անհասկացողութիւն [1]).

Դոկտոր Գերցեգի հաստատում է նոյնպէս կնամարդների մասին այն կարծիքը, թէ նրանք տղամարդերից շուտ են մտածում և յայտնում է այն միտքը, թէ նոցա խելքի թեթև ուղղութեան պատճառը, (համեմատելով տղամարդոց խելքի հաստատ ուղղութեան հետ) նոցա վատ ու դարդակ կրթութիւնն է։ Նորա գրքի մէջ մենք գտնում ենք կոմսուհու Ադալի խօսքերը, որ ասում է, թէ կնամարդի համար մտածելը մի դժուար աշխատանք է և մի բախտաւոր պատահմունք, բայց ոչ չարունակ վիճակ։ Կնամարդի խելքի այդ պակասութեան պատճառը,

[1]) Вліяніе женщинъ на успѣхи знанія.—Бокль.

չարունակում է նա, է օրինաւոր դաստիարակութեան բացակայութիւնը [1]։

Հիմի միքանի խօսք անենք մեր տնային դաստիարակութեան մասին։ Մեր տնային դաստիարակութիւնը հասարակաց դաստիարակութիւնից անգամ վատ է։ Ոչինչ չէ սպանում այնքան մարմին ու հոգի, ինչքան այս դարդակ դաստիարակութիւնը։ Ինչու է այդպէս։ Ենդուր որ, մենք չենք հրաժարվել հին սովորութիւններից, իսկ նոր ուղղութիւնը չենք ընդունել իսկապէս։ Եւրոպացիների կրթութիւնից մենք սեփականացրել ենք մեզ միայն արտաքին կողմը. իսկ կրթութեան հիմունքը դարձեալ ասիական են։ Մէկ կողմից երեխերանց ուսուցանում ենք ֆրանսզերէն խօսել, պիանօ ածել, կարդացնում ենք թեթև գրականութեան անօգուտ գրքերը (օգտաւէտ գիտութիւնները շատ քիչ են ուսուցանում), հագցնում ենք նրանց եւրոպական շորերը.—իսկ միւս կողմից գերդաստանի հայրը նոյն ասիական հրամայողն է մընում, որի խօսքը պէտք է կատարվի առանց հակառակելու։ Երեխերք չունեն մտածելու ու գործելու ազատութիւնը.—և այսպիսի ուղղութեան պտուղը ինչ է, անշուշտ թէ մարմնական թէ մտաւոր չզարգացումն։ Տղայք շուտ են ազատվում այդ ուղղութեան լուծից, իսկ աղջըկերք շատ անգամ բոլոր կեանքը չեն կարողանում ազատվել այս վատ կրթութեան ներգործութիւնից։

---

1) Женщина.—Д. Герцеги.—Москва. 1865.

Մայրաքաղաքներումը մեր տնային կրթութեան մէջ կայ մի ուրիշ անպիտան կողմն էլ։ Երեխերք մոռանում են իրանց լեզուն, ուրեմն և զրկվում են իրանց զարգացման ընական միջոցից. կորցնում են սէրը դէպի իրանց ազգը և շատ անգամ էլ ատում են իրանց հայրենակիցներին։ Եւ մի և նոյն ժամանակը ինչպէս հայրերը, նոյնպէս և որդիքը չափազանց հպարտ են և ինքնահաւան. երևի էնդուր որ չունին ոչ ազգ, ոչ կրօն, ոչ լեզու, ոչ էլ առողջ միտք։ Բացի այս կայ մի էլ ուրիշ պակասութիւն տնային դաստիարակութեան մէջ։ Այդ պակասութիւնն է զրկումն մարդկերանց ընկերութենից և աշխարհի կեանքից օտարանալն։ Մարդու բնութիւնը ընկերութիւն պահանջում է և շատ վնաս է երեխերանց համար զրկել նըրանց ընկերութենից և աշխարհի փորձից։ Եթէ երեխերք ծանօթ են միայն իրանց գերդաստանի կեանքի հետ և չեն տեսնում ոչ մի ուրիշ կեանք, չեն պատահում օտար մարդկերանց, այն ժամանակը նոցա մտքի զարգացումը միակողմանի և շատ անկատար կ'լինի։ «Աշխարհից օտարացուցանելն, ասում է Կարլ Ֆօխտ, միշտ վնաս է բերում մարդկերանց, և եթէ կայ պատճառ որ մեծ մարդկերանց որդիքը առհասարակ չքացված են լինում, այդ պատճառը է նոցա դաստիարակութիւնը, որ ընդդէմ մարդու բնական պահանջմունքի է գործում, հեռացնելով

երեխերանց փոքր հասակից դեռ ևս ընկերական կեանքից» [1]:

Ահա մեր կրթութեան դրութիւնը: Ցանկալի կ՚լինէր, որ փոխուէր այդպիսի վատ կրթութեան ուղղութիւնը: Այդպէս կրթած կնամարդը, կրկնում եմ, երբէք օգուտ չէ կարող բերել հասարակութեան:

Տեսնենք ինչ է կնամարդու պաշտօնը հասարակութեան մէջ: Տղամարդը հրապարակաւ խօսում, գրում է, ուսուցանում է, ծառայում է քաղաքական ծառայութեան մէջ և այլն: Իսկ կնամարդը դաստիարակում է երեխերանց:

Տղամարդն ուրեմն ունի ներգործութիւն բազմութեան վերայ, իսկ կնամարդը ներգործում է առանձին անհատների վերայ: «Տղամարդու գործը, ասում է Ադոլֆ Կոլաչէկը, է ներգործել բազմութեան վերայ, իսկ կնամարդու պաշտօնը է անհատներ դաստիարակել, զարգացնելով նոցա մէջ հոգևոր մասը [2]: Կարելի է, որ այդ երկու նպատակները մէկ մէկին հակառակ կ՚թուին, բայց իսկապէս այդ երկու նպատակները նման են մէկ մէկու: Տղամարդը բազմութիւն է դաստիարակում, կնամարդը անհատներին, բայց անհատներից է կազմվում և հասարակութիւնը. ուրեմն կնամարդու նպատակն էլ նոյնպէս է հասարակութեան համար օգտաւէտ անդամներ պատրաստելը. նպատակը մի է՝ բերել օգուտ հասարակութեան:

[1]) Физiологическiя Письма.

[2]) Положенiе Женщинъ въ Америкѣ.

Որովհետև կնամարդը առանձին անձների հոգևոր ու մտաւոր դաստիարակչի պաշտօն է կատարում, ուրեմն նա կարող է ոչ թէ միայն իր զաւակներին բարոյական ուղղութիւն տալ, այլ նա նոյնպէս ընդունակ է և ամէն մարդու վերայ, ով որ նորա ձեռքի տակն է ընկնում, բարոյական ազդեցութիւն ունենալ: Յայտնի բան է, որ ինչքան հաստատ կրթութիւն կըստանան կնամարդիկ, այնքան էլ աւելի կերևայ նոցա ազդեցութիւնը հասարակութեան մէջ: Իսկ անկիրթ ազգերի մէջ այս ազդեցութիւնը գրեթէ աննկատելի է, ինչպէս ընդհանրապէս և մեր հայերի մէջ էլ: Մեր կնամարդիկ առհասարակ չեն ստացել կրթութիւն, այնպէս որ նոցա մեծ մասը միշտ իրանց մարդոց կոպիտ ազդեցութեան տակն են ընկնում: Հայը անսահման հրամայող է իր գերդաստանի մէջ, նորա կինը ու որդիքը պէտք է լսեն նորա խօսքերը առանց հակառակելու: Այս հանգամանքներից հայի մէջ ծագեցան այն աննախանձելի յատկութիւնները, որոնց ամենավատերը են իշխանասիրութիւն և կամակորութիւնը. նորա այս պակասութիւնները երևում են նորա ամէն գործի մէջ: Աւելացրէք այդ պակասութիւնների վերայ և մտաւոր զարգացման պակասութիւնը, և ձեզ հասկանալի կ՚լինի, թէ ինչու երբէք յաջողութիւն չկայ մեր ընդհանուր գործերի մէջ, թէպէտ և գործը ամենահեշտ ու չնչին գործ լինէր:

Մենք տեսանք, որ կնամարդը երեխերանց է դաստիարակում, ունի էլ ազդեցութիւն տղա-

մարդոց բարոյականութեան վերայ։ Բայց հասկանալի է, որ կնամարդը կարող է միայն այն ժամանակ կատարել օրինաւոր կերպով իւր այս պարտաւորութիւնը, երբ նա ինքն կրթած կ'լինի։ Որ նա կարողանայ ուղղութիւն տալ երեխերանց դաստիարակութեան և նրանց մաքի զարգացմանը, նա ինքն պէտք է զարգացած լինի։ Որ նա կարողանայ իր երեխերանց առողջութեան համար հոգս քաշել, նա պէտք է մի քանի տեղեկութիւններ ունենայ մարդու կազմուածքի գիտութեան վրայ, նա պէտք է նոյնպէս գիտենայ ինչ է բերում օգուտ կամ վնաս մեր կազմուածքին։ Օրօրինակ եթէ մի մայր ստիպէր իր աղջկան տանը միշտ նստել, արգելէր նրան ամեն տեսակ շարժողութիւններ, մինչև անգամ վազելը կամ շատ մանգալը կամ ձի նստելը ամօթ համարէր, այդպիսի մայրը իր տգիտութեամբ վնաս կ'տար իր աղջկանը, միայն այն պատճառով, թէ այդ շարժողութիւնները մի մեծ ազդեցութիւն ունեն աղջկերանց մարմնի առողջութեան զարգացման վերայ։ Ես լսեցի, որ մեր Թիֆլիզումը կանայք շատ են վնասվում մանկածնութեան ժամանակ։ Եթէ այդ բանը ճշմարիտ է, դա ամէնից լաւ ապացուցութիւնն է իմ խօսքերիս։ Եթէ մէկ կողմից սորա պատճառը մեր բժիշկներուն են համարում, միւս կողմից աւելի մեծ պատճառն էլ է մերոնց վատ դաստիարակութիւնը, որ չէ զարգացնում ամենևին մեր աղջկերանց մարմինը, որի կազդուր-

ման վերայ այժմ բոլոր Եւրոպան մեծ ուշադրութիւն է դարձնում։

Մենք գտնում ենք „Учитель“ լրագրումը այս ճշմարիտ խօսքերը. «Փոխանակ այն տեսակ դաստիարակութեան ուղղութիւն տալ աղջկերանց, որ նրանք ժամանակով կարողանան օրինաւոր մայրեր դառնալ, մեծ մասամբ տալիս են նրանց մի դարդակ ուղղութիւն, պարապեցնելով նրանց, չքաւոր գերդաստանների մէջ մինչև անգամ զանազան արուեստներով, որոնք ոչ մտաւոր, ոչ էլ մարմնաւոր օգուտ են բերում)[1]։ Այս խօսքերը գրողը չէ ուզում ասել, որ արուեստները անօգուտ ու անպիտան առարկաներ են. ոչ. այլ նա երկրորդական բան է համարում նրանց դաստիարակութեան մէջ։

Ուրեմն եթէ կամենում ենք, որ կնամարդը օգուտ բերի հասարակութեանը, պէտք է փոխենք նորա կրթութեան ուղղութիւնը։ Փոխանակ աղջկան գլուխը յիմար ու անօգուտ առարկաներով լցնելու, ծանօթացնենք նրան հաստատ գիտութիւնների հետ։ Փոխանակ նորա բնական ուսումնասիրութիւնից ամեն բան թագցնելու, ամօթ չհամարենք ծանօթացնել նրան բնութեան հետ, մարդու մարմնի ու կեանքի ուսման հետ։ Հարկաւոր չէ յափշտակել նորա միտքը զանազան առասպելներով, բայց ընդհակառակն պէտք է աշխատել կազմելու նորա մէջ բնական և ուղիղ հայեցուածք աշխարհի վերայ։

---

1) „Учитель“ № 13 и 14, 1862 года.

Մէկ խօսքով չ'պէտք է սպանել նորա հոգին ու մարմինը ասիական դաստիարակութիւնով, այլ նախապաշարմունքները դէն գցելով ծանօթացնել նրան իսկական գիտութիւնների հետ և մօտացնել նրան տղամարդոց ընկերութեան, որի զարգացումը աղջկերանց մտաւոր զարգացման կարող է մի մեծ օգուտ բերել և հիմքը դնել մի ուրիշ ուղղութեան, մի ուրիշ կեանքի։

Բայց չ'կարծէք, յարգոյ ընթերցողներ, որ այս տողերի գրողը նպատակ ունէր խորհուրդներ տալու. ո՛չ, նա մտադիր էր միայն իր միտքը յայտնել, և երբէք սովորութիւն չունի խրատելու, ինչուր որ նա չէ մոռացել մեր սիրելի բանաստեղծի խօսքերը՝ թէ

Գրքիդ մէջ պարսաւանք մի տալ Հային,
Հայը խրատ (թէև խելօք) ատում է.
Մի ծիծաղիլ նորա տխմար գործերին,
Որ նա աւանդ հայրենական կարծում է։

„Մեղու", 1865, № 23.

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՏՈՒՆՆԵՐ։

—

«Ժողովրդական գրատունը կը մնի սկիզբը. գրատունը կը տարածէ ընթերցանութեան փափաք, իսկ ընթերցանութիւնը յառաջ կը բերէ հրապարակական դասախօսութիւնք։»

(Է. Լաբուլէի „Ազգային Կրթութիւն" Մ. Տէր-Գրիգորեանցի թարգմանութիւն. երես 58։)

—

Երևակայեցէք ձեզ մի մարդուն, որ կարդալ է կամենում, բայց միայն այնքան փող ունէ, որ կարող է ամիսը մի հատ գիրք գնել,—իսկ ամսի մէջ նա ընդունակ է մի գրքից աւելի կարդալ։ Նա կարող էր երկու, երեք գիրք ամսի մէջ կարդալ,—եթէ կարողութիւն ունենար այդքան գրքեր գնելու։ Ժամանակը նորան այնքան չէ պակասում, ինչքան փողը.... Այդպիսի հանգամանքների մէջ նա ի՞նչ անէ։

Երևակայեցէք ձեզ մի և նոյն դրութեան մէջ հարիւր մարդ։ Այդ մարդիկներից ամեն մէկը, 1 ռուբլից աւելի չէ կարող ծախսել ամիսը գրքերի համար։ Ասենք 1 ռուբլով նա կարող է ամէն ամիս մի հատ գիրք առնել։ Ուրեմն նա

պիտի բաւականանայ ամէն ամիս մի գիրք կարդալով։

Յիմարութիւն չէ, որ այդ հարիւր մարդիկ չեն կարող հասկանալ, որ եթէ նոքա միանային, և նոցանից ամէն մէկը ամսի մէջ 1 ռուբլի ընդհանուր գանձանակը տար,—ամիսը կարելի էր հարիւր գիրք գնել (ասենք որ մի գիրք 1 ռուբլի արժէ). ուրեմն անդամներից ամէն մէկը իւր 1 ռուբլիով ամիսը կունենար հարիւր գիրք։

Ասենք մինչև անգամ, այս 100 ռուբլի ամսական գումարից 75 ռուբլի ամիսը կ'նստէ դահլիճ վարձելը և գրացուցակ տպելը, իսկ գրքեր գնելու համար կ'մնայ ամիսը 25 ռուբլի։ Էլի մի տարուց յետոյ (եթէ ամէն գիրք մի ռուբլի արժէ) գրատունը կունենայ 300 գիրք, Հինգ տարուց յետոյ նա կունենայ 1500 գիրք, —10 տարուց յետոյ,—3000 գիրք, իսկ 50 տարուց յետոյ գրատան մէջ կ'լինի 15,000 հատոր գիրք։

Ուրեմն ամիսը 25 ռուբլի մխսելով, 50 տարուց յետոյ կարելի է այնպիսի մի գրատուն կազմել, որ 15,300 հատոր գիրք կունենայ։

Առաջ դուք ամիսը 1 ռուբլի մխսելով, մի գիրք էիք առնում, և տարվայ մէջ 12 հատ գիրք կ'հաւաքէիք,—այժմ մի և նոյն գումարը մխսելով, դուք ամեն ամիս ձեր գործածութեան համար 25 հատոր գիրք կ'ունենաք, իսկ մի տարուց յետոյ 300 հատոր գիրք կ'միաւորէք։

Եւ մտածեցէք ինչ բարերարութիւն էք անում հասարակութեան այն անդամներին, որոնք

ամենևին կարողութիւն չունեն գրքեր առնելու, նրանցը միջոց տալով ինչ և իցէ ձրի ուսանելու։ Մտածեցէք որ յետագայ սերունդների համար էլ պատրաստում էք հիմնալի ազգային գրատուն, որ 50 տարուց յետոյ 15,300 հատոր գիրք կ'ունենայ, իսկ 100 տարուց յետոյ նրա մէջ 30,600 հատոր գիրք կ'լինի։

Ինչու ամէն քաղաքի մէջ այդպիսի գրատուն չեն հիմնում։

Ի՞նչ է պատճառը, որ մինչև այժմս զանազան երկիրներում դեռ չեն հասկացել ժողովրդական գրատունների օգուտը։

Ի՞նչ է պատճառը, որ Անգլիայում (թէպէտ և արուեստաւորների մի քանի գրատուններ կան [1]) առհասարակ քիչ են կարդում։ Կարծեմ որ ժամանակ չունեն,—հարուստները էնդուր որ հարուստ են, իսկ աղքատները էնդուր որ աղքատ են։.......

Ի՞նչ է պատճառը, որ ֆրանսիացիք անգլիացիներից ու գերմանացիներից էլ քիչ գրատուններ ունեն։ Ի՞նչ է պատճառը, որ ֆրանսիացիք առաւել են սիրում պանդոկ քան թէ գրատուն. պանդոկ են գնում գինի խմելու։

Տեսէք ինչ է անում իւր հրապարակական

---

[1]) Օրինակ, Ռօխդալի (Bochdale) խեղճ արուեստաւորները կազմեցին գրատուն որ այժմս 2000 հատոր գիրք ունէ. Գերմանիայում նմանապէս, (մանաւանդ հիւսիսում) արուեստաւորները աշխատում են գրատուններ կազմել։

դատախօսութիւններում ֆրանսիացի Բօդրիլիարը [1])։

Խօսելով այն գրատունների մասին, որոնք հիմնել են ուսումնական ընկերութիւնները Ֆրանսիայում, պ. Բօդրիլիար աւելացնում է. «իսկ այնպիսի գրատունները, որոնք հիմնված լինէին արուեստաւորների ընկերութիւններից, —համեմատելով Անգլիայի և մանաւանդ Գերմանիայի հետ,—մենք (ֆրանսիացիք) դեռ շատ քիչ ունենք»։

«Խոստովանենք, շարունակում է պ. Բօդրիլիարը,—որ ժողովրդական գրատունների գործը դեռ շատ է պահանջում աշխատանք մեր կողմից։ Բելգիայի վիճակներից քառորդը ունէ ժողովրդական գրատուններ։ Իսկ Շվէյցարիայում ամէն վիճակ իւր գրատունը ունէ։ Շվէյցարիայում ամէն մարդ է կարդում։ Այնտեղ ամէն մարդ իւր խելքն ու ոգին սնուցանում է կամ ուսումնական կամ հոգևորական ընթերցանութիւնով։ Ամէն Շվէյցարացի գիտէ իւր երկրի պատմութիւնը. բոլոր ազգը ճանաչում է իւր պատմութեան երևելի մարդիկներուն, որոնք հիմնեցին կամ պաշտպանեցին հայրենիքը։

Հարկաւո՞ր է ձեզ (ֆրանսիացիներին) ճշմարտութիւն ասել։

«Դուք բաւական չէք կարդում։—Ժողովրդական գրատունները այնքան չեն պակսում ձեզ մօտ, ինչքան կարդացողներ. Ֆրանսիացիք առաւել են սիրում նիւթական զուարճութիւններ, քան թէ բարոյական»։

1) Baudrillart (Բօդրիլիար), Նորա „Հրապարակական դատախօսութիւններ և ազգային գրատուններ“ անունով գիրքը։

Իսկ մեզ մօտ, հայերի մէջ, հարկաւոր չէ տանջվել և պատճառը պտռել, ինչու մենք գրատուն չենք հիմնում։.... Հոգս չ'քաշէք, խնդրեմ. ժողովրդական «դահլիճ» կարող էք ունենալ, ժողովրդական «պահարաններ» էլ կարող էք շինել,—բայց ժողովրդական «գրատուն» չէք կարող կազմել, այն պատճառով, որ ժողովրդական լեզուով գրքեր գրած չ'կան։

II.

«Այս միտքը (գրատունների հիմնելը), ասում է պարոն Լաբուլէ իւր հրապարակական դատախօսութիւններում,—առաջին անգամ յղացաւ ամերիկացի Ֆրանկլինը, որ մի հասարակ գործաւոր էր տպարանի մէջ։ Մի անգամ նա իւր ընկերակից գրաշարներին ասաց. «Մենք տասներկու հոգի ենք, մեր ամէն մինիս մօտ էլ կը գտնուի որպիսի և իցէ գիրք. եթէ այդ բոլոր գրեանքը հաւաքենք մի տեղ ընդհանուր գործադրութեան համար, այնուհետև մեզանից ամէն մէկը իւր ձեռքի տակ, փոխանակ առաջուան մի հատորի, կունենայ տասներկու հատոր գիրք։ Նմանապէս եթէ մեզ հետ միանան հարիւր, երկու հարիւր, երեք հարիւր մարդ, այնուհետև մեզանից ամէն մինը կ'կարողանայ օգուտ քաղել հարիւր, երկու հարիւր, երեք հարիւր գրքից»։—Ընդհանուրի օգուտը պարզ

երեւում էր, ուստի Ֆրանկլինը հեշտութեամբ հիմնեց իւր գրատունը («Ազգային կրթութիւն». երես 48)։

Յայտնի բան է, որ առաւել էլ շուտ կ'կազմվի գրատունը, եթէ բացի անդամների փողերից և ստորագրութիւնից, նոյնպէս և գրքեր կ'ընծայվեն։

Թող ամէն մարդ հասկանայ, թէ իւր մօտ եղած գիրքը ընծայելով գրատան, նա երկու տեսակ բարերարութիւն է անում։ Նախ, իւր քաղաքացիներին և նոցա յետագայ սերունդներին բարերարութիւն է անում, էնդուր որ հարստացնում է ազգային գրատունը,—և ապա իւր սեպհական անձին էլ բարերարութիւն է անում, էնդուր որ մի գիրք ընծայելով հասարակաց գրատան, այդ գրքի փոխանակ, 25, կամ 50, կամ 100 հատ գիրք է գտնում, ուրեմն կատարելապէս վարձատրվում է և հնար է տալիս իւր անձին ինքնակրթութեամբ պարապելու։

«Սակայն, ասում է պ. Լաբուլէ, գուցէ ինձ այսպիսի նկատողութիւն անեն.—«դուք խնդրում էք մեզանից գրեանք, բայց ասացէք տեսնենք. ինչ է ձեր գրատան նպատակը. ինչ քաղաքական և կրօնական համոզմունք ունի դա»։ Այդ նկատողութեանը ես այսպէս կ'պատասխանեմ, շարունակում է նա,—մեր գրատունը մի մեծ դահլիճ է, որի մէջ բան չ'կայ, բայց եթէ պահարաններ, մէջը գրեանք դարսած։ Եթէ պահարանների տեսակ տեսակ գոյներին կարե-

լի չէ քաղաքական և կրօնական նշանակութիւն տալ, ապա ուրեմն մեր գրատունը բնաւ համոզմունք չունի»։—«Բայց մենք այստեղ խօսում ենք ոչ պահարանների, այլ գրատան կառավարողների վերայ։ Մի գուցէ միտք ունեն քաղաքական մտքեր տարածելու։» «Ամենևին ոչ»։—«Եթէ այդպէս է, ապա ուրեմն ինչու համար էք հիմնում այդ գրատունը։»—«Նրա համար, որ ամէն մարդ հնար ունենայ ինքնակրթութեամբ պարապելու, առնալով գրատընից այնպիսի գրեանք, որոնք կարող էին նորան այդ վախճանին հասցնելու.» («Ազգային Կրթութիւն։»—երես 55)։

Ուրեմն պ. Լաբուլէ ինքնակրթութիւն է քարոզում, բայց տեսնենք նա ինչ է ասում իւր տետրակի 56 երեսում։

Խօսելով այն բանի վրայ, թէ ինչ գրքեր հարկաւոր են գրատան համար, և ինչ գրքեր նա կ'ընդունէ, պարոն Լաբուլէ աւելացնում է. «Մենք չենք ընդունիլ միայն այնպիսի գրեանք, որոնց մէջ պարունակվում են կրօնական բանակռուութիւնք. մենք չենք սիրում վիճաբանութիւն, թէ նա լինէր աստուածաբանական, և ցանկանում ենք միայն, որ մեր մէջ թագաւորէր խաղաղութիւն»։

Իսկ ես կ'հարցանեմ պարոն Լաբուլէին. ինչու է քարոզում նա ազգային կրթութիւն, ինչ է կամենում ասել պ. Լաբուլէ այս խօսքով. «մենք ցանկանում ենք միայն, որ մեր մէջ թագաւորէր խաղաղութիւնը»։ Մի թէ վիճաբանու-

թիւնները անխաղաղութիւն պիտի ծնեն, և ինչպէս կարելի է առանց վիճաբանութիւնների, ինքնակրթութեան նպատակին հասնել։ Խաղաղութիւն ինքնակրթութեան մէջ չէ կարող լինել. խաղաղութիւնը ինքնակրթութեան մէջ կանուանվի անշարժութիւն։ Մի՞թէ պ. Լաբուլէ չէ իմանում, որ կրթութիւնը մշտնջենաւոր վիճաբանութիւն ու կռիւ է սեպհական տգիտութեան (մէջ) դէմ։—Այբուբէն սովորելու ժամանակ մարդ պիտի կռվի սեպհական տգիտութեան դէմ, մի ինչ և իցէ գիրք կարդալու ժամանակ մարդը պիտի կռվի նախապաշարմունքների դէմ,—մի ուսում սովորելու ժամանակ մարդ պիտի կռվի իր անհասկացողութեան դէմ։ Երբ որ մարդը քիչ թէ շատ բացվել է, կռիւը էլի չէ դադարում. նա էլի պիտի սովորի, որ իւր հասկացողութեան ընդունակութիւնը չը կորցնէ, նա էլի պիտի կարդայ, որ իւր ճնշած նախապաշարմունքներին հնար չ'տայ կրկին անգամ տիրապետելու նորան։ Նախապաշարմունքը մարդու մշտնջենաւոր թշնամին է, որի դէմ եթէ մարդը չի պատերազմիլ իւր բոլոր կեանքը, նա վտանգի մէջ կ'լինի նորա իշխանութեանը ենթարկվելու։ Նախապաշարմունքը անտեսանելի թշնամի է, որ միշտ աշխատում է մարդու վերայ իշխել, և եթէ բաւական ուշադրութիւն չի դարձնիլ մարդ նորա վերայ,—նա կ'յաղթէ։ Նոյն իսկ պատահել է և պ. Լաբուլէի հետ։

Կան մարդիկ, որոնք թէպէտ և լաւ աշխա-

տող մարդիկ են, բայց մտածողների ոչ մի կուսակցութեան չը պատկանելով, շատ անգամ ձգտելով դէպի անհասանելի գաղափարներ,—մի ինչ և իցէ սկզբունքներ են պաշտպանում և իսկ այդ սկզբունքների դէմ են գործում իրողապէս։

Քարոզելով կրթութիւն, պ. Լաբուլէ չէ նըկատում, որ նա ինքն կրթութեան դէմ է գործում, էնդուր որ ցոյց է տալիս անհամբերութեան (intolérance) օրինակը, արգելք դնելով այնպիսի գրքերին, որոնց նա չէ սիրում, հասարակաց գրատունը մտնելու։

Քարոզելով կրթութիւն պ. Լաբուլէ չէ նկատում, որ նա ինքնակրթութեան արգելք է դընում. էնդուր որ հնար չէ տալիս այս կամ այն տեսակ գրքերին ազգային գրատան մէջ տեղ բռնել, ուրեմն և հնար չէ տալիս ամենեին անարգել պարապել այն գրքերով, որոնց համար մարդ ընդունակութիւն կամ համակրութիւն է զգում։ Քարոզելով խաղաղութիւն, նա չէ նկատում, որ խռովութեան օրինակ է տալիս չընդունելով այս կամ այն տեսակ գրքեր, որոնք նա չէ սիրում, ուրեմն պատճառ է տալիս և միւս անդամներին ինչ և իցէ ուրիշ տեսակ գրքերին արգելք դնել, որոնք նոքա չեն սիրում։

«Մենք հիմնում ենք ազգային գրատունը, ասում է պ. Լաբուլէ, նորա համար, որ ամէն մարդ հնար ունենայ ինքնակրթութեամբ պարապելու, ստանալով գրատնից այնպիսի գրեանք, որոնք կարող են տորան այդ վախճանին հասց-

ներ»։ Ուրեմն չպէտք է արգելէ այս կամ այն տեսակ գրքերը, ենդուր որ կարող են գտնվել այնպիսի մարդիկ, որոնք ինքնակրթութեամբ կ'կամենան պարապել իսկ այն գրքերի միջոցով, որոնք դուք արգելում էք. ուրեմն դուք նոցա արգելք էք դնում «այդ վախճանին հասնել»։ Եւ վատ օրինակ է այդ անհամբերութեան օրինակը։ Այդ օրինակին հետևելով, կ'գան ուրիշ մարդիկ, որոնք ուրիշ տեսակ գրքեր կարգելեն։

Մօտիկ ժամանակում, օրինակ, «Հայկական Աշխարհ» օրագրում, պ. Պիսարևլից թարգմանած յօդուածում, յետագայ առաջադէմ միտք կարդացինք ռոմանների մասին.

«Այս տեսակ ընթերցանութիւնը (Պօլ դը Կօկի, Դիւմաների ռոմանները) ասում է պ. Պիսարևը, դատարկապորտութեան պտուղ լինելով, այլանդակ և անբարոյական բան է,..... և այլն»։

Կ'գան նմանապէս և այնպիսի մարդիկ, որոնք պատմութեան գրքերը կարգելեն,—միւսները (և սոքա բազմաթիւ կ'լինեն) բնական գիտութիւնների գրքեր կարգելեն և այլն։ Ի՞նչ կ'լինի այն ժամանակ ազգային գրատունը, ինչ կ'լինի ինքնակրթութիւնը..... Հասարակութեան այդպիսի անհամբեր յարաբերութիւններից աւելի վտանգաւոր վիճաբանութիւններ կարելի է սպասել, և այդ վիճաբանութիւններից աւելի վտանգաւոր անխաղաղութիւն կարող է ծագել,—քան թէ ուսումնական վիճաբանութիւնն-

րից,—որոնցից այնքան վախենում է պ. Լաբուլէ [1])։

III.

«Գրատունը կ'տարածէ ընթերցանութեան փափաք», ասում է պ. Լաբուլէ. այո, սա դրուստ է, բայց կրկնում եմ թէ գլխաւոր պայմանը, որ գրատունը կարողանար այդ նպատակին հասնել, այն է որ պ. Լաբուլէի նման մարդիկ

---

[1]) Երևի թէ պ. Լաբուլէ ենդուր է վախենում այդքան վիճաբանութիւններից, որ նա շատ անգամ յաղթած է եղել ուսումնական վիճաբանութիւնների մէջ․ —Մանաւանդ „գրականական սեպհականութեան“ (propriété litteraire) հարցի մէջ, որտեղ որ նա, պ.պ. Լամարտին, Վ. Հիւգօ, Պելլետան և Ուլբախ,—այնքան աղքատ տեղեկութիւններ ցոյց տուին իրաւաբանական գիտութեան մէջ․ Յայտնի բան է, որ իրաւաբանական ագիտութիւնը չէ պակասեցնում այդ պարոնների մէջ իւրեանց արժանաւորութիւնը, ինչպէս մօրալիստների (բարոյական գրողներ) և ռոմանիստների մանաւանդ պ.պ. Պելլետանի, Լաբուլէի, և Ուլբախի․—Անկարելի է չ'հրաւիրել հասարակութեան ուշադրութիւնը պ. Լաբուլէի „Փարիզ Ամերիկայում“ (Paris en Amerique) ռոմանի վերայ և նորա „Բարոյական ուսմունքներ“ (Etudes morales) գրքի վերայ․ Պ. Վ. Հիւգօի „Թշուառների“ վերայ, և պ. Պելլետանի „Աշխարհ քայլում է“ (Le monde marche) և նորա „Մայր“ (La mère) անուանով գրքերի վերայ․ Նմանապէս կ'ցոյց տամ պ. Ուլբախի „Յանցաւոր ծնողներ“ (Les parents coupables) անունով գիրքը․ Ցաւում եմ, որ պ. Լամարտինի գրածների մէջ ոչինչ չեմ կարող ցոյց տալ որ ուշադրութեան արժանի լինէր․

արգելք չ'գնեն ամէն տեսակ գրքերին գրատան մէջ տեղը բռնել,—որ ինքնակրթութեամբ պարապող մարդիկ կարողութիւն ունենային այնպիսի գրքերը կարդալ, որոնք նոքա հաւանում են, կամ անարգել կարողանային պարապել ուսման այն մասներով, որոնց համար նոքա ընդունակութիւն են զգում իւրեանց մէջ։

Այն ժամանակ կարելի է սպասել, որ «գրատունը կ'տարածէ ընթերցանութեան փափաք»։

«Իսկ ընթերցանութիւնը, շարունակում է պ. Լաբուլէ, յառաջ կ'բերէ հրապարակական դասախօսութիւնք»։

Շատ անգամն էլ պ. Լաբուլէի ասածի հակառակն է պատահում, այսինքն որ հրապարակական դասախօսութիւնքը առաջ են բերում հասարակութեան մէջ ընթերցանութեան փափաք։

Ֆրանսիայում, կայսերական Վինսեննի հիւանդանոցում (Asile impérial de Vincennes) հիմնած են հրապարակական դասախօսութիւններ արուեստաւորների համար։ Արուեստաւորները, մի քանի ժամանակ հիւանդանոցում մնալով, հիւանդութենի միջոցում, առիթ ունեն երևելի պրոֆեսորների հրապարակական դասախօսութիւններ լսելու, որոնք հեշտ հասկանալի լեզուով են կարդացվում զանազան առարկաների վերայ։ Այդ հրապարակական դասախօսութիւնները տպվում են յետոյ, փոքր տետրակներում, և ծախվում են շատ արժան գնով [1])։

Ծանօթ. [1]) „Conférences popul.ires de l'Asiie

Հասկանալի է, որ արուեստաւորը հետաքրքիր կ'լինի կարդալ տպած այն դասախօսութիւնը, որ նա ինքն պրոֆեսորի բերանից է լսել։ Պրոֆեսորից ուրեմն կախված է այնպէս կարդալ, որ արուեստաւորների հետաքրքրութիւնը շարժվէր։ Արուեստաւորներից շատերի հետաքրքրութիւնը այնքան շարժվում է, որ նոքա չեն բաւականանում այդ փոքր տետրակների ընթերցանութիւնով, իսկ նոցա կարդալուց յետոյ նոքա հարկաւորութիւն են զգում աստւել մանրամասնաբար մեկնել իրանց զանա-

de Vincennes.“ Այդ տետրների գինն է 25 սանտիմից սկսած մինչև 35 սանտիմ (այսինքն 6 կոպէկից սկսած մինչև մօտ 9 կոպէկ)։—Պրոֆէսորների գլխաւոր հրապարակական դասախօսութիւնները սոքա են։

Բօդրիլիար (Baudrillart) կարդաց.—„Փող և նոցա կրիտիկներ“։—„Շռայլութիւն և աշխատանք“։—„Սեփականութիւն“։—„Հրապարակական դասախօսութիւնք և ազգային գրատուններ“։

Կօմբըրուս (Comberousse)—„Կնամարդը գերդաստանի մէջ„։

Պերդօննէ (Perdonnet)—„Երկաթուղիներ“։—„Լուսաւորութեան օգուտը ժողովրդի համար“։

Կատրֆաժ (Quatrefages)—„Մարդու պատմութիւն“։—Շերամապահութիւն“։

Ռիան (Riant)—„Աշխատանք և առողջութիւն“։

Էգգէր (Fgger)—„Թուղթ, հին և նոր ժամանակներում“։

Դօբրէ (Daubrée)—„Ծով և ցամաք“։

Դիւվալ (Duval)—„Նպաստութեան ընկերութիւններ. (Les Societés cooperatives)։

Վադինտօն (Waddington)—„Ժողովրդական նախապաշարմունք“—և այլն։

զան հարցերը։ Այդպէս ծագում է նոցա մէջ ընթերցանութեան սովորութիւնը։ Նոցանից շատերը դուրս են գալիս հիւանդանոցից ոչ թէ միայն առողջ մարմնով, բայց և առողջ խելքով, այսինքն գովելի ձգտողութիւնով դէպի մտաւոր աշխատանքը։

Այդպիսի հանգամանքներում հիւանդութիւնն է եղել պատճառը, որ ընթերցանութեան փափաք տարածվեց մարդկերանց մէջ..... ուրեմն հիւանդութիւնն էլ կարող է բարերարութիւն լինել..... հիւանդ լինելու ժամանակիցն էլ կարող է մարդ օգուտ քաղել իւր խելքը զարգացնելու համար։

«Մեղու Հայաստանի»,
1867, № 49.

ԱՇԽԱՏԵՆՔ[1]։

Եթէ դուք երեսուն տարեկան հասակում իմանայիք, որ ձեր երեխայութեան ժամանակ դուք ջուրն էիք ընկել և ձեզ փրկեց մի մարդ— դուք ի՞նչ կանէիք։ Անշուշտ դուք կ'պտռէիք այն մարդի երեխաներին, եթէ նա երեխաներ ունէր կամ նորա երեխաների երեխաները, և կը յայտնէիք նոցա ձեր շնորհակալութիւն, կամ ձեր կարողութեան մէկ մասը տալով նոցա (եթէ դուք հարուստ էք) կամ, եթէ հարուստ չէք, կաշխատէիք նոցա օգնելու ձեր աշխատանքով։

Եթէ նոցանից մէկը կարդալ ու գրել չէր իմանայ, դուք կ'սովորեցնէիք նորան։ Եթէ միւսը անբարոյականութեան մէջ ընկած լինէր, դուք չէիք արհամարհի նորան, բայց ընդհակառակն ձեր պարտաւորութիւն կլինէր նորան ուղիղ ճանապարհը կանգնեցնել։ Այդպիսի գործը ամէն օրինաւոր մարդի պարտաւորութիւն կը լինէր։

[1]) Պարոն Edmondt About, „Le Progrés" (Էդմօնդ Աբու, Առաջադիմութիւն) անունով գրքից քաղած մտքեր։

Ամէն մարդը երեւում տարեկան հասակում, որ քիչ թէ շատ սովորութիւն ունէ մտածելու, պէտք է հասկանայ, որ նա ևս միևնոյն դրութեան մէջ է։

Ամէն բան, ինչ որ մենք ունենք կեանքումս, և կեանքն ինքն ևս, և մեր առողջութիւնը և դաստիարակութիւնը և մեր բոլոր կայքը և գիտութիւնները, մենք ստացել ենք ուրիշ մարդիկներից, որոնք մեզանից առաջ են ապրել։

Նոքա մեռել են, այն մարդիկ, որոնք աշխատել են մեզ համար և պատրաստել են մեզ մեր կեանքը և այդ պատճառով մենք նոցա չենք կարող յայտնել մեր շնորհակալութիւն։ Բայց որովհետև շնորհակալութիւն յայտնելը լաւ գործի համար ամէն մարդի պարտաւորութիւն է, մենք գոնէ նոցա երեխաներին մեր շնորհակալութիւն յայտնենք, աշխատելով նոցա համար։

Իսկ ամէն մարդիկ, որոնք այժմ կենում են երկրի վերայ, այն հին մարդիկների երեխաներ են, որդիներ և աղջիկներ։

Երկիրս, որի վերայ մենք բնակւում ենք, ոչինչ չէ տալիս մեզ առանց աշխատանքի։ Բնութիւնը ստեղծեց ամէն բան այնպէս, որ մեծ դժուարութեամբ կարող է մարդս նորանից օգուտ քաղել։ Բնութիւնը տալիս է մեզ քարեր, բոյսեր և վայրենի անասուններ, աւելի ոչինչ։ Առաջին մարդիկ իւրեանց զէնքի համար ոչինչ չունէին, այլ միայն իւրեանց տաս մատը։ Ամէն մետաղներ, ինչպէս երկաթը, որոնք հարկաւոր են մարդի զէնքեր և գործիքներ շինելու համար,

բնութիւնը աշխատել է ինչքան կարելի է խոր երկրի մէջ ծածկել։

Շատ պէտք է աշխատել էին մարդիկ, որ առաջին կոպիտ շորեր հնարէին, որ սովորեցնէին վայրենի անասուններին և նոցանից օգուտ քաղէին, և վերջապէս որ բնակարաններ շինէին։

Եթէ դուք ուշադրութիւն դարձնէք ձեր հագուստի վերայ (թէև դուք աղքատ կերպով հագնուած լինէիք), դուք կ՚տեսնէք ինչքան մարդիկ պէտք է աշխատել էին այդ հասարակ շոր շինելու համար։

Գառներին են մեծացրել, որ նոցանից բուրդ ստանան, բուրդը մանել են, մանած բուրդից ապրանք են շինել, շինած ապրանքից դերձիկը շոր է կարել։ Ձեզ հագցնելու համար աշխատել են դերձիկ, կօշկակար, գդակակար, շերամապահ, ոստայնանկ, մանող, և հազար ուրիշ արւեստաւորներ։ Ի՞նչքան դարերի աշխատանք և ինչքան գիւտեր հարկաւոր էին ձեր կօշկի մէկ խից շինելու համար։ Հարկաւոր էր երկաթ գտնել երկրի մէջ, հանքեր շինել, երկաթ ածել, երկաթագործութեան համար հնոց և փուքի հնարել, և այլն։ Կամ ինչքան աշխատանք էր հարկաւոր այն սենեակ շինելու համար, որտեղ դուք նստած էք։ Այն սենեակ շինելու համար աշխատել են քարագործ, հիւսն, քարտաշ, ապակագործ, (որ ապակի է կտրում Ամերիկայից բերած ադամանդով), ներկիչ և այլն։

Եթէ ես չ՚վախենայի ձեր համբերութիւնը

կտրելու, ես կ՚պատմէի ձեզ ինչից է շինած այն գիրքը, որ դուք կարդում էք այժմ, կամ սապոնը, որ դուք գործ էք ածում ձեռներ լուանալու ժամանակ, կամ հազար ուրիշ օգտաւէտ բաներ։

Կասեմ ձեզ միայն ձեր անձի մասին երկու խօսք։ Ձեր հոգևոր ու մտաւոր կեանքն ևս ձեր սեփական աշխատանքի պտուղ չէ։ Քանի մարդիկ ձեզանից առաջ աշխատել են, գրել են, խօսել են, գիտութիւններ են տարածել.—ինչ որ դուք հասկանում էք, իմանում էք, ինչ որ սովորել էք կամ գրքերից, կամ ուրիշ մարդիկների խօսակցութիւններից,—այդ բոլորը դուք ստացել էք այն մարդիկներից, որոնք ձեզանից առաջ էին ապրում մեր երկրի վերայ։ Վերջապէս ձեր առողջութեան համար, և այն ուսումը սահմանելու համար, որը բժշկական ուսում է անուանվում, ինչքան մարդիկ պէտք է սովորել էին անցած դարերում, և ուսեալ մարդիկ ինչքան պէտք է աշխատել էին։

Հասկանում էք դուք այժմ, թէ այն ամեն մարդիկ, որոնք ձեզանից առաջ են ապրել, ձեր բարեկամներ են, թէպէտ մեծ մասով ձեզ անծանօթ, և որ դուք պարտական էք միևնոյն կերպով ապագայ սերունդներին ևս բարերարութիւն անել։ Բաւական չէ վատը չգործել պարտքը վճարելու համար, այլ հարկաւոր է լաւութիւն ևս անել, այսինքն ինչ որ իցէ ձեզ ևս թողել են այն մարդիկ, որոնք ձեզանից առաջ ապրեցին։

Ինչոր մարդիկ գտել են երկրի վերայ, նոքա ծանր աշխատանքով և մեծ գնով են գտել, որովհետև նոցա ամէն կողմից արգելքներ էին սպասում կեանքում։ Եւ յիրաւի, որքան արգելքներ կան կեանքում թէ սով, թէ հիւանդութիւններ, թէ ջրհեղեղներ, թէ վերջապէս տգիտութիւնը, որ նմանապէս մեծ արգելք է մեր կեանքը լաւացնելու համար։

Եւ մարդը, որ վատութիւններ է գործում ուրիշ մարդիկներին, բարեկամանում է այդ բոլոր ցաւերի հետ։ Ուրեմն մարդը, որ իւրան մարդ է զգում, և մարդի արժանաւորութիւն է հասկանում, չ՚պէտք է բարեկամանայ այդ բոլոր ցաւերի հետ։ Ուստի աւելի մեծ արժանաւորութիւն է ինձ համար մարդիկներին օգնել իւրանց պատերազմում բնութեան դէմ, քան թէ ցաւերի վատ ազդեցութեանը օգնել։

Ուրեմն, ասում եմ ես, մեր պարտքը մարդկութեան վճարելու համար մեզ հարկաւոր է աշխատել, մեզ հարկաւոր է մեզանից յետոյ ինչ և իցէ լաւութիւն թողնել։

Մեզանից չեն պահանջում հրաշքներ կատարել, բայց կրկնում եմ, ինչ և իցէ լաւութիւնը թողնել։

Հնդկաստանի իմաստութիւնը ասում է թէ, «ով որ մէկ ծառ է տնկել մեռնելուց առաջ, նա անօգուտ չէ ապրել կեանքում»։ Արդարև այն մարդը աւելացրեց ինչիցէ մարդիկների հարստութեանը, ծառը կամ պտուղներ, կամ գոնէ շվաք կ՚տայ ապագայ մարդիկներին։

Ծառ տնկել, տուն շինել, գործիք կամ դեղ հնարել, երեխաներ դաստիարակել, նոր միտք մեկնել, ճշմարտութիւն յայտնել, գիրք գրել, պատկեր նկարել,—ահա այն բաներ, որ ամէն մէկը մեզանից կարող է աւելացնել հասարակաց գումարին։

Մենք աւելի լաւ ենք և բաղդաւոր ենք քան մեր նախնիները. անենք այնպէս, որ մեր յետագայ սերունդները մեզանից լաւ և բաղդաւոր լինեն։

Չկայ այնքան աղքատ, կամ այնքան անշնորհ մարդ, որ չ'կարողանար առաջադիմութեանը աշխատակից լինել։ Ով որ ծառ տնկեց, լաւութիւն արեց, ով որ այդ ծառից տախտակներ շինեց, լաւութիւն արեց, ով որ տախտակներից նստարան շինեց, լաւութիւն արեց, ով որ նստարանի վերայ նստեց, երեխային ծնկների վերայ վերառաւ և նորան այբուբէն սովորեցրեց, առաւել ևս մեծ լաւութիւն արեց։ Առաջին երեք մարդիկ աւելացրին մի բան մարդկութեան գումարին, իսկ վերջինը իրան մարդկութեանը մէկ բան աւելացրեց։ Նա մէկ մարդին լուսաւորութիւն տուեց, ուրեմն նորան աւելի կատարեալ շինեց։

Ես ասացի թէ, մեզանից չեն պահանջում հրաշքներ կատարել աշխատելու ժամանակ, բայց ինչ և իցէ գործ թողնել ապագայ սերունդներին։ Եւ այն մարդիկներին, որոնք իւրանցից յետոյ ինչևիցէ աշխատանք կամ լաւութիւն են թողել, ես անուանում եմ «առաջադի-

մութեան մշակներ»։ Այն մարդը, որը աշխատում է առաջադիմութեան համար, անշուշտ մի բան լաւացնելու նպատակ ունէ կեանքում։

Եւ առաջադիմութեան մշակներ սոքա կարող են լինել։

Երկրագործներ, թէ հարուստ թէ աղքատ։ Արուեստաւորներ, պարոն Լէսէպսից սկսած, որը Սուէզի կիրճ է փորում, մինչև վերջին քարտաշը։ Արհեստագէտներ, դերասաններ, բանաստեղծներ, երաժիշտներ, նկարիչներ,—ամենաերևելի մարդիկներից սկսած մինչև մեր երկրի աշուղները։ Ուսումնականներ, երևելի գիտնական Արագօյից սկսած մինչև գիւղական ուսումնարանի վարժապետը։ Ամէն տեսակ վաճառականներ, հարուստ պ. Ռօտշիլդից սկսած, որը Թուրքերի Սուլթանին միլիոններ է ծախում, մինչև խեղճ դալալը կամ թէ այն երեխան, որն որ փողոցում ծծմբաններ է ծախում։

Քանի լուսաւորվում է մարդկութիւնը, այնքան պէտք է շատանան աշխատողներ, կամ ինչպէս ես նոցա անուանեցի «առաջադիմութեան մշակներ»։

Անցած ժամանակներում ուսեալ մարդիկ և աշխատասէր մարդիկ փոքր թւով լինելով, մարդկութիւնը սակաւ էր անում նոր գիւտեր, կամ օգտաւէտ բաներ հնարում։ Եւ հասարակութիւնը, որ նախապաշարմունքով լի էր, արգելքներ էր դնում ուսեալ մարդիկների աշխատանքներին։

Շատ ժամանակ էր անց կենում մինչև որ

մարդիկ հասկանում էին նոր գիւտի օգուտը և կատարելագործում էին նորան։ Եօթն հարիւր տարի անցկացան մինչև որ մեծ և ծանր ժամացոյցը գրպանի փոքր ժամացոյց դարձաւ։ Արդէն երկու հազար տարի էր հնարած բևեռացոյցը, երբ որ Կօլումբը նորանից օգուտ քաղեց Ամերիկա գտնելու ժամանակ։ Յայտնի չէ երբ էր հնարած վառօդը Չինաստանում, բայց Չինաստանից նա հասաւ Եւրօպա չորրորդ դարում, և միայն ինն հարիւր տարուց յետոյ շինեցին առաջին թնդանօթ։

Մեր ժամանակներում բանը այդպէս ծանրաքայլ չէ գնում։ Ամէն նոր գիւտից իսկոյն օգուտ են քաղում և կատարելագործում են ամէն հնարած բան փոքր ժամանակում։ Եւ այժմ մարդիկ շուտ շուտ են հնարում նոր բաներ, որովհետև աշխատող և ուսեալ մարդիկ շատացան։ Պատահում է մինչև անգամ որ երկու կամ երեք ուսումնականներ զանազան երկիրներում միևնոյն ժամանակին միևնոյն բան են հնարում։ Ֆրանսիացի գիտնական Լէվէրիէ և ամերիկացի մէկ ուսումնականը միևնոյն ժամանակին մէկ նոր աստղ էին գտել։ Փոքր ժամանակից յետոյ միևնոյն բանի վերայ իւր աշխատանքն է յայտնում մէկ անգլիացի ևս։

Ո՞վ հնարեց ֆօտօգրաֆիա (լուսատիպ)։ Կարելի չէ ասել, բայց կարելի է ասել, թէ ով աշխատեց այդ գործի վերայ։ Զանազան ժամանակներում աշխատեցին Դագէռ, Տալբօ, Լէրէբուր, Ֆիզօ, Ֆուկօ և ուրիշ շատ ուսումնականներ, որոնք ֆիզիկայով և քիմիայով էին պարապում։

Քանի կ'շատանան մարդկութեան մէջ ուսումնականներ և աշխատող մարդիկ, այնքան շուտ շուտ կ'հնարվեն նոր օգտաւէտ բաներ, և նոր գիւտի փառքը չի պատկանի մէկին, բայց շատերին։

Եւ աշխատող մարդիկների անունները մեծ թւով լինելով, մեզ անկարելի կ'լինի այդ բոլոր անունները պահել և իմանալ։ Ի՞նչ վնաս, թող յայտնի չ'լինեն ապագայ սերունդներին մեր անունները։ Մեզ բաւական է, եթէ մեր աշխատած գործը օգուտ կ'բերէ մարդկութեանը։

Թող կորչէ անունը—բարի գործը չի կորչի.....

Աշխատենք։

„Հայկական Աշխարհ",
1867, № 4—5.

ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ:

Առաջադիմութեան համար հարկաւոր է մարդիս ոչ թէ միայն շատ բաներ սովորել, այլ և հարկաւոր է նորան շատ բաներ մոռանալ:

Հէրցէն

I.

Քանի անգամ լսած էի ես յետագայ խօսքերը. «Ինչ լաւ կ'լինէր, եթէ Թիֆլիզում համալսարան լինէր»: Կամ թէ այսպիսի խօսքերը. «Ինչքան կ'տայի ես, որ իմ որդուն քաղաքում կարողանայի պահել, փողը տալիս ենք երեխաների ուսման համար, աւելի լաւ չէր լինի որ այդ փողը այստեղ միսաէինք և երեխաներին մեզ մօտ պահէինք, նոցա ուսման ժամանակ»:

Սորանով մեր բարի ծնողները կամենում են ցոյց տալ իւրեանց սէր դէպի իւրանց երեխաները: Գիտէք—ինչ է սէրը: Սէրը այնպիսի զգացումն է, որ մարդիս մէջ ձգտումն է դնում

բաղդաւորեցնելու սիրած անձը: Ուրեմն մեր ծնողները կարծում են բաղդաւորեցնելու ու բարերարութիւն անելու իւրանց երեխաներին, պահելով նոցա անդադար հնազանդութեան տակ իւրանց գերդաստաններում:

Ասենք Թիֆլիզում համալսարան կայ: Ասենք ես երէկ գիմնազիստ էի Թիֆլիզի գիմնազիայում և այսօր միևնոյն քաղաքի մէջ ուսանող դարձայ. փոխվեցա՞ւ արդեօք իմ դրութիւնս:

Ամենևին ոչ: Այսօր երէկվան նման ես դասերից յետոյ տուն եմ գալիս, նոյնպէս տեսնում եմ իմ գերդաստանի կեանքը, նոյնպէս լսում եմ իմ ծնողների խօսակցութիւնը, նոյնպէս երեխայ եմ:

Ուրեմն ձեր բոլոր ցաւը, կասեն ինձ, այն է որ երեխան իւր դրութիւնը չէ փոխում, իւր գերդաստանում մնալով:—Այո, այդ է իմ ցաւը և գիտէք ինչի: Այնոր համար որ ես կ'կամենայի, որ մարդիկ լաւանան, (սա կարծեմ վատ ցանկութիւն չէ), բայց լաւանալ մարդիկ կարող են միայն փոխելով իւրանց դրութիւնը:

Մենք լաւ մարդիկ ենք, այդ ճշմարիտ է, բայց մեր երեխաներ մեզանից լաւ պէտք է լինեն, իսկ մեր երեխաների երեխաներ առաւել ևս լաւ կ'լինեն: Ինչի է այդպէս: Այնոր համար որ ինչքան գնում են մարդիկ, այնքան շատանում են գիտութիւններ: Գիտութիւնների շատանալու ժամանակ մարդիկ աւելի են մտածում, իսկ մտածելու ժամանակ մարդիկ լաւա-

նում են։ Շատ մտածելուց լաւանալը մարդիկ-ների մէջ ասում են «զարգացումը»։

Մենք ամէնքս պէտք է աշխատենք զարգացնել մեր խելքը, որովհետև այն ժամանակ աւելի հեշտ կ'լինի մեզ լաւացնելու մեր կեանքը, աւելի ևս հեշտ կ'լինի մեր հայրենակիցներին օգուտ բերել, ուրեմն և հետագայ սերունդներին ևս առաւել լաւ կեանք պատրաստել։

Դուք համաձայն էք ինձ հետ, սիրելի ընթերցող [1]), որ մենք պէտք է աշխատենք մեր խելքը զարգացնելու, բայց ասացէք ինձ, դուք ինչպէս էք կարծում, մենք որտեղ կարող ենք աւելի լաւ զարգացնել մեր խելքը՝ գերդաստանում ապրելով, կամ թէ մեր ծնողներից հեռու մնալով ուսում առնելու ժամանակ։

Ես ասում եմ, որ երիտասարդի համար աւելի հեշտ է իւր խելքը զարգացնել իւր գերդաստանից հեռու ապրելով, քան թէ իւր ծնողների մօտ մնալով։—«Ինչի՞ է այդպէս, կասեն ինձ, միթէ չէ կարելի սովորել ամէն տեղ»։ Այդ ճշմարիտ է, պատասխանում եմ ես, բայց մարդս բացվելու ու առաջ գնալու համար բաւական չէ որ սովորէ, հարկաւոր է նմանապէս, որ նա և չատ մոռանայ։ Եւ մոռանալ մինչև անգամ աւելի դժուար է քան թէ սովորել։ Ի՞նչ է հարկաւոր մեզ մոռանալ։ Հարկաւոր է մոռանալ գեր-

1) Ես ասում եմ „ընթերցող", բայց չեմ իմանում լինում են արդեօք ընթերցողներ այդպիսի յօդուած-ների։

դաստանի մէջ ստացած թիւր և ցուրտ մտքերը, բարքերի և վարքի կոպտութիւնը և երեխայութիւնից գլխի մէջ արմատացած նախապաշարմունքը։

Ի՞նչ է առաջ գնալը, ինչ է առաջադիմութիւնը։ Առաջադիմութիւնը կեանքիս լաւանալն է։ Իսկ երբ որ մարդս նախապաշարմունքն ունի, նա չէ կարող իւր կեանք լաւացնել, որովհետև նախապաշարմունքն այնպիսի զգացմունք են, որ չեն թողլ տալիս մարդին հին բաների ու սովորութիւնների պակասութիւններ տեսնել։ Եւ եթէ մարդս տեսնէ ևս նոր բաների արժանաւորութիւնը, նա դարձեալ չի թողնի հին բանը և չի ընդունի նորը, միայն այն պատճառով, որ նորա նախնիները չէին ընդունել այն նոր բանը։

Ծնողների հետ ապրելով իւր ուսման ժամանակ, ուրիշ մարդիկներին չ'տեսնելով, բացի իւր քաղաքի մարդիկներից, երիտասարդը չի կարողանայ փոխել իւր սովորութիւններ, իւր կարծիքներ և հեռացնել իւրանից նախապաշարմունքը։

Ասենք թէ մի գետի ջուրը վատ համ ունի․ այն մարդը, որ իւր երեխայութիւնից սովորել է այդ գետի ջուր խմել, չէ նկատում ջրի վատ համը։ Բայց թող նա գնայ մի քանի ժամանակ ուրիշ քաղաք, մի թող խմէ ուրիշ ջուր,— և վերադառնալով նա անպատճառ իւր հայրենիքի ջրի վատ համը կ'նկատէ։ Նոյնպէս պատահում է և նախապաշարմունքի հետ։ Մարդիկ նախա-

պաշարուած լինելով, կարծում են թէ նախապաշարմունք չունեն. բայց թող հեռանան քանի մի ժամանակով ուրիշ մի երկիր, թող ապրեն ուրիշ հասարակութեան մէջ, ուրիշ մարդիկների հետ,—և այն ժամանակ այն մարդիկ շատ պարզ կ'տեսնեն իւրանց հասարակութեան և իւրանց սեփական նախապաշարմունքը։

Բացի սորանից, գերդաստանում ապրելը, ուսում առնելու ժամանակ, մի ուրիշ վատ կողմ ևս ունի։ Իւր ծնողներից միշտ կախված լինելով, երիտասարդը չէ ուսումնասիրում կեանքը, չէ զարգացնում իւր բնութիւնը, միշտ անփորձ է մնում կեանքի մէջ։ Ոչինչ չէ զարգացնում այնպէս երիտասարդին, ինչպէս անկախ կեանքը, երբ որ մարդը սովորում է սեփական ընդունակութիւններին և բնութեան սովորութիւններին հաւատ ընծայել, ստիպված լինելով օգնել իւր անձին կեանքի ամէն դժուարութիւնների մէջ։

Այս պատճառով ես ասում եմ թէ որքան շատ կերթան մեր երիտասարդներ Ռուսաստան կամ արտասահման, այնքան լաւ կ'լինի։ Այնոր համար որ այնտեղի հասարակութիւնները մեր հասարակութիւնից առաւել զարգացած են։

Այս պատճառով ահա ես իմ կողմից չէի կամենայ, որ այժմ համալսարան լինէր Թիֆլիսում, որովհետև գիտեմ, որ այն ժամանակ շատ սակաւ երիտասարդներ ուրիշ երկիրներ կերթան, իսկ մեր քաղաքի մէջ մնալով նոցա համար ա-

ւելի դժուար կ'լինի ինչ և իցէ զարգացման աստիճանին հասնել, որովհետև նոքա միշտ ստիպված կ'լինեն ծնողների ազդեցութեան տակ մնալ։ Իսկ տգէտ ծնողների ազդեցութեան տակ մնալը անպիտան բան է։ Եւ մենք շատ լաւ գիտենք—ինչ տգիտութիւն կայ մեր հասարակութեան մէջ...։

Որ գերդաստանը լաւ ազդեցութիւն ունենայ երիտասարդի վերայ, ծնողները և մանաւանդ մայրեր այնքան տգէտ չ'պէտք է լինեն։ Մօրից է կախված լաւ կամ վատ դաստիարակութիւն գերդաստանում։

Ես հաւատում եմ, որ հին Հայաստանում (ինչպէս ևս վկայում են հայկական մատենագրողներ) հայկական կնամարդը քիչ թէ շատ բացված էր, որ նա անկախ էր, ազգասիրութեամբ էր ոգևորված, որ նա ազդեցութիւն ևս ունէր ազգային գործերի վերայ հասարակութեան մէջ։ Այո, այն հասարակութեան կնամարդիկ, որից դուրս են եկել Վարդանի և նորա զօրքի նման, ազգասիրութեամբ ոգևորված, քաջութեամբ լի երիտասարդները,—այն հասարակութեան կնամարդիկ տգէտ ստրուկներ չէին կարող լինել....։ Բայց այն ժամանակը անցել է. հայկական հասարակութիւնը մահմեդականութեան տակ էր ընկել։

Կնամարդը ստրուկ էր դարձել, ծածկել էր իւր երեսը։ Միայն ռուս քրիստոնէական տէրութեան տակ Կովկասում հայկական կնամարդը նորէնչ ունչ քաշեց, և փոքր առ փոքր բաց

արեց իւր երեսը։ Գիտէք սա ինչ է նշանակում, երբ որ կնամարդը ստիպված է իւր երեսը ծածկել։ Սա նշանակում է, որ հայրը հաւատ չէ ընծայում իւր աղջկան, մարդը չէ հաւատում իւր կնոջը...։ Մինչև որ կնամարդը անկախութիւն, ուսում չի ունենայ, գերդաստանի ազդեցութիւնը լաւ չէ կարող լինել։ Կնամարդը մտաւորական ստրկութեան տակ լինելով, իւր նման և երիտասարդներ է պատրաստում...։

Կան մեր մէջ հարուստ մարդիկներից ոմանք, որոնք կրկնում են, թէ. «Ես շատ կ'տայի, որ կարողանայի այստեղ համալսարան ունենալ, և իմ որդուն ինձ մօտ կարողանայի այստեղ պահել իւր ուսման ժամանակ....»։ Թող մեր հարուստ մարդիկ մի ուրիշ, աւելի մեծ բարերարութիւն անեն. փոխանակ Թիֆլիսում համալսարան ցանկանալու, թող այն շատը, թող այն աւելորդ փողերը նոքա գործ դնեն իւրանց հայրենակիցներից աղքատ երիտասարդներին օգնելու, նոցա ուրիշ երկիրներ ուղարկելու, որ նոքա ուսում առնեն զանազան համալսարանների մէջ, որ յետ դառնալով նոքա իւրանց հասարակութեանը օգտաւէտ կարողանային լինել....։ Եթէ ոչ, ուրիշներին ևս չենք օգնում, և սեփական որդիների մտաւորութիւն ևս սպանում ենք մեր անպիտան դաստիարակութեամբ, մեր անտանելի նախապաշարմունքով։

—

II.

Մի անգամ ես գնացի մի ծանօթին տեսնելու։ Սկսեցինք խօսել դաստիարակութեան մասին, և խօսք ընկաւ մեր երկրի վերայ ևս։

«Դուք ունի՞ք համալսարան Թիֆլիսում, հարցրեց ինձ իմ ծանօթը։

—Ոչ, պատասխանեցի և ես իմ կողմից չէի կամենայ, որ այժմ համալսարան լինէր Թիֆլիսում։

«Ի՞նչի է այդպէս, ասաց նա։

—Ես չէի կամենայ, որ համալսարան լինէր մեզանում այնոր համար, որ մեր հասարակութիւնը բացված չէ ամենևին, պատասխանեցի ես։

Նա սկսեց ծիծաղել, ես լուռ էի մնում. նա շարունակում էր ծիծաղել։

«Զարմանալի միտք էք յայտնում դուք, վերջապէս ասաց նա, ես կարծում էի, որ ընդհակառակն ձեր հասարակութեան տգիտութեան պատճառով դուք պէտք է ցանկանայիք, որ ձեր մէջ համալսարան լինէր, որովհետև համալսարանը միշտ լուսաւորութիւն է տարածում երկրի մէջ։

—Ի՞նչ էք հասկանում լուսաւորութիւն բառով։ Այն, որ մեր մէջ աւելի կ'լինեն ուսումն աւարտած երիտասարդներ. այդպէս չէ։ Բայց այդ բաւական չէ։ Ցանկալի կ'լինէր, որ բացված մարդիկ առաւել մեծ թւով լինէին մեր մէջ։

«Ուրեմն դուք կարծում էք, որ եթէ Թիֆլիսում համալսարան լինէր, երիտասարդ ուսանողներ բացված չէին լինիլ։

—Այո, այդ է իմ միտքը, և ես ձեզ կասեմ ինչի վերայ եմ հիմնում ես այս իմ միտքը։ Մեր հասարակութիւնը զարգացած չէ։ Ծնողները չ'զարգացած և տգէտ լինելով, պահում են միշտ երիտասարդներին մտաւորական ստրկութեան մէջ։ Միշտ իւրանց գերդաստանում մնալով և ուրիշ մի կեանք և հասարակութիւն չ'տեսնելով, երիտասարդներ չեն կարող ազատվել գերդաստանում ստացած նախապաշարմունքից. իսկ ձեզ յայտնի է, որ միայն մի հնար կայ օրինաւոր կերպով զարգացած մարդ դառնալու, դա է—նախապաշարմունքից ազատվել։ Իւրանց գերդաստաններից հեռու մնալով, մի ուրիշ հասարակութեան մէջ ապրելով, երիտասարդներ նըկատում են իւրանց նախապաշարմունքը, որովհետև ազատ են լինում, ուրիշ մարդիկներին են տեսնում և ստիպված չեն լինում անդադար հնազանդութեան տակ մնալ, ինչպէս իւրանց գերդաստանի մէջ։ Այդ պատճառով ես կ'կամենայի, որ մեր երիտասարդներն հեռու գնան մեր քաղաքից։

«Ես ձեզ հասկանում եմ, ասաց ինձ իմ ծանօթը, բայց տեսնում եմ, որ դուք մի բան մոռացաք,—այն է, որ համալսարանը կարող է նմանապէս ազդեցութիւն ունենալ և ծնողների զարգացման վերայ»։

—Ի՞նչպէս կարող է նա ազդեցութիւն ու-

նենալ ծնողների վերայ։ Երիտասարդների միջոցով նա չէ կարող ազդեցութիւն ունենալ, որովհետև նոքա իւրանք զարգացած չեն լինի, իսկ ծնողները չեն գնայ դասախօսութիւններ լսելու։

«Ի՞նչպէս չեն գնայ, բացականչեց նա, եթէ դասախօսութիւններ հասարակական կ'լինեն»։

—Այդ ուրիշ բան է, եթէ դասախօսութիւններ հասարակական կ'լինէին։ Այն ժամանակ հարկաւոր ես չէ ուսումնարան հիմնել, որ համալսարանի անուն ունենար, և մենք շատ ուրախ կ'լինէինք, եթէ ոչ միայն Թիֆլիսում, բայց և Կովկասի ամէն քաղաքի մէջ հասարակական դասախօսութիւններ կարդան։

Մենք միմեանց չէինք հասկանում, որովհետև դուք, արտասահմանում բնակելով, համալսարանի վերայ խօսելու ժամանակ, այստեղի համալսարաններ օրինակի համար էիք առնում, իսկ ես մեր համալսարանների մասին էի խօսում....

Այստեղ ես պէտք է մի խօսք ասեմ արտասահմանի համալսարանների վերայ, որ մեկնեմ իմ միտքը։ Արտասահմանում, օրինակ Զվէյցարիայում, հասարակական օրէնքները արգելք չեն դնում ոչ ոքին համալսարան գնալու և դասախօսութիւններ լսելու։ Մինչև անգամ կանանց արգելված չէ։ Բայց դարձեալ դուք երբէք կանանց չէք պատահի համալսարաններում, կամ թէ մի քանիսներին կ'տեսնէք—,սոքա օտարազ-

գիներ են անպատճառ։ Շվէյցարիայումն ևս նախապաշարմունք կան, և այդ նախապաշարմունք և հին արմատացած սովորութիւններ թոյլ չեն տալիս մասնաւոր մարդիկներին առաջին քայլ անելու, և կանանցը համալսարան ուղարկելու ուսում առնելու համար։

Բայց հասարակական դասախօսութիւններում կանայքը մեծ թւով են լինում։

Կան մինչև անգամ կանայք, որոնք հասարակական դասախօսութիւններ են կարդում կանանց հասարակութեան համար, և ուր արգելված չէ և տղամարդիկներին ևս գնալու։ Մօտ ժամանակներում մի Ֆրանսիացի կինը ճառէր Սէզի անունով անցկացաւ գրեթէ բոլոր Եւրոպա, մեծ քաղաքներում հասարակական դասախօսութիւններ կարդալով, և ամէն տեղ նորա լսողները մեծ թւով էին....

Վերև ասած խօսակցութիւնից յետոյ ես սկսեցի մտածել իմ ծանօթի խօսքի վերայ, և տեսայ, որ մեր հասարակութեան հարկաւորութիւններին յարմար կ՚լինէր այնպիսի համալսարան, որտեղ դասախօսութիւններ հասարական լինէին։

Ի՞նչ է հասարակական դասախօսութիւնը։

Սա որևիցէ մի առարկայից դասախօսութիւն է, որ կարդվում է ամէնի համար, և ուրեմն ամէնի համար հասկանալի պէտք է լինի։ Ֆրանսիացի ուսումնական Արագօ ասում էր, որ իւր դասախօսութիւններ Փարիզում կար-

դալու ժամանակ նա միշտ ուշադրութիւն էր դարձնում մի ամենաանգէտ լսողի վերայ։ Օրինակ մի արուեստաւորի վերայ ուշադրութիւն դարձնելով, նա աշխատում էր նորան պարզեցնելու բանը։ Երբ որ նա տեսնում էր այդ մարդի երեսից, որ նա հասկացաւ նորա մեկնութիւնը, նա համոզված էր, որ մնացած լսողների մեծ մասը ևս նորան հասկացաւ։

Այդպիսի ուղղութեան դասախօսութիւններ չեն կարող, յայտնի բան է, այն համալսարանական դասախօսութիւնների տեղ բռնել, որտեղ երիտասարդներ սիստէմատիկական կերպով սովորում են մի որ և իցէ գործը, բայց նոքա ուրիշ արժանաւորութիւններ ունեն։

Եթէ մեզ մօտ հիմնվէին այդպիսի դասախօսութիւններ, այն մարդիկ, որոնք անպատճառ կամենում են ուսում աւարտել ռուսական համալսարանի մէջ, դարձեալ կերթային մեծ թւով Ռուսաստան, որովհետև հասարակական դասախօսութիւններ, իւրանց թեթև և ընդհանրական ուղղութեամբ չեն կարող բաւականութիւն տալ այն մարդիկներին, որոնք մասնաւոր կերպով և մանրամասնաբար են կամենում պարապել որ և իցէ առարկայով։ Բայց միևնոյն ժամանակ այդ հասարակական դասախօսութիւններ դարձեալ այնքան տեղեկութիւններ կարող են տարածել, որ այն երիտասարդներն, որոնք առիթ կամ կարողութիւն չունենալով ուրիշ համալսարաններ գնալու ստիպված են լինում հայրենիքի մէջ մնալու, դարձեալ մեծ

օգուտ կ՚քաղէին այդ հասարակական դասախօսութիւններից։ Վերջապէս հասարակական դասախօսութիւններ թոյլ կ՚տան քաղաքի ամէն բնակչին, թէ երիտասարդին, թէ ծերին և թէ կանանց, ծանօթանալ քիչ թէ շատ գիտութեան հետ։ Սորանից բարեկամութիւնը կ՚ծագէ կանանց և այրմարդիկների մէջ, ծերի և երիտասարդի, հօր և որդու մէջ։ Սորանով կոչնչանայ այն թշնամութիւնը, որ միշտ ունեալ երիտասարդի և տգէտ ծեր մարդի մէջ է լինում։ Կոչընչանայ այն կասկածը, որ ծնում է ուսումը տգէտ մարդիկների մէջ, որովհետև տգէտ մարդիկ առիթ չունենալով գիտութեան խօսք լսելու, գիտութիւն բառով անբարոյականութիւն են հասկանում։

„Հայկ. Աշխ.", 1867, № 9.

ՔԱՆԻ ՄԻ ՄՏՔԵՐ։

—

«Ինչի՞ ենք ուսուցանում երեխաներին», հարցնում էի ես մի յօդուածի մէջ[1]). և պատասխանեցի. «որ բանանք նոցա միտք և դատողութիւն, որ պատրաստենք նոցա կեանքի համար և հաստատ հիմք դնենք նոցա մէջ գիտութիւններ ստանալու համար»։ Եւ այժմ ես կաւելացնեմ. «որ նոյնպէս զարգացնենք երեխաների մէջ բարոյականութիւն»։

Միևնոյն յօդուածի մէջ ես մտաբերում էի կարդացողին ամերիկացիների դաստիարակութեան մի կանոն, թէ «դաստիարակութեան մէջ չ՚պէտք է այնքան ուշադրութիւն դարձնել գիտութիւնները ստանալու, որքան միտքը զարգացնելու վերայ»։ Գիտութիւնները ստանալ մարդը կարող է միայն այն ժամանակ, երբ նորա միտքը զարգացած է և պատրաստ է գիտութիւններ ստանալու։

Ուրեմն ուսման նպատակն է երեխաների մէջ միտք և բարոյականութիւն զարգացնել։

---

[1]) («Մեղ. Հ-ի» 13 և 14 №№ 1864).

Ի՞նչ կերպով կարող ենք այդ նպատակին հասնել։

Միտք զարգացնելու համար հարկաւոր է ընտրել այնպիսի առարկաներ, որոնք հասանելի են երեխայի համար։ Բայց հարկաւոր է ասել, որ մարդիկ հաւասար ընդունակութիւններով չեն ծնվում։ Մէկ երեխայ մի առարկայի ընդունակութիւն է ցոյց տալիս, միւսը ուրիշին։ Եւ եթէ չէք իմանում ինչ բանին ընդունակ է երեխան, նորա խելքը չափանելու համար, տուէք նորան այնպիսի դաստիարակութիւն, որ նա փոքր թէ շատ ամեն առարկաների վերայ տեղեկութիւն ունենայ։ Ես ասում եմ տեղեկութիւն ունենայ և ոչ թէ իմանայ։ Հարկաւոր չէ երեխային առարկաներ իմանալ, բաւական է, որ նոցա վերայ հասկացողութիւն ունենայ, որ նա կարողանայ զարգացնել իւր միտքը, այսինքն տեսնել ինչ բանի նա ընդունակ է և ինչ բանի ընդունակ չէ։ Այն ժամանակ նա, մեծանալով և հասկանալով թէ ինչ առարկայի ընդունակութիւն է զգում նա իւր մէջ, կընտրէ այն առարկան և կ՚պարապէ նորանով առանձնապէս։

Այդ պատճառով կարելի է ասել թէ մարդիկ սպանում են իւրեանց երեխաների միտքը, երբ դեռ փոքր հասակից, չիմանալով երեխաների ընդունակութիւնը, ստիպում են նոցա այս կամ այն բանով պարապել, այս կամ այն առարկայ ընտրել։ Մէկին ստիպում են զինուորական լինել, միւսին վաճառական։ Երեխաները

փոքր հասակից ծնողներից նշանակած ուսումնարանը տուած լինելով և պարապելով նշանակած առարկաներով, կորցնում են իւրեանց բնական ընդունակութիւններ, և շատ անգամ նշանակած առարկաներ եւս լաւ չեն կարողանում սովորել, որովհետև նոցա ընդունակութիւն չեն զգում իւրեանց մէջ։

Այդ բաւական չէ։ Այդպիսի ստիպողական ուսումը ազդեցութիւն ունի նորա բարոյականութեան վերայ եւս։

Երեխան ուրիշ առարկաներ չիմանալով, և պարապելով միշտ ծնողներից նշանակած առարկայով, որի ընդունակութիւն չունի նա, կորցնում է վերջապէս հաւատ դէպի իւր հասկացողութիւնը։ Նա իւրեան անընդունակ տղայ է համարում, աւելորդ արարած աշխարհիս երեսին։ Իսկ երբ որ մարդս իւրանից, իւր հասկացողութիւնից յոյս չունի, նորան մնում է միայն իւրեան արհամարհել և անմիտ ու անգործ և անբարոյական կեանք վարել։

Ուրեմն առաջին նա կորցրեց ընդունակութիւն, և երկրորդ՝ բարոյականութիւն։

Խելքը և բարոյականութիւնը մեծ կապակցութիւն ունեն միմեանց հետ։ Հարկաւոր չէ ամէն առարկայ իմանալ հաստատապէս բարոյական մարդ լինելու համար, բայց հարկաւոր է ամէն բանի վերայ ուղիղ հասկացողութիւն ունենալ։

Այն մարդը, որ ուղիղ հայեացք ունի աշխարհիս և մարդիկների վերայ, չէ կարող վատ

մարդ լինել։ Մեծ մասով մարդիկ այն պատճառով վատ են գործում, որ չեն մտածում արած բանի վերայ։ Ե՞րբ էք տեսել որ մարդը ուրիշ մարդին վատութիւն անելու ժամանակ, հաստատ իմանար, թէ նա վատութիւն է անում. մարդը վատ գործ ևս անելու ժամանակ կարծում է թէ նա արդար է։ Ինչի է այդպէս, նորա համար որ նա կամ առիթ չէ ունեցել, կամ սովոր չէ իւր գործերը խելքով քննելու։

Եւ թէպէտև նա արդար ևս չէ, նա պատճառ է գտնում, որը, նորա կարծիքով, նորան պէտք է արդարացնէ ձեր աչքերում։

Մի մարդ ուրիշ մարդին վատութիւն անելու ժամանակ արդարացնում է իւրեան այն մտքով, թէ նա ստիպված էր վրէժ հանել այն մարդից։

Մայրը իւր երեխան ծեծելով ասում է թէ նորա համար է արել այդ բանը, որ երեխան իւր լացով նորա գլուխն էր տանում, իսկ այն քնքոյշ մայրը երէկ գիշեր թատրոն գնալու ժամանակ մրսել է, և այսօր նորա գլուխը խիստ ցաւում է։

Հայրը իւր որդուն վատութիւն անելով և նորան դժբաղդութեան մէջ անգամ գցելով,— արդարացնում է ինքն իւրեան այն մտքով, թէ նա իրաւունք ունի պատժելու իւր որդուն, և նորան մինչև անգամ անբաղդացնելու բոլոր կեանքի մէջ,—ինչի,..... որ փրկէ իւր անունը։

Այնպիսի մարդն ևս շատ անգամ տեսած կը լինիք, որը թէպէտև լաւ մարդ է, լաւ է իմա-

նում իւր գործը, աշխատասէր է, և օգտաւէտ իւր հասարակութեան համար, բայց իւր գերդաստանում և մանաւանդ կեանքի յարաբերութիւններում մինչև այն աստիճան անբարոյական է լինում, որ ստրկութեան մէջ է պահում իւր կինը, կոպիտ կերպով է վարվում երեխաների հետ, չէ թոյլ տալիս իւր աղջկան իւր միտքը զարգացնել,—մի խօսքով սպանում է իւր գերդաստանի մէջ ամէն տեսակ մտաւոր կեանքը։ Եւ այդ բոլորը անելով, այն լաւ մարդը կարծում է թէ նա ուղիղ ճանապարհի վերայ է, կարծում է թէ դեռ լաւութիւն է անում իւր երեխաներին և իւր կնոջ, նոցա հետ այդ կերպով վարվելով։ Նա կարծում է թէ արդար է, որովհետև առիթ չէ ունեցել իւր կեանքում դաստիարակութեան վերայ մտածելու։ Նա լաւ է իմանում իւր գործը, բայց աւելի ոչինչ չէ իմանում։ Եւ այդ բոլոր մարդիկ ևս կարծում են թէ արդար են, որովհետև առիթ չունեցան կամ սովոր չէին իւրեանց կեանքի մէջ, իւրեանց վարմունքի վերայ մտածելու, և իւրեանց գործերը քննելու։

Այդ բոլոր մարդիկների անբարոյականութիւնը միակողմանի ուսումից է ծագում։ Իսկ միակողմանի ուսումը, կամ միակողմանի զարգացումը այն ժամանակ է ծնվում, երբ որ մարդիկ առիթ չունեն կամ սովոր չեն իւրեանց արած գործերի վերայ մտածել, նոքա չեն մտածում, բայց ընդհակառակն նոքա հիմնում են իւրեանց վարմունքը հին արմատացած նախա-

պաշարմունքի և ընդունած սովորութիւնների վերայ։

Եթէ մտադիր էք վատ չանելու, պէտք է մտածէք այն բանի վերայ, որ մտադիր էք անելու։ Ուրեմն ինչքան շատ կ'մտածէք ձեր գործերի վերայ, այնքան սակաւ վատութիւն կանէք։

Ուրեմն բոլոր խնդիրը նա է, որ սովորեցնէք երեխային մտածել և չ'թողնէք նորան անշարժութեան մէջ։ Մարդը որ սովորել է միշտ մտածել, նա միակողմանի բացված մարդ չէ կարող լինել, իսկ միակողմանի կերպով զարգացած չ'լինելով, նա աւելի և բարոյական կարող է լինել։ Ես կարծում եմ, բնական գիտութիւնները ամէնից լաւ են հասնում այդ նպատակին, այսինքն որ նոքա ամէնից լաւ են սովորեցնում երեխային մտածել։

Ես այդպէս յայտնեցի իմ միտքս բնական գիտութիւնների մասին, վերև յիշված յօդուածի մէջ։

«Բնական գիտութիւնների ուսումը, ասում է Միխայլովը, (օրագիր „Учитель". № 9, 1862) բաց է անում աշակերտի մէջ դիտողականութիւն (наблюдательность), դարձնելով նորա ուշադրութիւնը և հայեացքը այն մանր բաների վերայ, որոնք կ'թռչէին նորանից, եթէ չէին ուսուցել նորան այս գիտութիւնը։ Բնական գիտութիւնը ծանօթացնում է նորան առարկաների բազմատեսակ ձևերի հետ, որոնք բնութեան մէջ են գտնվում, աշխատում է ոչն-

չացնել աւելորդ երևակայութիւն և ցնորք։ Ծանօթացնելով երեխային իսկական առարկաների հետ, և նորա ուշք ու միտքը դարձնելով դէպի այս կեանքը, ցոյց է տալիս ձևերի յարաբերութիւն և կապակցութիւն միմեանց հետ, ուսուցանում է մասների ձևերը քննելով, դատողութիւն անել նոցա նշանակութեան և յատկութիւնների վերայ»։

Միևնոյն յօդուածի մէջ ես գրեցի և յետագայ տողերը.

«Նկատել էք դուք, որ մարդը միշտ այն բաներում աւելի առաջադիմութիւն է անում, և ուրեմն իւրեան և ուրիշներին աւելի օգուտ է բերում, որոնք նրան աւելի հաւանելի և դիւրահաս են նորա համար։ Եթէ երեխայի համար ամէնից շատ բնութիւնն է հետաքրքրական, ուրեմն և բնութեան ուսումնասիրութիւնը նորա խելքին ամէնից շատ օգուտ կ'բերէ։

Եթէ մէկ բան երեխային դրաւում է, և հետաքրքրական է, սա նշանակում է, որ այս բանը նորա խելքին և մտածմանը հասանելի են, եթէ ոչ սա չէր կարող նորա հետաքրքրութիւնը շարժել։ Ինչ որ աւելի հասանելի է մտքին, աւելի կարող է ազդեցութիւն ունենալ մտքի զարգացման վերայ։ Վերացեալ առարկաներ ուսանելու ժամանակ, երեխայի միտքը երկրից պէտք է թռչէ և կերակրվի երևակայութիւններով, որոնք շատ են վնասում մտքի կանոնաւոր զարգացմանը։ Լեզու ուսանելը նոյնպէս դժուարութիւններ ունի, որոնք չ'բացված հասկացո-

ղութիւնից վեր են։ Իսկ բնական պատմութիւնը և մաթեմատիկան այն արժանաւորութիւն ունեն, որ միջոց են տալիս երեխային տեսական կերպով ամէն բանի վերայ դատողութիւն անելու, սովորեցնում են ամէն միտքը փորձով վերստուգել։

Այս արժանաւորութիւնը փոքր արժանաւորութիւն չէ, որովհետև երեխան սովորում է չը հաւատալ առանց հակառակելու ամէն խօսքին, այլ դատողութիւն անելուց յետոյ միայն կամ ընդունել կամ ոչ։ Ուրեմն երեխան սովորում մտածել։

Կրկնեմ համառօտապէս ինչ որ ասել եմ։ Ամէնից առաջ, երեխայի միտքը կերակրելու, և նորան յետագայ զարգացման համար պատրաստելու համար, հարկաւոր է բնական գիտութիւններ ուսուցանել, նորա համար, որ այս գիտութիւնները ամէնից լաւ են սովորեցնում երեխային մտածել։ Սորանից յետոյ հարկաւոր է նորան հասկացողութիւն տալ ամէն առարկաների վերայ, յայտնի բան է, սկզբնական պարունակութեամբ, եթէ կամենում էք որ երեխան բազմակողմանի զարգացում ունենար, որ կարողանար ապագայում իւր համար այնպիսի առարկայ ընտրել, որի համար նա ընդունակութիւն է զգում իւր մէջ։ Հասկանալով իր իսկական ընդունակութիւնը, մարդը կարող է աւելի օգուտ բերել իւրեան և ուրիշներին։

Եւ բազմակողմանի զարգացում ունենալով, մարդ աւելի բարոյական կարող է լինել, որով-

հետև նա երեխայութիւնից է սովորել մտածել և ամէն բան խելքով քննել։

Իսկ մարդը այն ժամանակ վատ է գործում, երբ նա չէ մտածում արած գործի վերայ։ Սորա ապացոյց այն է, որ մարդը վատ գործն ես անելու ժամանակ, կարծում է թէ նա արդար է. նա միակողմանի կերպով զարգացած է. նա չէ մտածում, չէ քննում իւր գործերը, բայց ընդհակառակը նա իւր բոլոր վարմունքն արմատացած նախապաշարմունքի և ընդունած սովորութիւնների վերայ է հիմնում։

Բայց մարդս, մտածել և իւր վարմունքը քննել կարողանալու համար, պէտք է զարգացած լինի։

Ուրեմն նեղ, միակողմանի զարգացումից պէտք է որքան կարելի է հեռու կենանք։

Շատ անգամ ուսումնարանների կեանքն ես երեխաների միակողմանի զարգացման պատճառ է լինում։

Ուսումնարաններ երկու տեսակ են լինում։ Մի քանիս կան, որոնց մէջ առանձին ուսում են տալիս տղաներին կամ աղջիկներին, միւսները, որոնց մէջ աղջիկներ և տղաներ խառնըված միասին ուսում են առնում։

Իմ կարծիքով բաժանված ուսումնարանները պակասութիւններից զուրկ չեն։ Առհասարակ երբ որ տղամարդիկ կնամարդիկների հասարակութեան մէջ չեն լինում,—նոքա կոպտանում են։ Իսկ կնամարդիկ առանձին ապրելով և առանձին սովորելով,—յիմարանում են։

Եւ առանձին ապրելով ու առանձին սովորելով կնամարդիկ և տղամարդիկ միմեանց օտար են մնում։

Երբ որ դուք մէկ գործ էք սկսում մէկ ընկերի հետ, դուք ամէնից առաջ պէտք է իմանաք թէ ձեր ընկերը ինչ մարդ է, դուք լաւ պէտք է ծանօթանաք նորա հետ, որ չսխալվէք ձեր գործում, որ գործը լաւ պտուղներ բերէ։

Մարդ և կին նմանապէս երկու ընկերներ են, որոնց բնութիւնը նշանակել է միասին մի գործ տանելու կեանքում. այդ գործը ապագայ սերունդների դաստիարակութիւնն է։ Դուք պսակվում էք որ երեխաներ ունենաք, բայց այդ բաւական չէ, դուք պէտք է դաստիարակութիւն տաք նոցա։ Ձեր կինը ձեր ընկեր է երեխաների դաստիարակութեան գործի մէջ։ Ուրեմն ինչպէս էք կամենում, որ ձեր երեխաներին տուած դաստիարակութիւնը լաւ լինի, երբ որ դուք ձեր կնոջ չէք ճանաչում, նա չէ հասկանում ձեզ, դուք նորան չէք հասկանում։

Դուք ձեր բոլոր կեանքը տղամարդիկների ընկերութեան մէջ անցկացրիք, երբէք չէք եղել կնամարդիկների ընկերութեան մէջ և պսակվել էք անգամ այնպիսի աղջկան հետ, որին դուք կարելի է տեսել էք մի քանի անգամ, բայց որի հետ դուք մինչև անգամ չէք խօսացել։ Ուրեմն երկու ընկերներ սկսել են գործը, և միմեանց չեն ճանաչում, յայտնի բան է որ գործը վատ կերթայ։

Ուրեմն կնամարդներին տղամարդիկներ ճանաչացնելու համար պէտք է աշխատենք մօտեցնել նոցա միմեանց, որքան կարող ենք։

Այս է բաժանված ուսման մեծ պակասութիւնը, որ նա ստիպում է աղջիկներին և տղաներին միմեանց օտար մնալ, ուրեմն նոցա միակողմանի զարգացումն է տալիս։ Եւ միմեանց օտար մնալով, նոքա ոչ թէ միայն չեն զարգանում, ինչպէս կարգն է, բայց առանձին մնալով և առանձին սովորելով, նոքա վատանում են, ստանում են վատ սովորութիւններ, շատ անգամ անբարոյականութեան մէջ են ընկնում։

Ամէնից մեծ անբարոյականութիւնը փակված ուսումնարանների մէջ է լինում, թէ տղաների և թէ աղջիկների։ Այն ուսումնարանների մէջ, որոնք թէպէտև փակված չեն, բայց դարձեալ բաժանված են, անբարոյականութիւնը այնքան մեծ չէ։ Միայն մէկ հնարք կայ անբարոյականութիւնը հեռացնելու,—այդ հնարքը խառն ուսումնարաններն են։

Ոչինչ այնպէս անբարոյական չէ, ինչպէս այն կասկածը, որը երեխաների մէջ է ծնվում բաժանված ուսումից։ Աղջիկներին կրկնում են թէ ամօթ է և լաւ չէ տղաների հետ ընկերութիւն անել, տղաներին ասում են, որ հեռանան աղջիկներից։ Այդ տեսակ անլուծանելի խորհուրդը կասկած է գցում երեխաների մէջ։ Այդ կասկածից կարելի է աւելի սպասել վըտանգ, քան թէ աղջիկների և տղաների չարունակ բնական յարաբերութիւններից։

Խառն ուսումնարանները Ամերիկայում կան և մի քանի ևս Զվէիցարիայում։ Զվէիցարիա-

յում սոքա միայն սկզբնական ուսումնարան-
ներ են։

Սովորութիւնը մեծ բան է։ Ամերիկայի ուսումնարանների մէջ տղան այնպէս սովորում է ամէն օր իւր կողքին աղջիկներ տեսնել, որ վերջապէս նոցա յարաբերութիւնները ընկերական և եղբայրական են դառնում։ Երբ նոցա յարաբերութիւնները բնական են դառնում, խորհրդաւոր կարծիքները կորչում են նոցա գլուխներից։

Մի ուրիշ լաւ կողմ ևս կայ, ինչպէս ես ասացի, խառն ուսման մէջ տղաները աղջիկների հետ ուսումնարանի մէջ լինելով կորցնում են իւրեանց կոպտութիւնը, որը աւելի կ'մեծանար, եթէ նոքա միշտ իւրեանց ընկերների, տղաների մէջ էին մնացել։

Աղջիկներն իւրեանց կողմից աւելի խելօքանում են, սովորում են աւելի պարզ դատել, աւելի ազատ վարուել և խօսել։ Բացի սորանից այդ տեսակ ուսումնարանների մէջ աղջիկ և տղան ամեն օր միմեանց տեսնելով, միմեանց բարեկամանում են և այդ բարեկամութենից շատ անգամ դուրս է գալիս սէրը։

Ասում են, որ այդ բարեկամութենից ծագած սէրը ամենաբաղդաւոր ամուսնութիւններ է ծնում։

„Հայկ. Աշխ.“, 1867, № 12.
Նիցցա.

Ի՞ՆՉ Է ԿՆԱՄԱՐԴ։

I.

«Ահա պառկած է մի կին պինդ և կոպիտ անկողնու վերայ։ Պինդ պէտք է լինի անկողինը, հարուստ լինի կինը թէ աղքատ, հիւսիսում բնակւում լինի թէ հարաւում։ Նա ծնում է.... նորա ամուսինները և բարեկամները նորա չորս կողմն են կանգնած. ամէնքը անհանգստութեամբ սպասում են վտանգաւոր րոպէին։ Բժիշկը լռում է. ամէնքի հայեացքը նորա վերայ են դարձած, նորանից են սպասում փրկութիւն... Ցանկարծ թոյլ ձայն մի լսվում է։ Երեխան ծնվեցաւ, սա նորա առաջին աղաղակն է։ «Ի՞նչ է, հարցնում են ամէնքը։—Աղջիկ է, պատասխան են տալիս... Որքան դարեր, որքան ազգերի մէջ «աղջիկ» է խօսքը ախրութեան և մինչև անգամ ամօթի պատճառ էր լինում»։

Այսպէս է ասում Ֆրանսիացի Լէգուվէ իւր երևելի գրքի մէջ և ճշմարիտ է ասում նա։

Այո, կնամարդը միշտ արհամարհանքի մէջ է եղել։ Մարդիկ երբէք չեն համարել նոցա պէս պաշտօններ կատարելու արժանի, չեն ևս

համարել նորան արժանի իւրանց հետ հաւասար իրաւունքներ ունենալու։

Եւ ինչ է որ կնամարդը չ'զգայ իւր դժուար դրութիւնը, չ'զգայ իւր ստրկութիւնը, մարդիկ նորան չէին տալիս և մինչև այժմ չեն տալիս իւրանց պէս հաւասար ուսումը։

Հրէաների մէջ կնամարդը այնպիսի մեծ արհամարհանքի մէջ էր, որ կինը աղջիկ ծնելուց յետոյ պէտք է սրբվել էր աղօթքով և զոհաբերութիւններով վաթսուն և վեց օր, իսկ տղայ բերելուց յետոյ նորան բաւական էր սրբվել միայն երեսուն և երեք օր [1]։

Հնդկաստանի մէջ մարդը կարող էր իւր կնոջից բաժանվել, նորան դուրս անել, եթէ նա նորա հետ տասն տարի ապրելով, միայն աղջիկներ էր ծնել։

Վայրենի ազգերի մէջ կինը այր մարդի սեփականութիւն էր, որին մարդը պահում էր իւր մօտ որպէս ծառայ, և որը պարտական էր կնոջ պարտաւորութիւնը կատարելու։

Միայն յոյները, որոնց մէջ գեղեցկութեան ճաշակը մեծ աստիճանին էր հասել, հասկացան կնամարդի գեղեցկութիւնը։ Նոցանից առաջ մարդիկ կնամարդի մէջ ոչինչ արժանաւորութիւն չէին գտնում, որ տղամարդի արժանաւորութիւններին հաւասար լինէր,—յոյները ճանաչեցին նորա մէջ գոնէ արտաքին արժանաւորութիւն, այսինքն գեղեցկութիւն։ Դա առա-

[1] Histoire morale des femmes—E. Legouvé.

ջին քայլ էր դէպի կնամարդի ազատութիւնը։

Միջին դարերում մարդիկ երկրորդ քայլ արին։ Բացի գեղեցկութենից աղջկան մէջ դարձեալ մի արժանաւորութիւն գտան մարդիկ. այդ արժանաւորութիւնը անմեղութիւն էր։ Բանաստեղծներ սկսեցին անմեղութիւնը երգերի մէջ յիշել, մարդիկ սկսեցին սիրահարվել անմեղ աղջիկների վերայ, նոցա համար պատերազմել և նոցա համար զանազան նեղութիւններ քաշել։ Բայց այն ինչ սիրած աղջիկը նորա կին էր դառնում, (ուրեմն և կորցնում էր անմեղութիւնը), մարդու զգացմունքը փոխվում էին։ Նա մոռանում էր իւր սէրը, իւր երգերը, իւր տանջանքը, և պահում էր նորան չորս պատերի մէջ։

Մինչև որ աղջկան բոլոր արժանաւորութիւնը անմեղութիւն կ'լինի, նա կինը դառնալով, ուրեմն և իւր միակ արժանաւորութիւնը, այսինքն անմեղութիւնը, կորցնելով, անշուշտ մարդի սեփականութիւն պէտք է դառնայ։

Բայց երբ որ կինը բացի այդ միակ արժանաւորութիւնից ուրիշ արժանաւորութիւնը, այսինքն խելքի զարգացումն էլ կունենայ,—նա կինը դառնալով և անմեղութիւն էլ կորցնելով, կ'պահէ մտքի զարգացումը. որ իրաւունք կ'տայ նորան ոչ թէ մարդի ստրուկ, այլ ընկեր լինելու։

II.

Երևելի գրողներից մէկը ասել է թէ մի ազգի լուսաւորութեան աստիճանը իմանալու համար բաւական է ուշք դարձնել այդ ազգի կանանց դրութեան վերայ։ Եթէ ազգը լուսաւորութեան մեծ աստիճանին չէ հասել, այդ ազգի կանայք ազատութիւն չունին, թէ ընտանեկան, թէ հասարակական կեանքի մէջ։ Քանի լուսաւորվում է ազգը, այնքան լաւանում է կնամարդի դրութիւնը, այնքան կնամարդը հասկանում է իւր մարդկային արժանաւորութիւնը, և մարդիկ հրաժարվում են կոպիտ իրաւունքից—նորան ստրկութեան մէջ պահելու։

Կնամարդի կեանքի մէջ երեք շրջան կայ, որոնցից երևում է կնամարդի դրութիւնը հասարակութեան մէջ։ Այդ շրջաններն են—նորա դաստիարակութիւնը, կին և մայր դառնալը։

Մեր մէջ երբ աղջիկը դեռ փոքր է, նորա դաստիարակութիւնը չէ զանազանվում տղաների դաստիարակութիւնից։ Թէ մէկի և թէ միւսի դաստիարակութիւնը այն պակասութիւնն ունի, որ նոցա ծնողները նոցա միտքը չեն զարգացնում։ Թէ տղաներ և թէ աղջիկներ պէտք է հնազանդվին ծնողներին առանց հակառակելու։ Հայրը չէ թողնում ոչ ոքին իւր գերդաստան մէջ իւր դէմ մի խօսք ասել։ Նորա կամքը ամեն բանից վեր է, նորա հրամանին ամէնքը պէտք է հնազանդվին, եթէ այդ հրամանը առողջ դատողութեան ընդդէմ ևս լինի։ Փոքր հասա-

կից սկսած երեխաներ սովորում են հնազանդվել առանց մտածելու։ Ինչ որ հայրը և մայրը կը հրամայեն, երեխաները անշուշտ պէտք է կատարեն, իրաւունք չունենալով այն հրամանի մեկնութիւնը հարցնելու [1])։ Բայց տղաները ժամանակով ազատվում են այդպիսի կեանքից։ Նոքա կամ ուսումնարան, կամ մի գործի են գնում։ Տղան այն ժամանակ կարող է երկրորդ անգամ ինքն իւրան դաստիարակել, փոխել իւր ուղղութիւնը։ Կեանքի կամ ուսումնարանի մէջ ապրելով, նա տեսնում է իւր առաջվան ուղղութեան պակասութիւնը։ Նորա հայրը և մայրը ասում էին թէ «պէտք է միշտ հնազանդվիս ծեր մարդիկներին»։—Բայց կեանքը նորան ցոյց է տալիս, որ այդ խորհուրդը վատ խորհուրդ էր, որովհետև ծեր մարդիկն ևս կարող են սխալվել։ Նա վերջապէս հասկանում է, որ ազատութեանը ստրուկ չ'մնալու համար, նա պէտք է իւր միտքը զարգացնէ, նա պէտք է սովորէ կեանքում ամէն բանը քննութեան տակ գցել։

Բայց աղջկան դրութիւնը ամենևին ուրիշ է։ Նա կամայ ակամայ պէտք է մնայ իւր բոլոր կեանքը ում և իցէ ազդեցութեան տակ, առաջ ծնողների, յետոյ իւր ամուսնի ազդեցութեան տակ։

Երբ աղջիկը սկսում է մեծանալ, նորան

[1]) Ու դժուար կ'լինէր մեր ծնողներից իրանց հրամանի մեկնութիւնը հարցնել.—Նոքա այնոր համար են „հրամայում“ որ մեկնել չեն իմանում։

Հեղ. ծան.

կրկնում են, որ հեռանայ տղաների ընկերութիւնից. այսպէս աղջկան մէջ փոքր հասակից արդէն կազմվում է այն կարծիքը, թէ կնամարդը այնպիսի մարդ չէ, ինչպէս տղամարդիկ։ Բոլոր ինչ որ տղաներ անում են, նորա համար արգելված է։ Եթէ տղան ազատութիւն ունի գնալու գալու,—աղջիկը իրաւունք չունի առանց հրամանի և միակ դուրս գալու։ Տղան իւր ժամանակը կարող է ընկերութեան մէջ անցկացնել, բայց աղջիկը պէտք է բոլոր ժամանակ լուռ և անխօս տանը նստէ։ Շատ մայրեր և հայրեր կան, որոնք կարծում են թէ շատ խօսելը մինչև անգամ աղջկան համար ամօթ բան է։ Զրկված լինելով իւր միտքը զարգացնելու միջոցից, չտեսնելով ոչ կեանքը և ոչ մարդիկներին, աղջիկը, յայտնի բան է, չէ կարող և իմաստանալ։ Մինչ տղան սկսում է ուսում առնել, մինչ նա սկսում է շատ գրքեր կարդալ, աղջկան մէջ դարձեալ այն կարծիքն է հաստատվում, որ կնամարդը Աստուծուց զրկված արարած է։ Այն գրքեր, որ կարդում է տղան, աղջըկան համար արգելված են, և եթէ նա ուսումնարանն էլ մտնէ, նորան չեն թողնում այն առարկաներ սովորել, ինչ որ տղայքին են ուսուցանում։ Ի՞նչ կերպով են ուսուցանում աղջիկներին ուսումնարանների մեծ մասի մէջ։ Աղջիկները սովորում են այնտեղ քանի մի թեթև տեղեկութիւններ զանազան առարկաների վերայ, որոնք ոչ թէ միայն կեանքում օգուտ չեն բերում, բայց մինչև անգամ նոցա միտքը

զարգացման պատրաստելու պէտք չեն լինում։ Գլխաւորապէս աղջիկներին հարկաւոր է ուսուցանել բնական գիտութիւններ, և այդ նոցա կամ չեն ուսուցանում ուսումնարանների մէջ, կամ շատ թոյլ են ուսուցանում։

Բնական գիտութիւնների օգուտը աղջիկների համար ես կամեցայ ցոյց տալ ուրիշ մի յօդվածի մէջ, ասելով թէ «երեխաների դաստիարակութիւնը մօր պարտաւորութիւնն է»։ Մայրը պարտաւոր է ուղղել երեխայի առաջին քայլերը, մայրը պէտք է բանայ նորա միտքը և զարգացնէ բարոյականութիւնը. նոյնպէս մօր պարտաւորութիւնն է երեխայի առողջութեան մասին հոգս քաշել։

Երեխաներին օրինաւոր կերպով դաստիարակելու համար հարկաւոր է որ մայրը մարդի մարմնի և կեանքի գիտութեան վերայ քանի մի տեղեկութիւններ ունենայ։ Նոյնպէս նոցա առողջութեան մասին հոգս քաշելու համար հարկաւոր է, որ նա քիչ թէ շատ տեղեակ լինի բնական գիտութիւններին, և մինչև անգամ բժշկութեան վերայ թեթև հասկացողութիւն ունենայ։

Եթէ աղջկան նպատակը մայր դառնալն է, —նա պէտք է պատրաստվի օրինական կերպով իւր պաշտօնը կատարելու [1]։

[1]) Եթէ աղջիկը մայր ես չի դառնայ, բնական գիտութիւնների ուսումը աղջկան իւր սեփական կեանքին կարող են օգուտ բերել։ Եթէ մենք իրաւունք ունինք հին եգիպտացիների կամ Աղէքսանդր Մակեդոնացու

«Միթէ, կասեն ինձ, դուք կ'կամենայիք, որ կնամարդիկ մեզ պէս ուսում առնեն և մեր սովորած առարկաներ սովորեն։ Ո՞վ գիտէ, վաղը կտեսէք, որ կնամարդիկ մեզ պէս զանազան ուսումնարաններ ևս գնան....։

—Ես ոչինչ չեմ կամենում, պատասխանում եմ ես, բայց միայն իմ կարծիքս է, որ ուսումը երբէք աւելորդ բան չէ. նա վնաս չի տայ, տգիտութիւնն է վնաս տալիս։

«Բայց ասում են, որ կնամարդիկների ընական խելքը մերի պէս խոր չ'լինելով, նոքա ընդունակութիւն ևս չունին մեր բոլոր առարկաները հասկանալ և սովորել։ Մի խօսքով Աստուած նոցա մեզ պէս խելօք չ'ստեղծեց։

—Ես ձեզ կարող եմ հաւատացնել, պատասխանում եմ ես այն մարդիկներին, որ եթէ դուք այս խօսքը շատ կ'կրկնէք, կնամարդիկ այդ խօսքին հաւատալով և անմիտ և անգործ կեանք վարելով.—եթէ մեզանից անշնորհ ևս չ'լինէին, մեզանից անշնորհ կ'դառնան։

«Բայց եթէ աղջիկը մեր նման կրթութիւն կունենայ, կասեն ինձ դարձեալ, եթէ նա կեանքիս լաւն ու վատը կիմանայ, նա չի կարողանայ այն ժամանակ կնամարդ կոչվել, որովհետև նա կ'կորցնէ այն ժամանակ իւր ամօթը, իւր համեստութիւնը։

պատմութիւն իմանալ։—ինչի՞ մենք իրաւունք չենք ունենայ, օրինակ, մեր սեփական կազմվածքի ուսումը, ֆիզիօլոգիա և անատոմիա իմանալ։

Հեղ. ծան.

—Ուրեմն, պատասխանում եմ ես, դուք կարծում էք, որ այդ արժանաւորութիւն է, եթէ աղջիկը կեանքիս վատութիւնները չէ իմանում։ Բայց ասացէք ինձ խնդրեմ, եթէ նա վատութիւնները և մինչև անգամ աշխարհիս բոլոր կեղտը չի իմանայ, ինչպէս անէ նա, որ այդ կեղտից զգոյշ կենայ։ Նա պէտք է կեանքում ապրէ, նա պէտք է իւր համար ամուսին ընտրէ, նա պէտք է երեխաներին դաստիարակէ, ուրեմն ինչպէս անէ նա, որ հազար անգամ չ'սխալվի, եթէ նա կեանքը չէ իմանում, կեանքը իւր պակասութիւններով, իւր փորձանքներով, իւր կեղտով....։ Ոչ, վատը չիմանալը արժանաւորութիւն չէ, բայց այն է արժանաւորութիւն, եթէ մարդը լաւն ու վատը իմանալով, լաւը վատից կարող է զանազանել։

III.

Երբ աղջիկը մեծանում է, ծնողներ սկսում են միմեանց հետ խօսել, թէ ժամանակ է աղջըկան մարդի տալ։ Շատ անգամ աղջիկն ինքն ևս չէ իմանում ինչ են կամենում նորա ծնողները, ինչ են մտադիր անելու, կամ եթէ մարդի են տալիս նորան, արդեօք ինչ մարդ են ընտրել նորա համար։ Զարմանալի բան է, որ աղջիկը իրաւունք չունի խառնվելու այն գործի մէջ, որը խիկ նորան է վերաբերվում։ Եթէ նա համաձայն չի լինի պսակվելու այն մարդի հետ, որը ընտրել են նորա համար նորա ծնող-

ները, այն ժամանակ նորան պատասխան են տալիս թէ. «բան չես հասկանում ու խօսում ես, մեզանից խելօք ո՞վ է, դո՞ւն թէ մենք։ Հանդարտ կացիր, մենք քո վատութիւնը չենք կամենում, քո լաւութիւնն ենք կամենում»։

Ճշմարիտ է այն խօսքը, թէ աղջիկը բան չէ հասկանում, բայց ցաւալի է այդ լսել ծնողների բերանից։ Ո՞վ է մեղաւոր, որ աղջիկը բան չէ հասկանում, որ նա իւր զգացմունքը ուզել չէ կարող, որ նա մարդի մէջ լաւը վատից չէ կարող զանազանել։—Ծնողներն են մեղաւոր։ Նոքա ի՞նչ էին նայում աղջկան դաստիարակելու ժամանակ, ո՞ւր էր նոցա խելքը, ո՞ւր էին թագցնում աղջկան բոլոր աշխարհից և մարդիկներից, և այնպէս սակաւ ուսում տալիս, որ աղջիկն անփորձ, տգէտ և չ'բացված մնաց։ Բայց եթէ աղջիկը բան չէ հասկանում, ծնողներն ես նորանից աւելի չեն հասկանում։ Աղջկան ասելով թէ նա «բան չէ հասկանում», ծնողները խոստովանում են, որ վատ դաստիարակութիւն են տուել նորան,—ուրեմն եթէ նոքա շնորհ չունեցան աղջկան հաստատ դաստիարակութիւն տալու, որտեղից նոքա շնորհ կունենան նորա համար օրինաւոր մարդ մի ընտրելու։

Եթէ աղջիկը մի մարդ է սիրում և չէ կամենում ծնողներից նշանակված փեսայի հետ պսակվել, այն ժամանակ մայրը սկսում է համոզել նորան թէ «աղջկան պարտաւորութիւն է հօր հրամանին միշտ հնազանդիլ։ Իսկ հայրը բարկանալով կրկնում է թէ նա իւր աղջկան

փող է տալիս և փողաւոր փեսան ես ընտրել է.... այլ ես ի՞նչ է կամենում աղջիկը»....։ Ուրեմն փողով էք կամենում գնել ձեր աղջկան ազատութիւնը, փողով էք գնում նորա սէրը....։ Մի՞թէ այն փողը, որ հայրը տալիս է իւր աղջկան պսակվելու ժամանակ, իրաւունք է տալիս նորան իւր աղջիկը դժբաղդութեան մէջ ես գցելու...

Բաւական չէ, որ ծնողները ստիպում են աղջկան պսակվել իւրանց ընտրած փեսայի հետ,—այլև ստիպում են նորան այնպէս վարվել նորա հետ, որ փեսան կարծէ արդարև աղջիկը նորան սիրում է։ Կամայ ակամայ աղջիկը պէտք է հագնէ իւր ամենալաւ շորեր և զարդարվի, որ հաւանելի լինի ծնողներից ընտրված փեսային....։ Կասես թէ ապրանք են ծախում....։

Հասկանալի է, որ եթէ լուսաւորված չէ ազգը, նորա բարք ու վարքը կոպիտ կ'լինին։ Բայց սա իրաւունք չէ տալիս նորան կամակորութեամբ մնալ միևնոյն դրութեան մէջ։

Երևի աղջիկը տգէտ էր և բացված չէր, նորա համար մի էր ի՞նչ մարդ ես տան նորան նորա ծնողները։ Թէ խելօք լինի մարդ, թէ յիմար,—կինը ինքն տգէտ լինելով, իւր կամք և հասկացողութիւն չունենալով, չ'կարողանալով ինքն իւր գլուխը կառավարել, անշուշտ պէտք է իւր մարդու սեփականութիւն դառնար և նորա ստրուկ լինէր։ Բայց սա իրաւունք չէ տալիս ծնողներին ապագայումն ես այդպիսի կերպով վարվել իւրանց աղջիկների հետ։ Մի՞թէ

այդ պէտք է չարունակվի ապագայ ժամանակումն էլ. մինչ ծնողները չեն հրաժարվի իրանց կոպիտ իրաւունքից իրանց աղջիկները տգիտութեան մէջ պահելու. մինչ նոցա չեն տայ ազատութիւն և ուսումը, վախենալով թէ աղջիկները կազատվեն այն ժամանակ իրանց կախումից։

Չ'կայ բան աշխարհիս երեսին, որ պակասութիւն չունենար, ուրեմն պակասութիւններից ազատվելու համար մենք պէտք է պտռենք հնար մի մեր կեանքը և դրութիւնը լաւացնելու։ Բայց կեանք և դրութիւն լաւացնել մենք կարող ենք միայն մի միջոցով. մոռանալով հինը և ընդունելով նորը։ Միայն միշտ փոխելով մեր բարք ու վարքը, մեր սովորութիւններ և հասկացողութիւններ դէպի լաւ,—մենք կարող ենք առաջ գնալ։

Թէ չէ միշտ մի և նոյն տեղը կ'մնանք, ինչպէս և մնացինք հայերս հինգ կամ վեց դար լուռ, անշարժ, կեանքի նշան էլ ցոյց չ'տալով, մինչև որ բաղդաւորապէս հանեց մեզ մեր խոր քնից, մեր անշարժութիւնից,—ռուսական տէրութեան ազդեցութիւնը [1])։

[1]) Արդարև, մենք, Կովկասի բնակիչներս, ինչ դրութեան մէջ էինք ռուս տէրութենից առաջ։ Մեր ուսումնարաններում մեզ սովորեցնում էին գրաբարի քերականութիւն և մօլլաների առակներ,—աւելի ոչինչ։—Ռուսական տէրութիւնը մեզ համար գիմնազիօններ շինեց, մեզ ճանապարհ տուեց համալսարաններ մտնելու։ Մեր երկրի արդիւնքները ճանապարհների պակասութեան պատճառով մեր երկրից չէին դուրս գալիս։ Ռուսիայի տէրութիւնը մեզ ճանապարհներ շինեց, այժմ երկաթուղիներ կ'շինէ։ Արուեստը, վաճառականութիւնը, երկրագործութիւնը ի՞նչ դրութեան մէջ էին։ Վրաստանում նոքա ապահովացրած չէին չէրքէզների կողմից, իսկ Հայաստանի կողմերում մահմէդականութիւնը իր անշարժութեամբ արգելք էր դնում ամէն աշխատանքի տարածմանը։ Ռուսիայի տէրութեանն ենք պարտական, որ այժմ մեր երկրում աշխատանքը ապահովացրած է և կարող է առաջ գնալ։ Մեզանից է կախված այժմ օգուտ քաղել մեզ տուած բարերարութիւններից և աշխատել լաւացնել։

Բայց մարդիս մէջ այն զգացմունքը, որին նախապաշարմունք են ասում, այնպէս խիստ են թագաւորում, որ մարդը թէև տեսնէր հին բաների և սովորութիւնների պակասութիւնները և հասկանայ էլ նոր բաների արժանաւորութիւնները, դարձեալ չի ընդունի նոր բանը միայն այն պատճառով, որ նորա ծնողները նորան չէին ընդունել։

«Հին մարդիկ միշտ հին սովորութիւններին էին հետևում, ուրեմն ես ինչի պէտք է փոխեմ։ Լաւ է տգէտ մնամ և տգէտ մեռնեմ և մեռնելով իմ երեխաներին էլ ասեմ.—ատեցէք ամէն խելացի, գեղեցիկ և պայծառ բան, եթէ նա նոր բան է և սիրեցէք խաւարը, մութը և տգիտութիւնը, որովհետև սոքա հին բաներ են»։

IV.

Ասենք աղջիկը պսակվեցաւ։ Նա կենում է իր ամուսնի հետ, այն ամուսնի հետ, որին նա

կարելի է մինչև անգամ չէր ճանաչում և որին նա դարձեալ ստիպված էր խոստանալ, թէ նորան միշտ կ՚սիրէ։ Զարմանալի բան է, չճանաչելով մարդին նա ինչպէս կարող է խոստանալ, թէ կ՚սիրէ նորան, նորան հաւատարիմ կը մնայ և այն ևս մինչև մահը.... Բայց նա խոստացաւ սիրել նորան և նորան հաւատարիմ լինել, որովհետև այսպէս պահանջեցին ծնողները։ «Հնազանդութիւնը մարդիս մէջ, և մանաւանդ աղջկան մէջ, մեծ արժանաւորութիւն է», կրկնում են ամէնքը։ «Հնազանդութիւնը երեխաների պարտաւորութիւն է. երեխաներ միշտ պէտք է հնազանդեն իւրանց ծնողներին», կրկնում են ծնողները։

Այդ խօսքը ասելով նոքա խոստովանում են թէ այդպիսի մի դաստիարակութիւն են տուել իւրանց երեխաներին, որ նոքա երբէք մտքի անկախութիւն կեանքի մէջ չ՚ստանալով, միշտ չ՚բացված մնալով և չիմանալով ոչինչ բան քննել, կամայ ակամայ պէտք է հնազանդեցնեն իւրանց ամբողջ կեանքը իւրանց ծնողներին։

Աղջիկը հնազանդեց իւր ծնողներին և պըսակվեցաւ նոցա ընտրած փեսայի հետ, բայց առաջին օրից և եթ նա տեսնում է, որ նորա դրութիւնը շատ չէ փոխվել. զանազանութիւնը այն է միայն, որ նա իւր ծնողների իշխանութիւնից անցել է իւր մարդի իշխանութեան տակ, որը կարելի է ծնողների իշխանութիւնից ևս խիստ է։ Նորա պարտաւորութիւնն է միշտ հնազանդիլ. եթէ նա իւր մարդին չէ սի-

րում, նա պէտք է հնազանդի, եթէ մարդը նորան ատելի է անգամ, նա դարձեալ պէտք է հնազանդի նորան և իւր անբաղդութիւնը մինչև մահ քաշէ։ Բաժանվել իւր մարդից կնամարդը չէ կարող. այդպիսի գործ հասարակութիւնը անբարոյական է համարում։ Ես հասարակութեան հետ համաձայն եմ, որ սա անբարոյական գործ է, բայց ինչի՞ հասարակութիւնը անբարոյական չէ համարում, եթէ ծնողներն իւր աղջկան զօռով են տալիս մարդուն, և այնպիսի մարդուն, որին նա չէ սիրում....

Անցաւ ժամանակ։ Կնամարդը մայր դարձաւ։ Բայց այդ պատճառով ևս նորա դրութիւնը իւր մարդի առաջ չի փոխվի։ Ինչպէս մայրը, նոյնպէս և երեխաներ, մարդի սեփականութիւն են։ Երեխան ծնվեցաւ, տիրոջ սեփականութիւնը թւով բազմացաւ։ Մայրը և որդին նորան են պատկանում, նորա խօսքին պէտք է հնազանդին։

Դա բաւական չէ։ Նա իրաւունք ունի արհամարհելու իւր կնոջն նորա երեխաների առաջ, նորան հայհոյելու, նորան ցածացնելու երեխաների աչքերի առաջ....։ Այլևս ինչ սէր, այլևս ինչ բարոյականութիւն կարող է մնալ այդպիսի ուղղութեան....։

Շատ անգամ կնամարդը, թէպէտ և ազատ լինելով, ձգտումն ունի դէպի լաւը, դէպի առաջադիմութիւնը տղամարդիկներից ևս աւելի։ Կնամարդի մէջ եթէ խելքը բացված չէ, գոնէ շատ անգամ բացված են զգացմունքը. կնամար-

դի սէրը դէպի երեխաներ միշտ աւելի մեծ է քան թէ տղամարդի։ Այս պատճառով է, որ կնամարդին է պատկանում երեխաների դաստիարակութիւնը։ Բայց եթէ պատահի ևս, որ մօր ազդեցութիւնը կարողանայ բարերար լինել երեխաների դաստիարակութեան մէջ,— հօր կոպիտ վարմունքը դարձեալ արդելք կը դնէ մօր այդ ազդեցութեանը։ Շատ անգամ մայրը ասում է երեխաներին, թէ «այս բանը սև է»։ Գալիս է հայրը և հայհոյանք տալով իւր կնոջը, ասում է թէ «յիմար, սա սև չէ, այլ սպիտակ է»։ Նա չէ նկատում, որ այս խօսքով նա ոչնչացնում է մօր ազդեցութիւնը երեխաների վերայ, նա ոչնչացնում է երեխաների մէջ սէրը դէպի ծնողները։

Եւ ինչ վատ օրինակներ են երեխաների համար այդպիսի բոլոր կեանքը, այդ կոպիտ վարմունքը, կոպիտ և անմիտ հրամանները....։ Ի՞նչ բարք, ինչ վարք....։ Երիտասարդները, որոնք հեռու են գնում իւրանց հայրենիքից, շատ լաւ են իմանում, որ ուսում առնել, սովորել թէև դժուար առարկաներ նոցա համար աւելի հեշտ է, քան թէ գերդաստանի մէջ ստացած օրինակներից, հին մտքերից, սովորութիւններից և նախապաշարմունքից ազատվել։

Այո՛, սա դժուար է երիտասարդների համար, բայց նոքա դարձեալ կարողութիւն ունեն իւրանց տներից հեռու փոխելու իւրանց ուղղութիւնը, իւրանց կարծիքները, ազատվելու նախապաշարմունքներից....։

Բայց աղջիկների համար կարողութիւն ևս չ'կայ այդ անելու։ Նոցա պինդ բռնել են, նըստեցրել են տանը, և սպանել են նոցա խելքը բարոյականութեան անունով։

Եւ չէք նկատում դուք, որ այդպիսի կերպով դուք վնաս էք բերում ապագայ սերունդներին։

Դարձեալ կրկնում եմ ես. «Աղջիկները մայրեր պէտք է դառնան, պէտք է երեխաներ դաստիարակեն»,—ապա ինչ դաստիարակութիւն կարող են երեխաներին տալ, եթէ նոքա սեփական անկախ միտք չունեն, եթէ նոքա ստրուկներ են....

Ահա ինչ է կնամարդը.... Բայց ինչ պէտք է լինէր.... Ով կ'պատասխանէ։

„Հայկ. Աշխ.“, 1868, № 1.
Տիփլիս.

ԵՐԿՈՒՍԻՑ Ո՞Ր Է ԼԱՒԸ։

—

Այս տեսակ ընթերցանութիւնը (Պօլ դը Կօկի և Դիւմաների ռոմաններ) ամօթալի դատարկապորտութեան պտուղ լինելով, այլանդակ և անբարոյական բան է։ Եւ այս վնասակար ժամավաճառութիւնը կրկնապատիկ անբարոյական և այլանդակ է երեխաների համար։

(Պիսարեվից, թարգմ. „Հայկ. Աշխ." № 445. 1867)

Ոչ, վատը ճանաչել արժանաւորութիւն չէ. բայց այն է արժանաւորութիւնը, երբ որ մարդս լաւն ու վատը իմանալով, լաւը վատից կարող է զանազանել։

(Ի՞նչ է կնամարդ. „Հայկ. Աշխ." 1863. № 1.)

I.

Հարցնում եմ ձեզ, ինչ նպատակով են գըրվում գրականական ստեղծվածները։

Այդ հարցին մենք չենք կարող պատասխանել, եթէ չենք իմանում «ինչպէս» են գրվում գրականական ստեղծվածները։

Եթէ դուք ուշադրութիւն կ'դարձնէք մէկ

գրականութեան ստեղծվածի վերայ, դրամա, ռոման, թէ ուրիշ գրականական ստեղծվածի ձեր լինէր, կամ արհեստի ստեղծվածի վերայ նայէք,—դուք կ'տեսնէք, որ այդ ստեղծվածներից ամէն մէկը ստեղծողի բնաւորութեան ուղղութիւն ունի։

Իմ ասածի ճշմարտութեան ապացոյց այն կարող է լինել, որ մէկ հեղինակի կամ արհեստագէտի բոլոր ստեղծվածները միմեանց նման են լինում, միևնոյն բնութիւն, միևնոյն ուղղութիւն, միևնոյն կարծիք, միևնոյն նպատակ ունին։

Երբ մի մարդի ստեղծվածներ միմեանց հետ կ'համեմատէք, դուք կ'տեսնէք որ նոքա միմեանց նման են, ինչպէս մի մարդի երեխաներ միմեանց նման են լինում։

Օրինակ վեր առէք անգլիացու Շէկսպիրի դրամաներ և համեմատեցէք նոցա միմեանց հետ, ու դուք նոցա մէջ կ'գտնէք միևնոյն ուղղութիւն, միևնոյն նպատակներ, միմեանց նըման բնութիւններով անձեր, սաստիկ կիրքերով։

II.

Բայց չ'կարծէք, որ Անգլիայում Շէկսպիրի ժամանակին միայն նա էր, որ այդ ուղղութիւն ունէր։

Եթէ դուք միայն նորան էք ճանաչում, դուք կ'կարծէք, որ նա միակ է այն ուղղութեան, և կարծես թէ երկնքից ընկած հրաշք է..... Իսկ

եթէ ուշադրութիւն կ'դարձնէք անգլիացիների գրականութեան վերայ Շէկսպիրի ժամանակին, կ'տեսնէք որ նորա ժամանակին և նորանից առաջ արդէն ստեղծվում էին նորա դրամաների նման դրամաները, և միևնոյն ուղղութեամբ...։

Շէկսպիրի բոլորի չուրջը դուք կ'տեսնէք տաղանդաւոր հեղինակների խումբը, ինչպէս օրինակ պ.պ. Ուէբստէր (Webster), Ֆորդ (Ford), Մէսսինջէր (Massinger), Մարլօվ (Marlowe), Բէն Ջօնսըն (Ben Jonson), Ֆլեչէր (Fletcher) և Բոմօն (Beaumont), որոնք միևնոյն ուղղութեամբ դրամաներ էին գրում, միևնոյն սաստիկ կիրքերով լի անձներ էին նկարագրում, միևնոյն անկանոն և սարսափելի ոճով էին գրում, միևնոյն երևելի պօէտիկական զգացմունքով էին ոգևորված դէպի բնութեան գեղեցկութիւնները, Շէկսպիրի նման ևս քնքոյշ և խոր սէրով ոգևորված աղջիկների տիպեր էին ներկայացնում,—մի խօսքով միևնոյն նպատակով էին գրում.... Միայն Շէկսպիրը այդ բոլոր գրողների խումբից ամենաերևելի, ամենատաղանդաւոր էր. նորա մէջ այդ ուղղութիւնը հասաւ մինչև վերին աստիճանի կատարելագործութեան։

III.

Ինչպէս որ Շէկսպիրը միակերպ գրողների խումբի ամենակատարեալ գրողն է, ինչպէս որ Շէկսպիրը այն գրողներից բարձր է,—նոյնպէս և այդ բոլոր գրողները այն հասարակութիւնից բարձր են, որին նոքա պատկանում են։

Որովհետև գրողները մենակ, առանձնապէս չեն ապրում, իսկ հասարակութեան մէջ են ծնվում ու ապրում, հասարակութեան կարծիքներ ու տպաւորութիւններ են բաժանում,—ուրեմն նոքա հասարակութեան պտուղներ են, ոչ եթէ երկնքից ընկած հրաշքներ։

Հասարակութիւնը ինչ կարծիքներ, ինչ ձգտողութիւններ, ինչ կիրքեր ունի, իւրեանց լաւ և վատ յատկութիւններով,—այդ բոլորը այն հասարակութեան գրողներ ևս ունեն, միայն թէ նոցա մէջ կեանքի այդ բոլոր երևոյթները առաւել հաստատ ուղղութիւն ստացան, ընդարձակվեցան, նոցա ընդունակութեան միջոցով զարգացան, և գրականական ձևը ստացան։

Շէկսպիրի տաղանդը միակերպ մտածող գրողների ոգու պտուղն է. այդ գրողների ոգին իւրեանց հասարակութեան պտուղն է. հասարակութիւնը իւր կողմից, Եւրօպայի կեանքի այն դարի պտուղն է։

Ուրեմն գրողը իւր դարի պտուղն է, իւր ժամանակի արտայայտութիւն է։

IV.

Գրողը իւր ժամանակի արտայայտութիւն է, կամ իւր ժողովրդի մտաւոր կեանքի հարկաւորութիւնների և պահանջմունքի արտայայտութիւն է։ Նմանապէս և արհեստագէտը։

Եւ ճշմարիտ, երբ որ յոյները, ինչպէս և ամէն նոր ազգ, դեռ հարկաւորութիւն էին զգում պատերազմելու, Հօմէրօսի նման բանաստեղծ-

ներ նոցա պատերազմական ոգու արտայայտութիւնը դարձան։ Հոմէրոսի բանաստեղծութիւնները յոյների քաջութիւնը գրգռում էին, նոցա ոգևորում էին դէպի հերոսական գործեր։

Երբ որ աթէնացիների մէջ շռայլ կեանքից ծագած անբարոյականութիւնը աւելի ու աւելի էր ընդարձակվում, նոցա արհեստը ոգևորվելով բնութեան գեղեցկութիւններով, աշխատում էր մաքրել աթէնացիների բարք ու վարք, և նոցա մէջ գեղեցկութեան ճաշակ զարգացնել, առաջարկելով նոցա մարդկային մարմնի ձևերի և բնութեան ձևերի գեղեցկութիւնները։

V.

Գանք այժմ առաւել մօտ ժամանակին։

Երբ որ Ֆրանսիան հարկաւորութիւն զգաց փոխելու իւր հասարակական օրէնքներ, իւր քաղաքական կեանքի ձևը.—նորա մէջ կազմվեցան այնպիսի գրողներ, ինչպէս Ռուսսօ, Մօնտէսկիեօ և Վոլտէր, որոնք խօսեցին հասարակական կեանքի վերայ, առաջարկեցին հասարակական նոր օրէնքներ, դաստիարակութեան նոր կանոններ և ձևեր, և այլն։

Մեր ժամանակում հասարակութեան մէջ կան և պակասութիւններ, կայ և անբարոյականութիւն,—ուրեմն հասարակութեան մէջ կայ և հարկաւորութիւն քննելու իւր սեփական պակասութիւնները, քննելու իւր կեանքը,—և նորա մէջ ևս կազմվում են այնպիսի մարդիկ, ո-

րոնք իւրեանց խելքի ընդունակութիւնը գործ են ածում այդ պակասութիւնները ներկայացնելու։

Եւրօպայում այն գրողներից, որոնք ներկայացրին իւրեանց ազգի կեանքը իւր պակասութիւններով և անբարոյականութեամբ, ամենաերևելի նոքա են իմ կարծիքով։

Անգլիայում Դիկէնս, Ռուսաստանում Գօգօլ և Պուշկին, Ֆրանսիայում Պօլ դը Կօկ և Դիւմա—որդի։

VI.

Այժմ մենք կարող ենք պատասխանել այն հարցին, թէ ինչ նպատակով են գրվում գրականական ստեղծվածները։

Այն նպատակով են գրվում նոքա, որ առվորեցնեն հասարակութեանը մտածել և իւր կեանքը քննել, ուրեմն և ձգտել դէպի լաւը, դէպի կեանքիս լաւանալը, դէպի առաջադիմութիւնը։

VII.

Մարդկային հասարակութիւնը կատարեալ չէ, նա անբարոյական է լինում, պակասութիւններ ունի։ Ի՞նչ միջոցով կարող է նա իւրեան լաւացնել։—Մտաւոր աշխատանքի միջոցով։

Երկու հնար կայ մարդիկներին մտածել առվորեցնել. այդ հնարներից առաջինը այն է, երբ

գրողը առաջարկում է հասարակութեանը կատարեալ գաղափարներ, կատարեալ մտքեր։ Երկրորդը այն է, երբ գրողը ներկայացնում է հասարակութեանը նորա կեանքի պակասութիւններ։

Առաջինը ներկայացնում է իւրեանից հնարած լաւ օրինակը, կատարեալ գաղափարը,—երկրորդը ներկայացնում է իսկական կեանքի մէջ գտնված վատ կողմը, կամ եթէ կարելի է ասել, ներկայացնում է վատ գաղափարը։

Առաջինը առաջարկում է հասարակութեանը ձգտել դէպի «լաւը»—երկրորդը հրաւիրում է հասարակութիւնը քննել բոլոր նորա մէջ գտնված «վատը»։

Երկուսից որն է լաւը։

VIII.

Ես կարծում եմ, որ ինչպէս առաջին, նոյնպէս և երկրորդ հնարները լաւ են, և օգտաւէտ են։

Հարկաւոր է, որ մարդս, ձգտելով դէպի լաւը, աչքի առաջ կատարեալ գաղափար ունենայ։ Բայց նմանապէս հարկաւոր է նորան և իւր սեփական պակասութիւններ իմանալ և քննել, որ նա հնար ունենայ այդ պակասութիւններից բժշկվելու։

—

IX.

Եւրոպայի հասարակութեան մէջ պակասութիւններ կան, անբարոյականութիւն կայ,—բայց և կան մարդիկ, որոնք այդ պակասութիւնները յայտնում են, անբարոյականութեան երևոյթները քննում են։ Մեր ժողովրդի մէջ, հայերի մէջ միթէ պակասութիւններ չ՛կան, միթէ անբարոյականութիւն չ՛կայ,—բայց կան արդեօք Պօլ դը Կօկի կամ Դիւմաների նման գրողներ, որոնք ներկայացնէին հասարակութեան կեանք, պակասութիւններ յայտնէին....։

Եւրոպացիների մէջ անբարոյականութիւն կայ, բայց միևնոյն ժամանակին նոքա և գրողներ ունին, որոնք յայտնում են անբարոյականութիւնը.—մեր մէջ, հայերի մէջ, անբարոյականութիւն կայ, բայց մեր անբարոյականութիւնը չենք յայտնում։

Երկուսից որն է լաւը։

X.

Եթէ մենք ինքներս չենք իմանում մեր սեփական պակասութիւններ յայտնել, եթէ չունենք այնպիսի գրքեր, որոնք մեզ ստիպէին մտածել և մարդիկների անբարոյական յարաբերութիւնների երևոյթները քննել,—գոնէ օգուտ քաղենք օտար գրականութեան գրքերից, գոնէ նոցա կարդանք....։

Պօլ դը Կօկը և Ալէքսանդր Դիւմա—որդին իւրանցից չեն հնարել այն անբարոյականու-

թիւնը, որ նոքա նկարագրում են։ Այն անբարոյականութիւնը կայ, ուրեմն ոչ ոք իրաւունք չունի նորան չիմանալ։

Կամ այնքան փոքր յոյս ունինք մեր բնութեան զօրութենից, մեր խելքից և մեր բարոյական զօրութենից, որ վախենում ենք ռօմաններ կարդալով այն ռօմանների մէջ նկարագրված պակասութիւններից օրինակ առնել....։

XI.

Եթէ այդպէս է, շատ լաւ ենք անում, որ չենք կարդում։

Եթէ այդպէս է, շատ լաւ ենք անում, որ մեր երեխաներին ևս կարդալ չենք տալիս այն գրքերը։ Եթէ մենք մեզ այնքան թոյլ, չ'բացված և անբարոյական ենք համարում, որ երեխաներին չենք իմանում մեկնել գրքերի մէջ նկարագրված պակասութիւնները,—առաւել լաւ կանենք, որ նոցա չտանք այն գրքեր կարդալու։

Եթէ մենք ինքներս ևս մեզ այնքան «թոյլ» ենք համարում կամ զգում, որ Պօլ դը Կօկի ռօմանը կարդալով, փոխանակ մտածելու, նորա նկարագրած անբարոյական անձից օրինակ կառնենք և մենք ևս նորա նման անբարոյական կը դառնանք.... առաւել լաւ կանենք, որ չը կարդանք։

„Հայկ. Աշխ.", 1868, № 2—3.

ՆԱՄԱԿ ԴԷՊԻ ԽՄԲԱԳՐՈՂ

(Նիցցաից)

—

Դուք ձեր նամակում խնդրեցիք ինձ, որ ես իմ կարծիքս յայտնեմ այն խօսքերի մասին, որ ասել է պ. Հայաստէրը «Հայկ. Աշխ.» օրագրում № 12, «Մեղու Հ-ի» լրագրում հրատարակված յօդուածիս վերայ։

«Կ'ցաւիմ, որ այս յօդուածի ոճը նոյնպէս սիրուն և կանոնաւոր չէ, ինչպիսի լինում է «Հայկ. Աշխարհում» տպված պ. Արծրունու յօդուածներում առհասարակ»—ասում է պ. Հայաստէրը։

Ես շատ շնորհակալ եմ «Հայկ. Աշխ.» օրագրի խմբագրութիւնից, որ նա այնպէս գեղեցիկ կերպով ուղղում է իմ ոճը։ Բայց միևնոյն ժամանակ ես ամենևին արգելք չեմ դնի, եթէ ուրիշ օրագրի խմբագրութիւնը, «Մեղու Հայաստանի» խմբագրութիւնը, իւր կարծիքների և իւր կանոնների համեմատ կուղղէ իմ ոճը։ Թող ամէն օրագիր ուղղէ ոճը ինչպէս որ կամենայ.... Ես սորան մեծ գին չեմ դնում։

Ո՞րն է այդ երկու ոճերից առաւել կանոնաւորը—«Հայկ. Աշխ.» թէ «Մեղու Հայաստանի»։—Ճշմարիտ ձեզ ասեմ—ես չեմ համարձակի դատաւոր լինել այդպիսի բաներում։ Մանաւանդ որ, կրկնում եմ, ես ոճին մեծ գին չեմ դնում, լեզուին մեծ նշանակութիւն չեմ տալիս յօդուածի մէջ։

Թող լեզուն հասկանալի լինի.... այդ բաւական է։

Առհասարակ կասեմ, ոճը և լեզուն մեծ նշանակութիւն չեն կարող ունենալ, երբ որ ազգի գլխաւոր պակասութիւնը—տգիտութիւն է։

Երբ որ ձեր նպատակն է ազգին ինչևիցէ միտք հասկացնել, ազգին մտածել տալ,—մի՞թէ միևնոյն չէ, ձեր ոճը «Հայկական Աշխարհի» կամ «Մեղու Հայաստանի» ոճը լինի։—Մի՞թէ միևնոյն չէ դուք ձեր յօդուածում «մարդուն» կասէք թէ «մարդին»։

Պարոն Ե. Ս., որը «Հայկ. Աշխ.» օրագրին (№ 9) Մօսկվայից նամակ էր գրել, ասում է իւր նամակում ձեր օրագրի նորաձևութիւնների պատճառով. «շատերը հեռացել են, կ'հեռանան և մնացորդը.... ամէնքը գոչեցին, բողոքեցին մեծից մինչև փոքրը.... ժողովրդին ընթերցանութիւն է հարկաւոր, ընթերցանութիւն, և ոչ այբ, բեն, գիմ նոր ի նորոյ ուսուցանել։ Ցանկալը հով գրել, յայտարարութիւնը կամ յայտնութիւնը հով, ոչինչ յառաջադիմութիւն չի յառաջանալ»։

Իմ միտքս այն է, որ եթէ արդարև հասարակութիւնը հարկաւորութիւն էր զգացել կարդալ և մտածել, նորան աններելի կ'լինէր հեռանալ կարդալուց և թողնել միակ օրագիրը միայն այն պատճառով, որ այն օրագիրը թէպէտ և գեղեցիկ յօդուածներ է տպում, բայց «յունվար» հով է գրում, և «վերայ» առանց յ տառի, և այլն։

Կարծեմ որ պ. Ե. Ս. սխալվում է, ասելով, թէ «ժողովրդին ընթերցանութիւն է հարկաւոր»։ Եթէ ժողովրդին ընթերցանութիւն «հարկաւոր» լինէր (հայերէն լեզուով), Կովկասում երկու օրագիրներից առաւել կ'լինէր, և այդ երկու օրագիրները այնքան աղքատ չէին լինի....։ Կարծեմ ես յայտնել եմ իմ միտքս սորա մասին շատ անգամ։

Հայերը երբէք ուրախութեամբ չէին կարդում, երբէք չէին ստորագրվում որևիցէ օրագրին, որևիցէ նպատակ աչքի առաջ ունենալով, նոքա մինչև անգամ ես չէին հասկանում թէ հարկաւոր է օրագիրը մտածելով կարդալ, և ոչ թէ ամէն գրված խօսքին հաւատալ։ Մինչև այժմ հայերը մի որևիցէ օրագրին ստորագրվելով, «ազգասիրութեան» պատճառով էին ստորագրվում, և ոչ թէ օգտի պատճառով, կարդալու նպատակով, խելք զարգացնելու նպատակով։

Հայն շատ կ'կամենար հրաժարվել օրագրի ստորագրութիւնից, բայց մինչև այժմ պատճառ չ'կար որ հրաժարվէր.... «ազգասէր ես», պէտք է հայ օրագիր առնես»։

Բայց այժմ «Հայկ. Աշխ.» օրագիրը «վերայ» բառը առանց յ գրեց և «յունվար» հով գրեց.... անա պատճառ կայ հեռանալու և հրաժարվելու ստորագրութենից... «Դու ինչ ես կարծում, պ. Ստեփանէին փող տամ, որ նա մեր հին հայկական լեզուն, ադամային լեզուն աղաւաղէ... չէ, եղբայր, ես ազգասէր եմ ու աւելի լաւ է ոչինչ չեմ կարդայ, յիմար ու տգէտ կ'մնամ, քան թէ «յունվար» յ-ով կարդամ և «վերայ» առանց յ տառի....»։

«Գոչեցին, բողոքեցին, մեծից մինչև փոքր։ «Տէր Աստուած.... դուք ինչ արեցիք, պ. Ստեփանէ.... առաջ հայերը խիստ շատ էին կարդում, այժմ դուք նոցա ազգասիրութիւնը այնքան վիրաւորեցիք, որ նոքա մնացին, ազգասիրութեան պատճառով, իւրեանց ամբողջ կեանքը տգէտ մնալ, բացի օրացուցից ոչինչ չ'կարդալ....»

Ոչ, պ. Ե. Ս., իմ կարծիքով դուք սխալվում էք.... Ժողովրդին ամենևին ընթերցանութիւն հարկաւոր չէ։

Գիտէք ինչ կ'պատահէր, եթէ արդարև ժողովրդին հարկաւոր լինէր ընթերցանութիւնը։ Եթէ նկատել էր, թէ օրագիր մի այլանդակում է նորա լեզուի ոճը, ժողովուրդը, այո, կ'գոչէր, կ'բողոքէր, անբաւական կ'լինէր, բայց որովհետև նա առանց ընթերցանութեան չէր կարող մնալ, նորա անբաւականութիւնից խելօք մարդիկներից մէկը օգուտ կ'քաղէր և կ'հիմնէր մի ու-

րիշ օրագիր։ Փոխանակ գոչելու հիմնեցէք ուրիշ օրագիր.... Չէք կարող։

Այո, ես շատ լաւ եմ հասկանում, որ չէք կարող, որովհետև գիտէք թէ ժողովուրդը չէ վարձատրում, չէ ապահովացնում մտաւոր աշխատանք. օրագիր հրատարակելը հայերի մէջ նշանակում է իւր անձը քաղցած մահին զոհել։

Ոչ, մեր ժողովրդին հարկաւոր չէ ընթերցանութիւն, բայց «հարկաւոր է մեր ժողովրդին կարդալ սովորեցնել», նորան ընթերցանութիւնը «սիրել տալ», նորան «մտածել սովորեցնել»։

Ես հայկական լեզուի վերայ չեմ նայում որպէս նպատակի վերայ, բայց ինչպէս միջոցի վերայ։ Ոչ թէ «կարդանք հայերէն», որովհետև «հայեր ենք»,—այլ կարդանք հայերէն, որովհետև հայերէն առաւել լաւ ենք հասկանում, քան թէ ուրիշ լեզու։ Օրագիր հրատարակեցէք ոչ թէ այն նպատակով, որ ընթերցողներից «հայասէրներ» և «ազգասէրներ» շինէք,—բայց այն նպատակով, որ հայերից «մարդիկ» շինէք։

Հասարակութիւնը չէ մտածում, ժողովրդի մէջ հասարակական կարծիք չ'կայ։ Գոնէ օրագիրը պէտք է ուղղութիւն էր տուել հասարակութեան կարծիքին։ Բայց ինչ ուղղութիւն են տալիս մեր օրագիրները։

Գրեցէք մի յօդուածը, օրագիրը կասէ «արժէ կարդալ այդ յօդուածը»։ Միթէ սա կրիտիկա է։ Ինչի՞ արժէ կարդալ այդ յօդուածը։—Ասում է նմանապէս. «իմաստուն յօդուած է»։

Ի՞նչ է նշանակում «իմաստուն»։ Մի՞թէ այդ բառը հասարակութեանը կ՚հասկացնէ յօդուածի «ինչ լինելը»։

Օրինակ ես կարդացի մի յօդուած և չհասկացայ նորան. միւս յօդուած կարդացի և չհամաձայնեցի նորա մտքերին։ Մի՞թէ այդպիսի և սորա նման խօսքերը «արժէ կարդալ այդ իմաստուն յօդուածը». ինձ կ՚հասկացնեն ինչ որ ես չեմ հասկացել. ինձ կ՚մեկնեն այդ մտքերը, որոնց հետ ես համաձայն չեմ։...

Օրինակ—իմ «Համալսարան» յօդուածի մասին պ. Հայասէրը ասաց թէ նա «քաղցր տպաւորութիւն ունեցաւ հասարակութեան վերայ»։

Ինչի քաղցր տպաւորութիւն ունեցաւ նա հասարակութեան վերայ։ Նորա՞ համար, որ ես հայ եմ և հայերէն յօդուած գրեցի. կամ նորա՞ համար, որ ես ասացի թէ համալսարանի հիմնելը առաւել վնաս կ՚բերէ քան թէ օգուտ, որովհետև այն ժամանակ երիտասարդներ ստիպված կ՚լինեն քաղաքում և օտար գերդաստանի ազդեցութեան տակ մնալ։

Կամ թէ նորա՞ համար, որ ես հասարակական դատախօսութիւնների միտք տուի.... կամ թէ նորա՞ համար, որ ես ասացի թէ որքան հեռու փախչենք մեր օտար ծնողներից, այնքան լաւ կ՚լինի։

Յայտնի չէ ինչի նա «քաղցր տպաւորութիւն» ունեցաւ։

Մի՞թէ այդպիսի խօսքերը կարող են ինչ

և իցէ օգուտ բերել կարդացողին, մի՞թէ կարող են մարդիկ ինչ և իցէ միտք մեկնել, յօդուած հասկացնել, ուղղել հասարակութեան կարծիքը։

Ժողովուրդը չէ մտածում, և օրագիրը պիտի սովորեցնէ մտածել....։

„Հայկ. Աշխ.“ 1868, № 2—3.
Նիցցա.

ԿՐԿԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ.

I.

Երբ որ ես իմ «Գերդաստանի ազդեցութիւն և համալսարան» անունով յօդուած հրատարակեցի, շատերը այդ յօդուածի մէջ յայտնած մտքերի հետ չ'համաձայնեցան։

Մի քանիսներ ասում էին «թէ որ գիւղական ուսումնարանները ազդեցութիւն ունին ժողովրդի վերայ, միթէ համալսարանը չի ունենայ....» Միւսները ասում էին թէ յօդուածը թէպէտև քանի մի ուղիղ մտքեր է պարունակում իւր մէջ, բայց լաւ կ'լինէր, եթէ հեղինակը յիշել էր թէ «ի հարկէ ես համալսարանի օգուտը լաւ գիտեմ, բայց խօսում եմ համեմատաբար»։ Այսինքն որ իմ կարծիքով եթէ Թիֆլիսում հիմնվել էր համալսարան, նա թէպէտև օգուտ կ'բերէր հասարակութեանը, բայց մինչև այն աստիճանին օգտաւէտ չէր կարող լինել, ինչպէս օրինակ Պետերբուրգի համալսարանը։

—

II.

Ամէնքը համաձայն են ինձ հետ, որ հասարակութիւնը կարող է լաւ կամ վատ ազդեցութիւն ունենալ ուսանողների կամ աշակերտների վերայ։

Մեր ժողովուրդը զարգացած չէ։ Գիւղական ուսումնարաններ հիմնելով մեր երկրում, մենք մեր ժողովուրդը փոքր ինչ զարգացնում ենք։ Բայց ժողովուրդը առաւել ևս կ'զարգանար, եթէ կարելի լինէր նորան իւր երկրի գիւղական ուսումնարաններում սովորելու, փոխանակ օտար երկրների գիւղական ուսումնարաններին դիմէր։ Բայց անկարելի է բոլոր ժողովուրդին օտար երկիրներ ուղարկել ուսում առնելու համար։

III.

Բայց այն մարդիկ, որոնք բարձր ուսումնարաններ—համալսարան են մտնում, այնքան մեծ թւով չեն լինում, ուրեմն նոցա կարելի է օտար երկիրներ ուղարկել ուսում առնելու համար, թէ Ռուսաստան և թէ արտասահման։ Հասկանալի է, որ երիտասարդներին օտար երկրների մէջ ապրելը օգուտ կ'բերէ, այնոր համար որ օտար հասարակութիւններ մեր հասարակութիւնից առաւել զարգացած են և այնտեղ երիտասարդներ ստիպված չեն լինի մեր

նման չզարգացած և անշարժ հասարակութեան ազդեցութեան տակ մնալ։

IV.

«Դուք մի բան մոռացաք» կասեն ինձ, այն է, որ «եթէ Թիֆլիսում համալսարան լինէր, ուսանողների թիւը կ՚մեծանար»։

—Իսկ դուք այն մոռացաք, պատասխանում եմ ես, որ եթէ Թիֆլիսում համալսարան լինէր, երիտասարդներից շատերը, որոնք կարողութիւն ունեն օտար երկիրներ գնալու, չէին գնայ։—Ինչի՞. առաջին իւրեանց սեփական ծուլութեան և անշարժութեան պատճառով, և երկրորդ—ծնողների կամակորութեան պատճառով։

«Այստեղ համալսարան կայ» կասէին ծնողները, ինչի՞ այնքան հեռու ուղարկեմ որդիս, տրանից զրկվեմ և փողն էլ մսխեմ.... աւելի լաւ չէ՞, որ փողը այստեղ մսխեմ, և որդուս այստեղ պահելով, այնքան փող էլ չեմ մսխի, ինչքան որ նորան օտար երկիրներ ուղարկելով։

V.

Իսկ այն բանի վերայ չեն մտածում մեր բարի ծնողները, որ Թիֆլիսի համալսարանի մէջ մնալը երիտասարդի համար և օտար քաղաքի համալսարանի մէջ մնալը միևնոյն բան չէ։ Մեր ծնողները չեն մտածում այդ բանի վերայ այնոր համար, որ նոքա խակալէս չեն

հասկանում ուսման օգուտը, բայց իւրեանց որդիներին համալսարան են ուղարկում միայն այն պատճառով, որ այդպիսի «մօդա» է։

Մարտիրոսեանը որդի ունի։ Հարուստ չէ նա. ամիս 25 րուբլուց աւելի չէ կարող մսխել իւր որդու համար։ Կիրակոսեանը նորանից հարուստ չէ, բայց դարձեալ ուղարկել է իւր որդուն Պետէրբուրգի համալսարանը։ «Որ Կիրակոսեանը իւր որդուն համալսարան ուղարկեց, ասում է Մարտիրոսեանը, ես էլ կուղարկեմ իմ որդուն. ես Մարտիրոսեան եմ և Կիրակոսեանից պակաս չեմ....»։

Ոչ Մարտիրոսեանը, ոչ էլ Կիրակոսեան այն պատճառով չեն ուղարկում իւրեանց որդիներին համալսարան, որ ուսման օգուտը չեն հասկանում, բայց միայն այն պատճառով, որ «մօդա» է, որ ընդունված է որդիներին ուսում տալ, և որ որդիները «ատէստատ» առնեն։

Հիմնեցէք այսօր համալսարան Թիֆլիսում, և մեր Կիրակոսեաններ և Մարտիրոսեաններ կասեն. «այլ էս չէ հարկաւոր որդիներս հեռու ուղարկել..... մեզանումն էլ կայ համալսարան»։

VI.

Այն մարդիկներին, որոնք որդու համար ամիս 25 րուբլից աւելի չեն կարող մսխել, և որոնք ուսման օգուտը չեն հասկանում, ներելի է ասել թէ «այժմ հարկաւոր չէ հեռու ուղարկել որդիներս. մեզանում էլ կայ համալսարան»։

Բայց այն մարդիկներին, որոնք ուսում առած են և հարուստ են, ներելի չէր լինի, եթէ նոքա իւրեանց մօտ էին պահել որդիներին, ասելով թէ «այստեղ ևս կայ համալսարան»։

Այդ մարդիկ, ասենք, որ փողն ևս չեն խնայում իւրեանց որդիների ուսման համար, բայց նոքա այնոր համար կ'ցանկանային Թիֆլիսում համալսարան ունենալու, որ իւրեանց որդիներին կարողանային հսկողութեան մէջ պահել։ Նոքա լաւ են իմանում, որ օտար երկրների մէջ բնակելով երիտասարդներ առաւել են զարգանում և նոցա աւելի հեշտ է լինում ծնողների պակասութիւններ և նախապաշարմունք նկատել, իսկ ծնողներին աւելի դժուար է լինում որդիներին մշտնջենաւոր հսկողութեան տակ բռնել։

VII.

«Մեզանումն ևս կայ համալսարան» կասեն մարդիկ, և չեն մտածի այն բանի վերայ թէ համալսարանը միայն այն ժամանակ օգտաւէտ է լինում և շատ պտուղներ է բերում, երբ որ նա լաւ յատկութիւններ ունի։ Իսկ համալսարանի լաւ յատկութիւններ երկրից և հասարակութիւնից, մի խօսքով, շրջապատող դրութիւնից են կախված։

Մի շրջապատող դրութիւնն համալսարանի մի բաժնի հիմնելուն յարմար է, միւսը—միւսին։

Այդ բանը հասկանալով, Ֆրանսիացիները

միևնոյն քաղաքում չեն հիմնում համալսարանի բոլոր ֆակուլտէտներ (բաժիններ), բայց զանազան գաւառներում զանազան բաժիններ են հիմնում։

Այսպիսի երկրում, որը հարուստ է բնական արդիւնքներով, աւելի յարմար է հիմնել բնական բաժին և ամենևին յարմար չէ փիլօլօգիական (լեզուագիտական) բաժին հիմնել։ Իսկ մեծ կենդրոններում, որտեղ հասարակական կեանքը առաւել զարգացած է, աւելի յարմար է հիմնել իրաւաբանական և լեզուագիտական բաժիններ։

VIII.

Երևակայեցէք ձեզ մի քաղաք, որտեղ հասարակական կեանքը զարգացած է։ Այն երիտասարդը, որը իրաւաբանութեամբ է պարապում, դասախօսութիւնը լսելուց յետոյ, միջոց ունի ուսուցչի հետ խօսելու։ Ուսուցիչը նորան հրաւիրում է իւր մօտ, խօսում է ուսանողի հետ, մեկնում է նորան առարկայի այս կամ այն մասը, որը նա պարզ չէր հասկացել։ Ուսուցիչը տալիս է ուսանողին առարկայի մասին գրքերի անուններ։ Ուսանողը կարող է այդ գրքերը ձրի առնել քաղաքի կամ թագաւորական գրատուններից։ Զնչին գինը վճարելով կարող է այս կամ այն գիրք մասնաւոր գրավաճառների գրատուններ մէջ գտնել։

Մեծ քաղաքի մէջ ուսանողը միջոց ունի ծանօթանալու այս կամ այն երևելի իրաւաբա-

նի հետ, որի ծանօթութիւնը նորա մտաւորական և ուսումնական զարգացմանը օգուտ կարող է բերել։ Ուսուցիչը ժամանակ առ ժամանակ ընդունում է իւր տուն իրաւաբաններին, ուսումնականներին, կազմում է ընկերութիւն, որտեղ ուսանողը միջոց ունի այս կամ այն իրաւաբանական հարցի վերայ վիճաբանութիւններ լսելու։ Վիճաբանութիւններից յետոյ մարդս միշտ աւելի պարզ է հասկանում առարկայի այս կամ այն հարցը։

Միևնոյն ժամանակին բացի ընկերութիւններից և վիճաբանութիւններից կայ և հասարակութեան կրիտիկա։ Ուսուցիչը հրատարակում է իւր դասախօսութիւնները, հրատարակում է և իւր առարկայի վերայ գրքեր,—մեծ քաղաքում, որտեղ հասարակական կեանքը զարգացած է, կ՚գտնվին անշուշտ մարդիկ, որոնք գրքի վերայ կրիտիկա կ՚գրեն, նմանապէս և օրագիրները այն գրքի մասին կ՚խօսեն, դատողութիւն կանեն։

Ուսանողը ուրեմն ստիպված չէ ստրկաբար հետևել ուսուցչի մտքերին. նա ամէն ժամ, ամէն րօպէ հասարակութեան մէջ օգնութիւն է ստանում իւր անձնական մտաւոր համոզմունքը զարգացնելով։

Բացի սորանից մեծ քաղաքում նա յաճախ միջոց ունի ներկայ գտնվելու դատաստանի հետաքրքիր պաշտպանողութիւններին, վէճերին և նոցա վճիռներին։

Առաջարկում է արդեօք այն երիտասարդին,

որը իրաւաբանութեամբ է պարապում, զարգացնելու այդպիսի միջոցներ Թիֆլիսի նման քաղաքը։

IX.

Ես ասացի, որ այնպիսի մի երկրում, որը հարուստ է բնական արդիւնքներով, աւելի յարմար է հիմնել բնական գիտութիւնների բաժին։ Բայց սա չէ նշանակում, որ բնական արդիւնքների հարստութիւնը բաւական է ուսանողին հաստատ գիտութիւն ստանալու և առաջադիմութիւններ անելու իւր ուսման մէջ։ Մի բնական գիտութիւն սիստեմատիկական և հիմնաւոր կերպով սովորելու համար հարկաւոր է գործնական միջոցներ ձեռքի տակ ունենալ։

Մեր երկիրը թէպէտև հարուստ է բնական արդիւնքներով, բայց չէ առաջարկում ուսանողին գործնական միջոցներ բնական գիտութիւն մի սովորելու համար։

Գործնական միջոցներ սոքա են. բնական գիտութիւնների զանազան թանգարաններ (кабинеты), քիմիական նիւթեր և այլն։

Այնպիսի երկրում, որը աղքատ է բնական արդիւնքներով, բայց որտեղ կան կազմված թանգարաններ, և կան քիմիական նիւթերի գործարաններ (фабрики)—այնպիսի երկրում աւելի դիւրահաս է ուսանողին բնական գիտութիւններին հիմնաւորապէս պարապել, քան թէ այն երկրում, որը հարուստ է բնական ար-

դիւնքներով, բայց որտեղ ոչ մի օրինաւոր թանգարան չկայ, գրքատուն չկայ, քիմիական նիւթեր չկան։ Քիմիական նիւթեր չեն պատրաստւում, որովհետև գործարաններ չկան, իսկ եթէ կ'գտնէք մի քանիսներ, սոքա թանգ են, որովհետև ուրիշ երկրներից են բերած մեծ մասով, և փոքր քանակութեամբ։

X.

Ուրեմն հասարակութիւնը զարգացած չէ։ Ուսանողներ հազիւ են լսում այնպիսի խօսակցութիւններ, որոնք նոցա օգուտ կարող էին բերել, զարգացնելով նոցա խելքը։ Միջոց չունի երիտասարդը որևիցէ ուսման նպատակով կազմված ընկերութիւն մտնելու։ Դժուար է նորան գրքեր կարդալու ցանկութեանը և պարապելու հարկաւորութեանը բաւականութիւն տալ, որովհետև գրատուններ չկան։ Դատաստանի վէճեր մինչև անգամ այնքան յաճախ չեն պատահում, այնքան երևելի կերպով չեն պաշտպանվում, այնքան հետաքրքիր չեն փոքր քաղաքում, ինչպէս լինում են նոքա մեծ քաղաքներում, որտեղ հասարակական կեանքը զարգացած է։ Հասարակութեան կրիտիկա չկայ, չկայ հասարակական կարծիք։

Բնական գիտութիւններով պարապող երիտասարդը կարողութիւն չունի ոչ քիմիական նիւթեր ձեռք բերելու, որովհետև գործարաններ չկան, ոչ եւ սիստէմատիկական կերպով

պարապելու, թանգարանների պակասութեան պատճառով։

Վերջապէս տգէտ և նախապաշարված ծնողները պահում են երիտասարդին անդադար հընազանդութեան և ստրկութեան մէջ։

Այդպիսի հանգամանքներում կարո՞ղ էք դուք երևակայել ձեզ համալսարանի յաջողակ հիմնաւորումն և գրութիւնը։

XI.

Ուրեմն եթէ հիմնվել էր համալսարան Թիֆլիսում, նորա հիմնելու հետևանքները կ'լինէին առաջին, որ երիտասարդներ չէին կարողանայ հիմնաւորապէս պարապել իւրեանց ուսմամբ, որովհետև գործնական միջոցներ չկան. երկրորդ, որ նոքա բացված չէին կարող լինել, որովհետև միջոց չէին ունենայ, ինչպէս օտար քաղաքներում. զարգացած հասարակութեան հետ յարաբերութիւններ չեն ունենայ, և վերջապէս երիտասարդներ չէին կարողանայ ազատվել նախապաշարմունքից, այնոր համար որ առիպված կ'լինէին տգէտ, կամակոր և նախապաշարված ծնողների ազդեցութեան տակ մնալ։

Օգուտը ուրեմն—ոչինչ, իսկ վնաս այն կը լինէր, որ մի ամբողջ սերունդը կ'ապանվէր մտաւորապէս և միևնոյն ժամանակ ուսման առարկաներն եւ երիտասարդները հիմնաւորապէս չէին իմանայ։

—

XII.

Այդ մտքերին, յայտնի բան է, ամէնքը համաձայն չեն լինի. և ես գոնէ իմ կողմից, մի պարոնից յետագայ միտք եմ լսել նորա հետ այդ բանի մասին խօսելու ժամանակ, թէ համալսարանի հիմնելը փոքր առ փոքր ձեռք կ'բերէ գործնական միջոցներ հասարակութեան մէջ, և բացի սորանից, նորա կարծիքով, վտանգ մի չ'կայ, որ այժմեան սերունդը, մեր սերունդը, միևնոյն կերպով վարվէր, երեխաներին ստըրկութեան մէջ պահէր, ինչպէս մեզ էին պահում մեր ծնողները: Սորա վերայ ես նորան պատասխանել եմ, թէ մինչև որ գործնական միջոցներ փոքր առ փոքր ձեռք կ'բերվեն, մի ամբողջ սերունդ զուրկ կ'մնայ նոյն միջոցների բաւական օգնութենից, ուսում առնելու ժամանակ, և երկրորդ, որ նոր սերունդը իզուր կատարեալ կ'համարէր իրան:

Հին սերունդի և մեր սերունդի զանազանութիւն այն է միայն, որ նոքա չեն կամենում և հասկանում ևս չեն իւրեանց պակասութիւնները, իսկ մենք հասկանում ենք մեր պակասութիւնները:

Մեր մէջ, հայերի մէջ, վատ բարքի ու վարքի օրինակները, նախապաշարմունքը, կամակորութեան և բռնաւորութեան սովորութիւնները այնքան արմատացած են, որ մենք, նոր սերունդն ևս, այն բան հասկանալով և մեր բնա-

ւորութեան զօրութենից բաւական յոյս չունենալով, պէտք է աշխատենք հեռացնել մեզանից մեր երեխաներ, ազատել նոցա մեր ազդեցութիւնից, նոցա հնար տալ ազատվելու անպիտան, կոպիտ ստրկութիւնից, նոցա հնար տալ մեր ընդդէմ կռուելու:

„Հայկ. Աշխ.", 1868, № 5—6.
Վէինէցիա.

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ.

—

(Այս յօդուածը ստացել ենք յունվար ամսին։ Բայց ցանկանալով օրագրումս այնպիսի յօդուածներ հրատարակել, որոնց համար պատասխանատու կարող էինք մենք ևս դառնալ և սորան այնպիսի յօդուածներից չհամարելով, դժուարանում ենք հրատարակել։ Միևնոյն ժամանակ բոլորովին ցանկանում էինք մտածող ընթերցողներիս մասնակից կացուցանելու այն խելացի և միանգամայն օգտաւէտ մտքերին, որոնք գտնվում են այս յօդուածում։ Ուստի մենք ահա հրատարակեցինք այս յօդուածը, պատասխանատւութիւնը նոյն իսկ հեղինակին թողնելով)։

I.

Ինչի՞ էք սովորում որևիցէ լեզու։

Երեք նպատակով. առաջինը, որ կարողանանք մի հասարակութեան հետ յարաբերութիւններ ունենալ,—երկրորդ, որ ծանօթանանք այն հասարակութեան հետ,—և երրորդ, որ կարողանանք ինքներդ այդ հասարակութեանը նորա

լեզուի միջոցով ձեր միտքը յայտնել, չարադրութիւններ գրելով։

Ինչի՞ ենք սովորում հայկական լեզու։—Միևնոյն երեք նպատակով։

Առաջինը, որ կարողանանք հայկական հասարակութեան հետ յարաբերութիւններ ունենալ.... Բայց հայկական հասարակութեան հետ յարաբերութիւններ ունենալու համար անպատճառ հարկաւոր չէ հայերէն իմանալ. Վրաստանի հայերը վրացերէն առաւել լաւ են խօսում քան թէ հայերէն։ Հայաստանի կողմերի (օրինակ Երևանի) հայերը ոչ միայն հայերէն են իմանում, բայց ամէնքը նմանապէս և թուրքերէն են խօսում։ Վերջապէս, առհասարակ Ռուսաստանի հայերը ռուսերէն են իմանում։

Ժողովրդի ստորին դասերը առաւել վրացերէն կամ թուրքերէն են խօսում—ժողովրդի վերին դասերը, այսինքն ուսում առածները, առաւել ռուսերէն են խօսում։ Ինձ կասեն թէ նոքա այն պատճառով են խօսում ռուսերէն, որ ուսում են առել ռուսերէն լեզւով։ Ցայտնի բան է, սա է պատճառը,—ապա ինչ լեզւով կը կամենայիք որ նոքա ուսում առնեն։ Ռուսերէն լեզու մեզ միջոց է տալիս գիմնազիոններ և համալսարաններ մտնել,—իսկ հայերէնը այդ միջոց չէ տալիս, որովհետև հայկական օրինաւոր ուսումնարան չկայ։ Ռուսերէնը մեզ հնար է տալիս ուսումնական գրքեր կարդալ,—իսկ հայերէնը..... բայց սորա մասին յետոյ կ՚խօսեմ։

Ուրեմն խրողութիւնը նոյն է մնում, որ հայերի հետ յարաբերութիւններ ունենալու համար հարկաւոր չէ անշուշտ հայերէն իմանալ։

II.

Երկրորդ նպատակը, որ մարդս պիտի աչքի առջև ունենայ մի որևիցէ լեզու սովորելու ժամանակ, այն է որ նա կարողանայ հասարակութեան գրականութեան հետ ծանօթանալ։ Իսկ գրականութեան հետ ծանօթանում ենք այն նպատակով, որ նորանից ինչ և իցէ օգուտ քաղենք։

Ուրեմն մենք հայերէն ենք սովորում, որ կարողանանք հայկական գրականութեան հետ ծանօթանալ։

Հայկական գրականութիւն..... Ի՞նչ հայկական գրականութիւն..... Կա՞յ արդեօք հայկական գրականութիւն։ Եւ եթէ կայ, ինչ օգուտ կարող ենք նորանից քաղել։

Նոր հայկական գրականութիւն չ'կայ։ Գոնէ ես չեմ կարծում, որ երկու կամ երեք գիրք, չորս կամ հինգ օրագիրներ,—կարելի լինէր գրականութիւն անուանել [1]։

[1]) Մանաւանդ եթէ համեմատենք Ֆրանսիայի գրականութեան հետ։ Գիտէք ինչքան գրքեր և օրագիրներ են հրատարակվում Ֆրանսիայում մի տարվան մէջ։— Փարիզում միայն մի տարվան մէջ հրատարակվում է 12,000 հատ գիրք։ Մնացած Ֆրանսիայի մէջ—6,000 հատ գիրք։ Ֆրանսիայում հրատարակվում է մի տարվան

Հին հայկական գրականութիւն կայ, և շատ հարուստ է, այդ ճշմարիտ է։ Հին հայկական գրականութիւն ոչ թէ միայն հարուստ է, բայց ուղղութիւն ունի։

Բայց ինչ ուղղութիւն։ Յարմա՞ր է նա արդեօք մեր այժմեան հարկաւորութիւններին։ Կարո՞ղ ենք մենք արդեօք մեր հին գրականութիւնից այնպիսի մտքեր քաղել, որոնք կարողանային մեր ազգի բարք ու վարքը նորոգել, և մեր կեանքին ու մեր խելքի ընդունակութիւններին մի նոր օգտաւէտ ուղղութիւն տային։

Հարկաւոր է վերջապէս խոստովանել մեր պահանջմունքը, հարկաւոր է ասել թէ ինչ է հարկաւոր մեզ մեր կեանքը նորոգելու համար։

Կեանքի մէջ երկու կողմ կայ, նիւթական և մտաւորական կողմեր։ Այդ երկու կողմերը հարկաւոր է զարգացնել։

Նիւթական կողմից մեր ազգին հարկաւոր են. երկրագործութիւն, վաճառականութիւն,

մէջ 1,771 օրագիր, որոնցից 336-ը քաղաքական և 1,435-ը գրականական են։ (Տես Annuaire d'economie politique", 1864—1867)։

Վերջին ժամանակում „Կօսմօս" (Cosmos) օրագիրը յետագայ հետաքրքիր թւանշաններ էր տպել։ Եւրոպացիների գրքերից կարելի է կազմել այնպիսի գրատուն, որ կ'պարունակէ իւր մէջ 20,000,000 (քսան միլլիօն) հատ գիրք։ Ահա գլխաւոր ազգերի գրքերի թիւը։ Ֆրանսիա—6,200,000։ Իտալիա—4,150,000։ Աւստրիա—2,500,000։ Պրուսիա—2,000,000։ Անգլիա—1,800,000։ Ռուսիա—850,000։

արուեստ, վաճառաշահութիւն և ճանապարհներ։

Մեր բարոյական կեանքը զարգացնելու համար մեզ հարկաւոր են. ուսումնարաններ (աղջիկների և տղաների), գրականութիւն, օրագիրներ, թատրոններ, հասարակական դասախօսութիւններ, արհեստ, խելացի և ուսումնական հոգևորականներ։

Մի խօսքով մեզ հարկաւոր է հարստութիւն. նիւթական և մտաւորական հարստութիւն։ Իսկ հասարակութիւնը չէ կարող հարստութեանը հասնել առանց աշխատանքի։ Եւ օրինաւոր աշխատանք կազմելու համար, հարկաւոր է ուսում տարածել երկրի մէջ։ Իսկ ուսում տարածելու և ուսում ընդունելու համար հարկաւոր է կրկին աշխատանք։

Ուրեմն մեր բոլոր պահանջմունքն ինչ է.— «Ա շ խ ա տ ա ն ք» մտաւորական և նիւթական։

Այժմ ես ձեզ հարցնում եմ. կարող է արդեօք մեր հին գրականութիւնը մեր մտաւոր և նիւթական աշխատանքին օրինաւոր ուղղութիւն տալ, այսինքն այնպիսի ուղղութիւն, որ մեր այժմեան պիտոյքներին յարմար լինէր։— Չէք իմանում....։

Ուրեմն վեր առնենք պ. Եզովի հետաքրքրական աշխատանքը հին Հայաստանի վերայ, և տեսնենք հայկական հին գրականութեան ուղղութիւն ինչ էր և ինչպէս կարող է նա մեզ օգնել մեր նիւթական և մտաւորական կեանքը զարգացնելու համար։

«Հայերի այն մտաւոր գործունէութիւնը, որ սկսվում է V դարից, ասում է պ. Եզովը, ամենից լաւ վկայում է մեզ թէ ինչ էր ազգիս զարգացման աստիճանը, ինչպէս տառապանքի հարուածների տակ զարթնեց նորա մէջ հոգևոր կեանքը, և ինչպէս մեծ էր նորա ներքին, բարոյական զօրութիւնը, որովհետև դժուար է մեկնել, թէ ինչ կերպով ցրված ազգը, այնքան դարեր ստրկութեան մէջ մնալով, ապրում է իւր սեփական հոգևոր կեանքով, պարապում է գիտութիւններով, ունեալ մշակած լեզու ունի, որը հարստացնում են մարդկային ամէն գիտութիւններից առած աշխատանքներ [1])։

Միևնոյն գրքից նմանապէս երևում է, առաջին, որ «անյիշատակ ժամանակներից հայկական ազգը երկրագործութեամբ էր պարապում։ Հայերը վաճառականական յարաբերութիւններ ունէին հին աշխարհի ամեն ազգերի հետ». երկրորդ, որ «հայկական գրականութիւնը, պարունակելով իւր մէջ յունական մատենագիրներից բազմաթիւ ճիշտ թարգմանութիւններ, որոնք կամ կորցրած, կամ վնասված էին համարվում,—ուսումնական մեծ նշանակութիւն ունի։ Որպէս ազգի հոգևոր կեանքի արտայայտութիւն, հայկական գրականութիւնը մեզ ճիշտ տեղեկութիւն է տալիս, թէ ինչ էր հայերի մտաւոր և բարոյական զարգացման աստիճանը, քրիս-

[1]) Внутренный бытъ древней Арменіи (ст. 146). —Г. А. Эзовъ.

տոնէութեան առաջին դարերից սկսած»։ (Տես պ. Եզօվի գրքի վերջին երեսը—Положенія)։

Նմանապէս մեզ յայտնի է մեր հին գրականութիւնից, որ հայկական կնամարդը քիչ թէ շատ բացված էր (ինչքան որ կարելի էր, յայտնի բան է, բացված լինել այն ժամանակին), որ նա աստուածապաշտ էր, որ նա ազգասիրութեամբ էր ոգևորված, որ նա ազգասէր և քաջ երիտասարդներ էր պատրաստում հայրենիքը պաշտպանելու համար։ Որ նա հայերի դժբաղդութեան օրերին, հայրենիքի համար զանազան նեղութիւններ էր համբերում, զոհում էր իւր զարդարանքները, իւր հանգստութիւնը, իւր կեանքը հայրենակիցների համար։

Հայրենիքը այնչափ սիրելու համար հարկաւոր է քիչ թէ շատ բացված լինել [1]։

Ուրեմն մենք մեր հին գրականութիւնից կարող ենք ծանօթանալ հին հայերի կեանքի հետ։ Մեր հին գրականութիւնը մեզ ցոյց է տալիս հին հայերի յարաբերութիւններ ուրիշ ազգերի հետ, մեզ ցոյց է տալիս, որ հին հայերը զօրեղ էին, քաջ էին, որ նոցա բարոյական և հոգևորական զարգացումը մեծ աստիճանի էր հասել, որ կնամարդիկ քիչ թէ շատ բացված էին [2]) և վերջապէս որ հայերը հին ժամա-

1) Տես „Եղիշէ վարդապետի Վարդանեանների պատմութիւն" Մարտ. Սիմէօնեանի աշխարաբար թարգմանութիւն. (երես 240—145.

2) Արդարև չորրորդ և հինգերորդ դարի հայ կնամարդը ծանօթ էր քրիստոնէութեան հետ,—մեր ժա-

նակներից սկսած երկրագործութեամբ և վաճառականութեամբ էին պարապում։

Այդ բոլորը նա մեզ ցոյց է տալիս.—բայց նա մեզ չէ ցոյց տալիս թէ մենք մեր այժմեան կեանքին ինչ ուղղութիւն պէտք է տանք, որ մեր այժմեան պիտոյքներ կատարենք, որ երկրի մէջ աշխատանք տարածենք։

Հին գրականութիւնը մեզ ցոյց է տալիս թէ «մենք ինչ ենք եղել, և ինչ ենք արել»—բայց նա մեզ ցոյց չէ տալիս թէ «մենք ինչ պէտք է անենք»։

Մեր հին գրականութիւնը պատմագրական ուղղութիւն ունի, և բացի սորանից այն ազգասիրութիւնը, որով ոգևորված էին մեր հին գրողները, նորան բանաստեղծական ուղղութիւն է տալիս։

Կարօղ է արդեօք այդպիսի ուղղութեան գրականութիւնը օրինաւոր ուղղութիւն տալ մեր այժմեան պիտոյքներին։

Ես ասացի, որ մեր այժմեան պահանջմունքը աշխատանք է, մտաւոր և նիւթական։

Ասենք թէ դուք մտադիր էք երկրագործու-

մանակին հայ կնամարդը ծանօթ չէ Եւրոպացիների ուսման հետ, որ քրիստոնէութեան պտուղն է, որ ծնված է քրիստոնէութիւնից։ Ուրեմն հին ժամանակի հայ կնամարդը ծանօթ էր մարդկութեան նոր կարծիքի հետ.—մեր ժամանակի հայ կնամարդը ծանօթ չէ նոր կարծիքի հետ։ Ուրեմն հին ժամանակի հայ կնամարդը առաւել բացված էր, քան թէ մեր ժամանակի հայ կնամարդը։

թեամբ, կամ չերամապահութեամբ պարապելու,—կամ մտադիր էք երկաթի հանքեր կառավարելու...,։ Կարող էք դուք արդեօք ձեր գործը օրինաւոր կերպով առաջ տանել, եթէ դուք եւրոպացիների, արեւմտեան գրականութեան և ուսման հետ ծանօթ չէք։ Եթէ դուք միայն հին հայկական գրականութեան հետ էք ծանօթ, կարող էք դուք օրինաւոր կերպով առաջ տանել ձեր գործը։

Ո՛չ, չէք կարող, այնոր համար, որ հայկական գրականութիւնը չունի ըէալական, գործնական ուղղութիւն, այսինքն չունի այնպիսի ուղղութիւն, որից մարդս կարողանար այնպիսի ուսում և տեղեկութիւններ քաղել, որ նորան հարկաւոր լինէին իր ամենօրեայ պահանջմունքը կատարելու և հարկաւոր աշխատանք կառավարելու։

Երբ ես կամենում եմ երկրագործութեամբ կամ չերամապահութեամբ պարապել, ես չեմ դառնայ դէպի այնպիսի գրականութիւն, որ պատմագրական և պօէտիկական ուղղութիւն ունի։ Կամ երբ ես տեսնում եմ հասարակութեան տգիտութիւնը, տեսնում եմ որ իմ հայրենակիցներս վատ են դաստիարակում իւրեանց երեխաները,—և ես մտադիր լինեմ օրինաւոր մանկավարժական ուղղութեամբ ուսումնարան հիմնել, ես չեմ դառնայ դէպի այն գրականութիւնը, որը պատմագրական և պօէտիկական

ուղղութիւն ունի, և որը մի օրինաւոր մանկավարժական գիրք չունի [1]։

Կարելի է այն գրքերի մէջ, որոնք Վենետիկում, Վեննայում կամ Կ. Պօլսում են հրատարակվում, կան «մարդկային ամէն գիտութիւններից առած աշխատանքներ»—բայց սոքա միայն թարգմանութիւններ են և այնքան փոքր թւով են, որ բաւական չեն կարող լինել մի ինչ և իցէ գործ կամ գիտութիւն սիստէմատիկական կերպով ուսումնասիրելու համար։

Ֆրանսիացիներ հարուստ գրականութիւն ունեն, բայց երբ որ նոքա մի ինչ և իցէ գործ կամ գիտութիւն օրինաւոր կերպով սովորել են կամենում,—նոքա իւրեանց գրականութեամբ չեն բաւականանում, բայց դառնում են դէպի գերմանացիների և անգլիացիների գրականութիւնները։ Նմանապէս և անգլիացիներ և գերմանացիներ, երբ որ կամենում են մի ինչ և իցէ գործ կամ գիտութիւն օրինաւոր կերպով սովորելու,—նոքա իւրեանց գրականութեամբ

---

[1]) Ինձ կասեն, թէ կան մանկավարժական գրքեր հին հայկական գրականութեան մէջ,—լաւ, թող պըտռեն։ Մինչև որ հայագէտները չորրորդ և հինգերորդ դարի գրականութեան մէջ մանկավարժական գրքեր կ'պտռեն, ես ընթերցողի ուշադրութիւնը կ'դարձնեմ գերմանացի Ֆրէբէլի մանկավարժական աշխատանքների վերայ։ Ֆրանսիական լեզւով նորա գիրքը „Երեխաների պարտէզների ձեռնարկութիւն“ (Manuel pratique des jardins d'enfants.—Frederic Froebel) թարգ. է պ. Իակօբսը (Jacobs). Գինը է 12 ֆրանկ (3 մանէթ)։

չեն բաւականանում, բայց հարևան ազգերի գրականութենից օգնութիւն են խնդրում։

Իսկ մենք, որոնք թէպէտ և հին գրականութիւն ունենք, բայց այնպիսի գրականութիւն, որ մեր այժմեան հարկաւորութիւններին յարմար չեն ամենևին, այնպիսի գրականութիւն, որ պատմագրական և պօէտիկական ուղղութիւն ունի, իսկ այժմ ոչ սեփական ուսումնարաններ, ոչ գիտնականներ, ոչ գրողներ ունենք (ուրեմն և սեփական գրականութիւն չունենք). բայց միայն եւրօպացիների գրականութենից քանի մի ուսումնական գրքերի թարգմանութիւններ ունենք,—ինչպէս կարող ենք մենք այդ գրականութեամբ բաւականանալ։

Ուրեմն իրողութիւնը նոյն է մնում, որ մենք հայկական լեզու այն նպատակով չենք սովորում, որ մեր գրականութեան հետ ծանօթանանք և նորանից օգուտ քաղենք.... որովհետև գրականութիւն չ'կայ [1])։

---

1) Կան, այո՛, հին հայկական պատմագրական և պօէտիկական գրականութեան մէջ ազնիւ մտքեր, ազգասիրութեան և քաջութեան օրինակներ..... Ազգասիրութիւնը և քաջութիւնը հարկաւոր է նմանապէս և աշխատելու և ուսուցանելու և ուսում առնելու համար։ Բայց բաւական չէ որ մարդը ազգասիրութեամբ ու քաջութեամբ աշխատէ,—նա գլխաւորապէս պէտք է իմանայ „ինչպէս“ նա պէտք է աշխատէ։ Այն ժամանակից սկսած, երբ լուսաւորեալ, քրիստոնէական, զօրեղ տէրութիւնը, իւր որդիների արիւնի գնով ապահովացրել է մեզ մեր արտաքին թշնամիների դէմ,—նա

III.

Ես ասացի որ երրորդ նպատակը, որ մարդս պիտի աչքի առջև ունենայ մի որևիցէ լեզու սովորելու ժամանակ, այն է որ նա կարողանայ հասարակութեանը նորա լեզուի միջոցով իւր միտք յայտնել ինչ և իցէ յօդուածներ կամ գրքեր գրելով։

Ես նմանապէս ասացի, որ մենք գրականութիւն չունենք, որ մենք ոչինչ չենք գրում,—իսկ այժմ ես հարցնում եմ ձեզ, ինչ է պատճառը, որ մեր մէջ ոչինչ չէ գրվում։

Պատճառը, որ մեր մէջ ոչինչ չէ գրվում (կամ շատ սակաւ է գրվում) այն է, որ մեր հասարակութիւնը հարկաւորութիւն չէ զգում դէպի ընթերցանութիւնը։

Ե՞րբ էք տեսել որ մի որ և իցէ բան կա-

մեզ մի և նոյն ժամանակին և մեր ներքին թշնամիներ ցոյց տուեց։ Ուսումնարաններ հիմնելով մեր մէջ, մեզ ճանապարհ տալով համալսարաններ մտնելու, մեզ իւր ազգի գրականութեան հետ ծանօթանալու, իւր քաղաքական օրէնքներ և եւրօպացիների լուսաւորութիւնը մեր մէջ տարածելով, ռուս տէրութիւնը մեզ հնար տուեց մեր սեփական ներքին թշնամիների դէմ կռուելու։ Եւ սորա համար մեր մշտնջենաւոր շնորհակալութիւն մենք նորան յայտնել կարող ենք միայն մի միջոցով,—այն է որ միշտ և միշտ օգնենք նորան պատերազմելու մեր ներքին թշնամիների դէմ։ Ով են այդ մեր ներքին թշնամիներ։ Սոքա են—մեր սեփական ծուլութիւն, տգիտութիւն և նախապաշարմունք։

Հեղ. ծան.

տարվի, պատրաստվի, կամ ստեղծվի մի հասարակութեան մէջ, երբ այդ հասարակութիւնը այդ բանի հարկաւորութիւն չէ յայտնում։

Օրինակ Ֆրանսիայում, ամբողջ օր աշխատելուց յետոյ, մարդիկ հարկաւորութիւն են զգում գիշերը միասին հաւաքվելու, խօսելու, (կաֆէ կամ գինի խմելով) օրագիրներ կարդալու, կամ բիլիարդի խաղով մարմինը քիչ վարժելու,—և հասարակութեան այդ հարկաւորութեանը նայելով հիմնվում են Ֆրանսիայի ամէն քաղաքի մէջ պանդոկները մեծ թւով։

Մեր մէջ մարդիկ չեն զգում հարկաւորութիւն հաւաքվելու, օրագիրները կարդալու կամ խօսելու,—ուրեմն և այնպիսի հաւաքվելու տեղեր ևս չեն հիմնվում մեր մէջ։

Շվէյցարիայում գրքեր կարդալու հարկաւորութիւն կայ,—ուրեմն և գրեթէ ամէն քաղաքում հասարակական գրատուններ կան, որտեղ ուրախութեամբ օտար մարդին անգամ ձրի ներս են բերում գրքեր կարդալու։

Մեր մէջ հասարակութիւնը հարկաւորութիւն չէ զգում գրքեր կամ օրագիրներ կարդալու, ուրեմն և ոչ թէ միայն հասարակական գրատուններ չեն հիմնում, բայց և գրքեր անգամ չեն գրվում մեր լեզւով։

Եւ ինչից պիտի իմացվի, որ մի ինչ և իցէ բանը ձեզ հարկաւոր է,—ինչից պիտի իմացվի, օրինակ, որ ձեզ հարկաւոր է հացը, չորերը և այլն։

Նորանից կարող եմ ես միայն եզրափակել,

որ ձեզ այդ բաները հարկաւոր են, երբ ես տեսնում եմ, որ դուք փող էք մխսում այդ բաներ գնելու համար։

Եթէ հարուստ էք, ձեր հարստութեան մէկ մաս էք տալիս նոցա գնելու համար, եթէ հարուստ չէք, կաշխատէք և ձեր աշխատանքից ստացած փողով կ՚գնէք ձեզ հարկաւոր բաներ։

Մեր մէջ, հայերի մէջ, հայկական օրագիր հրատարակողներ կամ գրքեր գրողներ չեն կարող այդ աշխատանքով ապրել, որովհետև այդպիսի աշխատանքը մեր հասարակութեան մէջ չէ վարձատրվում—ուրեմն սորանից կարելի է եզրակացնել, որ հասարակութիւնը հարկաւորութիւն չէ զգում մտաւոր աշխատանքի։

Կամ կ՚կամենայիք, կարելի է որ գրողը ձեզ համար ձրի աշխատէ, կ՚կամենայիք որ ձրի հրատարակվեն օրագիրներ.... Բայց եթէ գրողը ձրի պիտի աշխատէ, նա, ապահովացրած չլինելով, երկար ժամանակ չէ կարող աշխատել, որովհետև իւր աշխատանքի համար վարձատրված չլինելով, քանի մի ժամանակից յետոյ կամ պիտի քաղցած մեռնէ, կամ պիտի դադարեցնէ իւր աշխատանքը և ուրիշ մի բանով պարապէ։

Մի՞թէ կամենում էք նմանել այն հարուստ մարդին, որ ուսուցչին իւր տունը կանչելով, իւր որդուն դաս տալու համար, պարծենում է թէ բարերարութիւն է անում ուսուցչին, որովհետև նորան պարապեցնում է, հաց է տալիս նորան....։ Նա չէ կամենում համաձայնել, որ

ուսուցիչը նորան նմանապէս մեծ բարերարութիւն է անում, որովհետև լուսաւորութիւն է տալիս նորա տգէտ երեխային։ Բաւական չէ, որ ուսուցիչը լուսաւորում է տգէտ երեխային,—հարուստ մարդը կ՚կամենար, որ նա այդ բանը ձրի անէր.... բայց ինչով պիտի ապրէ ուսուցիչը, եթէ նա իւր աշխատանք ձեզ ձրի կառաջարկէ։.... Ուրեմն ինչով էք պարծենում, որ դուք նորա աշխատանքը վարձատրում էք։

Կային ի հարկէ մարդկային պատմութեան մէջ այնպիսի մարդիկ, որոնք զոհել էին իւրեանց կեանքը իւրեանց ազգ լուսաւորելու համար, որոնք վարձատրված չ՚լինելով, ձրի ուսուցանելով,—քաղցած կամ սպանված էին մեռել։ Այն ազգերը, որոնք ունեցել են այդպիսի մարդիկներ, կարող էին, այո, երևելի ազգեր լինել,—բայց նոքա իրաւունք չունեն իւրեանց «հասարակութիւն» անունը սեփականացնել։—Ինչի՞։—Այնոր համար, որ ազգը կարող է իւրեան «հասարակութիւն» կանչել միայն այն ժամանակ, երբ նա աշխատանքի հարկաւորութիւն է զգում առհասարակ, և գլխաւորապէս մտաւոր աշխատանքի, որ ամեն ուրիշ աշխատանքների հիմն է և կառավարիչ։ Եւ նորանից միայն կարող է մարդս եզրափակել, որ հասարակութեանը հարկաւոր են մտաւոր աշխատաւորներ, երբ նա ապահովացնում է մտաւոր աշխատողներին, այսինքն վարձատրում է հեղինակների աշխատանքներ։ Իսկ երբ որ ազգը

առանց վարձատրելու մտաւոր աշխատողներին, սպասում է որ դարի մէջ գան մէկ կամ երկու մարդիկ, որոնք ձրի նորան կուսուցանեն և յետոյ քաղցած մեռնեն.... այդպիսի ազգը «ազգ» կարող է իւրեան անուանել. բայց նա դեռ չէ հասել այն աստիճանին, որ իւրեան «հասարակութիւն» անուանէ։

Բայց ինձ կասեն, թէ ես սխալվում եմ, թէ հայերը եթէ հարկաւորութիւն չեն զգում հայ լեզուով գրած գրքերը կարդալու,—դա չէ նշանակում, որ նոքա առհասարակ պահանջմունք չունին մտաւոր աշխատանքին։ Ընդհակառակն, կան նոցա մէջ այդ պահանջմունքը, միայն թէ նոքա հարկաւորութիւն են զգում, որ այդ պահանջմունք ուրիշ միջոցով կատարվին. այսինքն որ գրքեր և օրագիրներ ոչ թէ հայ լեզուով գըրվեն, այլ որևիցէ օտար լեզուով։ Որովհետև նոցա լեզուն հնացել է, նոցա համար անհասկանալի, կամ գոնէ դժուար հասկանալի է դարձել, և նոցա հարկաւոր է այժմ մի ուրիշ, օտար աւելի կենդանի, աւելի հասկանալի, աւելի մըշակված լեզու....։

Կարելի է որ սա ուղիղ է, պատասխանում եմ, բայց այն ժամանակ երկուսից մէկը պէտք է ընտրէք։

Եթէ հայերը մտաւոր աշխատանքի պահանջմունք ունեն, բայց կամենում են, որ այդ պահանջմունքը ուրիշ որևիցէ օտար լեզուի միջոցով կատարվի, և ոչ թէ իւրեանց «սեփական

լեզուի» միջոցով.—այն ժամանակ հայերը իւրեանց «ազգ» չեն կարող անուանել։

Կամ եթէ ամենեւին հարկաւոր չէ հայերի համար մտաւոր աշխատանքը,—այն ժամանակ նոքա «հասարակութիւն» չեն կարող իւրեանց անուանել։

Ուրեմն երկուսից մէկը.

Կամ մենք «ազգ» չենք,

Կամ «հասարակութիւն» չենք։

IV.

Ուրեմն կրկնեմ այժմ ինչ որ ասել եմ։

Մարդիկ երեք նպատակով են սովորում որ ևիցէ լեզու. առաջինը որ կարողանան իւրեանց հասարակութեան հետ յարաբերութիւններ ունենալ, երկրորդ որ ծանօթանան այն հասարակութեան գրականութեան հետ, և երրորդ որ կարողանան իւրեանք այն հասարակութեանը նորա լեզուի միջոցով իւրեանց միտք յայտնել, որևիցէ մտաւոր աշխատանք կատարելով։

Իսկ մենք, հայերս, այն նպատակով չենք սովորում մեր լեզու, որ յարաբերութիւններ ունենանք, որովհետև ինչպէս միմեանց հետ, նոյնպէս և ուրիշ ազգերի հետ մենք մեր յարաբերութիւնները թէ բարոյական, թէ ուսումնական, թէ քաղաքական, թէ վաճառականական, թէ ընտանեկան,—մենք մեծ մասով օտար լեզուների միջոցով ենք կատարում։

Մենք այն նպատակով ևս չենք սովորում մեր լեզու, որ գրականութեան հետ ծանօթանանք, որովհետև նոր գրականութիւն չ'կայ, իսկ հին գրականութիւնը թէպէտև կայ և հարուստ է մինչև անգամ, բայց մեր այժմեան հարկաւորութիւններին յարմար չէ, չէ կարող բաւականացնել մեր այժմեան պահանջմունքին ու մեր մտաւոր և նիւթական աշխատանքին օրինաւոր ուղղութիւն չէ կարող տալ։

Նմանապէս այն նպատակով ևս չենք սովորում հայկական լեզու, որ ինչևիցէ մտաւոր աշխատանք կատարենք, գրքեր կամ օրագիրներ հրատարակենք,—որովհետև այդ բաների պահանջմունքը չենք տեսնում հասարակութեան մէջ։ Եւ ապացոյցը որ այդ պահանջմունք չ'կան հասարակութեան մէջ, այն է, որ մեր մէջ ոչ ոք չէ կարող ապրել ու իւրեան կերակրել ոչ հայկական գրքեր գրելով կամ թարգմանելով, և ոչ ևս հայկական օրագիր հրատարակելով։

Ուրեմն, եթէ մենք այն նպատակով հայկական լեզու չենք սովորում, որ յարաբերութիւններ ունենանք, այն նպատակով ևս չենք սովորում, որ կարդանք, ոչ ևս այն նպատակով, որ գրենք,—ուրեմն ինչի՞ ենք սովորում հայկական լեզու....։

«Վայ..... Այդ էր պակաս..... Հայեր ենք ու հայերէն չ'սովորենք.....»։

—Ես ձեզ չեմ ասում, թէ հայերէն մի սո-

վորէք, բայց ես ձեզ հարցնում եմ, ինչ նպատակով էք սովորում հայկական լեզու, կամ ինչ օգուտ էք քաղում այդ լեզու սովորելուց։ «Ինչ է ասում..... օգուտը որն է..... Հայ ես, —պէտք հայերէն սովորես»։

Սա պատասխան չէ։

„Հայկական Աշխարհ",
1868, № 9.

Ի Դ Է Ա Լ Ի Ս Տ Ն Ե Ր

(Հեղինակի պատասխ.)

Ես ձեզ չեմ ասում, թէ հայերէն մի սովորէք, բայց ես ձեզ հարցնում եմ. ինչ նպատակով էք սովորում հայկական լեզու, կամ ինչ օգուտ էք քաղում այդ լեզու սովորելուց։

«Ի՞նչ է ասում..... օգուտը որն է..... Հայ ես—պէտք է հայերէն սովորես»։

Սա պատասխան չէ։ (Գրականութիւն չկայ, «Հայկ. Աշխ.» № 9)։

I.

Այո՛, սա պատասխան չէ,—կամ աւելի լաւ ասեմ, սա պատասխան է, բայց սա «Իդէալիստների» պատասխան է։

Գիտէք «իդէալիստ» ինչ է նշանակում։

Ես ծանօթ էի մի նկարչի հետ։ Այդ նկարիչը շատ գեղեցիկ կերպով էր նկարում սարեր, ձորեր, երկինք ու ջուրը։

Մի անգամ նորա պատկերների վերայ նայելով, ես հարցրի նորան,—ինչի՞ աշխարհիս ե-

րեսին ազնիւ ու գեղեցիկ բաները ամէն մարդի համար հաւասար կերպով հասկանելի չեն։ Օրինակ ձեր գեղեցիկ նկարչութիւնները, որոնք բնութեան պատկերներ են ներկայացնում, հասկանալի են միայն քիչ թէ շատ ուսում առած մարդուն, բայց ժողովրդի ամէն անդամին, մանաւանդ հասարակ մարդին, արվեստաւորին օրինակ, հասկանալի չեն։ Ձեր պատկերներ ով կ՚գնէ,—այնպիսի մարդ, որ աւելորդ փող ունի։ Ձեր պատկերը երբ որ դահլիճում էր դարսած, ուր ժողովուրդը նորան տեսնելու էր գնում,—ձեր պատկերը ով հասկացաւ....։

Շատ սակաւ մարդիկ նորան հասկացան, և այնպիսի մարդիկ, որոնք քիչ թէ շատ բացված էին։

Իսկ ժողովուրդը..... Նորան ինչ, որ դուք գեղեցիկ կերպով սարեր ու ջուր էք նկարում։... Նա ուրիշ հարկաւորութիւն ունի, նա աղքատ է, նա հարկաւորութիւն է զգում իւր կեանքը լաւացնելու, նա աշխատանքի է կարօտ, նա անբարոյականութեան մէջ է, նա մարմնի ու հոգու պակասութիւններ ունի.... Նորան ինչ, որ դուք նկարում էք բնութիւնը։

«Ես նկարում եմ բնութիւնը, պատասխանեց նկարիչը, որովհետև բնութիւնը գեղեցիկ է։ Ամէն գեղեցիկ բանի տեսարանը գոյացնում է մարդիս մէջ բարձր ու ազնիւ զգացմունք, գոյացնում գեղեցկութեան ճաշակը, և մաքրում է նորա սիրտը կոպտութիւնից, կոպիտ զգացմունքից»։

—Շատ գեղեցիկ կերպով էք խօսում, պարոն նկարիչ, բայց միթէ դուք կարծում էք թէ ժողովուրդը ժամանակ ունի (և այնքան զարգացած է), որ կարողանայ ձեր գեղեցիկ նկարչութիւններից այդ ուսմունք քաղել։ Դուք կամենում էք նորան կոպտութիւնից ազատել, նորա զգացմունք մաքրել.... բայց ժողովրդի կեանքն ինքն կոպիտ է։ Նորան կոպտութենից ազատելու համար, նորա կեանքը հարկաւոր է փոխել։ Իսկ ժողովրդի կեանքը փոխելու համար, նորան հարկաւոր են աշխատանք և ուսում։ Նորան հարկաւոր է աշխատել, հացը ճարել, նորան հարկաւոր է տգիտութենից ազատվել, մտածել ու սովորել, որ նա կարողանար առաւել բարոյական լինել։

Իսկ աշխատանքն ևս կառավարելու ժողովրդին հարկաւոր է մտածելու սովորել..... Ես ևս ինձ կատարեալ մարդ չեմ համարում, ես ևս ժողովրդից եմ, ես ևս հարկաւորութիւն եմ զգում մտածելու, որովհետև մտածելը ինձ հնար է տալիս առաւել ուղիղ դատել, և առաւել արդար կերպով վարվել մարդիկների հետ, ուրեմն մտածելուց ես առաւել բարոյական եմ դառնում։ Ես հարկաւորութիւն եմ զգում մտածելու, և կարծում եմ, որ արհեստը անօգուտ չպէտք է մնայ, այլ նա ևս պէտք է օգնէ ինձ մտածելու։

Նկարեցէք այնպիսի բաներ, որ ստիպեն ժողովուրդը մտածելու, նկարեցէք հասարակութեան կեանքից այնպիսի անցքեր, որոնք մեր

վատ դաստիարակութեան, մեր տգիտութեան, մեր նախապաշարմունքի հետեւանք ու պտուղներն են..... Նկարեցէք մեր բարոյական և մարմնական պակասութիւնները, նկարեցէք այն մեր բարոյական պակասութիւնները, որոնք մեր հասարակութեան նախապաշարմունքի պտուղներն են, որոնց մենք տեսնում ենք, բայց որոնց վերայ մենք ուշադրութիւն չենք կամենում դարձնել, վախենալով հասարակութեան նախապաշարմունք վիրաւորելու..... Նկարեցէք հասարակութեան կեղտը.... Նկարեցէք....

«Ոչ, պարոն, ոչ.... երբէք ես այդպիսի բան չեմ անի և երբէք այն նկարիչը, որ իւր անձն է պատւում, չ'պէտք է այդպիսի բան անէ..... Արհեստ աստուածների գործ է, նորան ով կը համարձակի ցածացնել մինչև այն աստիճան, որ նորա միջոցով ներկայացնէ հասարակութեան պակասութիւններ, հասարակութեան կեղտը..... Ոչ, ես այդ բարձր, աստուածային գործը կեղտի մէջ չեմ ման ածի..... Արհեստը պէտք է արհեստի համար ապրէ....»։

Ընթերցող, հասկացաք դուք ինչ որ ասաց նկարիչը։ Եւ ճանաչեցիք արդեօք, ինչ մարդ է իմ նկարիչը.... Նա «իդէալիստներից» է։ Իսկ ես, իմ նկարչի խօսքերը ամենևին չեմ հասկանում,—ճշմարիտ։—Ես միայն այն գիտեմ,, որ ես «ժողովուրդ» եմ և կ'կամենայի, որ անօգուտ բան իրաւունք չունենար աշխարհիս երեսին ապրելու։ Ես կ'կամենայի, որ ամէն բան ինձ օգնէր լաւանալու, ձգտելու դէպի բարոյականութիւնը, դէպի իմ կեանքի լաւացնելը, դէպի առաջադիմութիւնը.... Իսկ այնպիսի նկարչութիւնները, որտեղ ներկայացրած է (թէպէտև երևելի Ռաֆայէլի ձեռով) գեղեցիկ կնոջ տկլոր մարմինը, կամ բնութեան տեսարանը, սարեր, ձորեր ու ջուրը,—սորանից, ես խոստովանում եմ ձեզ, սորանից ես առաւել բարոյական չեմ դառնում։

II.

Տեսած էք դուք այնպիսի մարդիկներ (մանաւանդ ծերեր), որոնք մեծ ուշադրութեամբ, ակնոցները քթին դրած, գիրք են կարդում։ Հարցրէք այնպիսի մարդին, երբ նա կարդալ կաւարտէ (կարդալու ժամանակ ոչ ոքին չը պէտք է խանգարել). հարցրէք նրան, ինչպէս է հաւանում նա այն գիրքը։ Նա ձեզ պատասխան կ'տայ.—«շատ լաւ է գրած»։ Սորանից աւելի նա ձեզ պատասխանել չէ կարող. նա ձեզ չէ կարող ասել գրքի պակասութիւններ ու արժանաւորութիւններ, որովհետև նա այն նպատակով չէ կարդում, որ գրքից օգուտ քաղէ, մտքեր քաղէ, որ զարգացնէ իւր խելքը, ու պակասութիւններ ու արժանաւորութիւններ տեսնէ.... չէ, նա կարդում է առանց նպատակի, նա կարդում է, որովհետև գիրքը «լաւ է գրած» —նա կարդում է..... կարդալու համար։

Եւ այնպիսի գրողներ ևս կան, որոնք գրում են ոչ թէ այն նպատակով, որ ինչ և իցէ

միտք յայտնեն, այլ միայն այն նպատակով...՝ որ գրեն։ Կարդացէք, օրինակ ֆրանսիացի Լամարտինի գրածները։ Նա, չեմ իմանում, կարծեմ հազար ու մէկ հատ գիրք է գրել,—բանաստեղծութիւն, պրօզա, պատմութիւն, րօմաններ..... և այդ բոլոր գրքերի մէջ դուք շատ սակաւ մտքեր կ'տեսնէք։ Մեծ մասով միտքը զոհված է ձևին։ Լեզուն շատ լաւ է։ Նորա գիրք կարդալուց յետոյ կարող էք ասել—լաւ է գրած։ Այնպիսի գրքեր մեզ չեն դրդում մտածել, բայց ընդհակառակն սպանում են մտածելու ընդունակութիւնը, և ծուռ մտքեր յայտնելով, ոգևորում են իւրեանց ձևի շնորհով մարդի զգացմունք ու ցնորք։

Խորհուրդ եմ տալիս այնպիսի ծնողներին, որոնք չեն կամենում, որ երեխաներ մտածեն, կամ կամենում են, որ նոքա ծուռ մտածեն,—խորհուրդ եմ տալիս նոցա իւրեանց երեխաներին Լամարտինի գրքեր առաջարկել, կամ աւելի լաւ ասեմ «կարդալու ստիպել»։

Այն ծնողները, որոնք չեն կամենում, որ երեխաները մտածեն, ուրեմն վախենում են, որ նոքա ծնողների պակասութիւններ նկատեն ու քննեն,—այն ծնողները, ճշմարիտ յոյս ունեմ, բաւական կ'հեռանան իմ խորհրդից.... Մանաւանդ աշխատեցէք, բարի ծնողներ, ձեր աղջիկների մտածելու ընդունակութիւնը սպանել։

Ուրեմն կան մարդիկ, որոնք գրում են—գրելու համար։

Նմանապէս այնպիսի մարդիկներ տեսած կը

լինիք, որոնք խօսում են, և շատ են սիրում խօսել, ոչ թէ այն նպատակով, որ ինչ և իցէ մտքեր յայտնեն, բայց միայն այն նպատակով, որ առիթ ունենան իւրեանց սեփական «ձայն լսելու»։—Խօսելու ժամանակ նոքա իւրեանց սեփական ձայնի վերայ սիրահարվում են։

Այսպիսի մարդիկ խօսում են—խօսելու համար։

Ո՞վ չէ տեսել հարուստ մարդիկների որդիներին, այն երիտասարդներին, որոնք առաւել.... կանանց են նմանում, քան թէ այրմարդիններին։ Նոքա ամբողջ օր ոչինչ չանելուց յետոյ—գիշերը թատրոն են գնում։—Ինչի՞։—Հասարակութիւն տեսնելու, իւրեանց սեփական անձը ցոյց տալու համար, և բեմի վերայ աղջիկների.... ոտներ տեսնելու համար։ Ափսոս որ այդ մարդիկ չեն իմանում, որ նոցա «իդէալիստներ» կարելի է անուանել.—նոքա շատ ուրախ կը լինէին, որովհետև տասն և իններորդ դարում ամէն մարդ մեծ գին է դնում «իստ» վերջաւորութեանը....

«Պարոն «իստ», ինչի՞ էք գնացել թատրոն։

«Սա ինչ հարց է։ Գնացի թատրոն, որ տեսնեմ թատրոն։ Գնացի թատրոն, որովհետև սիրում եմ թատրոն։

Ճշմարիտ, շատ լաւ էք արել, որ գնացիք թատրոն, որովհետև դուք մեզ առիթ տուիք, ձեզ նայելով, համոզվել թէ կան հասարակութեան մէջ ձեր նման անբժշկելի «ցաւեր»։

Ես ու դուք, ընթերցող, թատրոնից գոնէ

ինչ և իցէ օգուտ քաղեցինք, գոնէ հասարակութեան պակասութիւններ նկատեցինք....

Մենք ուշադրութիւն ենք դարձրել ոչ թէ միայն հասարակութեան պակասութիւնների վերայ, մենք ուշադրութիւն ենք դարձնում նըմանապէս և բեմի վերայ։

Բեմի վերայ ներկայացնում են հասարակութեան կեանքից մի անցք։ Այդ անցքը նկարագրելով, գրողը կամեցել է մեզ իւր միտքը յայտնել մարդիկների այս կամ այն պակասութեան վերայ. նա կամեցել է հասարակական մի խնդիր ներկայացնել մեզ։ Նորա գլխաւոր միտքը, օրինակ, այն է եղել, որ կնոջ և մարդի մէջ յարաբերութիւններ չ'պէտք է լինէին այն տեսակ յարաբերութիւններ, որոնք մինչև այն ժամանակ ընդունած էին նորա հասարակութեան մէջ։ Կամ գրողի միտքը այն էր, որ պէտք է փոխել (և նա, ասենք, առաջարկել է ինչպէս պիտի փոխել) հօր և երեխաների մէջ յարաբերութիւնները.... Եւ այլն սորա նման հասարակական խնդիրներ են ներկայացնում բեմի վերայ։ Թատրօնից դուրս գալու ժամանակ մենք (դուք ու ես) սկսում ենք խօսել, վիճել, գրողի պէս մտքեր քննել։ Դուք, օրինակ, նորա մտքին համաձայն էք, ես համաձայն չեմ։ Կը վիճենք, կ'մտածենք միասին, կարելի է որ համաձայն ևս կ'լինենք։ Թատրօն գնալուց առաջ մենք չէինք մտածել այն հասարակական խնդրի վերայ, որ առաջարկել է մեզ գրողը, այժմ մենք մտածում ենք նորա վերայ, քննմու

ենք նորան. գրողի մտքերի մէջ կամ պակասութիւններ կամ արժանաւորութիւններ ենք գտնում։ Գտնում ենք, օրինակ, որ գրողի առաջարկած ընտանեկան յարաբերութիւնները կամ շատ բնական են, կամ բնական չեն, կամ բարոյական են, կամ ընդհակառակն բարոյական չեն։ Այդ քննութիւնը մեզ ստիպում է և մեր սեփական ընտանեկան յարաբերութիւնների վերայ ուշադրութիւն դարձնել և նոցա քննել.... Գրողը մեզ խնդիր է առաջարկել..... ով գիտէ, կարելի է մենք նորան կ'վճռենք։

Մի խօսքով մենք օգուտ ենք քաղում թատրօնից։ Նա մեզ սովորեցնում է մտածել.... Մենք այն պարոնի նման չենք գնում թատրօն միայն այն նպատակով,—որ գնանք թատրօն։

III.

Ուրեմն։ ով արհեստով պարապում է ոչ թէ մի առանձին նպատակով, կամ օգուտի համար, ոչ թէ այն նպատակով, օրինակ, որ ստիպէ հասարակութեանը մտածելու,—ով արհեստով պարապում է արհեստի համար,—նորան մենք «իդէալիստներ» ենք կանչում։

Ով կարդում է ոչ թէ այն նպատակով, որ զարգացնէ իւր խելքը, բայց կարդում է միայն կարդալու համար,—նորան ևս «իդէալիստ» ենք կանչում։

Ով գրում է ոչ թէ որևիցէ մտքեր յայտնելու նպատակով, այլ միայն այն նպատակով, որ

ձեր սիրուն լինի, թէև միտք չի ունենայ նորա գրածը,—այդ մարդը «իդէալիստ» է։

Նմանապէս ով խօսում է ոչ թէ մտքեր յայտնելու համար կամ իւր կարծիքը այս կամ այն բանի վերայ առաջարկելու համար,—այլ խօսում է որ միջոց ունենայ ուրիշներին իւր ձայն լսել տալու, և ինքն ես իւր սեփական ձայն լսելու, որ խօսելու ժամանակ կարծես թէ սիրահարվում է իւր սեփական ձայնի վերայ,— ով խօսում է միայն խօսելու համար—այդ մարդն ես «իդէալիստ» է։

Ով թատրոն է գնում ոչ թէ այն մտքով, որ միջոց ունենայ մտածելու, քննելու, ուրեմն իւր խելքին կերակուր տալու, իւր խելքը զարգացնելու,—այլ միայն այնոր համար է գնում թատրոն, որ կարողանայ գիշերը թատրոնում անցկացնել,—որ թատրոն է գնում թատրոնի համար,—ես նորան ես «իդէալիստ» եմ ասում։

Առհասարակ, երբ որ մարդը մի գործ անելով մի առանձին նպատակ կամ օգուտ աչքի առջև չունենալով, այն գործի «գործողութեան» մէջ իւր համար բոլոր բաւականութիւն է գտնում,—այդպիսի մարդը «իդէալիստ» է։

„Die sache fûr sich selbst"—ասում են գերմանացիներ, «գործը նոյն ինքն իւրեան համար» և ոչ թէ մի առանձին նպատակի կամ օգտի համար,—սա «իդէալիզմ» է։

—

IV.

Մենք, հայերս, ամենքս «իդէալիստներ» ենք։

Երբ որ ես ձեզ հարցնում եմ.—ինչ նպատակով էք սովորում հայկական լեզու, կամ ինչ օգուտ էք քաղում այդ լեզու սովորելուց։ —Դուք ինձ պատասխանում էք. «օգուտը ո՞րն է.... Հայ ես,—պէտք է հայերէն իմանաս»։

Մենք «իդէալիստներ» չե՞նք միթէ, երբ մեր սեփական լեզու այն նպատակով չենք սովորում, որ նորանից օգուտ քաղենք, որ նորա միջոցով մտքեր յայտնենք, յարաբերութիւններ ունենանք, նորա միջոցով ուսուցանենք, նորա միջոցով զարգացնենք մեր խելքը, գրքեր կարդալով, կամ յայտնենք մեր մտքերը գրքեր գրելով։

Մենք «իդէալիստներ» չե՞նք միթէ, եթէ մենք մեր սեփական լեզու սովորելուց ոչինչ օգուտ չենք քաղում, բայց այնու ամենայնիւ սիրում ենք նորան։

Մենք «իդէալիստներ» չե՞նք միթէ, եթէ մենք մեր լեզու միայն այն նպատակով ենք սովորում, որ սովորենք մեր լեզու։ Ոչ, մենք ազգասիրութեան պատճառով ենք սովորում մեր լեզու։

Հասկանու՞մ էք դուք արդեօք ինչ է ազգասիրութիւնը։

Ազգասիրութիւնը այնպիսի զգացում է, որով մարդը պարտաւորվում է «օգտաւէտ» լինել իւր հասարակութեան։

Ուրեմն, սա ամենևին ազգասիրութիւն չէ, երբ որ մարդը իւր ազգի լեզուն իմանալով, ոչինչ «օգուտ» չէ քաղում այդ լեզւի ուսումից, ուրեմն իւր լեզուն իմանալով, ոչինչ «օգուտ» չէ բերում, ուրեմն «օգտաւէտ» չէ լինում իւր հասարակութեանը։

Ազգասիրութիւնից մարդը պարտաւորվում է «օգտաւէտ» լինել իւր ազգին։ Իսկ նա ազգասիրութեան պատճառով է սովորում իւր ազգի լեզուն։ Բայց լեզուն սովորելուց նա ոչինչ «օգուտ» չէ քաղում, և չէ բերում իւր ազգին։—Ուրեմն նորա ազգասիրութիւնը «անօգուտ» աննպատակ ազգասիրութիւն է, կամ «ֆիզէալիստի» ազգասիրութիւն է։

Այն հայն, որ հայերի մէջ ապրելով, երկիր է փորում,—թէև նա «ամենևին» հայերէն չէր իմացել,—առաւել մեծ ազգասէր է (այնոր համար որ երկիրը փորելով նա «օգտաւէտ» է լինում իւր հասարակութեանը) ասում եմ առաւել մեծ ազգասէր է, քան թէ այն հայն, որ հայերէն իմանալով, ոչինչ օգուտ չէ քաղում իւր հայերէն գիտենալուց։

„Հայկ. Աշխ.“, 1868, № 10.
Նիցցա.

ՊԻԼՕԴՕ ԴԱՀԼԻՃԻ ԺՈՂՈՎՆԵՐԸ։

I.

Փարիզի այս տարու նորութիւններից մինը Պիլօդօ դահլիճի salle Pilodo) ժողովներ են։

Պարոն Ժ. Է. Հօրն (J. E. Horn) նախագահ է մի ընկերութեան, որը իւր նիստեր ունի այդ դահլիճում[1]։ Ժողովի նիստերի մէջ խօսվում է ընկերութիւնից առաջարկված զանազան խնդիրների վերայ, կամ «կանանց դրութեան վերայ հասարակութեան մէջ» կամ «կանանց աշխատանքի վերայ»։

Ընկերութեան անդամները ոչ թէ միայն տղամարդիկ են (նոցա մէջ և արվեստաւորներ կան) բայց և կանայք կան։ Կանայք ևս հրապարակաբար խօսում են դահլիճի մէջ։

Ընկերութեան հիմնելու նպատակը այս է.

---

[1]) Պ. Հօրն հունգարացի է, ինչպէս ասում է գերմանական „Allgemeine Zeitung“ օրագիրը։ Նա աշխատակից է Ֆրանսիական „Avenir National“ օրագրին։ Նա երևելի է քանի մի գրվածքներով Ֆրանսիայի դրամական այժմեան հանգամանքների մասին.

Հ. Ծ.

զարգացնել կանանց միտքը, սովորեցնել նոցա մտածել, պատրաստել նոցա հասարակական կեանքի համար։

II.

Միացած կին և մարդը, ասում էր պ. Էնֆանտին (Enfantin) հասարակական անհատ են կազմում։ Մարդը ազատութիւն և միջոց ունէր հասարակական կեանքի համար պատրաստվելու, իւր հասարակական պաշտօն օրինաւոր կերպով կատարելու համար, բայց կինը այդ միջոց երբէք չէ ունեցել, միշտ ստրկութեան մէջ է եղել։ Նորան հասարակական կեանքի համար պատրաստվելու միայն մի հնար կայ, այն է զարգացնել նորա միտք, նորան իրաւունք տալ մարդի նման սովորելու, նորան մտածել սովորեցնել, հասցնել նորան այն տեղը, որ նա ինքն հասկանար իւր դրութիւնը և իւր ընդունակութիւնները։

III.

Ընկերութեան վճիռներից մինը սա էր. թէ կինը մարդի նման իրաւունք ունի սովորելու, նորա պէս կրթութիւն ստանալու, և ընտրելու հասարակական այն պաշտօնը, որի համար նա ընդունակութիւն է զգում իւր մէջ։

Բայց գլխաւորապէս (սա ժողովի անդամների կարծիքն է) կնոջ բնութիւնը ընդունակ է

յետագայ պաշտօններ կատարելու հասարակութեան մէջ. նախ—բժշկի պաշտօնը, մանաւանդ կանանց և երեխաների հիւանդութիւնների խնամատարութիւնը իւր գլխաւոր գործունէութիւն ընտրելով, երկրորդ—ուսուցչի պաշտօն կատարելու։ Ամերիկայի ուսումնարանները վկայ են այն իրողութեան, թէ ինչքան ընդունակ են կանայք ուսուցչի պաշտօն կատարելու։

IV.

Յետագայ հետաքրքիր տողերը Ամերիկայի կանանց մասին պ. Լաբուլէի գրքից ենք քաղում[1]։ Խօսելով օրիորդ Բրէմէրի գրվածի վերայ[2] պ. Լաբուլէն աւելացնում է։

«Որքան շատ են տարածվում քրիստոնէութեան մտքերը, այնքան առաւել են ճանաչում մարդիկ, թէ անհատի ճշմարիտ բարձրութիւնը բարոյական զարգացման մէջ է բովանդակվում, և այնքան աւելի աշխատում են կնոջ դրութիւն բարւոքել։ Որովհետև, ինչպէս ասում է հեղինակը (օրիորդ Բրէմէր), երբ վերջանում է զօրութեան իշխանութիւնը, կինը այր մարդի հաւասար է դառնում»։

---

1) Պ. Լաբուլէի (Eduard Laboulaye) „Etudes Morales et Politiques“ անուանեալ գրքի երես 163—166։
Հ. Ծ.

2) Frederique Bremer (Ֆրէդէրիկ Բրէմէր) „Des Foyers du Nouveau Monde„ (Նոր Աշխարհի Հայրենիք)։
Հ. Ծ.

«Կնոջ համար կայ, ասում է պ. Լաբուլէ, մի առաւել րէալական, առաւել յարմար և առաւել համեստ դեր քան թէ «ազատ կնոջ» անունը։ Այդ դերը այն է, որ նոր ժամանակներում Ամերիկայի կանայք մանկավարժութեան մէջ են դեր խաղում, նոցա այդ գործունէութիւնը բեղմնաւոր պտուղներ է բերել և կատարելապէս յաջողվեցաւ»։

V.

«Շնորհալի և խելացի ժէնէվացի կանայք, շարունակում է պ. Լաբուլէ, առհասարակ ուսուցիչների բնաւորութիւն ունին։ Սա նորանից է ծագում, որ նոքա ամէնքը այն դեր են ընդունում, որը վախեցնում է մեզ մեր թեթեւամտութեան պատճառով, այսինքն քարոզիչների (missionnaire) դերը։

«Ամերիկացի կանայք շատ նման են ժէնէվացիներին։ Իւրեանց կիւրակեան ուսումնարաններում նոքա վաղուց են սովորում ուսուցչութեան գործը։ Հասկանալի է, որ այդ պարապմունքը պատճառ են լինում, որ կանայք կորցնում են փչացված (enfant gâté) երեխաների բնաւորութիւնը, որ մենք կնոջ անհրաժեշտ յատկութիւն ենք համարում, բայց միևնոյն ժամանակ նոքա զարգանում են մտքի անկախութեան և բարոյականութեան կողմից։ Եւ ուղիղ պիտի ասենք, որ նոցա համբերութիւնը, նոցա հեզութիւնը, նոցա համեստ վարմունքը,—վկայ

են նոցա բարձր դաստիարակիչ ընդունակութեանը։

«Նոցա այդ յատկութիւնները պատճառ են լինում, որ նոքա մեր ուսուցիչներից անգամ առաւել բարերար կերպով են ազդում երեխաների վերայ, թէ հնազանդութեան, թէ աշխատանքի կողմից, այնպէս որ միայն երեխաներ չեն յանձնում նոցա։—Օրիորդ Բրէմէր նախ մեզ ցոյց տուեց մի այնպիսի ուսումնարան (école normale), որտեղ աղջիկներին լիապէս ծանօթացնում են գիտութիւններին, մանկավարժական ասպարէզի համար պատրաստելու նոցա,—յետոյ մեզ մի այնպիսի ուսումնարան է ներս բերում, որտեղ քսան տարեկան օրիորդը անխռով ուսուցանում է գրեթէ հաւասար հասակի երիտասարդներին, որոնք ինչպէս «լաւ երեխաներ» ուշադրութեամբ են լսում նորա խօսքերը։ Յաճախ է պատահում, այդպիսի տեսարան Միացեալ-Նահանգների մէջ, և դա աննշան գործ չէ»։

VI.

Ինչ որ կանանց քաղաքական իրաւունքներին է վերաբերում, դեռ ոչինչ վճռված չէ ժողովում։ Սա յետագայ նիւթերի վէճի նիւթ պիտի լինի։

Այդ բանի մէջ և յոյս կայ, որ Պիլօտօ դահլիճի ժողովը յետ չ'մնայ այն մտքերից, որոնք մեր ժամանակներում Ամերիկայում և Անգլիայում սկիզբ են առել։

Ամերիկայի քանի մի նահանգների մէջ կանայք արդէն ընտրողութեան իրաւունք են ստացել։ Իսկ Անգլիայում այդ մտքերի թարգման և պաշտպան դարձել է պ. Ստիւարտ Միլլ (Stuart Mill)։

VII.

Փարիզի ժողովուրդը մեծ համակրութիւն է ցոյց տալիս պ. Հօրնի ժողովներին. ժողովի նիստերին ներկայ են լինում մօտ 2000 լսողներ։

Հանգիստ կերպով է լսում ժողովուրդը նիստերի վէճերը, և միայն պատշաճ տեղերին և ընտրողութեամբ է ծափահարում ժողովի վճիռներին։

„Հայկ. Աշխ.", 1868, № 10.
Հէրցբէրգ.

ՇԱՐՈՒՆԱԿԵ՞ՆՔ ԹԷ ՈՉ։

—

Մի անգամ (չորս տարի առաջ) մենք ուսանողներս հաւաքված էինք մի փոքր սենեակում. խօսակցութիւնը մեր հայկական օրագիրների վերայ էր։

«Ոչ պարոններ, ասաց ուսանողներից մինը, ես այժմ տեսնում եմ, որ մենք սխալվեցանք սկսելով յօդուածներ հրատարակել հայկական օրագիրների մէջ»....

—Այո, այո, սխալվեցանք,—կրկնեցին ամէնքը։

«Միայն այն մարդն իրաւունք ունի յօդուածներ գրելու, շարունակեց առաջինը, որը վստահ լինելով իւր զարգացման վերայ, կարող է ժողովրդի հասկացողութեան յարմար յօդուածներ առաջարկել»։

—Եթէ այդպէս է, ասաց ուրիշ մի ուսանող, եթէ միայն այն ժամանակ պիտի գրել սկսենք, երբ որ վստահ լինենք մեր զարգացման վերայ,—ուրեմն երբէք չպիտի սկսենք բան տպելու։

«Ինչի՞, հարցրին ամէնքը»։

—Որովհետև մարդս երբէք չէ կարող «հա-

տաստ իմանալ» թէ նա բաւական զարգացած է թէ ոչ։ Արդեօք ունէ՞ք այնպիսի մի չափ, որով կարողանայիք որոշել, հասել էք թէ հասած չէք զարգացման այն աստիճանին, երբ դուք գրելու իրաւունք էք ստանում։

«Այո ունեմ, կրկնեց առաջին ուսանողը. երբ որ մենք կաւարտենք մեր ուսումը, այն ժամանակ կարող ենք ասել, որ աւելի զարգացած ենք քան թէ երբ մենք ուսանողներ էինք։ Ահա քեզ չափ»։

—Ես ընդունում եմ համալսարանական ուսումի աւարտելը ինչպէս իմ զարգացման ապացոյց. չեմ կարծում նոյնպէս, որ ուսումս աւարտելով ես անպատճառ ես կ'համոզվիմ, որ բաւական զարգացել եմ, որ հասել եմ վերջապէս այն րոպէին, երբ իրաւունք ունիմ գըրականական գործունէութիւնս սկսել։ Նախ հարկաւոր է ասել, որ մարդս երբէք չ'պիտի դադարէ սովորել, մինչև մահ պիտի շարունակէ ուսում առնել, կարդալ, զարգացնել իւր խելքը և դատողութիւնը,—և երկրորդը մենք իրողութիւններ ենք տեսնում, որ հայրենիք վերադարձած ուսումնաւարտ երիտասարդներից շատերը, թէ բժիշկներ, թէ իրաւաբաններ, թէ բնագէտներ, այնքան թոյլ, երեխայական զարգացում ունեն, որ ոչ թէ միայն գրել չեն կարող մի օրինաւոր յօդուած, այլ խօսակցութեան մէջ ևս չեն կարող որոշ մէկ միտք յայտնել։ Նոցա սովորական խօսակցութեան պարունակութիւնը անվայելուչ բաներ են կամ

հայհոյանք։ Դուք ինքներդ շատ անգամ տեսած կ'լինէք ինչպէս մեր Թիֆլիզի լուսաւորեալ մարդիկ, ուսում աւարտածներից և չաւարտածներից, երբ որ դուք նոցա հետ ծանր խօսակցութիւն էք սկսում, դարձնում են իւրեանց խօսքը թեթև և կեղտոտ բաների վերայ։

«Ուրեմն ինչ անենք,—հարցրեցին ուսանողներից մի քանիսները»։

—Գրենք, և թող դատէ հասարակութիւնը։

«Հասարակութի՜ւն, ինչ հասարակութիւն, կա՞յ արդեօք հայկական հասարակութիւն։ Հասարակութիւն որ կազմված է ուսում չաւարտած ուսանողներից, նիւթապաշտ, տհաս, անհոգ մարդերից, և անուս կնամարդերից, որոնք կարծել են թէ եւրոպական կրթված կին կոչվելու համար, բաւական է միայն եւրոպական զգեստներ հագնել։.... Ո՞վ գիտէ, կարելի է շուտով կ'կարծեն իբր թէ եւրոպական զգեստ հագնելով, նոքա իրաւունք են ստանում յօդուածներ ևս գրելու, և մինչև անգամ օրագիր հրատարակելու։.... Ի՞նչ հասարակութիւն։.... Ե՞րբ ես տեսել, որ մի տպած յօդուածի վերայ հայն իւր միտքը յայտնէ, դատողութիւն անէ, մտքի մէջ պակասութիւններ և արժանաւորութիւններ տեսնէ։ Փոխանակ կրիտիկայի նա կարող է հայհոյել,—այդ նորա բանն է։

Ոչ, միայն այն ժամանակ երիտասարդը պիտի գրել սկսէ, ուսումնական իրողութիւններ տարածէ, մտքեր յայտնէ, երբ նա իւրան բաւական զարգացած կ'զգայ,—առանց սպասելու

հասարակութեան կողմից միտք, խրատ, կրիտիկա, կամ կարծիք»։

բ. Ուրեմն շարունակե՞նք գրել թէ ոչ։ Իրաւունք ունի՞նք մենք գրելու թէ ոչ։ Որի՞ն լսել, որի՞ն հաւատալ։ Մի քանիսները ասում են, թէ իրաւունք չունենք գրելու եթէ հաստատ չենք իմանում թէ բաւական զարգացած ենք, թէ չը պիտի գրենք եթէ մեր ազգի կեանքը չենք ճանաչում, թէ չ'պիտի շարունակենք գրելու, եթէ մեր յօդուածները չեն կարդվում։

Իսկ միւսները ասում են, թէ ամէն մարդ ունի իրաւունք գրելու, նաև այն մարդը, որ հաստատ չ'գիտէ, թէ հասել է նա արդեօք զարգացման այն աստիճանին, երբ նորա մտաւոր աշխատանքի պտուղը օգտաւէտ կարող է լինել հասարակութեան, թէ իրաւունք ունին գրելու մինչև անգամ կանայք, նաև այն տեսակ կանայք, որոնց բոլոր կրթութիւնը կայացած է «եւրօպական շորերի» վերայ։

Թող գրեն ամէնքը, թող փորձեն, թող յայտնեն իւրեանց մտքերը, և նոցա յօդուածների դատաւորը կ'լինի ժողովուրդը, որ կ'քննէ, կը դատէ, կրիտիկա կանէ, կ'գտնէ յօդուածների մէջ յայտնած մտքերի պակասութիւնները և արժանաւորութիւնները։ Թող հասարակութիւնը փորձաքար լինի, թող նրան իւր յօդուածը առաջարկելուց յետոյ, գրողը իմանայ թէ պիտի շարունակէ գրել թէ ոչ։

գ. Ես համաձայն չեմ այն մտքի հետ, թէ գրողը պիտի քարոզիչ լինի։ Ոչ, թէպէտ և գրողը պիտի ունենայ մի հաստատ ուղղութիւն, պիտի ունենայ իւր սեպհական կարծիքը, պիտի պինդ պաշտպանէ իւր մտքերը,—բայց միևնոյն ժամանակ նա պիտի հասարակութիւնից ևս սպասէ օգնութիւն, կրիտիկա պիտի սպասէ, որ հասարակութիւնը ուղղէ, դրատէ նորա յօդուածների պակասութիւնները։

դ. Բայց կարո՞ղ է արդեօք հասարակութիւնը գրվածների մէջ յայտնած մտքերի վերայ դատաւոր լինել։

—Ի՞նչ դասերից, կամ աւելի լաւ ասեմ, ի՞նչ տեսակ մարդերից է կազմված մեր հասարակութիւնը։

Ցեստագայ մարդերից.

Կարդալ ու գրել չիմացողներից, (որք են ստորին ժողովուրդը և այլն)։

Վաճառականներից և արհեստաւորներից։

Երկրորդական ուսումնարանների, կամ գիմնազիոնների աշակերտներից։

Համալսարանների ուսանողներից, համալսարանների մէջ ուսում. աւարտածներից և չաւարտածներից։

Անուս կնամարդերից։

Եւ վերջապէս եկեղեցականներից։

Կարդալ ու գրել չիմացողները և հայկական կանայք յայտնի բան է չեն կարող գրականական ստեղծվածների դատաւորներ լինել։ Վա-

ճառականները և արհեստաւորները բացի օրացոյցից և էֆիմերդէից ոչինչ չեն կարդում։ Իսկ միւսները։....

Բայց առաջ քան թէ վճռել որ հասարակութեան ուրիշ անդամները կարող են թէ ոչ կարդացողներ իւրեանց անուանել, այսինքն կարդալ, հասկանալ, քննել և դրատել գրողի մտքերը, տեսնենք ինչ պիտի լինեն կարդացողի յատկութիւնները, որ կարդացողը իրաւունք ունենար իւրեան կարդացող անուանել։

բ. Առաջին այն է, որ կարդացողը պիտի լեզուն իմանայ, ուրեմն հայ կարդացողը պիտի հայկական լեզուն իմանայ, որ նա կարողանայ կարդալ յօդուածները հայերէն լեզուով գրած։

Երկրորդ նա պիտի զարգացած լինի, որ հասկանայ յօդուածը։

Երրորդ նա պիտի ծանօթ լինի ազգի ոգու հետ, որ կարողանայ վճռել, թէ յարմար են արդեօք կամ թէ ընդդէմ են հայոց ազգի ոգուն յօդուածի մէջ յայտնած մտքերը։

Ո՞րն է այն դասը, հայկական հասարակութեան մէջ, որ այդ բոլոր յատկութիւններ ունի, կամ որը աւելի հեշտ կարող է այդ յատկութիւնները իրան սեպհականացնել։

գ. Թողնենք հայկական կանանց, որովհետև նոքա դեռ ևս ուսում չունեն, թողնենք նմանապէս տգէտ վաճառականներուն և արհեստաւորներուն, կարդալ և գրել չիմացողներուն,

կամ օրացոյց կարդացողներուն.... և տեսնենք թէ ինչ են անում միւսները։

Ո՞վ են միւսները։

Օրինակ երկրորդական ուսումնարանների և գիմնազիօնների աշակերտները....։ Նոցանից շատերը հաստատ կերպով իւրեանց լեզուն չեն ճանաչում. և եթէ ճանաչէին ևս, եթէ մեծ ուշադրութեամբ ևս կարդային յօդուածները, նոցա կարդալուց գրողը մեծ օգուտ չէ կարող քաղել, ովովհետև, ինչպէս ես ասացի, գրողը կրիտիկա է սպասում կարդացողից,—իսկ աշակերտը, դեռ ինքն է ընդունում գիտութիւնների սկզբունքները, չէ կարողացել դեռ իւր համար կարծիք կազմել, ուղղութիւն ընտրել,—իսկ ձեզ յայտնի է, որ մարդը միայն ինքն մի սեպհական ուղղութեան հասնելուց յետոյ կարող է ուրիշի ուղղութեան վերայ դատողութիւն անել։

Ասենք, որ համալսարանի ուսանողները լաւ են ճանաչում հայոց լեզուն, ասենք որ լաւ են ծանօթ ազգի ոգու հետ,—բայց նոքա դարձեալ չեն կարող կարդացողներ լինել, նախ որովհետև չէ կարելի ասել, թէ մեր ուսանողները շատ զարգացած մարդիկ լինէին, երկրորդը որ եթէ նոքա զարգացած ևս լինէին, գրողը չէ կարող նոցա վերայ նայել որպէս իւր մտքերի դատաւորների վերայ,—ինչու,—որովհետև ուսանողների համար հետաքրքիր չեն ազգային կեանքի երևոյթները, նոցա օգուտները համապատասխան չեն հասարակական օգուտներին։

Նոցա նպատակն է պարապել, զարգացնել իւրեանց միտքը, գիտութիւններ ստանալ։ Նոքա ժամանակ, ցանկութիւն և պահանջմունք չունեն պարապելու հասարակաց հարցերով, նոքա իւրեանց մտաւորական հարկաւորութիւններին լրումն են տալիս օտար լեզուներով։

է. Ուսում աւարտածները հայրենիք յետ դառնալով հազիւ գործ են գտնում այնտեղ։ Եւ եթէ նոքա գտնեն ևս, այդ գործ տուողը հասարակութիւնը չէ։ Կարելի է, որ միայն բժիշկները հասարակութեան մէջ պարապմունք են գտնում։ Իսկ իրաւաբանները տէրութեան են պարտական և ոչ թէ հասարակութեան, եթէ նոքա ուսում աւարտելուց յետոյ մի կտոր հաց են ճարում իւրեանց համար։

Բնագէտները նմանապէս չ՛գտնելով երկրի մէջ գործնական աշխատանք, ստիպված են լինում ծառայութիւն մտնելու, ապրուստի հնար ճարելու համար։

Հասարակութիւնը աշխատանք չէ տալիս ուսում առած մարդերին,—ուրեմն կարելի՞ է միթէ որ ուսում առած մարդիկը հասարակական հարցերով հետաքրքրվեն։ Գրողը չէ կարող նոցա կարդացողներ համարել, չէ կարող նոցա վերայ նայել, որպէս իւր գրածների դատաւորների վերայ, որովհետև նոքա հասարակութիւնից աշխատանք չեն ստանում. հասարակութեան համար օտար մնալով, իւրեանց հա-

սարակութիւնը ևս իւրեանց համար օտար են համարում։

ը. Մնաց միայն հասարակութեան մի դասը, այն է եկեղեցականները։

Եկեղեցականների մեծ մասը ազգային լեզու գիտեն, միշտ հասարակութեան մէջ ապրելով, քաղաքների թէ գիւղերի մէջ, հասարակութեան հետ մօտիկ յարաբերութիւններ ունենալով, հասարակութեան հոգևոր կեանքի վերայ հոգս քաշելով, բաւական ծանօթ են ազգի ոգու հետ։

Եւ եթէ մեր եկեղեցականները այնքան բացված չեն, այնքան հաստատ ուսում չեն ստացել որքան ցանկալի էր, որ ստանային,—գոնէ նոքա այնպիսի պաշտօն են կատարում հասարակութեան մէջ, որ հասարակութիւնը անհրաժեշտ հարկաւորութիւն է համարում. ուրեմն ոչ նոքա են օտար հասարակութեան համար, ոչ ևս հասարակութիւնը նոցա համար օտար է։

թ. Ցանկալի կ՛լինէր, որ մեր եկեղեցականները աւելի զարգացած լինէին, աւելի ևս հաստատ ուսում ստանային։ Այն ժամանակ կարելի կ՛լինէր ասել, թէ նոքա բոլոր հասարակութեան միակ դասն են, որ ծանօթ լինելով ազգի լեզուին և ոգուն, կատարելով այնպիսի պաշտօն, որ հասարակութեան համար պահանջմունք է,—պաշտօնը, որ թոյլ է տալիս նոցա

օտար չմնալ հասարակութեան համար,—կարելի կ՚լինէր ասել, որ նոքա միակ դասն են հասարակութեան մէջ, որի անդամների վերայ գրողը իրաւունք կունենայ նայել, որպէս իւր գրուածների բնական դատաւորների վերայ։

Բայց մինչև այն ժամանակ, չարունակենք թէ ոչ։

„Մեղու", 1868, № 35.

ԻՆՉԻ՞ ՑԵՆՔ ՀԻՄՆՈՒՄ

Եթէ ոչ, ուրիշներին ևս չենք օգնում, ու սեփական որդիների մտաւորութիւնը սպանում ենք մեր անպիտան դաստիարակութեամբ, մեր անտանելի նախապաշարմունքով։ («Գերդաստ. ազգ. և Համալսարան», «Հայկական Աշխարհ» № 9. 1867)։

I.

Սովորութիւն կայ հայերի մէջ, մի գործ սկսելու համար, իւրեանց մէջ ստորագրութիւն հաւաքել։ Հարկաւոր է, օրինակ, մէկ աղքատ աշակերտին օգնութիւն տալ,—ստորագրութիւն են հաւաքում, հարկաւոր է գիրք տպել,—ստորագրութիւն են հաւաքում։

Բայց ով են այդ ստորագրութիւնների գըլխաւոր անդամները,—հարուստներ են։ Դէպի ինչ մարդիկ է դառնում հասարակութիւնը մի գործ սկսելու համար,—դէպի հարուստները։

Այդ կերպով հասարակութիւնը սովորում է հարուստների վերայ նայել, ինչպէս հասարա-

կութեան ամենահարկաւոր անդամների վերայ։ Եւ աղքատ մարդիկներից շատերը, թէև ընդունակ, ուսումն առած լինելով, ազգային գործի մէջ հասարակութեան աւելորդ անդամներ են համարում իրանց։

Ո՞վ է աւելի արժանի հասարակութեան գործի մէջ գործելու.—յայտնի բան է հարուստը։ Ո՞վ է հասարակութեան աւելի հարկաւոր և օգտաւէտ անդամ,—յայտնի բան է այն մարդը, որ կարողութիւն ունի փող տալու.....

Ուրեմն ստորագրութեամբ գումար են հաւաքում մի որևիցէ գործի համար, մսխում են այդ գումարը, և մի քանի օրերից յետոյ կրկին անփող են մնում։

Պատահում է մի ուրիշ գործ,—կրկին ստորագրութիւն....

Հարուստները փքվում են, հասկանալով, որ հասարակութիւնը ոչինչ չէ կարող, կամ ոչինչ չէ իմանում անել առանց նոցա օգնութեան, իսկ անհոգ հասարակութիւնը ոչինչ բանի տեղ չ'դնելով իւր սեփական հասկացողութիւն և զօրութիւնները,—նայում է հարուստների վերայ ինչպէս իւր փրկիչների, իւր աստուածների վերայ, նոցանից է սպասում ամէն կարելի և անկարելի գործեր։

Պատահում է որ հարուստ մարդը փառասիրութեան համար իւր առատաձեռնութիւն է ցոյց տալիս, և իւր փողով տպում է մի որևիցէ աշխատանք, կամ իւր ծախսով ուսում է տալիս համազգի երիտասարդին։

II.

Բայց վերջապէս հասարակութիւնը միշտ չէ կարող մնալ այդպիսի դրութեան մէջ։

Կ'գայ վերջապէս մի օր, երբ հարուստները կ'դառնան դէպի հասարակութիւնը այսպիսի խօսքերով։

«Բաւական տուել ենք ձեզ, բաւական մասնակից եղել ենք ամէն տեսակ ստորագրութիւններին, բաւական բարերարութիւն արել ենք։ Կրկին մի՛ յուսաք մեր օգնութեան վերայ։ Ի՞նչ օգուտ է տալ և միշտ տալ, եթէ հաւաքված փողերից հետևանք չենք տեսնում։ Ի՞նչ օգուտ էք քաղել մեր բարերարութիւններից, ինչ օգուտ էք քաղել մեր ընծայած փողերից։ Կազմել էք արդեօք այդ փողերից մի որևիցէ գումար, ստանում էք նորանից տոկոսիքներ....։ Ոչինչ....։ Այն հասարակութիւնը, որ միշտ բարերարութիւն է սպասում, նա իրաւունք չունի իւրան հասարակութիւն անուանել. բարերարութիւն սպասելը նշանակում է մուրալ»։

«Ապացուցէք մեզ, որ մեզանից առած փողերից դուք ընդունակ էք մի գումար հիմնելու, որի տոկոսիքներով մի օգտաւէտ, ազգօգուտ գործ կ'կառավարէք....։ Եթէ ոչ, յայսերդ կտրեցէք մեր օգնութիւնից»։

—

III.

Արդարև մեղաւոր են միթէ հարուստները, որ հասարակութիւնը չէ իմացել նոցանից ստացած գումարներից օգուտ քաղել։

Թէպէտ և չէ կարելի ասել, որ հայերի մէջ հաւաքված գումարները առհասարակ մեծ գումարներ լինէին, բայց դարձեալ այդ փոքր գումարներով ևս կարելի կ՚լինէր ուրիշ կերպով վարվել, քան թէ վարվեցաւ նոցա հետ մեր հասարակութիւնը։

Ամէն անգամ, երբ հասարակութիւնը իւր ձեռին մի որևիցէ հաւաքված գումար ունեցաւ, նա իսկոյն մսխում էր նորան, և այդ կերպով երբէք չէր ազատվում հարուստների կախումից։

IV.

Մենք հայերս ոչ մի բանից օգուտ չենք իմանում քաղել։ Մեր մասին ասում են, որ մենք վաճառականական ազգ ենք,—բայց դա ուղիղ չէ։

Այո, մենք վաճառականութեամբ ենք պարապում, մենք առնում ենք և ծախում ենք, վաճառականութիւնից շահվում ենք,—բայց միթէ այնպիսի ազգին, որ միայն առնում է և ծախում է, իսկ ինքն ոչինչ չէ արդիւնաբերում, կարելի է վաճառականական ազգ անուանել։

Ով որ եղել է Նոր-Նախիջևան քաղաքում, տեսած կ՚լինի ինչ թշուառութեան մէջ են այժմ

այդ քաղաքի վաճառականական գործերը։ Մեռած քաղաք է, առուտուր չ՚կայ, կեանք չ՚կայ։ Ռոստով քաղաքը նորան խնդրակցութիւն է անում (concurrence)։ Հայերի վաճառականութեան այդ թշուառ վիճակի պատճառն ինչ է։

Պատճառն այն է, որ հայերը առնում են և ծախում են, բայց երբէք իւրանք արդիւնքները չեն ծնում, նիւթերը չեն պատրաստում, գործարաններ չեն հիմնում։

Օրինակ, պատմում են, թէ առաջ Նոր-Նախիջևանի վաճառականները գնում էին Մոսկվա, առնում էին այնտեղ ռուս Կօրօլեօվի գործանոցներում կօշիկների բեռը արժան գնով և ծախում էին այդ կօշիկները Ռոստով կամ Նախիջևան քաղաքներում առաւել թանկ գնով։ Շատերը հարստացել են այդ վաճառականութեամբ։ Բայց վերջապէս Կօրօլեօվը ինքն հիմնեց Ռոստովում իւր գործանոցի մի բաժին, սկսեց ծախել իւր ապրանքը առաւել արժան գնով քան թէ հայերը,—և այդ կերպով ոչնչացրեց Նախիջևանի հայերի վաճառականութեան այդ ճիւղը։

Հասկանալի է, որ այդ կերպով պէտք է վերջանար բանը, որովհետև հայերը միայն առնում էին պատրաստ ապրանքը և ծախում էին նոցա, իսկ իւրանք ապրանք չէին պատրաստում։

—

V.

Նոյն իսկ կ'պատահէ և Կովկասեան հայ վաճառականութեան հետ։

Կովկասի բոլոր հարստութիւններից մենք շատ քիչ օգուտ ենք քաղում։ Եւ եթէ արդիւնքների մի քանիսներից օգուտ ենք քաղում, եթէ քանի մի արդիւնքները պատրաստում ենք,—դարձեալ այնքան օգուտ չենք իմանում քաղել, և այն կատարելագործութեանը չենք հասել, որքան օգուտ են քաղում, և որ աստիճանի կատարելագործութեանը օտարազգիներ են հասել իրանց արդիւնքներ պատրաստելում։

Ահա Կովկասեան երկրագործութիւնից հետաքրքիր մի իրողութիւն, որը ցոյց է տալիս մեզ պրօֆէսօր Պէտցօլդը իւր գրքի մէջ Կովկասի վերայ։

«Վերջապէս ինչ որ երկրի տարեկան մուտքին է վերաբերվում, ասում է պ. Պէտցօլդը, առհասարակ ընդունված է թէ մի դէսիատինից 100 փութ տորոնի (տորոն, марена, krapp) չոր արմատներ է ստացվում։ Իսկ Ֆրանսիայում մի և նոյն երկրի տարածութիւնից (և ոչ թէ Կովկասի պէս չորս տարվան, այլ միայն երեք տարվան միջոցում) տորոնի արմատների ժողոված քանակութիւնը հասնում է մինչև 3500 կիլօգրամի։ Իսկ 100 փութ հաւասար են 1638 կիլօգրամմին [1])։

1) Ուրեմն 3500 կիլօգրամմ կանեն 213 և 5/8, ասենք 213 5/8 փութ։ Պ. Պէտցօլդ հաշիւը հեշտացնելու համար, 213 1/2 փութի փոխանակ, 200 փութ է ընդունում։

«Կովկասեան տորոնի տարեկան մուտքը (չը համարելով մինչև անգամ այն հանգամանքը, թէ Ֆրանսիայում առաւել փոքր միջոցում են հանում արմատի քաղելուն) վերաբերվում է ֆրանսիականին գրեթէ ինչպէս 1 : 2, ուրեմն կէսի չափ փոքր է» [1])։

Կովկասի երկրագործութեան ամենատարածված արդիւնքներից մինը գինեգործութիւնն է։ Բայց որքան անկատար է մեր մէջ գինեգործութիւնը համեմատելով եւրօպականին հետ,—կարելի է օրինակ ծանօթանալ, քիչ թէ շատ, Հակստհաուզէնի գրքի մէջ գտնված այդ գործին վերաբերված նկարագրութեանից [2])։

VI.

Մի ուրիշ հետաքրքիր իրողութիւն կայ պ. Պէդցօլդի գրքում։

«Առաջին փորձը Կովկասի տորոնի մեծ քանակութիւն գնելու, ասում է պ, Պէդցօլդը, արել էր Դերբենդում, քառասներորդ թւականում, մի ռուս գործարանատէր (фабрикантъ), Բարանով անունով։ Նորա օրինակին ուրիշ հարուստ վաճառականներ հետևեցին։ Սորանից չա-

1) „Der Kaukasus".—Alexander Petzhold.—1868. —II հատոր երես 187։

2) „Franskaukasia".—A. von Haxthausen.—1856. —երես 127—129.

տացաւ տորոնի պահանջելը և տորոնի մշակելը սովորական գործ դարձաւ։ Հասկանալի է որ պահանջման մեծանալու պատճառով և գները բարձրացան, այնպէս որ շատերը սկսեցին պարապել այդ գործով այնպիսիներ, որոնք, եթէ կարելի է ասել, կամ իւրանց դրութեան, կամ կարողութեան, կամ ուրիշ որ և իցէ հանգամանքների պատճառով,—ամենեւին իրաւունք չունէին այդ տեսակ գործին ձեռնամերձ լինելու։ Զինւորականներ, զանազան աստիճանի պաշտօնեաններ, վաճառականներ, չինականներ, այրի կանայք, առանց կարողութեան մարդիկ,—ագարակ էին առնում վարձով, գործին հարկաւոր գումարը վաշխառութեամբ էին մեծացնում, որ կարողանան մասնակից լինել այն մեծ շահին, որ առաջարկում էր տորոնի գործը։ Այդ բանի հետեւանքը այն էր, որ արդիւնքը աւելի էր պատրաստվում։ Մի և նոյն ժամանակը ծագեց ամերիկական պատերազմ ևս, որի հետեւանք այն էր, որ բամբակի գինը բարձրացաւ։ Ռուս գործանոցատէրեր պակասեցրին իւրանց բամբակագործութեան պատրաստութիւնը, նոյնպէս և ներկի պահանջումն։

«Ուրեմն տորոնի պահանջը պակասեց. պակասեց նմանապէս և նորա գինը։ Տորոնի արմատների մի պուդ արժէր Դէրբէնդում 1860 թւին 9 րուբլի, տորոնի միենոյն քանակութեան գինը ընկաւ 1861 թւին մինչև 7 րուբլու։ 1862 թւին արժէր 6 րուբլի, 1863 թւին միայն 5 րուբլի, և վերջապէս 1864 թւին 4 րուբլի։

Այժմ կարիք մեծ էր։ Նոքա ամէնքը, որոնք դրամատէրեր չէին, սնանկացան (bankerott[1])։

VII.

Ուրեմն մենք տեսնում ենք, որ ոչինչ բանից օգուտ չենք իմանում քաղել, ամէն գործի մէջ մնասվում ենք մեր տգիտութեան պատճառով։

Գլխաւոր պահանջմունք է մեզ համար ուրեմն տարածել գիտութիւն մեր մէջ, մեր գործնական աշխատանք օրինաւոր կերպով կատարելու համար։ Եթէ ոչ, երբ կ'չինվեն մեր երկրում երկաթուղիներ, երբ մեր երկիրը աւելի յայտնի կ'լինի եւրօպացիներին,—նոքա կ'գան մեր երկիրը, կ'հիմնեն գործարաններ, և գիտնական մարդիկ լինելով, իւրանց գումարներ մեզանից լաւ կառավարել գիտենալով, մեր բընական արդիւնքները կ'պատրաստեն աւելի մեծ քանակութեամբ, աւելի մաքուր, աւելի առողջ, վաճառաշահութեան աւելի յարմար արդինքները։ Այնպէս որ հայերին խընդրակցութիւն կանեն, հայերի ձեռից գումարներ կ'խլեն։ Հարկաւոր է ուրեմն աշխատել հայերի մէջ գիտութիւն տարածելու, գործնական աշխատանքին ընդունակ մարդիկ պատրաստելու[2])։

---

[1]) Der Kaukasus"—II հատոր, երես 189.

[2]) Ինչ որ ամէնքին օգուտ է բերում,—երկաթու-

VIII.

Ասենք թէ մի քաղաքում 2000 մարդիկ կան, որոնք այնքան աղքատ են, որ չեն կարող իւրանց որդիներին օտար երկիրներ ուղարկել, նոցա գործնական աշխատանքին պատրաստելու համար։ Բայց նոքա այնքան աղքատ չեն, որ որ միանգամ այդ մարդիկներից ամէն մէկը չկարողանար 25 մանէթ տալ ընդհանուր գումար կազմելու համար։

Գումար կ'լինէր ուրեմն 50 հազար մանէթ։

Ասենք թէ այդ մարդիկ արժանի և վաճառականութեան ընդունակ մարդիկների ընկերութիւն են ընտրում, որին յանձնում են այդ գումարը։

Վաճառականական գործը բերում է 10 տոկոսիք շահ, ուրեմն տարվան մէջ ստացվում է 5000 մանէթ։ Ասենք որ վաճառականական գործին գումար տուողները կամենում են շահվել 5 տոկոսիքով, ուրեմն տարին կունենանք 2500 մանէթ։ Այդ մուտքից ամիսը կանէ 200 մանէթ։ Ասենք թէ այդ գումարով կարելի է պահել երկու երիտասարդներին արտասահմանում[1])։

Ուրեմն ժողովրդի հազար անդամների վերայ մի ուսանող կ'համարվի։

դիններ,—Հայերին, նոցա տգիտութեան պատճառով, վնաս կ'բերէ։

1) Բնական գիտութիւնների գործնական կերպով պարապող ուսանողը մեծ ծախս ունի։ Նա պիտի ստանայ 75 մինչև 100 մանէթ ամիսը։

Կովկասում կան 500 հազար հայեր։ Ասենք թէ այդ ժողովրդի երրորդ մասը ժամանակով միմեանցից օրինակ առնելով, սորա նման ընկերութիւնները կ'կազմէ. ուստի 1000 մարդիկների թւում մի ուսանող համարելով, 166 հազար մարդիկ 166 ուսանող իւրանց ծախսով կը կարողանան պահել։

Հարկաւոր է, յայտնի բան է, որ մարդիկներից ամէն մէկը անշուշտ 25 մանէթ տար ընդհանուր գումարին։ 10 հազար մարդիկներից հինգ հինգ մանէթ հաւաքելով, նմանապէս կարելի է կազմել 50 հազար մանէթ գումարը[1])։

Այն ժամանակ (վերևի հաշւի պէս հաշուելով) ժողովրդի 5000 մարդիկների մէջ մի ուսանող կ'համարվի։

IX.

Այդ իմ ցոյց տուած թւերի օրինակով ես չեմ կամենում ասել, որ եթէ հիմիկէին մեր մէջ այդպիսի ընկերութիւններ, նոցա գումարը, ուսում առնող երիտասարդների թիւը և ընկերութեան անդամների թիւը անշուշտ իմ ցոյց

---

1) „Լիօն քաղաքի (Ֆրանսիայում) արուեստաւորների 2000 մարդ մի ընկերութիւն են կազմել, որի գումարը քանի մի ամիսներում, (անդամների զոհաբերութիւններով, խնայողութեամբ և աշխատանքով) մինչև 80 հազար ֆրանկ (20 հազար մանէթ) աճեց"։

Ժիւլ Դիւվալի հասարակական դասախօսութիւններ Վէնսէնում—1867.

տուած թեւերին համապատասխան կ՚լինին. ոչ, այդ թեւերը ցոյց են տալիս միայն թէ որքան հեշտ է այդպիսի ընկերութիւններ կազմել [1]։

Հարկաւո՞ր են մեզ համար, թէ ոչ, ուսեալ, գործնական աշխատանքին ընդունակ մարդիկ։ Եթէ հարկաւոր են, պէտք է զոհէք գումարներ երիտասարդներին ուսում տալու համար։ Եւ այդ գումարների ընծայաբերութիւնը զոհ չէ մինչև անգամ, որովհետև այն երիտասարդները, որոնք ձեր ծախսով ուսում կառնեն, երբ յետ կ՚դառնան, ձեր գործին օգուտ կ՚բերեն, ձեր գործանոցները, կամ ձեր վաճառականական գործերը, կամ երկրագործութեան արուեստը օրինաւոր կերպով կառավարելով։

X.

Եթէ միշտ և ամէն բան հարուստներից կը սպասենք, եթէ այնով կ՚բաւականանանք, որ հարուստները ժամանակ առժամանակ իւրանց

---

[1]) Այդպիսի ընկերութիւններ կարելի է հիմնել և գրքեր (մանաւանդ դասագրքեր հարկաւոր են մեզ) տպելու համար։ Եւ ոչ թէ միայն փողեր տալով կարելի է այդ գումարները աճեցնել. այն մարդիկ, որոնք ուսում առած են և բաւական տեղեակ են զանազան գիտութիւններին, կարող են հասարակական դասախօսութիւններ կարդալով, նմանապէս իւրանց լումայ բերել ընդհանուր գումարին։ Իսկ ժամանակով, երբ որ գումարներ կ՚մեծանան, դասախօսութիւններ անողները կ՚վարձատրվեն, ընկերութեան գումարից ռոճիկ ստանալով։ Հ. Ծ.

որդիներին օտար երկիրներ են ուղարկում, ուսում առնելու համար, այն ժամանակ շատ քիչ ուսեալ մարդիկ կունենանք մեր երկրում։

Հարկաւո՞ր է թէ ոչ, մեր ազգի համար գործնական աշխատանքին ընդունակ երիտասարդներ։

Եթէ հարկաւոր չենք համարում,—օտարազգիներին ենք թոյլ տալիս մեր բնական արդիւնքներից օգուտ քաղելու, նոցա թոյլ ենք տալիս ուրեմն մեր ձեռքից գումարներ խլելու։

Եթէ հարկաւոր ենք համարում մեր մէջ ուսեալ մարդիկ ունենալու,—կարող ենք այդ բանին հասնել միայն մի միջոցով. այն է գումարներ կազմել, ընկերութիւններ հիմնելով։

Ուրեմն ինչի չենք հիմնում,

„Հայկ. Աշխ.", 1868, № 11.
Հեյդելբերգ.

ՆԱՄԱԿ ԴԷՊԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ։

—

«Հայական Աշխարհ» օրագրի խմբագրութիւն յայտնեց, թէ նա համաձայն չէ իմ յօդուածների ուղղութեանը, ինձ թողեց իմ յօդուածների պատասխանատուութիւնը։

Բայց ինչով է զանազանվում իմ ուղղութիւնը «Հայկական Աշխարհ» օրագրի ուղղութենից,—զանազանութիւնը խօսքերի մէջ է միայն և ոչ թէ իրողութեան մէջ։

Ես իմ յօդուածների մէջ հաստատեցի այն իրողութիւնը, թէ ոչինչ արդիւնք չէ պատրաստվում, ոչինչ գործ չէ կատարւում մի հասարակութեան մէջ, եթէ այն հասարակութիւնը այն արդիւնքին կամ այն գործին պահանջմունք չէ յայտնում։

Նորերումս «Հայկական Աշխարհ» օրագրի խմբագրութիւնը իւր յայտարարութեան մէջ յայտնեց միևնոյն միտք, ուրիշ խօսքերով միայն,—և կարծես չ'նկատեց, որ այս խօսքերը յայտնելով, նա համաձայնում է իմ ասածին.—այն է որ օրագիրը այն ժամանակ միայն կ'կարողանայ ընդարձակել իւր գործունէութիւնը, խմբագրո-

ղը կ'կարողանայ իրագործել օգտաւէտ ուղղութեան օրագրի հրատարակութիւնը,—երբ ստորագրողների թիւը կ'մեծանայ։

Ի՞նչ է նշանակում ստորագրողների թւի մեծանալը։—Նշանակում է թէ ժողովրդի մէջ աւելի ու աւելի է յայտնվում կարդալու և մըտածելու պահանջմունք։

Ի՞նչ է նշանակում մի որ և իցէ արդիւնքի առնողների թւի մեծանալը։—Նշանակում է թէ ժողովրդի մէջ աւելի ու աւելի է յայտնվում այն արդիւնքի պահանջը (запросъ)։

Կար մի ժամանակ, երբ մարդիկ չէին ծըխում.—դա չէ նշանակում, որ ծխախոտը (բոյս) չ'կար։ Բոյսն ինքն կար, բուսնում էր և աճում էր երկրիս վերայ, միայն թէ մարդիկների համար նա արժողութիւն չունէր, մարդիկ նորանից օգուտ չէին քաղում, որովհետև ծխելու պահանջմունք դեռ ևս չէին զգում։

Հարցնում եմ ձեզ. ինչով է զանազանվում վայրենի ազգը լուսաւորված հասարակութենից։—Նորանով է զանազանվում գլխաւորապէս, որ վայրենի ազգի մէջ անհատներից ամէն մէկը որ և է արդիւնքներ է պատրաստում միայն իւր անձի և իւր գերդաստանի բաւարարութեան (satisfaction) և պահանջմունքի համար,—իսկ լուսաւորված ժողովրդի մէջ անհատներից ամէն մէկը որ և է արդիւնքը «փոխանակութեան» (échauge, обмѣнъ) նպատակով է պատրաստում։

Փոխանակութիւնը կամ փոխարէնը հասա-

բակութեան գլխաւոր յատկութիւնն է.—որտեղ չկայ փոխանակութիւն, չկայ և հասարակութիւն։

Երևակայեցէք ձեզ երկու հարևան բնակող բարեկամներ իւրանց որդիներով։ Նոքա զանազան պահանջմունք ունին, ինչպէս ամէն մարդիկ, և ձգտում են այդ պահանջմունքին լրումն կամ բաւականութիւն տալ։ Օրինակ, նոքա պահանջմունք ունին ջուր խմելու. և փոխանակ որ այդ մարդիկներից ամէն մէկը ամէն օր առանձին դէպի գետ գնար, ջուրը տուն բերելու, —բարեկամներից մէկը իւր վերայ է առնում այս գործի մասին հոգալ, և երկուսի համար ես ջուր ճարել։ Իսկ միւսը սորա փոխարէնը իւր վերայ հոգացողութիւն է առնում բարեկամի որդուն դաս տալու։

Բարեկամներից մէկը այն ծառայութիւն է անում միւսին, որ ջուր է ճարում նորա ամէնօրեայ պիտոյքների համար, իսկ միւսը սորա փոխարէնը բարեկամի երեխային լուսաւորութիւն է տալիս։

Փոխանակ երեխային ուսում տալու, նա կարող է ի հարկէ իւր բարեկամին մի ուրիշ ես ծառայութիւն անել, որ մի և նոյն արժողութիւն ունենար բարեկամի աչքերին,—օրինակ, ամէն օր մի կէս լիտր (ֆունտ) հաց տալ նորան այն աշխատանքի փոխարէն, որ բարեկամը գործ է դնում գետից ջուր բերելու համար,—կամ վերջապէս այն քանակութեան հացի գինը արծաթով տալ։

Ուրեմն արծաթը երկու մարդիկների մէջ յարաբերութիւնների արժողութեան նշան է։ Իսկ արժողութիւնը (la valeur) երկու փոխանակված ծառայութիւնների յարաբերութիւնն է։ Տես «Harmonies Economiques»—Frédéric Bastiat.—Paris 1864)։

Մեր հասարակութեան կեանքի երևոյթները քննելուց յետոյ, ես յայտնեցի այն իրողութիւնը թէ մեր ժողովրդի մէջ մտաւոր աշխատանքի կամ կարդալու պահանջ չկայ, որովհետև գրքեր և օրագիրներ մեզանում չէին առնվում։

Ուրեմն գիրք կամ օրագիր ստանալու նպատակով ժողովուրդը փոխանակութիւն չէ տալիս գրքի կամ օրագրի արժողութեան մի ուրիշ որ և իցէ մթերք (das gut, добро, богатство)։ Ուրեմն գրքի կամ օրագրի փոխարէնը նա չէ տալիս մի ուրիշ որ և իցէ մթերք, որը օրագրի կամ գրքի գրելուն գործ դրած աշխատանքին հաւասար արժողութիւն ունենար։

Երբ որ ժողովրդի մէջ չկայ փոխանակութիւն, (և մանաւանդ մտաւոր կեանքին վերաբերութեամբ),—այնպիսի ժողովրդին ես «հասարակութիւն» չեմ կարող անուանել։

Իսկ եթէ ինձ կապացուցանեն, որ կայ մեր ժողովրդի մէջ կարդալու և մտածելու պահանջմունք....,—այն ժամանակ ես կ՚համաձայնիմ մեր ժողովրդին «հասարակութիւն» անուն տալ....

Այդ էր իմ միտքը։ Այդպիսի միտք յայտնելով գրողի նպատակ չէ (ինչպէս, կարելի է, շատերը կ՚կարծեն) «ժողովրդին մեղադրել»....

Ոչ, գրողի նպատակ է միայն երևոյթը քննելուց յետոյ, մի իրողութիւն հաստատել։—Ասենք թէ մի ուսումնագէտը մի մեծ սարի սառնակոյտ (глечеръ, glacier) քննելուց յետոյ, հաստատում է ուսումնական հաշուով այն իրողութիւնը, թէ քանի մի ժամանակից յետոյ այս սառոյցներից ահագին մի կոյտը պէտք է վայր ընկնի, և իւր ընթացքում ժայռերի կտորներ իւր հետ տանելով, վնաս պէտք է բերէ սարի ստորոտում գտնվող գիւղերին.... Միթէ դուք կասէք թէ այդ իրողութիւնը հաստատելով ուսումնագէտը «մեղադրում է բնութիւնը»։

Նամակիս վերջում կասեմ թէ մեզ, հայերին, հարկաւոր է այժմ (և կարելի է ունենալ) միայն երկու ուղղութեան գրվածներ, որոնք մեզ օգտաւէտ կարողանային լինել, օգնելով աշխատանքի տարածմանը.—նախ այնպիսի ուղղութեան գրականութիւնը, որն որ ժողովրդին առաջարկէր գիտութեան փաստերը, երկրորդ որ քննէր հասարակութեան կեանքի երևոյթները։

Սա չէ նշանակում, որ այդ երկու ուղղութիւններին հետևելով բոլոր գրողները միևնոյն աչքով պէտք է նայեն երևոյթների վերայ.—ամենևին ոչ, այս երկու ուղղութիւններին ևս հետևելով գրողներից ամէն մէկը կարող է իւր սեփական հայեացքով նայել գործի վերայ։ Բազմակողմանի կերպով քննված երևոյթը առաւել հասկանալի է հասարակութեանը։ Զանազան

ուղղութիւններին հետևող գրողները անշուշտ հարկաւոր են գրականութեան մէջ։

Իսկ այնպիսի գրվածները, որտեղ բարոյականութիւն, կարգ և ազգասիրութիւն է քարոզվում..... այնպիսի գրվածները թող գրողը տանէ....: Բաւական են մեզ քարոզները, մանաւանդ ազգասիրութեան....: Հերիք է այն խոպանացած, հնացած, մաշված ուղղութիւնը....: Մեզ հարկաւոր է այժմ աշխատանք,—իսկ աշխատանքին կարող է օգնել գրականութիւնը, միայն այդ երկու ճանապարհներ ընտրելով.—գիտութիւն և քննութիւն։

„Հայկ. Աշխ.“ 1869, № 1—2.

ՑԻՒՐԻԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ։

I.

Երբ որ ես դեռ Ցիւրիխում (Զվիցերիայում) էի կենում, ծանօթ Զվիցերիացի մի յայտնեց ինձ նորա կարծիքով հրաշալի և զարմանալի մի իրողութիւն.—այն է որ Ցիւրիխի համալսարանում երկու ռուս օրիորդներ բժշկութեան ուսում էին առնում։

«Իմ կարծիքով, սա կնոջ բնաւորութեան և բարոյականութեան ամենևին յարմար պարապմունք չէ»—աւելացրեց իմ ծանօթիս կինը....։

Կին ուսանող, կին աշխատող, մտաւոր, գիտնական կերպով աշխատող կինը,—այս երևոյթը գերմանացիներին (թէպէտև Զվիցերիայի հասարակութեան անդամներին) սաստիկ խորթ էր թւում.—նոքա մարսել չէին կարողանում այս բանը....։

II.

Հարիւր և հարիւր տարիներով կանգնած են համալսարանները Գերմանիայի քաղաքներում, նոր սերունդները անցած սերունդների տեղ են բռնում,—և ոչ մի կնոջ գլխում չէ ծնվել երբէք այն բնական ցանկութիւնը տեսնելու և իմանալու թէ ինչ են անում, ինչ են ուսուցանում այն ահագին պատերի մէջ, որտեղ նորա հայրը և եղբայրներն էին գնում ուսում առնելու, որտեղ կերթան ժամանակով և նորա որդիները...։

III.

Հասարակական օրէնքները Զվիցերիայում կանանց թոյլ են տալիս համալսարաններում ուսում առնելու, բայց քաղաքացիները դեռ անթիւ նախապաշարմունք ունենալով, հասարակական կարծիքին հետևելով, արգելք են դընում կանանց համալսարանական ուսման թոյլտուութեանը։

1866 թւին երկու ռուս աղջիկներ Ցիւրիխի համալսարանում բժշկութեան ուսում էին առնում։

Ի՞նչքան արգելքներ էին սպասում նոցա այդ նոր ասպարէզում։ Առաջին ժամանակ, երբ աղջիկը համալսարանի նախասենեակով էր անցնում դասախօսութիւն լսելու նպատակով, ուսանողների շրջանում ծիծաղ և զանազան կծու խօսքեր էին լսվում։

Միթէ եւրոպական հասարակութիւնը այնքան անգամ խաբված է եղել իւր պատմագրական ընթացքում, այնչափ ընտելացաւ իւր դարևոր անշարժութեան աւանդութիւններին, որ

այլ ևս չէ հաւատում մարդկային բնաւորութեան զօրութեանը.... չէ հաւատում մարդի բնութեան ազնւութեանը, չէ հաւատում վերջապէս մարդի ձգտողութեանը.....

Միթէ բաւական է այն իրողութիւն, որ կինը համալսարան է գնում և երիտասարդների հետ միասին է նստում, կամ որ նա մենակ է ապրում մի փոքրիկ սենեակում,—որ իրաւունք ունենանք նորան անբարոյական համարելու։

IV.

Ես մի անգամ զվիցէրացուն էի հարցնում, թէ ինչ իրաւունքով նա ձայն ունի հասարակական գործերի մէջ, ինչ պատճառով նա իւր իրաւունք է համարում խառնվելու կառավարութեան գործերում, ինչի վերայ է հիմնում նա իւր ընտրողութեան իրաւունքը։

«Այն իրաւունքի վերայ, պատասխանեց նա ինձ, որ ես կամ աշխատող եմ, կամ սեփականութիւն ունիմ, ուրեմն իրաւունք ունիմ պաշտպանելու աշխատանք կամ սեփականութիւն. և որովհետև ես կամ աշխատանք կամ սեփականութիւն եմ ներկայացնում հասարակութեան մէջ, ուստի և կարող եմ իմ հայրենակիցներից ընտրվել աշխատանքի կամ սեփականութեան իրաւունքները պաշտպանելու համար»։

—Բայց միթէ ձեր օրէնքները ձեր կանանց թոյլ չեն տալիս աշխատելու, կամ թոյլ չեն

տալիս սեփականութիւն ունենալու։—Ձեր կանայք ևս աշխատում են (և շատ անգամ ստիպված են անտանելի, ծանր և վատ վարձատրված աշխատանքներ կատարել), ձեր կանանց ևս իրաւունք է տրված սեփականութիւն ունենալու, —ուրեմն նոքա ևս իրաւունք պիտի ունենային աշխատանք կամ սեփականութիւն ներկայացնելու, ընտրողութեան գործերում մասնակցելու։

Ի՞նչ պատասխանեց զվիցէրիացին,—թէ վըտանգաւոր է այդ իրաւունքները կանանց տալ, որովհետև նոքա կ՚գեղծանեն այդ նոցա յանձնած զօրութիւնը, կողմնակցութիւն ցոյց տալով այս կամ այն մարդին....։

Այդ երեխայական մտքերի պատասխան տալու համար, բաց եմ անում Ստիւարտ Միլլի «Քաղաքական տնտեսութեան սկիզբներ» անունով գրքի այն երեսը, որտեղ ասված է թէ «ամօթ է որ այն երկրում (Անգլիայում), որտեղ մի կին թագուհի է, օրէնսդրութիւնը ոչինչ չէ արել այն անիրաւութիւնը վերացնելու համար, որին զոհ են կանայք։ Կոպիտ ամբոխը կարող է կանանց ծեծել և գրեթէ սպանել, առանց սորա համար որ և իցէ պատիժ կրելու։ Իսկ երբ որ մի նոր օրէնք են առաջարկել ընտրողութեան իրաւունքները ընդարձակելու համար, ոչ ոք չ՚մտածեց կանանց ևս, որոնք իւրանց դասին պատկանեալ գործերում այր մարդիկների նման դրութեան մէջ են, նա-

ցա պէս ևս յատկութիւններ ունին, ոչ ոք չը մտածեց նոցա հասարակական գործերի մէջ ձայն և ընտրողութեան իրաւունք տալ»։ «Principles of Political Economy».—Հատոր II գիրք IV, գլ. VII).

V.

Բայց ես նկատում եմ, որ հեռացել եմ իմ հարցից։

Այն երկու ռուս աղջիկները, որոնք Ցիւրիխում բժշկութեան ուսում էին առնում, աւելի եռանդով էին աշխատում, քան թէ ուսանողներից շատերը, առաւել զարգացած էին, քան թէ որ և իցէ ուսանողը։ 1867 թուին օրիորդներից մինը հիանալի կերպով բժշկութեան դօքտորի հարցաքննութիւն բռնեց։

Զվիցէրիայի, Գերմանիայի և Ֆրանսիայի օրագիրները իւրանց ընթերցողներին այն հրաշալի տեղեկութիւն էին հաղորդում, թէ ռուս օրիորդ մի, Սուսլօվա անունով, դօքտորի հարցաքննութիւն բռնեց Ցիւրիխում։

Քանի մի ժամանակից յետ «Պէտէրբուրգսկի Վէդօմօստի» լրագրի մէջ, պրօֆէսօր Սէչէնօվից ստորագրված մի տեղեկութիւն էինք կարդում։ Չեմ յիշում ճշտապէս նորա խօսքերը, բայց միտքը սա էր։

«Մենք անձամբ ծանօթ էինք ազնիւ և աշխատասէր օրիորդի հետ, երբ նա Պէտէրբուր-

գում գիմնազիօնի քննութեանն էր պատրաստվում։ Օրիորդ Սուսլօվա բռնեց այժմ բժշկութեան դօքտորի հարցաքննութիւնը,—հասարակութենից կախված կ'լինի ընդունել նորան, և բաց անել նորա ուսումնական գործունէութեանը լայն ասպարէզ։ Հասարակութեան ընդունելութենից կամ չընդունելութենից կախված կը լինի և այն, թէ կ'գտնվեն արդեօք մեր օրիորդների մէջ այս եռանդոտ օրիորդի օրինակին հետևողներն թէ ոչ»,

VI.

Ինչ ընդունելութիւն գտաւ օրիորդ դօկտօրը իւր հայրենիքի մէջ,—յայտնի չէ, բայց ինչպէս լսեցինք, նորա օրինակը անպտուղ չ'մնաց։ Ցիւրիխի համալսարանի ուսանողների թւում, ինչպէս պատմում են, կան այժմ զանազան ազգերից 8 օրիորդներ։ Նոցա մէջ կան ռուսներ, անգլիացիներ, և կարծում եմ, որ կայ մինչև մինչև անգամ մի զվիցէրիացի աղջիկ։

VII.

Նամակս աւարտված էր, երբ ձեռս ընկաւ ֆրանսիական «Liberté» (Ազատութիւն) անունով լրագրի մի համարը։ Նորանում յետագայ տեղեկութիւն կարդացի։

«Ֆրանսիական Aix (Էկս) քաղաքում բնա-

կող մի օրիորդ Alexis (Ալեկսի) անունով, այս քաղաքի համալսարանում գրաւոր և բանաւոր քննութիւն բռնելուց յետ, գրականութեան բակկալավրի (կանդիդատի) աստիճանի (baccalauréat es-lettres) վկայագրին արժանացաւ»։

„Հայկ. Աշխ.„, 1869, № 3.
Հէյդլբէրգ.

«ՀԱՅԿԱԿԱՆ ՔՆԱՐԻ» ԱՌԻԹՈՎ

Es irrt der Mensch, so lang er strebt — Goethe (Faust)։

(Մարդս սխալվում է, ինչքան որ ձգտում է)։

—

Օրագրականութիւն երկսայրի զէնք է։ Վատ կերպով գործածված նա վնաս կարող է բերել հասարակութեանը հասկանալով իւր հասարակական պաշտօնը, նա օգուտ է բերում ժողովրդին, նա հասարակութեան արտայայտութիւնն է դառնում, և օգնում է նորան բարւոքելու իւր կեանքը և ձգտելու դէպի առաջադիմութիւն։

Մարդը անհատ է, և գրողը մարդ լինելով պիտի իւր անհատական (ИНДИВИДУАЛЬНЫЙ) *կարծիք և համոզմունք ունենայ։ Ոչ միայն չպէտք է վախենանք բազմակերպ կարծիքներից և համոզմունքից,—այլև պէտք է ցանկանանք, որ զանազան ուղղութիւնները բազմանան գրականութեան մէջ, որպէս և զանազան կուսակցութիւնները քաղաքական կեանքի մէջ։ Բայց հարկաւոր է վախենալ գրականական զանազան ուղղութիւնների թշնամութենից։*

Գրողը չպէտք է նայէ իր հակառակորդի վերայ ինչպէս թշնամու վերայ,—այլ որպէս միևնոյն ասպարէզում գործող, թէև ուրիշ ուղղութեամբ հետևող, ընկերի վերայ։ Երբ զանազան սերունդների, ուղղութիւնների և կարծիքների ներկայացուցիչները ձեռք ձեռքի տուած, առանց որ և իցէ թշնամութեան քննում են իրանց հակառակորդների մտքերը՝ աշխատելով կամ նոցա պարզել, կամ նոցա մէջ եղած պակասութիւններ և սխալներ գտնել,—այն ժամանակ գրականութիւնը հասնում է իր կատարելագործութեանը։

Գոնէ աշխատենք ձգտել դէպի այդ կատարելագործութիւնը, եթէ նորան հասնել չենք կարող։

Երբ գրականութեան կամ օրագրականութեան անդամը առանց որ և իցէ թշնամութեան, մեկնելով ձեռք դէպի իր հակառակորդները, ասում է նոցա «բարեկամներ, պատւելով ձեր անձը, ես ստիպված եմ քննադատել ձեր մտքերը, չդիպչելով ձեր անձնականութեանը (personnalité) ես մինչև մահը կ'կռուիմ ձեր քարոզած սկիզբների դէմ, որովհետև նոքա ինձ վնասակար են երևում։ Մենք հակառակորդներ ենք մտքերի և սկիզբների կողմից, բայց մեր նպատակներին և ձգտողութիւններին նայելով,» բարեկամներ ենք։ Մենք հակառակորդներ ենք, և ոչ թշնամիներ։

Երբ գրողը հասնում է այդպիսի զարգացման աստիճանին, կարելի է ասել թէ նա հասկանում է գրականութեան հասարակական պաշտօնը։

Նորերումս հասաւ Հէյդըլբէրգ պ. Մ. Մխանսարեանից հրատարակված երգարանը։

Աշխատելով աւելի ժողովրդի մէջ գործող սկիզբների և ուղղութիւնների վերայ ուշադրութիւն դարձնել, ես ինձ համար կանոն եմ դրել երբէք անձներին չդիպչել. մանաւանդ ինձ ցանկալի կ'լինէր պ. Մխանսարեանի պէս օգտաւէտ և աշխատասէր անձների դէմ չխօսել։ Սորանով ես չեմ կամենում ասել թէ պ. Մխանսարեանի գործունէութիւնը, այսինքն հրատարակված աշխատանքների նիւթերը բոլորովին յարմար են ժողովրդի պահանջմունքին,—այլ նորա անունը յիշելով, ես կամենում էի միայն խոստովանել թէ ամէն գովասանքների արժանի է նորա աշխատասիրութիւնը և եռանդը։

Եւ եթէ ես այժմ վճռել եմ պ. Մխանսարեանի մտքերի դէմ խօսել, դա այն պատճառով է, որ համեմատելով նորա յօդուածի ուղղութիւնը (Մտածութիւնք ազգային լուսաւորութեան մասին) հին սերնդի ուղղութեան հետ,—ես երկուսի մէջ մեծ նմանութիւն գտայ։

Ուրեմն ես այստեղ չեմ խօսում անձնական կարծիքների վերայ, այլ մի հաստատ ուղղութեան վերայ։ Հայերի մէջ շատ յօդուածներ են տպվում, որոնք ոչ մի ուղղութիւն չունենալով, արժանի չեն քննադատութեան։ Բայց պ. Մխանսարեանի յօդուածը ունի ուղղութիւն,

—թէև վնասակար,—և դա է պատճառը, որ ես վճռեցի նորա դէմ խօսել։

Գ. Միխնասարեանի յիշված յօդուածը (ինչպէս ամեն յօդուած) ունի երկու որոշ կողմեր, տեսական և գործնական կողմը։ Ես կարծում եմ, որ բաւական անպտուղ աշխատանք կ'լինէր քննել այդ յօդուածի տեսական մասը, որովհետև չեմ տեսնում ոչ գիտութեան կամ ինչ գիտնական իրողութիւնների վերայ են հիմնված դորա մտքերը, ինչպէս—օրինակ թէ կանանց բնաւորութիւնը տղամարդկանց բնաւորութենից առաւել ընդունակ են մի որ և իցէ գործ յամառութեամբ կատարելու, թէ նոցա կազմվածքի զօրութիւնը և ոյժը յամառութեան տարածման և հլութեան ընդունակ է։ Ինչի վերայ է հիմնված, օրինակ, յետադայ տեսութիւնը. «Տղամարդը ընդունակ է մեծ սխրագործութիւններ անել, բայց այդ սխրագործութիւնքը երկայն ժամանակ չեն տեւում, յարատև չեն, անընդհատ չեն շարունակվում. միմիայն կին մարդը, կինամարդը ընդունակ է շարունակել անդադար, երկար ժամանակ, սկզբից մինչև վերջը միևնոյն համբերատարութեամբ և ուժով թէ սխրագործութիւն, թէ այլ գործ, որին նա ձեռնամուխ կ'լինի»։ (Երես 3)։

Հարցնում եմ ձեզ, ինչի վերայ են հիմնված այդպիսի տեսութիւնները.... Բնական գիտութիւնը մինչև այժմ չէ ապացուցել թէ կնոջ կազմվածքը տղամարդի կազմվածքից աւելի ընդունակ է դժուար, անընդհատ, անդադար մի

գործողութեանը։ Ոչ փորձ, ոչ և պատմութիւն մեզ չեն առաջարկել բաւական իրողութիւններ, որ նոցա վերայ մի այսպիսի օրէնքը հիմնէինք։ Մենք միայն մի բան գիտենք,—թէ կինը ստրուկ է եղել և է մինչև այժմ թէ կրթութեան, թէ հասարակական իրաւունքների կողմից [1]), ուստի և ստրկի բոլոր յատկութիւններ ունի։

Կամ ինչ նպատակով են յայտնում սորա նման փիլիսոփայական մտքերը. «..... իսկ գործին կարգադրութիւն անողը, ուղղութիւն տուողը պիտոյ է լինի և պիտի ընտրեն նորան, ով առաւել ընդունակ է և վարպետ այս գործի մէջ։ Ով գիտէ միմիայն փինաչութիւն (հնակարկատութիւն) թող դերձակի գործի մէջ տնօրէ-

[1] Հասարակական իրաւունքների գլխաւորներից մինը կրթութեան հաւասարութիւնն է։ Երկու տարի առաջ ես յետադայ տողերը գրեցի մի յօդուածի մէջ. „Երիտասարդները դարձեալ կարողութիւն ունին իրանց տներից հեռու փոխել իրանց ուղղութիւնը, իրանց կարծիքները, ազատվել նախապաշարմունքից...։ Բայց աղջիկների համար կարողութիւն ես չ'կայ այդ անելու։ Նոցա պինդ բանել են, նստեցրել են տանը, և պահել են նոցա խելքը բարոյականութեան անունով"։—Այժմ պ. Միխնասարեանի յետադայ տողերը արտայայտութիւն են դառնում հին սերունդների հնամոլ (консерв) ուղղութեանը. „....Բայց չի մոռանանք, որ երբ տղայք, որևիցէ ուսումն ստանալով իրանց ծնընդեան տեղը, կարող են գնալ օտար երկիրներ, կատարելագործել իրանց ուսումը, աղջկունք պիտոյ է բաւականանան այն ուսմամբ և դաստիարակութեամբ, որը կարող են տալ նոցա ծնողքը և տեղական ուսումնարանը" (երես 5)։ Հեղ. Ծան.

նութիւն չանէ։ Ամենայն բանի մէջ ուղղութիւն տուողը, կառավարիչը, տնօրէնութիւն անողը պիտոյ է լինի ամենից ընդունակ և վարպետը այդ գործի մէջ։ Կարճ եմ ասում, բայց կամեցողը միտքս կը հասկանայ, որ կամենում եմ Սօղոմոնի խօսքը մէջ բերել, թէ, «որ հանճարեղն է, զառաջնորդութիւնն նա ստասցի»։ (Երես 17)։ Միթէ ժողովրդին ասելով թէ «գործ կառավարողը պիտի վարպետ լինի», դուք նորան միջոց էք տալիս ճշտութեամբ որոշել մարդիկների վարպետութեան աստիճանը, միթէ քարոզելով թէ կառավարիչները պիտի հանճարեղ լինին, դուք մի չափ էք տալիս, որով ժողովուրդը կարող է մարդիկների արժանաւորութիւնը որոշել։ Երբ ժողովուրդը մի մարդ է ընտրում մի գործ կառավարելու, նա միշտ համոզված է թէ ամենաարժանաւոր և ամենավարպետ մարդին է ընտրել։ Ուրեմն քարոզները աւելորդ բան են, որովհետև ժողովուրդը այն ժամանակ կընտրէ իրաւ արժանաւոր մարդիկ, երբ զարգացած կ'լինի։ Իսկ զարգացման հասնում է ժողովուրդը ոչ թէ քարոզների, այլ գիտութեան միջոցով.—իսկ գիտութիւն մտցնելու համար հասարակութեան մէջ, երկար ժամանակ է հարկաւոր։

Վերջապէս ո՞րն է այն մարդը, որ իրան վարպետ չէ համարում, և ո՞ւր է այն չափ, որով ես կարողանայի որոշել թէ ես վարպետ եմ, թէ ոչ։

Ասենք թէ ժողովուրդը հարկաւորութիւն

է յայտնում գումարներ կազմելու, գործեր կառավարելու համար։ Ես ինձ վարպետ եմ կարծում այդ գործին ձեռն տալու։ Ասենք թէ ժողովուրդն ես ինձ վարպետ համարելով, ճշմարիտ յանձնում է ինձ այդ գործի կառավարութիւնը։ Եւ ես գումարներ կազմելու նպատակով, քարոզելու և գործելու իրաւունքները ստանալով, վ ի ճ ա կ ա խ ա ղ ն ե ր եմ առաջարկում կամ հիմնում հասարակութեան մէջ,—վիճակախաղները, որ ամենավնասակար գործ է, որը վաղուց դատապարտել է գիտութիւնը [1]։

Այո, ամէն գործի կառավարիչը պիտի վարպետ լինի, բայց այդ բաւական չէ.—հանճարեղ մարդին ես մի գործ յանձնելով, ժողովուրդը

---

1) Յոյս ունիմ ժամանակով „Հայկական Աշխարհ“ օրագրին մի փոքր յօդուած առաջարկել, որտեղ կաշխատեմ ապացուցանել վիճակախաղների վնասը, ժողովրդի թէ քաղաքական, թէ հասարակական, թէ դրամական և թէ բարոյական կեանքի համար։ Աղբիւրներս սոքա կ'լինեն։

Rau (Finanz wissenschaft), Umpfenbach (Finanz wissenschaft), Blèibtreu (Politische Arithmetic), J. B. Say (Traieé d'économie politique), Bluntschli und Brater (Staats Wörterbuch), Beuder (Das Lotteriereсht), Ponsiglioni (Sienza del popolo.—Il giuoco del Lotto), A. Wagner (Das neue Lotterieanlteihen), Hock (Die öffentl. abgaben), Albert Wilel (Die Europeischen Lotterieanleihen), և այլն։

Շատ ուրախ կ'լինէինք, եթէ պ. Միանսարեանը բարեհաճէր պատասխանել մեզ—ինչ նպատակ է ունեցել նա աչքի առաջ վիճակախաղներ առաջարկելու ժամանակ (երես 18)։ Հեղ. Ծան.

չ'պիտի տայ նորան անսահման իրաւունքներ. նա պիտի աշխատէ քննադատել նորա մտքերը, սահման տայ նորա գործադրելի իրաւունքներին,—եթէ ոչ—ամենահանճարեղ մարդն էլ կարող է վնաս բերել, որովհետև սխալվելը մարդկային է, թափառելը մարդի բնաւորութեան յատկութիւնն է։

Սողոմոնի խօսքերը լաւ էին իրանց ժամանակով, բայց այժմեան մարդկային հասարակութիւնը միայն Սողոմոնի խօսքով չէ կառավարվում, այլ կառավարվում է գիտութիւնից մշակված օրէնքներով։

Բայց դառնանք դէպի յօդուածի գործնական մասը։ Գ. Միանսարեանի զանազան առաջարկութիւնների թւում, մենք շատ օգտաւէտներ ևս գտնում ենք, օրինակ մանկավարժական ժողովներ հիմնելու առաջարկութիւնը դաստիարակութեան կանոնները մշակելու համար և հաւաքվել շարունակաբար Կովկասի զանազան քաղաքներում (երես 15-16)։—Այնպիսիներ ևս գտնում ենք, որոնք եթէ օգտաւէտ չեն կարող լինել, գոնէ վնասական չեն կարող լինել, այն է որ ամեն տեղ և կեանքի ամեն րոպէ հայերը անդադար քարոզեն կեանքի վերաբերեալ օգտաւէտ մտքերը (երես 16)։ Առաջարկել ժողովրդին գիտնական մի իրողութիւն, առաջարկել գիտութիւնից մշակված մի գործնական հիմնարկութիւն, կամ վերջապէս մի գործնական միտք,—նշանակում է ծանօթացնել ժողովուրդը մի նոր մտքի հետ, ուրեմն նորան

մտածել սովորել։ Բայց առաջարկել քարոզել (միևնոյն է թէ առաջարկել բարոյական լինել կամ ազգը սիրել)—նշանակում է առաջարկել ոչ թէ նոր միտք, այլ զգացմունք։ Իսկ զգացմունք առաջարկելը աւելորդ բան է։ Զգացմունքին կարող է հասնել միայն զարգացած մարդը։ Ժողովուրդը նորան չէ կարող հասնել մինչև որ նա տգէտ է։

Ամբողջ ժողովրդին քարոզել առաջարկելը աւելորդ աշխատանք է, որովհետև եթէ նա մինչև այժմ չ'քարոզեց,—նշանակում է կամ հարկաւորութիւն չէ զգում քարոզելու, կամ չէ իմանում «ինչպէս» քարոզէ, կամ վերջապէս չէ իմանում «ինչ քարոզէ [1]։

„Հայկ. Աշխ.", 1869, № 3.
Հէյդլբէրգ.

---

1) „Թող ամենայն հայ այդպիսի մտքեր քարոզէ ժողովրդեան մէջ"—ասում է պ. Միանսարեանը։—Բայց եթէ ամենայն հայ խելացի մտքեր քարոզել կարողանար, այդ կ'նշանակէր, թէ ամբողջ հասարակութիւնը կազմված կ'լինէր զարգացած մարդիկներից, ուստի և քարոզել աւելորդ կ'լինէր։ Միևնոյն է եթէ ես ասէի, „եթէ ժողովուրդը զարգացած լինէր—այն ժամանակ նա զարգացած կ'լինէր"։ Հեղ. ծան.

ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

I.

Ֆրանսիական օրէնսդիր Պալատի 1867 թուի նիստերի մէկում, աղջիկների դաստիարակութեան հարցի առիթով, պ. Ժիւլ Սիմօն մի ճառ ասաց կանանց դրութեան վերայ հասարակութեան մէջ։

Նորա մտքով կինը պիտի իրաւունք ունենայ մարդի հաւասար կրթութիւն ստանալու, բայց նա չ'պիտի իրաւունք ունենայ նորա պէս պաշտօններ կատարելու հասարակութեան մէջ։ Գրեթէ այս խօսքերով է յայտնում իւր միտքը պ. Սիմօն. «Ես համաձայն չեմ այն կուսակցութեանը, որ կամենում է կնոջը մարդի պէս պաշտօններ յանձնել և պաշտպանում է կանանց համար աշխատանքի իրաւունք, բայց ես միշտ կ'պաշտպանեմ կանանց համար կրթվելու իրաւունքը»։ Ուրեմն նոքա իրաւունք ունին կրթվելու, բայց իրաւունք չունին այդ ստացած կրթութիւնից օգուտ քաղելու։ Ի՞նչ է ուրեմն կրթութեան նպատակը.... «Կին և մայր դառնալն է», պատասխանում է Ժիւլ Սիմօն։ Պ. Սի-

մօն, որին լաւ յայտնի է կանանց դրութիւնը հասարակութեան մէջ, և որ ինքն է նկարագրել իւր գեղեցիկ և չնորհալի գրվածներում [1]) նոցա թշուառ դրութիւնը զանազան մեծ քաղաքներում, որտեղ նոքա ստիպված են երեխայութենից սկսած գործարանների մէջ մարմնամաշ աշխատանք կատարել,—պ. Սիմօն կարծես թէ մոռացել է թէ կանանց չատ փոքր թիւը կարողութիւն ունի կնոջ և մօր պաշտօն կատարելու հասարակութեան մէջ, իսկ նոցանից չատերին օտար են մնում կնոջ, մօր, տան հրեշտակի, գերդաստանի նախախնամութեան քաղցր անունները։ Կրթենք կանանց ընտանեկան կեանքի համար,—ասում են բարոյագէտները, և չեն մտածում այն բանի վերայ, որ կինը ստիպված լինելով աշխատելու, ոչնչանում է ինքն իբրև կին և ոչնչացնում է իւր գերդաստանը...։ Տանք կանանց մարդիկների հաւասար ուսումը,—ասում է պ. Սիմօն և չէ մտածում այն բանի վերայ, որ կնոջը թոյլ տալով մարդի հաւասար կրթութիւն ստանալու, բայց թոյլ չ'տալով նորան այս ստացած կրթութիւնը գործածելու, այսինքն աշխատելու, նա նորան անբարոյականութեան մէջ է ձգում։

—

1) Jules Simon.—„L'Ecole“, „L'ouvrière“, L'ouvrièr de huit ans“ և ուրիշ գրվածներ։

II.

Մի ուրիշ գրող, բելգիացի Լը Հարդի դը Բօլիօ (Le Hardy de Beaulieu) հրատարակեց 1867 թւին մի աշխատանք կանանց դաստիարակութեան վերայ[1]), և երկու մաս է բաժանել իւր գրվածը. «Ստորին ժողովրդի կնոջ կրթութիւն» և «Բարձր դասի կնոջ կրթութիւն»։ Մեզ առաւել հետաքրքիր է ի հարկէ ստորին ժողովրդի դաստիարակութեան խնդիրը։ Ստորին ժողովրդի կինը տգէտ է, ասում է պ. Լը Հարդի, այնքան տգէտ է, որ նա կարդալ ու գրել չէ իմանում մեծ մասամբ։ Նորա կոպիտ բնութիւնը այս տգիտութեան հետևանք է և պատճառ, որ կինը չէ կարող բարերար կերպով ազդել իւր մարդի և երեխաների բարոյականութեան վերայ։

Կինը գնում է գործարանների մէջ աշխատելու։ Ծանր, սպառիչ աշխատանքը ոչնչացնում է նորա առողջութիւնը և նորա մարմնի գեղեցիկ ձևերը։ Բացի սորանից հեռու իւր մարդից և գերդաստանից, ուրիշ մշակների հասարակութեան մէջ, նա վատ օրինակներ է տեսնում, որոնք ազդում են նորա բարոյականութեան վերայ։ Իսկ այդ ժամանակին նորա երեխաները, որոնք մենակ են տանը մնացել, զրկված ծնողների տեսչութենից, վազվզում են փողոցներում, վատ սովորութիւններ են ընդունում, կորցնում են առողջութիւնը, բարոյապէս փչանում են։ Կինը յոգնած, կեանքից զզված վերադառնում է տուն, երեխաների հետ վատ է վարվում։ Երբ աշխատանքից յետ է դառնում մարդը, նա մեծ ուրախութիւն չէ գտնում իւր գերդաստանում։ Երեխաները մօրից պատիժ կրելով լաց են լինում, կինը բարկացած, թշուառ, անբնական կեանքից զզված, գրգռված, զայրացած ոգով է ընդունում իւր ամուսնին.... Ամեն բան անկարգութեան մէջ է գերդաստանում, սենեակը ցուրտ է, կերակուրը պատրաստ չէ....։ Մարդը մի րոպէ չէ նստում տանը։ Նա ևս ամբողջ օր աշխատել է, նա կ՚կամենար ընտանիքի մէջ բաղդ գտնել.... Նորան կեանք չէ ժըպտում։ Կեանքից զզված, ախ քաշելով, նա փախչում է տունից, նա գնում է պանդոկ, ուր գինի կամ գարեջուր ու թեթև խօսակցութիւնը նորան թոյլ կ՚տան մոռանալու իւր կեանքի թշուառութիւնները։

Այսպիսի կեանքի հետևանք ինչ է։ Հետևանքը թէ մարդի և թէ կնոջ համար անբարոյականութիւն է։

III.

Կարելի՞ է արդեօք, հարցնում է պ. Լը Հարդի, յանկարծ փրկել կնոջը այդ թշուառ դրութենից, խրատ տալով հասարակութեանը արգելել կանանցը գործարանների աշխատանք։—

[1]) L'Education de la femme.—Ch. de Hardy de Beaulieu. Paris, 1867.

Անկարելի է։ Բայց մի ուրիշ միջոց կայ նոցա դրութիւնը բարւոքելու, այն է տարածել լուսաւորութիւն։ Փոքր առ փոքր լուսաւորութեան բարերար ազդեցութեան տակ, կինը կը թողնէ իւր կոպիտ սովորութիւնները, կ'զարգանայ բարոյապէս և մտաւորապէս, և միևնոյն ժամանակ մասնաւոր կրթութեան հետ կ'սովորէ որևիցէ արհեստ, այնպէս որ հնար կունենայ գործարանների աշխատանքը թողնելու, և ընտանիքի մէջ մնալով, ընտանիքի համար հոգս քաշելով, ազատ ժամանակին կարողութեան չափ կաշխատէ մի որևիցէ ուսումնասիրած արհեստով [1]։

Բայց ի՞նչ պէտք է լինի այդ արհեստ.—պ. Սիմօն, նմանապէս և պ. Լը Հարդի բաւականանում են ասելով, թէ այս արհեստը պիտի տնային արհեստ լինի, որտեղ ոչ թէ կնոջ մարմնաւոր, այլ նորա մտաւոր զօրութիւնը պէտք է գլխաւոր դերը խաղայ։

«Մենք կարծես թէ մոռացել ենք մեր ժա-

[1] Ոչ թէ միայն Եւրոպայում, այլև Ամերիկայում կանայք ստիպված են գործարաններում աշխատել։ Նորերս Նիւ-Եօրկ քաղաքի աշխատողների ժողովը վճռեց թէ ժողովից կախված բոլոր աշխատողների ընկերութիւնները պիտի իրանց պաշտպանութիւն տան և կանանց աշխատողների ընկերութիւններին, նոցա ևս իրաւունք տալով „Eight. hours Law“ ութ ժամի օրէնքով կառավարվելու։ Նմանապէս վճռեցին, որ կանայք աշխատանք ընդունելով, երբէք չ'համաձայնեն տղամարդիկներից պակաս թոշակով բաւականանալ։

մանակում, ասում է պ. Ժիւլ Սիմօն, այն արհեստը, որ կնոջ յատկութիւններին ամենից համապատասխան է,—այն է ընտանիքի մայր լինելու արհեստը (L'industrie de mère de famille)։

IV.

Բայց ամէն կին չէ կարող մայր լինել։ Ինչքան կանայք կան, որոնց հանգամանքները չեն ներում կին և մայր դառնալու։ Վերջապէս կան կանայք, որոնք չեն համակրում ընտանեկան կեանքին։ Մի՞թէ հասարակութիւնը պէտք է արգելէ նոցա տղամարդի պէս ուսում առնել, պէտք է արգելէ նոցա իւրանց հաց գտնել այն արհեստի կամ պարապմունքի միջոցով, որի ընդունակութիւնը նոքա իւրանց մէջ զգում են։

Երբ կին կամ մարդ ստիպված են իւրանց աշխատանքով ապրել, բայց նոքա այնքան լուսաւորութիւն չեն ստացել, որ բարոյապէս և մտաւորապէս զարգանան, ուրեմն և իւրանց անձը ուղղել կարողանան կեանքի ընթացքի մէջ,—նոքա հեշտութեամբ անբարոյականութեան մէջ են ընկնում։ Բայց ասենք թէ կինը թէպէտ և լուսաւորութիւն ստացաւ, բայց այդ նորա ստացած լուսաւորութիւնը կամ յարմար չէ կնոջ պահանջմունքին, կամ հասարակութեան արգելքի պատճառով, նա չէ կարող գործ դնել կեանքում,—կրկին պիտի անբարոյականութեան մէջ ընկնի կինը։

Վերև յիշված հեղինակների նպատակն էր միացնել կնոջ լուսաւորութիւնը մի որևիցէ նորա կազմվածքին յարմարեցրած արվեստի հետ։

Բայց ինչպէս ասացի, ոչ պ. Սիմօն, ոչ և պ. Լը Հարդի չեն յայտնել մեզ թէ այն ինչ արվեստներ են, որոնք նոցա կարծիքով կարող են կնոջը յարմարիլ։ Նոքա բաւականացել են, կրկնում եմ, յայտնել թէ այդ արվեստները պիտի տնային արվեստներ լինեն, որոնք վնաս չեն բերի ընտանեկան կեանքին, և որոնց նպատակ կ'լինի ոչ թէ կնոջ մարմնաւոր, այլ գլխաւորապէս նորա մտաւոր զօրութենից օգուտ քաղել։

V.

Ֆրանսիական «La Liberté» (ազատութիւն) անունով օրագրի անցեալ (1868) տարու համարների մէկում յետագայ տողերը կարդացի։

«Կանանց աշխատանք,—երևի մեր ընթերցողները յիշում են այն բոլոր աղմուկը, որ ոմանք բարձրացրել են տիկին Էլիզ Լըմօնիէ (Elise Lemonnier) 1862 թւին հիմնած արվեստական ուսումնարանների (écoles professionnelles) պատճառով։ Բամբասանքները չ'կարողացան վնասել այս օգտաւէտ գործին, որը փոխանակ ընկնելու անիրաւ և սաստիկ յարձակմունքի առաջ, այժմ ընդհակառակն կատարեալ ծաղկման մէջ է։ Վերջապէս ամենքը հասկա-

ցան, որ բոլոր փորձերից կանանց աշխատանքի խնդիրը լուծելու միայն սա է արդարև ծանր։

«Հիմնողները իրաւամբ են մտածել, որ ամենալաւ հնարն է օրիորդներին միջոց տալ իւրանց աշխատանքով ազնուաբար հաց գտնելու (միևնոյն ժամանակ նոցա գործարանների աշխատանքից հեռացնելով) նոցա այնպիսի արդիւնաւոր արվեստներ ուսուցանել, որոնք միջոց կ'տան նոցա իւրանց ընդունակութիւնները տանը գործ դնել, առանց ստիպված լինելու թողնել ընտանեկան կեանքը։

«Այս ուսումնարանների յաջողութիւնը ապացուցել է այն գաղափարի պտղատու լինելը, և այժմ ընդունելութեան խնդիրներ այնքան բազմաթիւ են, որ Տիւրէն և Լավալ փողոցների երկու ուսումնարանները լի լինելով, կառավարութիւնը ստիպված է մի նոր ուսումնարան հիմնել Դ'Ասսաս փողոցում, որի բացման հանդէսը հոկտեմբերի 5-ին կ'լինի։

«Մենք բաղդաւոր ենք այսպիսի հետևանքներ տեսնելով և կարծում ենք թէ այս գործի յաջողվելը կախված է ինչպէս հիմնողների լուսաւորեալ եռանդից, այնպէս և սկզբնական գաղափարի ճշմարտութենից և անձնուիրութենից, որով գործը գլուխ եկաւ։ Այս ուսումնարանները ընդունում են ամէն կրօնի աշակերտուհիներ, և ցոյց են տալիս խելացի համբերութիւն դէպի ամէն մինի դաւանութիւնը, և սա առաջին պայման է այս տեսակ գործի յաջողվելուն։

Ուսումնարանների այսպիսի պայմաններին նայելով, նոցա յաջողութիւնը մեզ չէ կարող զարմացնել»։

VI.

Որեմն պ.պ. Սիմօնի և Լը Հարդիի մտքերը սկսում են գործ դնվել այս ուսումնարանների միջոցով[1]։ Եւ ոչ թէ միայն Ֆրանսիայում, այլև Բելգիայում հիմնվում են այս տեսակ ուսումնարանները, կանանց աշխատանքին մի նոր, բարերար ուղղութիւն տալու նպատակով։ Նորերումս հրատարակվեցաւ բելգիական «Indépendance Belge» լրագրում Բրիւսէլ քաղաքի աղջիկների արվեստական ուսումնարանի պարգեւաբաշխութեան հանդէսի նկարագրութիւնը։ Այդ հանդէսում ասած ճառերից երևում է, թէ ուսումնարանը հիմնված է եղել երեք ու կէս տարի առաջ, և արդէն, կառավարող օրիորդ Բիւլէնսի (Bulens) վկայութեամբ, աղջիկներից շատերը իւրանց համար պարապմունք գտան վաճառականական գործերի մէջ։

Կարծելով, որ այդ հանդէսում ասված ճառերը կարող են կարդացողի հետաքրքրութիւնը շարժել, ես կաշխատեմ առաջարկել այստեղ նշանաւորներից քանի մի քաղվածները։

Բէլգիական ծերակոյտի անդամ պ. Ֆորտան

[1]) Կարծեմ որ Փարիզի արուեստական ուսումնարաններից մինը հիմնել է նոյն ինքն պ. Ժիւլ Սիմօնի կինը։

(Fortamps) ուսումնարանի կառավարութեան խորհրդի նախագահը, մի ճառ է կարդացել, որտեղ նա յայտնում է թէ երեք տարի առաջ ուսումնարանը 60 աշակերտուհի է ունեցել, իսկ այժմ նորա մօտ երկու հարիւր են։ Խօսելով արվեստական ուսումնարանների օգտի վերայ առհասարակ, նա յիշեց Մարշէֆ Ժիրար տիկնոջ (Marchef Jirard) գործունէութիւնը Փարիզում։ Նա ուշադրութիւն դարձրեց այն նշանակութեան վերայ, որ ունի արվեստական ուսումնարաններում արվեստագործական նկարչութեան (dessin industriel) դասատվութիւնը։ Նմանապէս բարոյականութեան, խնայողութեան և աշխատասիրութեան վերայ խօսելով, նա չը մոռացաւ յիշել ընտիր գրվածների ընթերցանութեան ազդեցութիւնը մտաւոր զարգացման վերայ։ Նորա ճառից մենք իմացանք, որ ուսումնարանի գրադարանը պարունակում է իւր մէջ հարիւր յիսուն և ութ գիրք, և առաւել ևս հարստանալու է։

«Հակառակ այն արվեստներին, շարունակեց պ. Ֆորտան, որոնք կանանց դատապարտելով մարմնի և հոգու անգործունէութեանը[1]), տըխուր հետևանք ունեն նոցա առողջութեան համար,—փայտի վերայ կաղապարագործութեան (modelage) և քանդակագործութեան պարապմունքը այն արժանաւորութիւնը ունեն, որ հա-

[1]) Երևի թէ պ. Ֆորտան խօսում է այստեղ ամեն տեսակ ասղնագործական պարապմունքի վերայ։

ւասարակշռելով մարմնաւոր և մտաւոր աշխատանքը, համապատասխանում են մարմնի առողջապահութեան պայմաններին։

«Բացի սոցանից սոցա նման պարապմունքը չեն կատարվում գործարանների մէջ, որտեղ հասարակաց աշխատանքի վատ հետևանքը մեզ քաջ յայտնի է, այլ կարող են կատարվել տանը, որտեղ դեռահաս մայրը երեխայի օրօրոցի մօտ ևս կարող է շարունակել իւր գործը։ Եւ դարձեալ այս գործի հոգացողութիւնը այն աստիճան չէ խլում կնոջ բոլոր մտաւոր ընդունակութիւնները, որ նա չ'կարողանար տնային տնտեսութեան վերայ ևս ուշք դարձնել»։

Գ. Յօրտանից յետոյ ուսումնարանի կառավարող օրիորդ Բիւլէնս մի ճառ է կարդացել։ Ցետագայ հատուածն եմ թարգմանում այս ճառից։

«Հասարակ ուսումնարաններից դուրս գալով, աղջիկը արհեստական աշակերտութիւն էր անում, և շատ անգամ ամբողջ կեանքը խոնարհ վարձաւոր էր մնում։ Մեզ մօտից դուրս է գալիս նա զինաւորված։ Լայն ճանապարհ է բացվում նորա առաջ, վաճառականութիւնը, պերճութեան արհեստներին գործադրելի ամեն տեսակ արհեստները նորա աշխատանքին են կարօտ։

«Դիւրին և հասարակ ճանապարհ։ Այնպէս որ առաւել աջողված քան թէ երիտասարդները, որոնք ուսում աւարտելուց յետոյ, շատ անգամ տեղ չեն գտնում իւրանց համար,—մեր

աշակերտուհիները ուսումնարանը թողնելով, մի լայն ասպարէզ են մտնում, ուր նոցա աշխատանքին սպասում են, նոցա ընդունում են ամեն տեղ փառքով ու պատւով։

«Ինչ որ առաջ մեզ համար յոյս էր միայն, այժմ իրողութիւն դարձաւ։ Մեր ամենաջերմ ցանկութիւնն էր առաջ աշխատել մեր կրթութեան միջոցով աղջիկներին վարձաւորի ստրկական դրութենից ազատել. երանի, ասում էինք մենք, նա ազատէր նոցա կարիքի բռնադատութենից. երանի տար նոցա իւրանց անձն յարգելու զգացմունքը, որը պարկեշտ կնոջ պաշտպան է։ Մեր տենչանքը կատարվեցաւ։

«Մեր հին աշակերտուհիներից մի քանիսը արդէն ընդունվեցան նշանաւոր առևտրական տներում, որպէս գանձապահ։ Վաղը կարելի է մի աղջիկ, որին վիճակը կ'ստիպէր վատ վարձատրած, առանց որևէ ապագայի, ձեռագործ աշխատանքին անձնանուէր լինելու, կը ստանայ իւր առած ուսման օգնութեամբ այն գումարներ պահելու պաշտօնը, որոնցից տէրը նրան մի աննշան վարձ կ'տար, եթէ նա ներկայանար նորան առանց արհեստական ուսումնարանի օգնութեան։

«Առաւել ևս ուրախալի է այն, որ աղջիկը դեռ դասատուն չ'թողած իւր աշխատանքի վարձ է ստանում։

«Մեր նպատակն էր մեր աշակերտուհիներին այնքան հմտութիւններ տալ, որ նոքա առաւել մեծ հեշտութեամբ հասնէին արհեստի կատա-

բեյագործութեան և միակ ճշմարիտ անկախութեան, այն է հասարակութեան պատւին մասնաւոր բարեկեցութեան մէջ։ Այնպէս որ աղջիկները, որոնք պարապում են ասղնագործութեան, կտաւագործութեան (lingerie), քանդակագործութեան կամ արվեստական նկարչութեան և որոնց աշխատանքը ծախվում են, իսկոյն ստանում են իւրանց աշխատանքի վարձատրութիւն։ Դեռ չաւարտած նոցա ուսումը արդիւնաւոր է»։

VII.

Նորերումս ցանկանալով աւելի մօտ ծանօթանալ արվեստական ուսումնարանների հետ, ես ուղղակի նամակով դարձայ դէպի Փարիզում գտնվող մի այսպիսի ուսումնարանի կառավարութիւնը, խնդրելով ինձ տեղեկութիւններ ուսումնարանի վերայ, և ուսման պրօգրամը (կարգադրութիւն) ուղարկել [1]։ Ուսումնարանի կառավարող տիկին դը Վէրկօր (de Vercors) բարեհաճեց ինքն պատասխանել ինձ նամակով և ուղարկեց ինձ իւր ուսումնարանի պրօգրամը։

Այս պրօգրամը թարգմանում եմ։ «Այս ուսումնարանը պատրաստում է օրիորդներին ուսուցչութեան, արհեստներին, վաճառականութեան, արվեստագործութեան և զանազան ձե-

1) Ուսումնարանը գտնվում է 15, rue de Richelieu. Փարիզ։

ռագործ արվեստներին։ Բարձր և մասնաւոր ուսման կարգեր (cours, курсы) հիմնված են նոցա համար, որոնք կամենում են մի վկայագիր ստանալ։

Ուսումնարանի մէջ գտնվում են ամեն տեսակ արվեստների գործարաններ (ateliers)։ Ուսման ընթացքը տևում է մինչև մօտ 17 հասակը։ Աղջիկները ստանալով իւրանց վկայագիր, հոգաբարձութեան մասնաժողովի (comité de patronage) հոգացողութեամբ Ֆրանսիայի կամ օտար երկիրների օրինաւոր ընտանիքների մէջ տեղ են ստանում։

«Գործնական ուսման կարգի ընթացքը երեք տարի է առհասարակ։ Այս ժամանակակէտից յետոյ օրիորդների աշխատանքը վարձատրվում է։ Այնպէս որ շարունակելով ընդունել արհեստի կամ արվեստի կատարելագործութեան և կեանքի ուղղութեան օգտաւէտ խրատներ, նոքա կարող են և բաւականութիւն տալ իւրանց կեանքի պիտոյքներին։

Ընդունելութեան պայմաններ։—Աշակերտուհիներին ընդունում են 7 տարեկանից սկսած։ Այն աշակերտուհին, որ միևնոյն ժամանակ դասեր է կամենում լսել և նուիրել իւրան մի արվեստին, առաջուց ամսական 10 ֆրանկ [1]) է վճարում։ Այն աղջիկներից, որոնք իւրանց միայն ձեռագործ արվեստներին են նուիրում, պահանջվում է երեք տարու խոստմունք առանց որ և է վճարման։

1) 10 ֆրանկ կանէ $2\frac{1}{2}$ րուբլի։

«Օրիորդները, որոնք կ'կամենան միայն մի որոշ ուսման կարգին հետևել, նմանապէս ընդունվում են։

«Կ ա ն ո ն ա դ ր ո ւ թ ի ւ ն։—Ուսումնարանը բաց է առաւօտեան 8 *ժամից մինչև երեկոյեան* 6 *ժամ։ Տարին երկու հրապարակական հարցաքննութիւն է լինում։ Նայելով հարցաքննութեան յաջողութեանը երեք տարվան արվեստական ուսման ընթացքը կարելի է վերջացնել։*

«Անգլիական լեզու և նկարչութիւն անհրաժեշտ են բոլոր աշակերտուհիների համար։ Աշխատանքի և դասերի ժամանակ անգլիացի տիկինները տեսչութիւն են անում, որ պարտաւոր են աշակերտուհիներին անգլիերէն խօսել։

«Մի ժամ զբօսանք նշանակված է առաւօտեան և երեկոյեան դասերի մէջ։

«Ա ր վ ե ս տ ա կ ա ն գ ո ր ծ ա ր ա ն ն ե ր։—Փորագրութիւն փայտի վերայ, փայտանկարութիւն, հովհարներ (eventails), *նկարչութիւն ճենապակու* (фарфоръ) *վերայ զգեստակար և այլ և այլ զարթագործութիւններ»։*

VIII.

Տիկին դը Վէրկօրի ուղարկած նամակից յետագայ տողեր եմ առաջարկում ընթերցողին։

«Մեր ուսման մէթօդը արձակ մտախորհութիւն է (raisonnement absolu)*։ Մեր աշակերտուհիները չունին ոչ մի դասագիրք, թէ քերականութեան, թէ թւաբանութեան, թէ աշխարհագրութեան։ Անմիջական գործադրութիւն բանաւոր քննադատութենից յետ։ Քերականութեան մէջ վերլուծութիւն և դասաւորութիւն* (syntaxe) *ուղղած պարբերութիւնների միջոցով, տրամաբանական քննութիւն* (analyse logique) *խօսակցութեան միջոցով։*

«Աշխարհագրութեան մէջ մենք գործ ենք ածում մասնաւոր և ընդհանուր աշխարհացոյցներ և ճանապարհորդութիւններ։ Պատմութիւնը սովորեցնում ենք դարերի կարգով, Ասիա, Աֆրիկա և Եւրոպա։

«Այս մէթօդը բոլոր Փարիզի ուսումնարաններից գործ է դնվում միմիայն մեր ուսումնարանում և սա իմ նորաձևութիւնն է։—Երբէք չենք գործածում դասագրքեր, երբէք ինչ և իցէ անգիր սովորել չենք տալիս»։

Վերջացնելով խօսքս կ'կամենայի յայտնել այստեղ իմ կարծիքս թէ այսպիսի ուսման մէթօդը լաւ է միայն Ֆրանսիայի պէս կրթութեան բարձր աստիճանի վերայ կանգնած երկիրների համար։ Անկասկած վնասակար է որ և է ուսման մէջ անգիր սովորելը,—բայց ինչ որ դասագրքերին է վերաբերվում, կարելի է որ մեր նման ազգի մէջ, որտեղ նոր, ուսումնական և գրականական լեզու դեռ մշակված չէ, անտեղի կ'լինէր արհամարհել դասագրքերի օգնութիւնը։

„Հայկ. Աշխ.", 1869, № 4—5.

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆ

(Հայկական կանանց նուիրված)

I.

Քրիստոնէութիւնը ճշմարտութիւն է։ Փըրկիչը և Նորա առաքեալները քարոզելով ճշմարտութիւն. քարոզելով Աստծու խօսք, քարոզելով սէր և հաւասարութիւն, զանազանութիւն չէին անում մարդի և կնոջ մէջ։ Նոքա չէին արգելում կանանց ներկայ գտնվել իւրանց քարոզներին, չէին արհամարհում նոցա, չէին կարծում թէ կինը անընդունակ է ճշմարտութիւնը ըմբռնել։ Քրիստոնէութիւնը ճշմարտութեան, սէրի և հաւասարութեան ճանապարհով ձգտելով դէպի արդարութիւնը չէր արգելում և կանանցը չարութեան, անօրէնութեան, և անբարոյականութեան դէմ պատերազմին մասնակից լինել։ Սկզբնական քրիստոնէական օրինակին հետևեցին միշտ բոլոր քրիստոնէական եկեղեցիները։

Եկեղեցական ոչ մի հանդէսին, ոչ մի քարոզին, ոչ մի ժամասացութեան արգելված չէ եղել երբէք կանանց ներկայ գտնվել։

Կանայք եկեղեցու ծոցը ընդունված, նորանից չարհամարհված, դարձան քրիստոնէութեան և եկեղեցու ամենաեռանդոտ կուսակիցներ։ Իսկ այն ճշմարտութիւնը, որ ընդունվում է երկու սեռերից, առաւել հաստատ հիմք է ստանում մարդկութեան մէջ [1]), առաւել ևս առաջադիմութիւն անելու է։

Եւրոպական գիտութիւնը քրիստոնէութեան պտուղն է, նորա ազդեցութեան տակ է ծնվել և զարգացել։ Նորա նպատակը արդարութիւնն է նմանապէս, նորա միջոցը աշխատանք է (մտաւոր և նիւթական)։ Այս աշխատանք խօսքը նշանակում է սէր, հաւասարութիւն, ճշմարտութիւն և վերջապէս արդարութիւն։ Սէր, որովհետև աշխատելով ամեն մի անհատը աշխատում է ոչ թէ միայն իւր համար, այլև ուրիշների համար—հասարակութեան համար։ Հասարակութիւն, որովհետև աշխատելով հարուստը և աղքատը հաւասարվում են. հարուստի աշխատանքը աղքատի աշխատանքից առաւել մեծ արժանաւորութիւն չունէ հասարակութեան համար, և տգիտութիւնից ազատվելու համար, հարուստը միևնոյն աշխատասիրութիւն պիտի գործ դնէ, ինչքան աղքա-

---

[1]) Մահմէտականութիւնը ընդհակառակն ստրկացրեց կանանցը մարդիկներին.—և այս է գլխաւոր պատճառներից մէկը, որ մահմետականութիւնը մեռնում է։

տը։ Ճշմարտութիւն, որովհետև ամէն մի անհատի որևիցէ աշխատանքը օգտաւէտ է հասարակութեան համար։ Վերջապէս Արդարութիւն, որովհետև աշխատելով մարդը բարւոքում է կեանքը, ուրեմն միջոց է տալիս հասարակութեանը ձգտել դէպի առաջադիմութիւնը, դէպի կեանքի բարւոքումը, ուրեմն և դէպի արդարութիւնը։

II.

Բայց գիտութիւնը, կամ աւելի լաւ ասեմ գիտութեան քահանաները (այսինքն գիտնականները) չեն հասկացել արդարութիւնը, ինչպէս նորան հասկանում է քրիստոնէութիւնը։ Նոքա չեն հասել քրիստոնէական եկեղեցու արդարութեանը։

Փոխանակ մարդկութեան նախապաշարմունքի դէմ բացարձակ կռւելու, փոխանակ քրիստոնէութիւնից օրինակ առնելու, մարդկութեան երկու սեռերին ևս հաւասարացնելու, երկուսին ևս քրիստոնէութեան օրինակով, ճշմարտութիւնը հաւասարապէս սովորեցնելով,—գիտութիւնը տղամարդիկներին միայն իրաւունք տալիս է լուսաւորութիւնից օգուտ քաղել։ Մարդկութեան կէսը (կանայք) իրաւունք չունէին ճշմարտութեան լուսով լուսաւորվել։

Որքան ժամանակ էր հարկաւոր, որ հասարակութեան մէջ աղջիկներին թոյլ էին տալ սկզբնական ուսումնարաններից օգուտ քաղել։

Որքան ժամանակ անցաւ մինչև որ նոցա համար հիմնեցին երկրորդական ուսումնարաններ։ Քանի դարեր գիտութիւնը իւրեան մի այնպիսի ձևի և ոճի մէջ էր կերպարանաւորում, որ բազմութեան համար մեռած տառ էր մնում և հասանելի էր միայն ընտրեալների մի փոքր խումբին։

Իսկ բարձր ուսումնարաններում (համալսարաններում) ուսում առնելը մինչև այժմ արգելված էր կանանց համար։

Քրիստոնէութիւնը ճշմարտութիւն է,—և նա բացարձակ յայտնեց իւր ուսումը մարդին և կնոջ հաւասարապէս։

Գիտութիւնը ճշմարտութիւն է,—բայց նա աշխատեց զարգացնել միայն տղամարդին և արհամարհեց կնոջը։

III.

Ինչքան որ լուսաւորվում է հասարակութիւնը, այնքան աւելի հասանելի է լինում նորան ձգտել դէպի արդարութիւնը։ Ինչքան որ կրթվում է հասարակութիւնը, այնքան նա աշխատում է հաւասարեցնել հասարակական իրաւունքները, որոնցից գլխաւորը լուսաւորվելու իրաւունքն է,

Երբ որ տղամարդիկը կանանց ևս իրաւունք կ'տան լուսաւորութեանը մասնակցելու, և գիտութեան պտուղներից օգուտ քաղել, այն ժա-

մանակ ժողովրդական լուսաւորութիւնը արագ քայլերով առաջ կերթայ,

Երբ մի գաղափարի իրագործելուն մասնակցում են երկու սեռերն եւ, մարդկութիւնը աւելի հեշտ է հասնում այն գաղափարի իրագործելուն։

IV.

Երբ որ մի հասարակութիւնը լուսաւորութեան մեծ աստիճանին չէ հասել, երբ ժողովուրդը տգէտ է,—նա չէ հասկանում ոչ իւր կեանքի պահանջմունքը, ոչ իւր օգուտները։

Կարող ենք ասել թէ մեր հասարակութիւնը չէ հասկանում ոչ իւր պահանջմունքը, ոչ իւր օգուտները, որովհետեւ երբէք չեն տեսել որ նա, օրինակ, գումարներ կազմէր, իւր միջից երիտասարդներին և օրիորդներին ընտրէր և նոցա օտար երկիրներ ուղարկէր ուսում առնելու համար կամ որ կազմած գումարով մի որեւիցէ ազգօգուտ գործ կառավարէր, ուսումնարաններ հիմնէր, կամ որ գրականական գործունէութեան նպաստամատոյց լինէր, գրականական և ուսումնական ստեղծվածները վարձատրելով։

Եւ եթէ մենք ինչ և իցէ հիմնարկութիւններ ունենք, միայն բարերարութիւններին ենք պարտական, և ոչ թէ ժողովրդի ինքնաօգնութեանը հասարակական գործերում։

Երբ ժողովուրդը դեռ լուսաւորված չէ, ժամանակ առ ժամանակ դուրս են գալիս նորա

միջից մարդիկ, որոնք յաջողակ հանգամանքների մէջ լինելով (և շատ անգամ աղքատութիւնն է յաջողակ հանգամանքը, եթէ աղքատը կարողացաւ հասնել գիտութեանը), զգալով ժողովրդի թշուառութիւնը, տեսնելով նորա պահանջմունքը,—նորա կեանքի արտայայտութիւն են դառնում։ Եւ այն զգացմունքը, կամ այն աշխատանքը, որ բաժանված պէտք է լինէր հազարների մէջ, նոքա իւրանց վերայ են առնում։ Այդ տեսակ մարդիկներին հանճարներ են անուանում։

Ամօթ է այն ժողովրդին, որ հանճարներ ունի, որովհետեւ նոքա ապացոյց են ամբոխի անբնական դրութեան, ապացոյց են նորա սաստիկ տգիտութեան, ապացոյց են որ ժողովուրդը դեռ լուսաւորութեան չէ հասել [1]), երբ բարոյական զգացմունքի և գիտութեան բեռը չալակած է մի անհատի ուսերի վերայ։—Բայց դարձեալ հարկաւոր են հանճարներ ժողովրդի համար, երբ որ նա դեռ մտաւոր ստրկութեան, այսինքն տգիտութեան մէջ է։

---

1) Ժողովրդի մէջ հանճարների ներկայ գտնվելը ապացոյց է թէ նա լուսաւորութեանը դեռ չէ հասել, որովհետեւ հանճարը ներկայացնում է աշխատանքի անբաժանման երեւոյթը հասարակութեան մէջ։ Իսկ ժողովուրդը այն ժամանակ լուսաւորված ժողովրդի անուն է կրում, երբ հասկանում է աշխատանքի բաժանման օգուտը և հարկաւորութիւնը։

„Աշխատանքի բաժանման վերայ“ շուտով մի յօդուած եմ ուղարկելու „Հայկ. Աշխ.“ օրագրին։

Հ. Տ.

Ամօթ է այն ժողովրդին, որ հարուստների բարերարութիւններով է ապրում։—Բայց դարձեալ հարկաւոր են հարուստների բարերարութիւնները, երբ ժողովուրդը դեռ չէ հասել իւր կեանքի պահանջմունքի և օգուտների հասկանալուն, երբ իւր հասարակական գործերում նա ինքնաօգնութեանը դեռ չէ հասել։

V.

Երևակայեցէք ձեզ մի հայկական հարուստ ընտանիքի մէջ աղջկան դաստիարակութիւնը։ Նա թեթև հասկացողութիւն է ստանում ամէն բանի վերայ, ոչինչ գործ կամ գիտութիւն հիմնաւորապէս չէ ուսումնասիրում, սովորում է զանազան լեզուներ, որոնց երբէք գործ չէ դընում կեանքի մէջ,—և երբ հասակը առնում է, պսակվում է մի որ և իցէ հայ մարդի հետ, որին չէ ճանաչում։ Եթէ նա ծանօթ ևս եղել էր այն մարդի հետ, նորան դժուար կ'լինէր նորա բնաւորութիւնը ճանաչել, որովհետև նա տգէտ է, իսկ մեզ յայտնի է, որ քիչ թէ շատ զարգացած հարկաւոր է լինել մարդիկներին ճանաչելու համար։ Ուրեմն նորա կեանքի բոլոր նպատակը ինչ է,—պսակվել։

Իսկ մինչև որ նա պսակվի, նա չէ պատրաստվում մօր պաշտօն կատարելու. հիմնաւորապէս զարգացնելով իւր մտաւոր ընդունակութիւնները, գրական գիտութիւնների հետ չէ ծանօթանում, գիմնազիօն, համալսարան, կամ

մանկավարժական ուսումնարան մտնելով..։.. վերջապէս չէ ծանօթանում ոչ կեանքի, ոչ մարդիկների հետ։—Նորա բոլոր գործը և պարապմունքը—բարոյական լինելն է։

VI.

Երբ հարուստ աղջիկը կնոջ ամենամեծ պարտաւորութիւն և արժանաւորութիւն է համարում բարոյական լինել (թէև տգէտ), որ կարողանայ ժամանակով իւր սէրը և կուսութիւնը տալ անբարոյական մարդին,—աղքատ աղջիկը ստիպված լինելով աշխատելու (և մեր ժամանակը աւելի և աւելի պահանջում է աշխատանքը), կարողութիւն չունի այնպիսի մի կրթութիւն ստանալ, որ կարողանայ նորան օգնել իւր ամենօրեայ հացը ազնիւ կերպով ճարելու։ Այս պատճառով նա իւր նպատակ է դնում շուտով պսակվել մի մարդի հետ, որը քիչ թէ շատ կարողութիւն ունի, որ կարողանայ ապրել առանց աշխատանքի։ Բարոյական է միթէ այն կինը, որը ինքն չ'գիտենալով իւր աշխատանքով բաւականութիւն տալ իւր ամենօրեայ պիտոյքին, շտապում է մարդի գնալ, որ կարողանայ առանց աշխատանքի ապրել։ Բարոյական է միթէ այն կինը, որ տգէտ լինելով, չէ կարող ոչ իւր մարդի բարոյականութեան վերայ ազդել, ոչ օրինաւոր կերպով դաստիարակել իւր երեխաները։

Հարուստ աղջիկները կարողութիւն ևս ունենալով ուսում առնել և կրթվել, իւրեանց միակ պարտաւորութիւն են համարում բարոյական լինել, և չեն հասկանում մի ուրիշ հասարակական պարտաւորութիւն, այն է իւրեանց ազատ ժամանակը և դրամական միջոցները գործ դնել օրինաւոր կերպով գիտութիւններ ուսումնասիրելու, համալսարաններ և մանկավարժական ուսումնարաններ մտնելու, ժամանակով ստացած գիտութիւնը ժողովրդի մէջ տարածելու համար, իւրեանց աղքատ, անբարոյական և ագէտ հայրենակից քոյրերին օգնելու, մանկավարժական ուսումնարաններ հիմնելով, և այդ ուսումնարանները կառավարելով։

Նոքա պարծենում են իւրեանց բարոյականութեամբ.... իսկ աղքատ աղջիկը թող իրաւունք չունենայ բարոյական լինել։

Մինչև այժմ բարոյականութիւնը հարուստ կանանց արտօնութիւնն է....։

VII.

Կինը ստեղծված է մայր լինելու, ուրեմն և դաստիարակչի պաշտօնը կատարելու ընտանիքի մէջ։ Այս պատճառով կարելի է ընդունել որ կանայք մարդիկներից գերագոյն ժողովրդական դաստիարակիչներ կարող են լինել։

Բայց ագէտ կինը ժողովրդական դաստիարակութեանը ոչինչ օգուտ չէ կարող բերել։

Մինչև որ կինը չ՚մասնակցէ կրթութեան

գործին,—ժողովուրդը ագէտ կ՚մնայ և առաջադիմութեան գործը յաջողելու չէ։

Բայց աւելորդ է այսքան խօսել.... Աւելորդ է աւելի բացատրել մտքերը,—որովհետև հայերէն գրած յօդուածները բացի օրագրի խմբագրութիւնից ոչոքից չեն կարդվում։

Թէև հայկական կանանց են վերաբերում այս տողերը, ես հաւաստի եմ, որ ոչ մի հայ կինը երբէք չի կարդայ այս գրվածը.... որովհետև հայկական կինը հայերէն կարդալ չէ իմանում։

„Հայկ. Աշխ.“, 1869, № 6—8.
Հէիդլբէրգ.

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԻՐԱԽԱԲԱՆՆԵՐԻ ԺՈՂՈՎ։

I.

Երեք օր շարունակ տօնում էր Հէյդլբէրգը գերմանացի իրաւաբանների ներկայութիւնը, երեք օր շարունակ զարդարված էին փողոցները դրօշակներով, լսվում էր երաժշտութիւնը, ճառեր կարդվում և ի պատիւ զանազան գաղափարների և գիտութեան մէջ երևելի անձների թասեր առաջարկվում։ Ի պատիւ իրաւաբանների Հին Պֆալցի իշխանների ամրոցի հիանալի աւերակները գիշերով լուսաւորվեցան....

Գերմանացի իրաւաբանները հաւաքվեցան Հէյդլբէրգ (նոցա մէջ քանի մի օտարներ ևս կային) իրաւաբանական զանազան հարցեր վճռելու համար և — ազատ ժամանակը, հեռու իրեանց ամենօրեայ պարապմունքից, ուրախութեան մէջ անցկացնելու համար։

Ով որ քիչ թէ շատ ծանօթ է իրաւաբանական գիտութեանը, կ՚զարմանար հանդիպելով այդ ժամանակին միևնոյն քաղաքում իրաւաբանների ամենաերևելի անունները։ Վէխտը, Բլունչլի։ Վանգէրով, Գնէյստ, Ժօլի.... և հա-

րիւր ուրիշները, որոնցով պարծենում է Գերմանիան։

Ոչ ժամանակ ունեմ, ոչ տեղ, ոչ գիտութիւն այնքան, որ կարողանայի ամէն մէկի վերայ առանձնապէս խօսել և գիտութեան մէջ այս մարդիկների նշանակութեան վերայ երկարացնել խօսքս։ Մեզ աւելի դիւրահաս է ըմբռնել ժողովի մէջ քննված քանի մի հարցերի բովանդակութիւնը։

Հարցեր շատ կային, քաղաքական ամուսնութիւն, մահի պատիժ, ընկերութիւններ հիմնելու իրաւունք և այլն։....

Ես միջոց ունեցայ ներկայ գտնվել այն նիստին, որտեղ վիճում էին մահի պատիժի մասին։ Ժողովը վճռեց մշակել գիտնական կերպով այս հարցը և մի և նոյն ժամանակ տարածել Գերմանիայում մահի պատժի էութեան մասին պարզ հայեացքներ ժողովրդի մէջ, ազդել ժողովրդի վերայ, նորա մահի պատժի որպէս վնասակար գաղափարի բոլոր անիրաւութիւնը հասկացնել տալու նպատակով։ Թէև Պրագայից (Բօհէմիայի մայրաքաղաք) մի պարոնը դօկտօր Գլատտաուէր նկատեց թէ ժողովը չպիտի սահմանափակէր իւր գործը այն վնասակար գաղափարի դէմ միայն Գերմանիայի սահմաններում ներգործելով, այլ նորա կարծիքով պէտք է տարածէր իւր գործունէութիւնը և Աւստրիայի սլաւօնական երկրների վերայ և Մաճարստանի (Ունգարիայի) վերայ,—բայց նորա առաջարկութիւնը չընդունեց ժողովը, խոստովանելով իւր

թուլութիւնը այնպիսի մեծ տարածութեան վերայ ընդարձակել իւր գործունէութիւնը։

II.

Ի՞նչ է մահի պատիժը։

Հետևենք մահի պատժի պատմագրական ընթացքին։ Ներկայացրէք ձեզ երկու վայրենի ցեղերի մէջ պատերազմի հետևանքները։ Երբ ցեղերից մէկը միւսին յաղթեց, նա թշնամի ցեղի գերիներին սպանում է (կամ գուցէ մինչև անգամ ուտում է)։ Այդ ամեն հասարակութեան սկզբնական դրութիւն է։

Արդարև մահից աւելի հեշտ միջոց կայ ազատուել այն մարդիկներից, որոնց դուք ձեր թշնամիներ էք համարում։ Երբ վայրենի ցեղը քիչ թէ շատ զարգանում է տնտեսական կողմից, նա այլ ևս չէ սպանում գերիներին, ինչպէս առաջ, երբ գերին, ոչինչ օգուտ չբերելով ցեղին, պէտք է կերակրված լինէր և յաղթող ցեղի աղքատ միջոցներով ապրէր, ուրեմն նորա համար բեռը լինէր,—երբ ցեղը զարգանում է տնտեսական կողմից, նա այլ ևս չէ սպանում իւր գերութեան մէջ ընկածներին, որովհետև միջոցներ ունի նորան պահելու և կերակրելու, և հարկաւորութիւն ունի զանազան աշխատանքներ կատարելու, ուստի գերիներին ստրկացնում է և ոչ սպանում։ Այսպիսի վարմունքը աւելի մարդասէր է և սա առաջին քայլ է դէպի հաստատաբնակ կեանքը, դէպի

երկրագործութիւնը, կամ գոնէ դէպի անասնապահութիւնը։

Սորա նման ընթացքին հետևում է հասարակութիւնը և յանցաւորների պատժի վերաբերմամբ։ Առաջին զգացմունքը, որ ծնվում է հասարակութեան մէջ, երբ նա որևիցէ յանցաւորից որպէս վնասակար մարդից ազատուել է կամենում, նորան մահի միջոցով, որպէս ամենահեշտ միջոցով, իւր միջից հեռացնելն է։

Երկրորդ քայլ է, երբ հասարակութիւնը պարապող, մշակ մարդիկների հարկաւորութիւն ունենալով,—յանցաւորին հեռացնում է հասարակութիւնից, նորան ծանր աշխատանքներով պարապեցնելով բոլոր կեանքը։

Բայց շուտով հասարակութիւնը նկատում է թէ մարդը թէև ազատ կամք ունի բարին կամ չարը գործելու, բայց դարձեալ շատ անգամ գտնվում է հասարակական հանգամանքների ազդեցութեան տակ, և նորա յանցանքը շատ անգամ հետևանք է կամ նորա նիւթական վատ դրութեան կամ մտաւորական տգիտութեան։ Բացի սորանից, հասարակութիւնը նկատում է թէ յանցանքների թիւը գրեթէ միևնոյն է մնում ամեն տարի.... Ուրեմն հասարակութիւնը ճանաչում է թէ յանցանքը, նորա էութիւնը, նորա ձևը, նորա թիւը ոչ թէ միայն մարդի ազատ կամքից է կախված, այլ և շատ անգամ հասարակական հանգամանքներից, մարդի նիւթական և բարոյական դրութիւնից, ժողովրդի

ազդեցութիւնից անհատի վերայ, և վերջապէս հասարակութեան օրէնքներից։

Այս ամենը հասկանալով, հասարակութիւնը ձգտում է բարուօքել իւր անդամների դրութիւնը, թէ նիւթական, թէ մտաւորական կողմից, աշխատում է վերացնել զանազան անիրաւութիւնները օրէնքների միջից, որոնց անկատարելագործութիւնը շատ անգամ յանցանքի սկիզբ և պատճառ է լինում, ձգտում է բարուօքել անհատների դրութիւնը, նորոգելով աշխատանքի դրութիւնը և տարածելով լուսաւորութիւնը ժողովրդի մէջ։

Միևնոյն ժամանակ հասարակութիւնը յանցաւորների հետ ևս ուրիշ կերպով է վարվում. նա ոչ սպանում է, ոչ ստրկացնում է նորան, ոչ ևս տառապեցնում է ծանր, սպանիչ աշխատանքներով,—այլ հիմնում է առանձին բերդեր, որտեղ յանցաւորին ժամանակով է միայն նստեցնում, նորա հետ մարդաէր կերպով է վարվում, աշխատում է նորա բնաւորութիւնը բարուօքել, դաստիարակելով նորան և պարապեցնելով որևիցէ նորա բնաւորութեան յարմարեցրած արդիւնաւոր արհեստով, որի օգնութեամբ նա ազատ դառնալով կարող է իւր համար հաց ճարել։.....

Թոյլ տուէք, պ. խմբագիր, այս կարճ խօսքս, որ գրել տուեց իրաւաբանների տօնը Հէյդլբէրգում, այստեղ աւարտել մի մտածմամբ. որքան զարգանում է, կրթվում է հա-

սարակութիւնը, այնքան նա աւելի բարձր է դասում, աւելի գնահատում է մարդին, և մարդի անձնաւորութիւնը..... Այս նախադասութեան մէջ, իմ կարծիքով, պարունակվում է հասարակական գիտութեան բոլոր ձգտողութիւնը։

„Հայկ. Աշխ.“, 1869, № 9.
Հէյդլբէրգ.

ՆԱՄԱԿ ԴԷՊԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Հայկական Աշխարհի» 4 և 5 №№-ում, «Մեր ներքին գործերի» մէջ խօսելով Թիֆլիսի հայկական թատրոնի թշուառ դրութեան վերայ, պ. Հայասէրը աւելացրել է. «պ. Արծրունու կամ անաչառապէս մտածող հայից կ՚սպասեմ— ինչ կասեն այս իմ խօսքիս մասին»։ Պ. Հայասէրի խօսքերի մէջ երկու միտք կայ,—չ՚գիտեմ որին պատասխան տամ։ Կ՚փորձեմ երկուսի վերայ ևս իմ կարծիքս յայտնել։ Պ. Հայասէրը գանգատում է թէ. «չէ կարելի հայկական թատրոն որպէս դիտող, քննող, գրող, որովհետև գրողի անկեղծ խօսքերին ուշք չեն կամենում դարձնել»։

Իմ միտքս այն է, որ եթէ ուշք չեն դարձնում մեր խօսքերին, դա չէ նշանակում, որ չը պէտք է շարունակենք քննել, խօսել և գրել, թող ուշք չ՚դարձնեն, մենք դարձեալ կ՚շարունակենք գրել, խօսել և քննադատել.... ով գիտէ, կարելի է ժամանակով ուշք կ՚դարձնեն։

Երկրորդ միտքը սա էր. «.... հոգեմաշ եմ լինում ասելով, որ Թիֆլիսում հայկական թատ-

րոն չ՚կայ. տարին երկու երեք մասնաւոր ներկայացմունքերին չէ կարելի ազգային թատրոնի անուն տալ»։

Չ՚գիտեմ ինչի՞ է չարչարվում այսպէս պ. Հայասէրը թատրոնի մասին.—կարծեմ որ ազգային թատրոնի անբնական դրութիւնը բացառութիւն չէ հայերի ազգային հիմնարկութիւնների թւում։

Ազգային թատրոն չ՚կայ.... բայց կա՞ն միթէ ազգային ուսումնարաններ, կա՞յ ազգային գրականութիւն, կա՞ն ազգային ծրագիրներ։

Տարին երկու ներկայացմունքը ազգային թատրոն չէ կարելի անուանել,—այս ճշմարիտ է։ Բայց միթէ ազգի մէջ երկու երեք ուսումնարանը ազգային կրթութիւն են ներկայացնում։ Միթէ օրագիրը որ երկու կամ երեք ամիսը մի անգամ է երևում, կարելի է ազգային օրագրականութիւն անուանել։ Միթէ ժողովրդի վերայ մի որևիցէ ազդեցութիւն կարելի է ունենալ օրագրի միջոցով, երբ որ օրագրի տետրակները կանոնաւոր կերպով ամսէ ամիս անգամ չեն կարող հրատարակվել։

Ցաւալի է ասել, բայց այս ճշմարտութիւն է, որ ժողովուրդը միշտ և ամեն տեղ երեխայ է։ Եթէ դուք նորան յաճախ չէք կրկնի միևնոյն մտքերը, եթէ դուք նորան ամեն օր ազգային լեզուով գրած թերթը չէք առաջարկի,—նա մտածել կ՚դադարէ, նա կ՚մոռանայ իւր ազգային լեզուն։ Ցաւալի է ասել, որ քնած մի ժողովրդի

մէջ մասնաւոր մարդիկներից է կախված դրդուել և ծնել պահանջմունքը։

Ժողովուրդը այնքան տգէտ և մտաւորապէս ստրկացած է, որ ինքն չէ հասկանում իւր պահանջմունքը։ Աղքատ թէև ուսեալ մարդիկներին թէև դժուար է մի որևիցէ գործ սկսել, որովհետև նոցա պակաս են դրամական միջոցները, իսկ ժողովուրդը նոցա գործունէութեանը չէ համակրում, և չէ կարող ևս օգնել, որովհետև պահանջմունք չունի ազատվել խաւարից, նախապաշարմունքից, տգիտութիւնից...։ Նա բաւական է իւր մտաւոր ստրկութեամբ, նա բաւական է իւր տգիտութեամբ...., կամ աւելի լաւ ասեմ, նա անզգայ է։

Իսկ հարուստները։....

Ուստի ոչ դերասանական խումբը պէտք է մեղադրենք, որ ազգային թատրոն չկայ, ոչ խմբագրութիւնը պէտք է մեղադրենք, որ օրագիր չկայ, ոչ ուսուցիչներ պէտք է մեղադրենք, որ ազգային կրթութիւն չկայ, ոչ ևս ժողովուրդը պէտք է մեղադրենք, որ եռանդ, հոգս չկայ։

„Հայկ. Աշխ.“, 1869, № 9.
Հէյդլբէրգ.

ԽԱՌՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐ ՀԷՅԴԼԲԷՐԳՈՒՄ

—

Վաղուց է արդէն, որ բոլոր Բադէնի քաղաքներում մասնաժողովներ կազմուեցան խառն ուսումնարանների խնդիրը քննելու նպատակով և հնար պտռելու իրագործել այս տեսակ ժողովրդական ուսումնարանները այս երկրում։ Հէյդլբէրգի մէջ ևս կազմվեցաւ զանազան դաւանութիւններին պատկանող քաղաքացիներից այս տեսակ մի մասնաժողով, որի նպատակ էր տարածել խառն ուսումնարանի գաղափարը ժողովրդի մէջ և պատրաստել հասարակական կարծիքը այս գաղափարի իրագործելուն ձեռնտու լինել։

Այսքան աշխատանք անշուշտ հարկաւոր էր որ գործը գլուխ գար, որովհետև Բադէնի մէջ ուսումնարանների այս տեսակ նորաձևութիւնը կախված չէ իշխանի հրամանից, այլ ժողովրդի կամքից. ժողովուրդը պէտք է քուէ գցելով այս խնդիրը վճռէր։

Ձայն տուողները այս խնդրում պսակված կամ գերդաստան ունեցող քաղաքացիներ են։

Քաղաքացիներից, հասարակութենից կախված են այստեղ սկզբնական, ժողովրդական ուսումնարանները և ոչ թէ տէրութենից։

Խնդիրը մեծ նշանակութիւն ունի Գերմանիայի համար, որովհետև Գերմանիայի բոլոր մասերը ձգտում են այժմ միանալ և ուրեմն ցանկալի է գերմանացիներին, որ զանազան դաւանութեան տարբեր դասի քաղաքացիները երեխայութենից սկսած միասին դաստիարակվեն, սովորեն սիրել միմեանց, պատւել ուրիշի հաւատը։

Գերմանացիներ համկացան, թէ խառն, երկսեռեան սկզբնական ուսումնարանը ամենահզօր միջոց է հեռացնել ժողովրդից զանազան նախապաշարմունք, հեռացնել նորանից մոլեռանդութիւն և սովորեցնել նորան տանողութիւն։

Հէյդլբէրգի քաղաքացիները երեք դաւանութիւնների են բաժանվում.—բողոքականներ, կաթօլիկներ և հրէաներ։ Բողոքականները և հրէաները վաղուց համաձայն էին խառն ուսումնարանների հիմնվելուն, բայց կաթօլիկ բնակիչների մէջ կար մի զօրեղ յետադէմ կուսակցութիւն։

Առաջ ամէն մի դաւանութիւնը իւր սեփական ժողովրդական ուսումնարաններ ունէր և կաթօլիկներին հաճելի էր այսպիսի կարգադրութիւն, որովհետև այդ ճանապարհով հեշտ էր կաթօլիկ կղերին իւր նպատակին հասնել, այսինքն երկու սեռի երեխաներին գրգռել դէպ անհամբերութիւնը, նոցա մէջ մտցնել մո-

լեռանդութեան ոգի ուրիշ հաւատների դէմ, այսպէս ժողովրդի մէջ երկպառակութիւն պահպանել և միևնոյն ժամանակ... շատ փող դադել ուսումնարաններից։

Կաթօլիկները ամեն տեսակ գրվածներով աշխատում էին քաղաքացիներ համոզել խառն ուսումնարանների դէմ քուէ գցել, մեկնելով նոցա խառն ուսումնութեան վտանգը և անբարոյականութիւնը։

Բողոքականները արդէն ձայն տուեցին խառն ուսումնարանների համար։ Կաթօլիկների քուէարկութեան նախընթաց օրը կաթօլիկ վանքի մէջ հաւաքվեցաւ այս դաւանութեան պատկանող ժողովը։ Յետադէմ ճառերը չյաջողվեցան, իսկ ընդհակառակն, ազատամիտ կաթօլիկների ճառերը (որքա ևս բաղդաւորապէս գտնվեցան ժողովի մէջ) մեծ տպաւորութիւն արին ստորին ժողովրդի վերայ, և ծափահարութիւններով ընդունվեցան։ Ազատամիտ կաթօլիկների ճառերի մէջ մանաւանդ բժիշկ պրոֆէսոր Ֆրիդրէյխի և փաստաբան Միտէրմայէրի ճառերը հաւանեց ժողովը։

Այն միջոցին ժողովուրդը գիտենալով թէ վանքի և ուսումնարանի մէջ կաթօլիկների ժողով կայ, հաւաքվեցաւ դուրսը, վանքի չորս կողմը և կանչում և չչվացնում էր։ Մինչև անգամ քանի մի քարեր գցեցին և ապակիներ կոտրեցին։

Միւս օրվան լրագրում գրած էր, թէ երբ որ քանի մի ապակիներ կոտրվեցան, յետադէմ

կաթօլիկ կուսակցութեան մի անդամ (կարծեմ կաթօլիկների քահանայ) վերկացաւ տեղից ժողովին ասելով. «Տեսէք որքան կարօտ է դաստիարակութեան այս ժողովուրդը».—Այո, պատասխանեց նորան առաջադէմ կաթօլիկ կուսակցութեան մի անդամ, դուք էք զրկել այս ժողովուրդը ձեր դարևոր անօրէնութիւններով։

Երբ ժողովից դուրս եկան ազատամիտ կաթօլիկ կուսակցութեան անդամները, նոցա ծափահարութիւններով և կեցցէներով ընդունեց ժողովուրդը, իսկ յետադէմ կուսակցութեան անդամները ստիպված էին յետին մուտքով անցնել։

Միւս օրը կաթօլիկների մեծ մասը խառն ուսումնարանների համար ձայն տուեցին։ Միևնոյն գիշերը քաղաքի ժողովուրդը մօտ 1,500 թւով վառած ջահերով և մուզիքով պ.պ. Միտէրմարէրին և Ֆրիդրէյխին պատւահանդէս կատարեցին։ Պ. Ֆրիդրէյխը պատշգամբից (բալկօնից) ճառ կարդաց, և չատի հետ այս խօսքեր և ասաց. «Ոչ թէ ինձ, կամ ուրիշին, ոչ թէ առանձին մարդին պէտք է շնորհակալութիւն անել, որովհետև եթէ մեր գործը յաջողուեցաւ և մենք յաղթեցինք յետադէմ կուսակցութիւնը,—մենք այս մեր յաղթութիւնը պարտական ենք այն զգացմունքին, որը ձեր ամեն մէկի սրտի մէջ կենդանի է, մենք պարտական ենք առաջադիմութեան ոգուն։ Կեցցէ ուրեմն առաջադիմութեան ոգին»։

Երրորդ օրը հրէաները համամիտ քուէ գցե-

ցին և ոչ մի ձայն չ'գտնվեցաւ նոցա մէջ խառն ուսումնարանների դէմ։

Ամբողջ օր երաժշտութիւն էր լսվում քաղաքում և թնդանօթ էին գցում։ Ամեն դաւանութիւններին պատկանող քաղաքացիները, կաթօլիկ, հրէայ և բողոքական, ձեռը ձեռի տուած երաժշտութեամբ և դրօշակներով, որոնց մէկի վերայ գրած էր. «միաձայն» խօսքը, մեծ հանդէսով անցան փողոցներում։ Միևնոյն գիշերը բոլոր ժողովրդական ուսումնարանների անթիւ երեխաները, աղջիկներ և տղաներ, դրօշակներ ձեռին բռնած, երաժշտութեամբ անցան քաղաքի նշանաւոր փողոցներում բարձր կեցցէներ կանչելով։

„Հայկական Աշխարհ",
1869, № 10—12.

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

—

Փարիզը մի աշխարհ է։ Փարիզում երկու միլիոն բնակիչ կայ։

Ինչպէս ամէն մեծ կենտրոններում, Փարիզում ամէն բան կ'գտնէք, խորին աղքատութիւն և մեծ հարստութիւններ, յանցանքներ և ազնիւ մտքեր, անբարոյականութիւն և գիտութեան ամենաբարձր գաղափարներ.... Ամէն տեսակ լեզու, ամէն ազգութիւնների ներկայացուցիչներին կ'պատահէք այստեղ։ Փարիզը համազգային քաղաք է, Փարիզը հակասութիւնների աշխարհ է։

Ինչ նկարագրեմ ձեզ, թանգարաններ թէ, օրագիրներ, դասախօսութիւններ թէ հիւրանոցներ, թատրոններ թէ խանութներ, յայտարարութիւններ թէ պատմական շինութիւններ և արձաններ.... անցեալը թէ ներկայ, քաղաքը թէ քաղաքի բնակիչներ, փողոցների կեանքը թէ քաղաքական հասարակական կեանքը.... Մի բան պէտք է նկարագրեմ, որովհետև ամէն բան չեմ կարող նկարագրել։

Պէտք է երկու երեք տարի մնալ Փարիզում,

ամէն բան փոքր առ փոքր նկարագրելու համար։ Փարիզում երեք չորս շաբաթ անցկացնողը պէտք է բաւականանայ այս քաղաքի մի որ և իցէ նշանաւոր յատկութիւնը, մի որ և իցէ կողմը նկարագրելով։

Ճանապարհորդներից ոմանց հարցասիրութիւնը շարժում են արձաններ և շինութիւններ, ուրիշներին—ժողովրդական կեանքը....։

Ես ասացի թէ Փարիզը մի աշխարհ է. հակասութիւնների, ծայրայեղ ուղղութիւնների աշխարհ է։ Աշխատանքի, պարապմունքի և հասարակական պաշտօնների բաժանումն այն աստիճանին հասցրած է, որ անհատներից ամէն մէկը չափազանց միակողմանի զարգացած է երևում։ Նա երևում է միակողմանի, սահմանափակված, և իւր բոլոր գործերում գլխաւորապէս եսութեան ընթացքին հետևող անձը։

Ըստ երևոյթին այսպիսի անձը չէ կարող ընդհանուր օգտի մասին հոգալ.... այսպիսի աննախանձելի յատկութիւնները տեսնելով, մարդը չէ կարող երևակայել թէ այս ահագին քաղաքի բնակիչները կարող են ընդհանուր գործին ծառայել....։

Բայց այսպիսի եզրակացութիւններ անողը, իմ կարծիքով, սաստիկ կ'սխալվի։

Փարիզեցու յատկանիշ բնաւորութիւնը այս եսութիւնն է, բայց այնու ամենայնիւ նա ոչ թէ միայն հոգում է ընդհանուր գործի մասին, բայց և ժամանակ առ ժամանակ երկու միլիոն բնակիչներից բաղկացած քաղաքը մի մտքով

զբաղված է լինում, մի գաղափարին է հետեւում, մի նպատակին է ձգտում, մի ոգով է ոգևորված.... այսպիսի րոպէներում Փարիզը յեղափոխութիւններ է անում, կամ գոնէ մեծ փոփոխութիւններ։

Ամեն մի անհատի բնաւորութիւնը անկախ և ուրիշներից տարբեր է լինում, առաջին տըպաւորութեանը հետեւելով մարդը չէ կարող երեւակայել, որ այս միակողմանի, տարբեր, մէկ մէկից անկախ, ծայրայեղ բնաւորութիւնների մէջ հասարակաց յատկութիւններ և ընդհանուր ոգի կան... բայց խրողութիւնները մեզ ցոյց են տալիս, թէ կան Փարիզի բնակիչների մէջ հասարակաց յատկութիւններ, կայ ընդհանուր ոգի, և այս ոգին ժամանակով փոխվում է, առաջադիմութիւն է անում։

Քանի մի տարի առաջ ֆրանսիացին յայտնի էր իբրև կոյր ազգասիրութեան զգացմունքին հնազանդող անձը։ Այսպիսի կոյր ազգասիրութիւնը ֆրանսերէն շօվինիզմ է անուանվում։

Ֆրանսիացին իւր կրթութիւնը, իւր կեանքը, իւր պատմութիւնը ուրիշ ազգերի կրթութենից, կեանքից և պատմութենից վեր էր դասում. իւր կեանքի երեւոյթների մէջ նա պակասութիւններ չէր տեսնում, իւր պատմական անցքերի, մանաւանդ յեղափոխութիւնների վերայ նայում էր որպէս բոլոր մարդկութիւն վերածնող երեւոյթների վերայ։ Իւր գիտութիւնը իբր բոլոր ուրիշ ազգերի գիտութեան սկիզբ էր։ Նա արհամարհում էր օտար լեզու-

ների ուսումնասիրութիւնը.... Նա իւր ազգութիւնը բոլոր ուրիշ Եւրոպայի ազգութիւնների ուսուցիչ էր համարում։

Ֆրանսիայի գլուխը դարձել Փարիզն էր. այստեղ էր կենդրոնաւորված Ֆրանսիայի բոլոր մտաւոր, հոգևոր, քաղաքական և հասարակական զօրութիւնը։

Ֆրանսիացին պաշտում էր ինքն իրան, պաշտում էր իւր անցեալը և ներկան.... ֆրանսիացին դասեր էր տալիս ուրիշ ազգերին, իսկ ինքն տուածների փոխարէնը դաս չէր առնում։

Այս ուղղութիւնը հակառակ էր ժամանակակից ոգուն, հակառակ էր տնտեսական օրէնքին։ Ինչպէս ազգերի նիւթական կեանքում, այնպէս և նոցա մտաւոր, հոգևոր կեանքում փ ո խ ա դ ա ր ձ ո ւ թ ի ւ ն պէտք է լինի։

Այժմեան ժամանակում պէտք է մի ազգ կամ փոխադարձութեան սկիզբը ընդունէ, կամ պէտք է մեռնէ և չանուանէ իւրան ազգ։

Ֆրանսիական ազգն էլ չկարողացաւ յետ մնալ առաջադիմութեան ընդհանուր ընթացքից. նա սկսում է ուսումնասիրել օտար ազգերի կեանքը և լեզու, սկսում է հաշտվել փոխադարձութեան տնտեսական գաղափարի հետ, սկսում է հասկանալ իւր պակասութիւնները, քննադատել իւր անցեալը և ներկայ։

Եւ այս է Փարիզի ժամանակակից ոգին։ Ժամանակակից փարիզեցին ոչ թէ միայն ծաղր է անում, բայց և լրջութեամբ քննադատում է, իւր ազգային կեանքի երեւոյթները. քննադա-

տում է իւր հայրենիքի օրէնքները, հայրենակիցների թեթև բնաւորութիւնը, և բողոքում է իւր անցեալի դէմ, բողոքում է իւր պատմութեան ամենանշանաւոր երևոյթի դէմ, այսինքն մեծ յեղափոխութեան (րէվօլիւսիօնի) և նորանից հաստատած օրէնքների դէմ։

Թէ ձեր ծանօթների խօսքին լսէք, թէ հիւրանոցների մէջ լսած խօսակցութիւններին ուշք դարձնէք, թէ մի քաղաքական օրագիր առնէք, թէ քաղաքական նիւթի վերայ գիրք կարդաք, —ամեն տեղ միևնոյն ուղղութեան կ՚պատահէք, միևնոյն միտք կ՚գտնէք։ Փարիզեցին բողոքում է հին ուղղութեան դէմ, նա հերքում է արիւնահեղ յեղափոխութիւնների օգուտը, նա պահանջում է մի նոր, հաստատ, գիտութեան վերայ հիմնված քաղաքական զարգացումը, նա պահանջում է վերանորոգութիւններ և ոչ թէ յեղափոխութիւններ։

Վաղուց է արդէն Պրուդօնը իւր մի գրքի ճակատում այս խօսքերը գրել է. «Յեղափոխութիւններ,—ոչ երբէք, վերանորոգութիւններ, —միշտ (Դէ րէվօլիւսիօն-ժամէ, դէ րէֆօրմ-տուժուռ)։

Վաղուց է, որ աքսորված Էդգար Կինէն հրատարակել է իւր «Րէվօլիւսիօն» (յեղափոխութիւն) անունով գիրքը, որտեղ նա յայտնում է, թէ Ֆրանսիայի պատմութիւնը միայն մեծ յեղափոխութենից է սկսվում և պատմութեան այս նոր շրջան եւ նա խստութեամբ քննադատում է։ Մանաւանդ ֆրանսիացու բնա-

ւորութեան մի նշանաւոր պակասութեան վերայ մեր ուշքը դարձնում է, այն է որ ֆրանսիացին անհամբեր է դէպի ուրիշները, ֆրանսիական քաղաքական և հասարակական զանազան կուսակցութիւնները երբէք չ՚կարողացան համաձայնութեամբ գործել, չ՚կարողացան հասկանալ, որ համանման ուղղութիւն եւ չունենալով, նոքա պէտք է հաւասարապէս մասնակցեն հասարակաց գործին։ Ընդհակառակն կուսակցութիւններից ամէն մեկը աշխատում էր միւսներին տիրել։

Կինէի գիրքը իւր հրատարակման տարին անբաւականութիւններ յարոյց։—Իսկ այժմ ֆրանսիացիներ իւրանք անբաւական են իւրանց ուղղութենից.... Ֆրանսիան առաջադիմութիւն է պահանջում, և ոչ թէ յեղափոխութիւններ։

Ամեն կողմից լսում էք թէ «Գերմանիայում, և ոչ Ֆրանսիայում պիտի վճռվի հասարակական հարցը.... Գերմանական ընտանեկան կեանքից օրինակ առնելով կ՚նորոգվի մեր ընկած անբարոյական ընտանեկան կեանքը...»։

Կամ այսպիսի խօսքեր. Մենք ֆրանսիացիներս թեթև, առերես կերպով ենք վարվում առհասարակ գիտնական ճշմարտութիւնների հետ. մենք գերմանական ցեղերի պէս խոր և ծանր ուղղութիւն չունենք.... հասարակական, քաղաքա-տնտեսական գիտութիւնը պիտի նոր, հաստատ ուղղութիւն ստանայ գերմանական ցեղերի մէջ, մանաւանդ անգլիացիներից և ա-

մերիկացիներից պիտի մշակվի այս գիտութիւնը....»։

Առաջ ֆրանսիացին պաշտում էր անցեալը, պարծենում էր ներկայով և հաւատում էր ապագային։ Այժմ նա բողոքում է անցեալի դէմ, քննադատում է ներկայ, և հազիւ հաւատում է ապագային։

Սա նշանաւոր առաջադիմութիւն է։

„Հայկ. Աշխ.“, 1869, № 10.

ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

—

Փարիզի բնակիչները զբաղված էին այս օրերս օրէնսդիր պալատի պատգամաւորների ընտրութեամբ։ Զօրս պատգամաւոր պիտի ընտրէին։ Բայց այն գիշերը, երբ պիտի յայտնվէր ընտրութեան հետևանքը, փողոցներում յետագայ հարցեր և պատասխաններ էին լսվում։ «Ընտրվեցաւ նա թէ ոչ»։—Այո, ընտրվեցաւ։ «Նա քանի ձայն առացաւ։»—Նա առացաւ 18,000 ձայն։

Նա նշանակում էր պ. Ռօշֆորը։

Ի՞նչ է պատճառը որ պ. Ռօշֆորը այսքան շարժեց փարիզեցիների հետաքրքրութիւնը։

Ռօշֆորը ոչ նշանաւոր կամ ծանր հեղինակ է, ոչ ևս քաղաքական գիտութեանը հմուտ անձ մի—ինչ է պատճառը որ նա այսպիսի մի ժողովրդականութիւն առացաւ Ֆրանսիայում։

Ռօշֆորը շատ հասարակ մարդ է, և իւր գրվածների մէջ ոչ նոր մի սկիզբ է յայտնել, ոչ ևս նոր մտքեր, բայց հասկանալով թէ Ֆրանսիան դադրել է այժմեան տէրութեան ձևից, զզվել է հասարակական անբարոյականութենից, — նա հասարակութեան պահանջմունքի, այսինքն

անբաւականութեան արտայայտութիւն է դարձել և ներկայացնում է այժմ հասարակական խղճմտանքի զարթումն։ Նա իւր գրուածների մէջ այն էր ասում, թէ ինչ որ ամենքը վաղուց զգում էին, բայց ոչ ոք չէր համարձակում յայտնել։ Այս է պատճառը, որ նշանաւոր մարդ ևս չ'լինելով, նա կարողացաւ յաջողութեամբ կռուել տէրութեան հետ։

Ռօշֆորը, ինչպէս քաղաքական անձնաւորութիւն, մի բացառութիւն և նորութիւն չէ պատմութեան մէջ։ Տասն և ութերորդ դարում Անգլիան ունէր արդէն իւր Ռօշֆորը,—պ. Ջօն Ուիլկս։ Նա Ռօշֆորի պէս մի պարսաւագրող էր, նորա օրագրի նման մի օրագիր էր հրատարակում, որը «Նօրթ Բրէյտօն» էր անուանւում և որի մէջ նա ոչ ոք չէր խնայում, ոչ հասարակութիւնը, ոչ տէրութիւնը և ոչ ևս Անգլիայի թագաւոր Գէորգ 3-ի անձը, նորա նման ևս տէրութեանը անհաճելի եղաւ, Ռօշֆորի պէս բիրդ դատապարտվեցաւ, Անգլիայից աքսորանք գնաց, փորձեց Լօնդօնի ընտրողութեանը ներկայանալ, բայց (Ռօշֆորի նման) առաջին անգամ չընտրվեցաւ, փախաւ Ֆրանսիա (ինչպէս Ռօշֆորը Բէլգիա), յետոյ ընտրողութիւններին երկրորդ անգամ ներկայացաւ։—Դատաստանը ստիպված էր նորան արդարացնել որպէս ժողովրդի ընտրված։

Ռօշֆորը, կարելի է, ինչպէս պատգամաւոր աննշան կ'լինի օրէնսդիր պալատի մէջ, բայց այնու ամենայնիւ նորա ընտրութիւնը նշանա-

ւոր է ինչպէս ապացոյց Ֆրանսիայի անբաւականութեանը տէրութեան դէմ, ապացոյց հասարակական խղճմտանքի զարթմանը։

Նշանաւոր է չատ Ֆրանսիայի հասարակական խղճմտանքի զարթումը.... բաւական է տէրութիւնը մեղադրել թէ նա հասարակութեան խոր անբարոյականութեան պատճառն է, բաւական է գանգատել։ Վերջապէս Ֆրանսիան սկսում է հասկանալ, որ հասարակութիւնը ինքն է մեղաւոր,—որ հասարակական բարոյականութեան անկումն պատճառ է քաղաքական կեանքի անկման։

Ասում են, որ Նապօլէօնի կառավարութիւնը ամեն տեսակ միջոցներով թոյլատրեց անբարոյականութեան տարածումն։ Շատ կարելի է։ Ի հարկէ Ֆրանսիայի տէրութեանը կարող է օգտաւէտ լինել անբարոյականութեան տարածումն, որովհետև անբարոյական կեանքով յափշտակվելով Ֆրանսիայի նոր սերունդը չէր մըտածի, և չէր պարապի քաղաքական հարցերով։

Բայց ո՞վ է մեղաւոր, որ հասարակութիւնը և նոր սերունդը այնքան թոյլ և անկիրթ են, որ հպատակեցան տէրութեան այսպիսի ազդեցութեանը։

Մտաբերեցէք—ինչ էր Ֆրանսիայի պատմութիւնը,—նա անթիւ փոփոխութիւններին և յեղափոխութիւններին ենթարկվեցաւ. փոխում էր շատ անգամ կառավարութեան ձեւը և անունը.—բայց տէրութեան և կառավարութեան ոգին նոյն էր մնում։ Նա հասարակապետութիւն էր,

բայց մշտակայ զօրք ունէր։ Նա 1848-ին կրկին յայտնեց հաւասարութեան սկիզբը որպէս հասարակական օրէնքների հիմք. բայց այն օրէնքը չ'վերցրեց, որը պաշտպանում է պաշտօնեաներ քաղաքացու դէմ։

Այս օրէնքի զօրութեամբ (յօդուած 75. 1860 թ.), հասարակ քաղաքացին իրաւունք չունի, օրինակ, մի ոստիկան, որը պաշտօնակատարութեան ժամանակ նորան վիրաւորել է, դատաստանի կանչել, մինչև որ բարձր մի խորհուրդը, որ «պետական խորհուրդ» է անուանվում, իւր թոյլտուութիւն չ'տայ.... և այլն։

Ֆրանսիան սկսում է հասկանալ թէ նորան դեռ շատ ինչ մնում է ուսումնասիրելու գերմանական ցեղի ազգերի սահմանադրութիւններում, թէ Անգլիայի, թէ Ամերիկայի և թէ Գերմանիայի։

Ես ասացի թէ Ռօշֆորը ոչ քաղաքական և տնտեսական գիտութեան հմուտ անձն է, ոչ ծանր մի գրող է, ոչ ևս քաղաքական կեանքում նշանաւոր գործունեայ մի մարդ կարող է լինել.... բայց այնու ամենայնիւ նա արտայայտութիւն է Ֆրանսիայի այժմեան անբաւականութեան շարժման։ Ինչ և իցէ նա յարոյց քանի մի հարցեր, որոնք թէև Ֆրանսիայի անցած յեղափոխութիւններում յայտնվեցան, և ուրեմն նոր հարցեր չեն, բայց դարձեալ համապատասխանելով այժմեան շարժման պահանջմունքին, իւրեանց յարուցանողին մի առանձին նշանակութիւն տուին։ Այսպիսի մտքե-

րից է, օրինակ, ընտրողների իրաւունքը՝ ընտրվածի (պատգամաւորի) գործունէութիւնը քննադատելու, և նորա գործերի և մտադրութիւնների հաշիւը պահանջելու։

Այս միտքը (մանդա իմպէրատիվ), որ 30-րդ թւականներում պ. Արման Կարէլ էր պաշտպանում, նշանաւոր էր այն պատճառով, որ միջոց է տալիս պատգամաւորներին իւր ընտրողների համաձայնութեամբ վարվել, գործել և խօսել պալատի օրէնսդրութեան գործերում իւր պատգամաւորութեան ամբողջ ժամանակ, որ տևում է 6 տարի։

Այսպէս պատգամաւորը իւր պաշտօն կատարելու ժամանակ դառնում է ժողովրդի կամքի հաւատարիմ արտայայտութիւն։ Բայց կը հարցնեն, կարօղ է արդեօք անկիրթ մի ժողովուրդ հաշիւ պահանջել իւր պատգամաւորի գործողութեան վերաբերմամբ. ինչ օգուտ է, որ ամբոխը ազդեցութիւն կունենայ քաղաքական հարցերի վճիռների վերայ։

Ի հարկէ ամբոխը անկիրթ լինելով շատ անգամ վնասակար ազդեցութիւն կարող է ունենալ այս կամ այն քաղաքական խնդրի վճռի վերայ, բայց ուրիշ կողմից, եթէ այս ամբոխին ընտրողութեան իրաւունք տուած է, սա նշանակում է, թէ նոցա օգնութեան և կարօտ է հասարակութիւնը քաղաքական գործողութեան և կառավարութեան գործի մէջ։ Եթէ ամբոխը մինչև այն աստիճան անկիրթ է, որ նորա ազդեցութիւնը վնասակար կարող է լինել քա-

ղաքական գործին,— ինչի են տուել նորան ընտրողական իրաւունք։ Իսկ եթէ ճանաչեցին ամբոխի քաղաքացիական իրաւունքը, ընտրել իւր ներկայացուցիչները կառավարութեան և օրէնսդրութեան գործում,—եթէ չեն կամենում և նորան ընդունակ համարել իւր պատգամաւորների գործունէութիւնը քննադատելու և նոցանից հաշիւ պահանջելու,—գոնէ պիտի համաձայնէին ճանաչել թէ ընտրողները իրաւունք ունեն ցանկանալ իւրեանց պատգամաւորների հետ միշտ մօտ յարաբերութիւնների մէջ մնալու, և նոցա հետ խորհրդակցելու քաղաքական և հասարակական հարցերի վճիռների մասին։

Սա նշանաւոր է նախ այն պատճառով, որ կ'հիմնէ Ֆրանսիայում ազատ ժողովելու իրաւունքը և սովորութիւնը. երկրորդ, որ միջոց կ'տայ պատգամաւորին, որը քաղաքա-տնտեսական և հասարակական գիտութեան համեմատաբար հմուտ անձն պիտի լինի, իւր ընտրողների հետ մօտ յարաբերութիւնների մէջ մնալով, քաղաքականապէս դաստիարակել նոցա և ուրեմն միևնոյն ժամանակ ժողովրդի մէջ քաղաքական գիտութեան առողջ մտքեր տարածել։

Բայց եթէ «մանդա էմպէրատիվ» անուանով իրաւունքը իւր արժանաւորութիւններ ունի, նա ունի ուրիշ կողմից և իւր վնասը։

Շատ բնական է ի հարկէ ժողովրդի ցանկութիւնը իւր պատգամաւորների գործունէութիւն քննադատելու, շատ հասկանալի է նորանից պահանջած իրաւունքը սահման դնել վեց տարով ընտրված ներկայացուցիչների գործադրելի իրաւունքներին, որոնք շատ անգամ այս ժամանակամիջոցում թէ իւրեանց տուած խոստմունք չեն կատարում, թէ ամենևին շեղվում են առաջ յայտնած իւրեանց ուղղութիւնից,—բայց ուրիշ կողմից ով կարող է հաւատացնել մեզ, թէ ժողովուրդը իրաւունք ունենալով միշտ ազդեցութիւն ունենալ պատգամաւորների գործունէութեան վերայ և զանազան հարցերի վճռի վերայ, չի յափշտակվի սաստիկ կրքերով և թէ նորա դատողութիւնը միշտ համապատասխան կ'լինի գիտնական և արդար մտախորհութեանը։

Այս է պատճառը, որ պ.պ. Պէլլտան և Ժիւլ Ֆավր թէև պաշտպանելով ժողովրդի իրաւունքը պատգամաւորների գործունէութիւնը քննադատելու, բայց և հասկանալով օրէնսդրութեան գործի վերայ ժողովրդական սաստիկ կրքերի ազդեցութեան վտանգը, և ուրիշ կողմից այն բոլոր վտանգը, որ ծագում է վեց տարով ընտրված պատգամաւորներին տուած անպատասխանատու իրաւունքից,—առաջարկեցին վեցամեայ պատգամաւորութիւնը փոխել երկամեայ։

„Հայկ. Աշխ.", 1870, № 1.

Փարիզ.

ՆՈՐ-ՏԱՐԻ

I.

Սովորութիւն կայ նոր տարին շնորհաւորել իւր ծանօթներին և բարեկամներին, ծերին թէ երիտասարդին, այր-մարդին թէ կնոջ։

Գրողը իւր պաշտօնը կատարելու ժամանակ չունի ոչ ծանօթներ, ոչ բարեկամներ—այլ ունի իւր առաջ հասարակութիւնը, որի հետ որպէս մի վերացեալ անձնականութեան հետ նա յարաբերութիւններ ունի, նորան իւր մտքերը յայտնելու և սպասելով նորանից իւր քննադատութիւնը, ինչպէս մի դատաստանից վճիռը։

Սովորութիւն կայ բարեկամներին նոր-տարի շնորհաւորելով, ցանկանալ նոցա կեանքի ամէն բարիքը։

Ումին պիտի շնորհաւորէ գրողը, ինչ պիտի ցանկանայ....։ Գրողը չունի ոչ բարեկամներ, ոչ թշնամիներ, այլ ինչպէս ասացի գործ ունի մի վերացեալ անձնականութեան հետ, որին նա անուանում է հ ա ս ա ր ա կ ո ւ թ ի ւ ն։ Այս անձնականութիւնը ունի իւր անցեալը և իւր ներ-

կայ։ Թէև ըստ երևոյթին անցեալը մեծ մասով չէ համաձայնում ներկայի հետ, բայց դարձեալ մեծ կապ կայ նոցա մէջ. անցեալը պատրաստում է ներկայ, իսկ ներկան կատարելագործում է անցեալը. բոլոր ինչ որ կար անցեալում, կ'գտնվի և ներկայի մէջ,—բայց շատ բաներ պիտի ծնվեն ներկայում, որոնց չէր ճանաչում անցեալը։

Անցեալը հին սերունդ է։ Ներկան նոր սերունդ է։

Ինչ պիտի ցանկանամ հին սերունդին... բոլոր ինչ որ կ'ցանկանամ հին սերունդին, նոր սերունդին կ'վերաբերուի, որովհետև նա պիտի շարունակէ հին սերունդի գործերը։

Նոր սերունդը հին սերունդի հետևանք է։

II.

Հանգիստ թողնենք հին սերունդը, որովհետև նա իւր պաշտօնը կատարելուց յետոյ, ինքն կարօտ է հանգստութեան։—Բայց մեզ ժառանգութիւն թողած նորա գործերը և սկիզբները խստութեամբ քննադատենք։

Հին սերունդը մեղաւոր չէ, որ մեզանից առաջ էր ապրում և մեզանից առաջ ապրելով նա շատ բաներում մեր կարծիքներից տարբեր կարծիքներ ունէր, շատ բաներում սխալվում էր, շատ բաներում անհետևաբար էր վարվում ու գործում։ Նորա փորձերից, սխալներից, պակասութիւններից և անիրաւութիւններից օգուտ

քաղենք, առանց նորա հետ թշնամանալով, առանց նորան անիծելով։

Նոր տարի չպէտք է անիծէ հին տարին, այլ հանգիստ ոգով բողոքէ նորա վնասակար գործերի դէմ, նորա պակասութիւնների դէմ, և աշխատէ նորա արած փորձերից օգուտ քաղել։

Նոր սերունդը չպէտք է անիծէ հին սերունդը, այլ հանգիստ ոգով քննադատէ նորա սկիզբները և գործերը։

Չպէտք է մոռանանք, որ հին սերունդը արել է այն, ինչ որ նրանից կախուած էր։ Նա մեղաւոր չէ, որ չկարողացաւ աւելի կատարել, քան թէ կատարեց։ Մեղաւոր էր միթէ հին սերունդը, որ նա անկիրթ էր, մեղաւոր էր նա միթէ, որ նորա կարծիքով մարդս կարող էր բաղդաւոր ապրել և մարդի անունի արժանանալ, գրել և կարդալ անգամ չգիտենալով։

III.

Հին մարդիկ բարի ծնողներ ես լինելով, կարծում էին թէ երեխաներ սիրել նշանակում է նոցա հետ բռնութեամբ վարվել։

—Մենք կարծում ենք թէ երեխաներ դաստիարակել նշանակում է զարգացնել նոցա մէջ անհատութիւնը։ Հին սերունդը դէպի կին ունեցած սէրին միացնում էր նախանձը.—մենք կարող ենք սիրել միայն այն կինը, որը պատւում ենք։ Հին սերունդը կարծում էր թէ կնոջը հարկաւոր չէ կրթված լինել իւր

պարտաւորութիւնը կատարելու համար,—մենք պահանջում ենք կնոջ համար այր—մարդին հաւասար լուսաւորելու իրաւունք։ Հին սերունդը միացնում էր քրիստոնէութեան ուսումը մտաւոր և մարմնաւոր ստրկութեան հետ.—նոր սերունդը քրիստոնէութեան գաղափարը չէ զանազանում ազատութեան գաղափարից։

Հին սերունդի մարդիկ լաւ քրիստոնեաներ ես լինելով, մարդիկներ գրաստի պէս առնում և ծախում էին։

Նոցա կարծիքով քրիստոնեայ լինել նշանակում էր անհամբեր լինել դէպի ուրիշների հաւատը. արդար լինել նշանակում էր այրել այն ամեն մարդիկներ, որոնք նոցանից տարբեր կարծիքներ ունէին։ Օգուտ բերել հասարակութեանը նշանակում էր ոչնչացնել անհատական կեանքի երևոյթները, ինչքան կարելի էր անմշակ թողնել մարդկութեան մտաւոր հողը։

IV.

Բայց ոչ թէ միայն չպէտք է թշնամանանք հին-սերունդի հետ, այլ և պէտք է նորան մեր շնորհակալութիւնը յայտնենք նորանից մեզ աւանդված գործերի և սկիզբների համար.—բայց ինչ միջոցով։—Ահա ինչ միջոցով. խստութեամբ քննադատելով նորա գործերը և սկիզբները և ձգտելով հեռացնել նոցա մէջ գտնվող սխալներ և պակասութիւններ. աշխատելով բարւոքել կեանքի ձեր և ոգին, մաքրելով սկիզբների էու-

թիւնը ճշմարտութեան և արդարութեան—այսինքն կրթութեան միջոցով։

Սորանով մենք կապացուցանենք, որ չենք արհամարհում նոցա գործերը, այլ ընդհակառակն մտադիր ենք շարունակել նոցա։

Նոր սերունդը թող շարունակէ հին սերունդի գործը, նոր տարին թող շարունակէ հին տարու գործը։

V.

Երբ ես մտադիր եմ մի որ և իցէ արդիւնքը ծախել վաճառանոցում, միթէ արդար կլինէր ոչնչացնել ուրիշների ապրանքը, իմ արդիւնքը գնելու պահանջը ծնելու համար։

Փոխանակ ուրիշների արդիւնքը ոչնչացնելու, ես կարող եմ մրցութիւն յարուցանել առաւել ազնիւ կերպով (մեծ), այն է արդիւնաբերելով ուրիշ վաճառականներից առաջարկած ապրանքներից առաւել մեծ քանակութեամբ, առաւել պիտանի և աւելի արժան ապրանքը։

Թող սորա նման զէնքով կռուի նոր սերունդը հին սերունդի դէմ։ Ոչ թէ ոչնչացնել պէտք է նախնիների գործերը, այլ նոցա գործերից առաւել պիտանի գործեր ստեղծել, ոչ թէ յարձակիլ նոցա սկիզբների դէմ, այլ նոցա սկիզբներից ժամանակակից ոգուն առաւել համապատասխան սկիզբները մշակել։

Իսկ հնացած գործերը և սկիզբները իւրեանք իւրեանց կմեռնեն։

VI.

Թող նոր տարին չյարձակի հին տարու դէմ, այլ հանգիստ կերպով և խստութեամբ քննադատէ նորան։

Թող նոր սերունդը չանիծէ հին սերունդը նորա անիրաւութիւնների համար, այլ խստութեամբ քննադատէ նոր սկիզբները, առանց նորա հետ թշնամանալու։

Հաճելի կլինէր մեզ միթէ, որ ապագայ սերունդը մեզ անիծէր այն անիրաւութիւնների և սխալների համար, որ մենք ես անշուշտ կը գործենք։

Ժամանակ կլինի, երբ մենք ես հ ի ն ս ե ր ո ւ ն դ կդառնանք... ուստի րոպէ մի չկորցնելով աշխատենք անդադար բարւոքել մեր կեանքը, որ ինչքան կարելի է մաքուր խղճմտանքով ներկայանանք ապագայ սերունդի հասարակական դատաստանին։

Այս է իմ շնորհաւորութիւնը դեռահաս սերունդին նոր տարու պատճառով։

„Հայկ. Աշխ.", 1870, № 1.
Վիեննա.

ՄՏՔԵՐ ՅԱՅՏՆԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔ [1].

1.

„Ինչքան որ կընդարձակէք մտածելու և գրելու իրաւունքը, —այնքան կպակասացնէք ապստամբութեան զօրութիւնը„։
„Էմիլ դը Ժիրարդէն“։

Ի՞նչ է պատիժ։ Պատիժը մի վնասակար գործ սանձահարելու միջոց է, կամ աւելի լաւ ասեմ, մի վնասակար գործողութեանը արգելք դնելու իրաւունք է։

Ի՞նչ է վնասակար գործ, գործողութիւն... Ի՞նչ է վնասակար պաշտօնակատարութիւն. ի՞նչ է յանցանք։

Սա մի գործողութիւն է, որը ձեռնամուխ է լինում ուրիշի գործողութեանը, որը արգելք է

[1]) Այս յօդուածը համապատասխանում է այն մտքերին, որ նորումս պաշտպանեցին ֆրանսիական օրէնսդիր պալատում, տպագրական օրէնքի մասին վիճաբանութիւնների ժամին պ. Նոկիլոս, Պէլլըտան և Ժիւլ Սիմօն։

դնում, կամ ամենևին յափշտակում է մի որ և իցէ պաշտօնակատարութիւն։

Սպանելը յանցանք է, որովհետև սպանելով մի մարդ, ես յափշտակում եմ նորանից նորա մարմնի ֆիզիքական պաշտօնակատարութիւնը։

Մի արիւնահեղ յեղափոխութիւն, մի ապստամբութիւն անել, ընդդէմ ընդունված (հասարակութիւնից ընդունված) և հաստատված տէրութեան ձևի, մի յանցանք է, որովհետև ես գործով, զօռով, բռնի յափշտակում եմ այն տէրութիւնից (և ուրեմն և հասարակութիւնից, որովհետև հասարակութիւնը ճանաչել է տէրութիւնը) նրա հասարակական կազմվածքի պաշտօնակատարութիւնը։—Նա մանաւանդ, որ ոչ մի մարդ իրաւունք չունի իւր անձը բռնի դատաւոր կացուցանել հասարակութեան և տէրութեան յարաբերութիւններում։

Եթէ սա յանցանք է, մենք պահանջում ենք պատիժ, այսինքն յանցաւորը հասարակութիւնից որ և է միջոցով հեռացնելը։

Կարելի՞ է արդեօք գործի հետ համեմատել խօսքը։

Կարելի՞ է յանցանք համարել այն միտքը, որ ես յայտնում եմ օրագրի կամ գրքի միջոցով։

Բոլոր ինչ որ մարդիկ գրով յայտնում են, մարդիկների բոլոր մտքերը, կարելի է երկու բաժանել.—տեսական և գործնական մտքեր։

—

II.

Տեսական կերպով գրելով ես կարող եմ կամ մի նոր ուսում յայտնել, կամ հաստատուած մի ուսման դէմ խօսել։

Մի նոր ուսում յայտնելով ես կարող եմ կամ ուղիղ կամ ծուռ, կամ օգտաւէտ կամ վնասակար գաղափարներ յայտնել։—Բայց և վնասակար, ծուռ մի ուսում յայտնելով, ես ոչ ոքից իրաւունք չեմ յափշտակում, իրապէս արգելք չեմ դնում պաշտպանել հակառակ գաղափարները։

Կարելի՞ է արդեօք յանցանք համարել այն, ինչ որ ուրիշից չէ խլում գործողութեան իրաւունք։

Մի հաստատուած ուսման դէմ խօսելով, ես նմանապէս կարող եմ կամ ծուռ կամ ուղիղ մտքերը յայտնել, ես կարող եմ հին ուսման պակասութիւնները ցոյց տալ. կամ իմ սահմանափակուած զարգացման պատճառով ծուռ կերպով հասկանալ մարդիկներից ընդունուած մի պաշտօնական ուսում, և իզուր յարձակուել նորա վերա։

Դարձեալ այս դէպքում կարելի՞ է արդեօք իմ գործողութիւնը որ և իցէ յանցանքի հետ համեմատել։

Միթէ տեսական կերպով յարձակելով մի հաստատուած ուսման, մի ճշմարտութեան դէմ, ես ոչնչացնում եմ նորան, միթէ իմ այս գոր-

ծողութեամբ ես այն ճշմարտութիւնից խլում եմ կենդանութեան իրաւունք։

Եթէ նա ճշմարտութիւն է, թող ինքն իւրեան պաշտպանէ։

Մի ճշմարտութեան դէմ յարձակողը պատժել նշանակում է այն աստիճանին թոյլ համարել այն ճշմարտութիւնը, որ նա լոկ խօսքից անգամ, բանաւոր յարձակումից քանդվում է—նշանակում է վիրաւորել այն ճշմարտութիւնը։

III.

Ամերիկա և Զվիցերիա ինչպէս յայտնի է հասարակապետութիւններ են։ Բայց ոչ Ամերիկա, ոչ ևս Զվիցերիա յանցանք չեն համարում երբ որ մի հեղինակ գործնական մի փոփոխութիւն կառաջարկէ Զվիցերիայի կամ Ամերիկայի սահմանադրութիւններում, կամ վերջապէս այն հասարակապետութիւններից թագաւորութիւններ կազմել կառաջարկէ [1]։

Յայտնելով մի ծուռ գործնական միտք ես ոչ ոք չեմ ստիպում ընդունել նորան... Յայտնելով մի նոր գործնական միտք, ես հին մի հիմնարկութիւն չեմ ոչնչացնում իրապէս, թէև խօսքով առաջարկէի ոչնչացնել նորան։ Իսկ ե-

1) Նորերումս (1870) Իսպանիայի մէջ յայտնեցին մի օրէնքը, որով „կեցցէ հասարակապետութիւն“ աղաղակը յանցանք չէ համարվում, և չէ պատժվում, եթէ նորան բանի մի գործ չէ հետևում, եթէ նա միայն մասնաւոր կարծիքի արտայայտութիւն է։

թէ հասարակութիւնը մի հեղինակ է պատժում նորա խօսքի համար, մի գործնական յանցանքի հաւասար—նա սորանով ապացուցանում է, որ ինքը մեծ հաւատ չէ ընծայում իւր հիմնարկութիւնների հաստատութեանը։

IV.

Առհասարակ երբ մի հասարակութիւն կանչում է, վախենում է, աղաղակում է, պատժում է մի նոր գաղափարի և սկզբի երևելու ժամանակ,—նա սորանով ապացուցանում է որ կամ անընդունակ է հետևաբար մտախոհութեամբ, ապացոյցներով և քննադատութեամբ հերքել վնասակար մի վարդապետութեան ուսումը—կամ անզօր է վնասակար և ծուռ մի գաղափարին կատարեալ արհամարհանքով պատասխանել [1]։

„Հայկ. Աշխ.“, 1870, № 3—4.

---

[1]) Պ. Ժիւլ Սիմօն, ապրիլի 6 ասած ճառը յետագայ խօսքով աւարտեց. „Ես կառաջարկեմ տպագրութեան յանցանքների վերաբերութեամբ յետագայ միակ յօդւածից բաղկացած օրէնքը—չկայ տպագրութեան յանցանք“ (1870)։

ՆԱՄԱԿ ԴԷՊԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

—

«Հայկ. Աշխ»-ի 1868 թւին վերջին տետրակներում տպվեցան առաջին անգամ թէ Հայաստանի վերաբերութեամբ Եւրօպայում մշակող գրականութեան ամենանշանաւոր երևոյթների մասին տեղեկութիւնները, թէ առհասարակ հայերի վերաբերմամբ արտասահմանից տեղեկութիւնները։

Իմ նպատակս չէ այստեղ ձեր օրագրի «Մեր ներքին գործերի» այս բաժնի օգուտը ապացուցանել։ Ես շատ լաւ եմ հասկանում թէ մի տարի այսպիսի տեղեկութիւնները հաղորդելով մեծ օգուտ չէ կարելի բերել։—Ակներև է նմանապէս, թէ ինձ, թէ ուրիշներին այս տեսակ առաջին փորձի բոլոր պակասութիւնը։

Այսպիսի տեղեկութիւնները, իմ կարծիքով, կարող են միայն այն ժամանակ օգուտ բերել, եթէ շարունակարար կհաղորդվեն օրագրին։—Հասարակութիւնը այն ժամանակ միջոց կունենայ անդադար հետևել օտար երկիրների մէջ ազգային գրականութեան մշակութեանը։

Ինչ և իցէ, Հէյդլբէրգի մէջ ապրելով ես մի-

ջոց ունէի հետևել մեր երկրին և ազգին վերաբերված Եւրոպայում մշակող դրականութեան առաջադիմութեանը։

Հէյդլբէրգի մէջ, ինչպէս հարաւային Գերմանիայի ամեն համալսարանական քաղաքների մէջ (և նմանապէս Զվիցերիայի քաղաքների մէջ) հիմնված է քաղաքային և հասարակութիւնից հարուստ մի ընթերցարանը «Մուզէում» անունով։

Հարաւային Գերմանիայի համալսարանական քաղաքները մեծ մասով փոքր քաղաքներ լինելով, այս «Մուզէումներ» քաղաքի բոլոր ընթերցող և պարապող հասարակութեան կենտրոն են դառնում։ Այս պատճառով այսպիսի մի ընթերցարանը պէտք է ներկայացնէ գիտութեան և դրականութեան պարապելու, կամ աւելի լաւ ասեմ Եւրոպայի մտաւոր կեանքի ամեն ճիւղերին հետևելու միջոցները։

Ուսանողի համար շատ հեշտ է որպէս անդամ ընդունված լինել այսպիսի մի հասարակութեան մէջ։

Մեծ քաղաքում, ընդհակառակն, միջոցները պարապելու և գիտութեան զանազան ճիւղերին հետևելու, ցրված են, կենտրոնացած չեն։ Աշխատանքի բաժանումն հասցրած է մեծ քաղաքում մինչ վերջին աստիճանը... Դրականական, գիտնական և քաղաքական ընկերութիւնները և ընթերցարանները բազմաթիւ են այստեղ, բայց նոցանից ամեն մէկը սահմանափակում է իւր միջոցները մի տեսակ գիտութեան ճիւղին։ Եւ

մեծ քաղաքում առաւել դժուար է այսպիսի ընթերցարանի անդամ դառնալ։

Բացի սորանից փոքր մի համալսարանական քաղաքում աւելի հասնելի է լինում մարդին մօտիկ յարաբերութիւններ ունենալ գիտնական շրջանի հետ։

Այս պատճառով, այժմ Վիեննայում ապրելով և ոչ Հէյդլբէրգում, ես չեմ կարծում թէ կարողանամ շարունակել օրագրին տեղեկութիւններ հաղորդել։

Այնու ամենայնիւ ես չեմ յուսահատվում և կաշխատեմ բոլոր միջոցները ձեռք բերել այս տեսակ աշխատանքը շարունակել կարողանալու համար։

Բայց դարձեալ, որովհետև խօսք չեմ կարող տալ թէ իմ այս գործի վերաբերեալ ջանքը կըյաջողվի,—ինձ կներվի այստեղ մի ցանկութիւն յայտնել, այն է որ հայրենակից երիտասարդները արտասահմանում, որոնք յաջողակ հանգամանքներում են գտնվում այս կողմից,— շարունակէին այս աշխատանքը, և իմ հաղորդած տեղեկութիւններից առաւել կատարեալ աշխատանքը առաջարկէին ձեր օրագրին։

„Հայկ. Աշխ.", 1870, № 3.
Վեննա.

ԿՈՄՍ ԴԸ ՄՕՆՏԱԼԱՄԲԷՐ

—

Մարտ ամսիս 14-ին մեռաւ երևելի ֆրանսիացի գրող և քաղաքական կեանքում մեծ անուն ունեցող կոմս Կարլ դը Մօնտալամբէր։

Նա ծնվեց 1810 թւին Լօնդօնում անգլիացի մօրից, իսկ նորա հայրը Ֆրանսիայի հին ազնուականների ցեղից էր։

Դեռ երիտասարդութեան ժամանակ Մօնտալամբէրը յափշտակվեցաւ ազատամիտ կաթօլիկութեան գաղափարով։

Աստուածապաշտ և հին ազնուական ծագումից լինելով, երբ հօրից ժառանգելով Լուդօվիկ-Ֆիլիպի թագաւորութեան ժամանակ Ֆրանսիայի Ազնուական-Պալատի պատգամաւորութեան իրաւունքը, պատկանելով ազատամիտ սահմանադրութեան կուսակցութեանը,—Մօնտալամբէրը չէր համակրում ծայրահեղ կուսակցութիւններին։

Նա ատում էր հասարակապետութեան գաղափարը և մի և նոյն ժամանակ չէր համակրում և հնամոլ կաթօլիկ կղերին, թէև կաթօլիկութիւնը սիրում էր և նորա ունեցած գաղա-

փարը հասարակութեան համար փրկութեան և առաջադիմութեան հաշտութիւնն էր կաթօլիկութեան հետ, իսկ տէրութեան կատարելատիպը, նորա կարծիքով, ազատամիտ սահմանադրութիւնն էր ազնուապետութեան (արիստոկրատի) և կաթօլիկութեան վերա հիմնված։

Նա միջնադարեան մարդ էր. և ինքն ևս այս խոստովանեց բացականչելով իւր մի ճառի մէջ. «.... Մենք խաչակիրների որդիներ ենք, և չենք յաղթվի Վօլտէրի աշակերտներից»։

Շատ անգամ պատմագրական երևոյթների նշանակութեան ևս ուշք չդարձնելով նա պաշտպանում էր կաթօլիկ ազգերը և կուսակցութիւնները... միայն այն պատճառով, որ նոքա կաթօլիկ են։

Նա պաշտպանում էր իռլանդացիներ (ինքն Անգլիային համակրելով) և մի և նոյն ժամանակ պաշտպանում էր և այն հնամոլ Զվիցերիայի կանտոնները, որոնք կաթօլիկ լինելով փորձեցին, Զ օ ն դ ը ր բ ո ւ ն դ անունով, բաժանվել բողոքական Զվիցերիայից...

Բաւական էր մի ազգին կաթօլիկ լինել, Մօնտալամբէրից պաշտպանված լինելու համար...։

Կոմս Մօնտալամբէր երևելի Լամընէի կուսակցութիւնից էր և Լամընէից ոչ պակաս երևելի հոգևորական Լակօրդէրի նման աշխատում էր իւր ճառերով (մանաւանդ նորա երեք ճառեր ֆրանսիական Ազնուական-Պալատի մէջ ասված, 1844) և գրվածքներով, որոնցից նշա-

նաւորներն են. «Սուրբ Եղիզաբէթի Ունգարացու կեանքը.—Փարիզ 1836» և «Արևմուտքի Աբեղաներ» (1869) հաշտութիւն քարոզել արդեան մարդկային հասարակութեան և կաթօլիկութեան մէջ—և Լակորդէրի պէս ևս իւր նպատակին չհասած, յուսահատուած մեռաւ։

Նա համոզվեցաւ, որ նորա տենչած հաշտութիւնը անիրագործելի է։ «Ես չեմ վախենում խոստովանել, գրում էր նա փոքր ինչ մահից առաջ իւր մի բարեկամին, թէ ես այժմ Գալլիկաններին (Հռոմի անմիջապէս ազդեցութիւնից անկախ ֆրանսիական հոգևորական կուսակցութիւնը) աւելի եմ համակրում քան թէ «Ուլտրամոնտաններին» (Հռոմից որպէս կաթօլիկութեան կենտրոնից անմիջապէս կախված եկեղեցին)։

Մարդը, որ երեխայի պէս ջերմ և անկախ սրտով տասնևութ տարի չարունակ գրչով և խօսքով պատերազմում էր կաթօլիկութեան և գիտութեան առաջադիմութեան մէջ հաշտութեան վեհ գաղափարը քարոզելով—մի ծանր և վտանգաւոր հիւանդութենից չարչարված, բարոյական ցաւի հարվածների տակ... ստիպված է յուսահատված (մեռնել) ճանաչել, թէ նա սխալվել է, թէ նա դէպի ցնորք է ձգտում, դէպի անիրագործելի գաղափարը... ստիպված է ներքին զգացմունքով ճանաչել թէ իւր կեանքի բոլոր գործունէութիւնը իզուր էր... Թէև ուշ, բայց վերջապէս համոզվեցաւ նա արդեօք, թէ Հռոմը անընդունակ է արդեան հասարակու-

թեան հետ հաշտվել, թէ նա անշարժ է, թէ պապութիւնը անիծեց առաջադիմութիւն, չարժում, ազատութիւն, լոյս, գիտութիւն... անիծեց կրթված ազգերի կեանքի դարևոր մտաւոր և բարոյական հետևանքը... թէ կաթօլիկութիւնը այն աստիճանի.... է հասել, որ պահանջում է մարդի (պապի) համար Աստծու յատկութիւնը... պահանջում է Հռոմի այս վերջին ժողովի բերանով պապի անսխալականութեան վարդապետութեան հաստատումն։

„Հայկ. Աշխ.", 1870, № 3.
Վէնեցցիա.

ՀԱՍԿԱՆԱՆՔ ՎԵՐՋԱՊԷՍ [1])

I.

Հայի բնաւորութեան մէջ կայ մի նշանաւոր յատկութիւն. ձգտողութիւն դէպի հարստութիւն․․, սա հայի արժանաւորութիւններից մէկն է։

Շատերը մեղադրում են հային, թէ նա հարստութեան հասնելու համար շատ անգամ աններելի միջոցները գործ է դնում... Բայց մի՞թէ ուրիշ ազգերի մէջ հարստութիւնների աղբիւրները միշտ անպարսաւելի են...

II.

Երկար ժամանակ ամբողջ Կովկասը պատերազմական դաշտ էր ներկայացնում։ Հայերը

1) Տես „Հայկ. Աշխ.“ № 11. 1868. իմ „Ինչի չենք հիմնում“ յօդուածը, Նմանապէս քահանայ Փափազեանի հետաքրքիր յօդուածը. „Եկէք հիմնենք“ վերնագրով („Հայկ. Աշխ.“ № 1. 1869)—Պարտաւորութիւն եմ համարում յիշել այստեղ թէ յօդուածիս մտքերից շատերը յարուցին իմ մէջ Գերմանիայում գործնական և տեսական բնական գիտութիւններին պարապող հայրենակից բարեկամներս։ Հ. Ե.

հարստանում էին,—ինչպէս կարող էին, այսինքն կամ ծառայելով, կամ զօրքի պաշարի յանձնառու (կապալառու) դառնալով։

Ռուս տէրութեան ջանքերին պարտական է Կովկասը, եթէ նա այժմ մի նոր, աշխատանքին առաւել նպաստող խաղաղութեան շրջանն է մտնում։

Կհասկանան արդեօք հայերը, որ այս խաղաղութեան շրջանը բաց է անում նոցա առաջ մի «լայն և դիւրին ասպարէզ ազնիւ աշխատանքով հասնել հարստութեանը»։

III.

Բայց ինչ աշխատանքով։

Քանի մի ժամանակից սկսած հայերը հակում են ցոյց տալիս դէպի գործնական աշխատանքը։ Բայց այս ձգտողութիւնը կամ հակումը անորոշ է, ինչպէս անորոշ է ամեն բան հայերիս մէջ։

Գովելի է ձգտել դէպի գործնական աշխատանքը, գովելի է արդիւնաբերելու ցանկութիւնը, բայց առաւել ևս գովելի է այս ինչ արդիւնաբերութեան օգտի, կամ այն ինչ պարապմունքի տարաժամ լինելու պարզ հասկացողութիւնը։

IV.

Մի երկիր հարուստ է բնական արդիւնքներով. նա հեռու է իւր աշխարհագրական դրու-

թեամբ կրթութեան բարձր աստիճանին հասած երկիրներից։ Նա ճանապարհներ չունի. երկրի մէջ բնակող ազգերը կիսավայրենի են. նոցա կենսական պահանջները շատ չնչին են. աշխատանքը տարածված չէ, մշակ ձեռների պակասութեան պատճառով։ Բնիկը անկիրթ է, քիչով բաւականանում է. սիրում է անգործութիւն, —այս պատճառով և մեծ վարձ է հարկաւոր նորան անգործութիւնից հանելու համար...

Ինչ տեսակ գործնական աշխատանք կարող է առաւել յարմարել այսպիսի երկրին։

V.

Մեծ մասով (թէև բացառութիւններ լինում են) այն երկիրը, որ հարուստ է բնական արդիւնքներով, ծնում է միայն ա ն մ շ ա կ արդիւնքը (сырые продукты) և վաճառահանութեան (էկսպորտասիօն) [1] միջոցով յանձնում է ուրիշ ազգին մշակել գործարաններում այս անմշակ արդիւնքը։

Այսպէս մի երկրի գլխաւոր գործունէութիւնները անմշակ արդիւնք ծնելը, միւսի—այս արդիւնքի արուեստական մշակութիւնն է լինում։

[1] Վաճառականութիւնը կարող է կամ ներգործական (ակտիւ) լինել, երբ ազգը իւր արդիւնաբերած վաճառը ինքն է տանում (հանում) ուրիշ երկիր, կամ կրաւորական (պասիվ), երբ նա բաւականանում է արդիւնքը ծնելով և ուրիշ ազգին թոյլ է տալիս իւր երկիրը մտնել և արդիւնքը հանել։

Օրինակ Ռուսաստանը առաջին տնտեսական աշխատանքն է կատարում, իսկ Անգլիան երկրորդը. թէև Ռուսաստանի բնակիչների երկրագործական դասը չէ կարող այնպիսի խստութեամբ աշխատանքի բաժանումն իրագործել, կլիմայի անյարմարութեան պատճառով։ Ռուսաստանի ամառը փոքր է լինում ձմեռվան հետ համեմատելով, այնպէս որ երկրագործական դասը ձմեռ ժամանակին ստիպված է զանազան արուեստներով պարապել։

VI.

Կովկասը և Հայաստանը յայտնի են կենդանիների, բոյսերի և մետալների հարստութեան կողմից [1]—բայց միթէ բաւական է բնութեան հարստութիւնը գործարաններ երկրի մէջ հիմնելու համար։

Արդեօք հարկաւոր չե՞ն և ուրիշ զանազան պայմանները երկրի մէջ այսպիսի գործունէութեանը զարգանալու համար։

Այժմեան ժամանակում մի գործարան չէ կարող աջողվել առանց մեքենաների օգնութեանը և այս օգնութիւնը չունենալով միայն ձեռագործ աշխատանքով չէ կարելի մրցութիւն

[1] Սորա վերաբերմամբ հետաքրքիր է կարդալ „Դէր Կաուկազուս“ Պէտցոլդի, և պ. դոկտոր Մորից Վագների „Րէյզէ Նախ դէմ Արարատ ունդ դէմ Հօխլանդ Արմէնիէն“—1848.—Այս աշխատանքը Վեննայի Մխիթարեանները հայերէն թարգմանեցին։

անել օտար երկիրների գործարաններին։ Իսկ մեքենաների գործածութիւնը պահանջում է մի շարունակ հոգատարութիւն, մեքենաների կանոնաւոր ժրութեան (ակտիվիտի) վերա։

Հարկաւոր է օտար երկիրներից մեծ վարձով այս մասին տեղեակ մարդիկները կանչել, այսպիսի գործ կառավարելու համար [1]։

Բացի սորանից բաղադրեալ և քնքոյշ մեքենաները յաճախ փչանում են, ուստի նոցա շարունակ պէտք է նորոգել,—իսկ սորա համար հարկաւոր է երկրի մէջ ունենալ մեքենաների գործարանները։

Ով կհամաձայնէ զոհել մի ահագին մայրագումար մեքենաների մի գործարան հիմնելու այնպիսի մի երկրում, որտեղ շահ յուսալի չէ։

VII.

Յայտնի մի իրողութիւն է, որ ամեն տեսակ գործարաններում արդիւնքի մշակութեան գլխաւոր գործիչներից (ֆակտոր) մէկը այն նիւթն է, որը անուանվում է ծծմբաթթու (սէրնայեա կիսլօտա)։ Այս նիւթը օտար երկիրներից մեծ քանակութեամբ բերել տալը չափա-

1) Առհասարակ թէ օտար երկիրներից բերած կառավարիչների, թէ մեր երկրի մշակների վարձը այնքան մեծ կլինի, որ այս պատճառով եւ գործարանը չի կարողանայ մրցել թէ Ռուսիայի և թէ օտար երկիրների գործարանների հետ։

զանց թանգ կնստէ գործարանատէրին։ Սահմանափակել իւր գործունէութիւնը միայն ծծմբաթթուի պատրաստութեանը այնպիսի երկրի մէջ, որտեղ այնպիսի արդիւնաբերութիւնը հաստատ շահ չէ խոստանում.—թեթևամտութիւն է, նա մանաւանդ, որ Կովկասի սարերի (օրինակ Դաղստանի) ծծմբի հանքերը դեռ ևս չեն մշակվում։ Ուրեմն պէտք է սկսել ծծմբի հանքերի մշակութենից և ապա ծծմբաթթուի պատրաստութեանը հասնել։

Առհասարակ պէտք է ասել, թէ հանքերի մշակութիւնը, թէ ծծմբի և թէ ուրիշ նիւթերի, առաջին քայլերից մէկը կլինի դէպի անմշակ արդիւնքի պատրաստութիւնը, ուրեմն և դէպի հարստութիւնը,—բայց դարձեալ այսպիսի գործունէութիւն կարօտ է մեծ գումարների, ընկերակցական զօրութիւնների և առանձին մասնաւոր անձի համար հանքերի մշակութիւնը ներկայացնում է մեծ վտանգ և անյարմարութիւններ։

Պատահած է, որ մասնաւոր մարդը իւր բոլոր կայքը կորցրել է այսպիսի գործունէութեան մէջ [1]։

1) Առհասարակ այն տնտեսական գործունէութիւնը, որը աւելի վտանգ (րիսկ) է ներկայացնում, աւելի եւ շահ է խոստանում մեծ մասով, և ուստի մեծ շահ բերողը և մեծ վտանգ ունի։

VIII.

Գործարանատէրին մնում է միայն մի միջոց. —այն է իւր գլխաւոր գործը առաջ տանելու համար.... և երկրորդական օգնական նիւթերի պատրաստութեամբ. և նմանապէս գործարանոցի մէջ մի բաժին հիմնել և մեքենաներ շինելու համար.—բայց այսպիսի անորոշ դրութիւնը մեծ անյարմարութիւններ ունի, որովհետև աշխատանքի խիստ բաժանումն իրագործելի չէ կարելի այսպիսի դէպքում, և սորա պէս ուղղութեան գործարանները միայն մեծ գումարների և զոհաբերութիւնների միջոցով են աջողվում։

Կովկասի և Հայաստանի այժմեան դրութեանը նայելով, մենք կարող ենք հիմնել միայն այնպիսի գործարանները, որտեղ հարկաւոր չեն ոչ քնքոյշ մեքենաները, ոչ հանքերի մշակումն որպէս երկրորդական պարապմունք,—այլ խոշոր մի գործողութիւն, ինչպէս օրինակ նաւթ մաքրելը, նորանից ձէթ կամ մոմ (պարաֆին նիւթից) մշակել։

IX.

Հասկանանք վերջապէս, որ մեր գլխաւոր ձգտողութիւնը պէտք է լինի մեր երկրի կենդանիների, բոյսերի և մետալների հարստութիւնից օգուտ քաղել։ Այս նպատակով պատրաստել օտար երկիրներում մեր հայրենակիցներին դրական գիտութեան և գործնական աշխատանքին տեղեակ մարդիկներ, որոնք վերադառնալով հայրենիք, կարող էին մեզ օգնել երկրագործութեան, գինեգործութեան, շերամապահութեան, անասնապահութեան դրութիւնը իւրեանց բոլոր ճիւղերով բարւոքել, և նոր, մեզ անյայտ, բայց Եւրոպայում վաղուց ընդունած միջոցները մտցնել։ Աշխատել անտառաբուծութեան դրութիւնը բարւոքել և այլն։

Հասկանանք վերջապէս, որ մենք աշխատասիրութեան և գիտութեան միջոցով հարստանալու ենք միայն մեր բնութեան հարստութիւններից օգուտ քաղելով։

Հասկանանք վերջապէս, որ դեռ երկար ժամանակ Կովկասի և Հայաստանի դերը պէտք է լինի անմշակ արդիւնք ծնելը։

X.

Աւելորդ չեմ համարում ծանօթացնել ընթերցողը յետագայ նամակի հետ, որը գրված էր ինձ յօդուածիս առիթով։

«Ծծմբաթթու շատ տարածված գործածութիւն ունի գործարանների մէջ, բայց գլխաւորապէս այնպիսի արուեստների մէջ, որոնք միայն քաղաքակրթված երկիրներում կարող են աջողութեամբ յառաջ գնալ։ Յիշում եմ որ Բունզըն իւր դասախօսութեան ժամանակ ասում էր, թէ ծծմբաթթուի գործարանը ապացոյց է երկրի քաղաքակրթութեան բարձր աս-

տիճանի։—Սորանից եզրակացնել կարելի է, որ միայն քաղաքակրթված երկիրների մէջ նա գործ է դրվում գլխաւորապէս։ Մի արուեստագիտական (տէխնօլօգիկ) գրքից արտագրում եմ քանի մի տող նորա գործածութեան մասին։

«Ծծմբաթթու չափազանց մեծ և զանազան գործադրութիւն ունի. օրինակի համար բերում ենք յետագայ դէպքերը։ Զանազան թթուներ ստանալու, սոդա պատրաստելու, ստէարին անունով նիւթ ստանալու, ֆօսֆօրի, պաղլեղի, ջրածնի, արջասպի (վիտրեալ) պատրաստութեան, ջօպգամի ձէթ (կօլզա) մաքրելու, տարոնի և ինդիգօի ներկիչ մասերը սապոնաձև դարձնելու և այլն»։

—Սորանից տեսնում ես, որ մեծ մասամբ այնպիսի գործարանների մէջ է գործածվում, որոնց մեր երկիրը դեռ ևս պէտք չունի։ Նշանաւորներից մինն է. կարելի է սոդա, բայց դա ևս Եւրօպայի մէջ շատ սակաւ է արդիւնաբերվում, կամ միայն Անգլիայի մէջ, որտեղից նորան տանում են Ամերիկա, Գերմանիա և այլն, և այնքան մեծ քանակութեամբ, որ ապակեգործութեան համար հարկաւոր սոդայի երկու երրորդ մասը Գերմանիայի մէջ բերվում է Անգլիայից, որովհետև աւելի արժան է տալիս, քան թէ նոյն ինքն երկրի (Գերմանիայի) մէջ պատրաստելը։

«Առհասարակ համաձայն լինելով, որ մեր երկրի մէջ գլխաւորապէս անմիջակ արդիւնքի պատրաստութեանը պէտք է պարապել, ինչպէս

ասում ես մետալների, ծծմբարի, քարածխի և այլն սոցա նման հանքերի մշակութեան, բայց կան այնպիսի գործարանները, որոնք առաջ կերթային մեր երկրում ևս. կամենում եմ յիշել միայն ապակու և ճենապակու պատրաստութիւնը, որոնց համար գլխաւոր նիւթերը նոյն իսկ երկրի մէջ են, իսկ մնացած (ինչպէս օրինակ սոդա կամ պօտաշը) կարելի է բերել տալ, ինչպէս անում է Եւրօպան։ Նմանապէս երկրի միջոցներով կարելի է գազի գործարաններ հիմնել։

«Պարաֆին պատրաստելու համար կամ աւելի ճիշտ ասեմ մաքրելու համար, հարկաւոր է ծծմբաթթու, բայց կարծեմ Կասպից ծովի ափերին գտնվողը բոլորովին մաքուր է։

«Տեսնում ես նմանապէս որ ես միայն երկրորդական բաներին եմ ուշադրութիւն դարձնում, առաջ բերած իրողութիւններին կարելի է միայն փոքր տարբեր ուղղութիւն տալով, իսկ ինչ որ վերաբերում է յօդուածիդ ուղղութեանը և ոգուն, կրկնում եմ, համաձայն եմ, որովհետև իմ կարծիքով ևս այդ մի երկրի զարգացման բնական ընթացք է (մանաւանդ այն երկրի համար, որ հանքեր ունի և սորա նման գետնի մէջ ամփոփած հարստութիւններ), երբ նա իւր արուեստական կեանքում հում (անմիջակ) արդիւնք ծնելուց է սկսում, նախ քան դառնայ գործարաններին։ Նմանապէս ուղիղ է քո միտքը, որ ամեն երկիրը իւր արուեստական գործունէութեան կողմից մի որոշ դեր ունի և ես

կարծեմ բաւական ապացուցի, որ այս իմ կարծիքս է նմանապէս, օրինակ բերելով սօդայի մշակութիւնը Անգլիայում, որ ծովի մօտ գտնուելով ունի դորա համար հարկաւոր և պահանջւող նիւթը,—հասարակ աղը (խլօրնատրիում), որից պատրաստվում է սօդա։ «Անգ. Արծրունի»։

Ուրախ եմ որ մի կողմից այս տողերի մէջ յայտնած մտքերը համաձայն են իմ յօդուածի ուղղութեանը, և միւս կողմից որ այս նամակով պարզվում են և մեկնվում են գրվածիս պակասաւոր քանի մի տեղերը։

„Հայկ. Աշխ." 1870, № 5—6.
Վենեցիա.

ՄԵԾ ՄԽԻԹԱՐԻ ՄԱՀԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐԻ ՎԱՆՔՈՒՄ

I.

Ի՞նչ իրաւունք ունի բանաստեղծ այս ինչ կամ այն ինչ տպաւորութեան տակ գրած բանաստեղծութիւնը ձեզ առաջարկել, ձեզ տխրացնել կամ ուրախացնել... Ի՞նչ իրաւունքով մի հեղինակ իւր աչքով է նայում այս կամ այն երևոյթի վերա, իւր գրվածը չնչաւորում է տխուր կամ ուրախ զգացմունքով... Ի՞նչ իրաւունք ունի նա ձեզ իւր ցաւերի ցաւակից անել և իւր ուրախութեան ուրախակից...։

Այն իրաւունքը, որ կայ ա ն հ ա տ ո ւ թ ի ւ ն, անձնական կազմվածքի պայմաններով, անձնական զգացմունքով, սէրով, հասկացողութեամբ, ընդունակութիւններով, ձգտողութիւններով...։

Հեղինակը առաջարկում է ձեզ իւր կարծիքը, իւր անկեղծ համոզմունքից և զգացմունքից բղխած,—ձեզանից, ձեր բարի կամքից է կախված ընդունել այն կարծիքը կամ ոչ։

II.

Ապրիլի 27-ին առաւօտեան 10 ժամին ժամասացութիւն կար սուրբ Ղազարի կղզու գեղեցիկ եկեղեցում։ Ապրիլի 27-ին 1749 թուին վախճանվեցաւ վանքիս հիմնողը Մեծ Մխիթար։

Հայի վերա, որը օտարութեան մէջ լինելով, վաղուց լսած չէր ազգային ժամասացութիւնը, մի առանձին սփոփիչ տպաւորութիւն էին անում այս հեռու երկրում ճշտութեամբ պահված ազգային եկեղեցական ծէսեր և արարողութիւնները։—Ի՞նչ վնաս, եթէ այն հոգևորականները կաթօլիկներ են...։ Երգեցողութիւնը, արարողութիւնները, բոլոր ժամասացութիւնը հին հայկական պատմական ճշմարտութեամբ էր կատարվում։

Հինգերորդ դարում պարսիկների դէմ պատերազմում մեր ազգային մարտիրոսներից երգած սաղմոսները նոյն ճշտութեամբ և նահապետական ձևով երգվում են և այժմ...։

III.

Ադրիայի ծովի մի փոքրիկ կղզու վերա, փոքրիկ մի եկեղեցում, որը նորա մէջ հաւաքված փոքր խմբի համեմատութեամբ չափազանց մեծ էր երևում,—մի կողմ ձգելով ամեն տեսակ նախապաշարմունքը,—հայն կարող էր իւրեան այն օրը իւր հայրենիքի մէջ կարծել.... Հեռու ծովի փոքրիկ մի կղզու մէջ այս խումբը

ջերմեռանդ աղօթքով, իւր հնադարեան եկեղեցական երգերում յիշում էր, կարծես, իւր բազմափորձ պատմութեան ամենանշանաւոր երևոյթները... Գրիգոր Լուսաւորիչ, Վարդան, կրօնի և ազգի համար նահատակված մարտիրոսները...—այս բոլոր անունները յիշեցնում էին հային անցած ժամանակները, յարուցանում էին նորա սրտում իւր կորցրած կեանքի բարձր գաղափարները։

IV.

Պատարագից յետոյ Մխիթարեան հայրերը պատահեցին և ընդունեցին մեզ իւրեանց սովորական ս. Ղազարի կղզում եղած օտարներին յայտնի քաղաքավարութեամբ և հիւրասիրութեամբ, որոնք յատուկ էին նախապաշարմունք չունեցող զարգացած և ճշմարիտ կրթված մարդիկներին։

Մեզ հրաւիրեցին ներկայ գտնվելու ճառախօսութեան հանդէսին, որը պատարագի մի կէս ժամից յետոյ պէտք է կատարվէր։

V.

Վանքի մեծ դահլիճում հաւաքվեցաւ բոլոր միաբանութիւնը։ Դահլիճի պատերի երկայնութեամբ դրված էին աթոռները։—Մէջ տեղը գտնվում էր կանաչ մահուդով ծածկված մի մեծ սեղանը. սեղանի յետևից խմբով կանգնած էին

Ռաֆայէլեան վարժարանի աշակերտները։ Աջ կողմի աթոռների վերա նստած էին երկար սև շորով հագած վանքի ուսումնարանի երիտասարդները։ Ձախ կողմի աթոռները նշանակված էին եպիսկոպոսի, վարդապետների և հիւրերի համար։

Հանդէսը սկսվեցաւ գրաբար լեզւով գրված մի երկար ճառով Մխիթարի վերա, որ կարդաց երիտասարդ վարդապետներից մէկը։

VI.

Երկար, երկար, մօտ մի ժամ տևում էր այս ճառը։ Խրթին գրաբառով, բարձր ոճով էր գրված նա... բացի սորանից ամեն դասական լեզուներին յատուկ փառաւոր, անբնական, արուեստական ձայնով էր կարդացված։ Առաջին րոպէ մարդս աշխատում է հասկանալ, բայց տեսնելով թէ իզուր է նորա բոլոր ջանքը,—նա հաշտվում է այն անբնական ձայնի, և վաղուց անցած դարերի հնչիւնների հետ... և շարունակում է լսել այն ճառը ոչ թէ մտքեր հասկանալու նպատակով,—այլ որպէս մի երաժշտութիւն։

Ես շատ քիչ հասկացայ... հասկացածն արդեօք աշակերտները, սա ինձ անլուծելի հարց է մնացել։ Ես ինձ հայ զգալով նմանապէս ցանկանում էի ամբողջապէս հասկանալ Մխիթարի կեանքի և նորա հիմնարկութեան պատմութիւնը, ազգի համար այս կենսատու երև-

ւոյթի պատմութիւնը... ինչի՞ մի կենդանարար երևոյթը պատմվում է մեռած լեզւով։

VII.

Կարելի է Մխիթարեան Հայրերը իւրանք չգիտեն մինչև ինչ աստիճանի նոքա մեր ազգի հաւատարիմ պատկեր են,—կարելի է նոքա իւրանք չեն հասկանում մինչև ինչ աստիճանի նոքա մեր ազգային կեանքի ճիշտ արտայայտութիւնն են։

Սրբ. Գէորգ արքեպիսկ. Հիւրմիւզեան աբբահայրը մի փոքրիկ և ազդու ճառով, աշխարհաբար լեզւով, պատասխանեց երիտասարդ վարդապետի ճառախօսութեանը։ Այս փոքր ճառի մէջ արտայայտվեցաւ բոլոր միաբանութեան ոգի, բոլոր հիմնարկութեան ուղղութիւնը։ Նշանաւոր էր մանաւանդ նորա խօսքի յետագայ միտքը.—«Հիմնողից տուած էր այս միաբանութեանը աստուածային և կրօնական ուղղութիւնը, մենք կարող ենք ընդարձակել, զարգացնել նորանից մեր մէջ դրած ոգին, բայց պակասեցնել երբէք չենք կարող»։

Այս խօսքերը լսելով ինձ թւում էր թէ պատուական ծերունու բերանից ես լսում էի ոչ թէ միայն Մխիթարեան հիմնարկութեան, այլ և բոլոր ազգի ուղղութեան նկարագրութիւնը... աստուածային և կրօնական ոգի...։

—

VIII.

Այս օրվան բոլոր հանդէսը ընդունակ էր մի խորին և անջնջելի տպաւորութիւն թողնել մարդի սրտի վերա։

Այս հանդէսի մէջ կերպարանաւորվում էր բոլոր ազգի կեանքի ոգին։

Բոլոր շրջապատող երևոյթները զարմանալի ներդաշնակութեան յարաբերութիւնների մէջ էին գտնվում։ Դժուար կլինէր ինձ ասել որը այս բոլոր երևոյթներից աւելի մեծ տպաւորութիւն ունեցաւ ինձ վերա։

Մեռած լեզուով նկարագրված մեր նոր պատմութեան միակ կենդանարար երևոյթը, արբ. աբբահօր ճառի ոգին, երեխաների ծանր երեսները, որոնց վերա ամենևին չէին նշմարվում երեխայական զգացմունքը և կեանքը,—այս բոլորը վկայութիւն էր տալիս ծերացած մի ազգութեան խղճութեանը։

Սխալվել չէր կարելի.—դուք ուշք դարձնելով այս բոլոր երևոյթներին, կհամոզվէիք, որ ունիք ձեր առաջ ոչ թէ իւր մանկական հասակում գտնվող ազգը, այլ բազմափորձ, հնասէր, ծերացած ազգութեան ներկայացուցիչները...։ Ակամայ իմ աչքս ընկաւ գահլիճի մի անկիւնի վերա... այնտեղ, աշակերտների մէջ տեղը կանգնած էր Եգիպտոսից բերած և վանքին ընծայված մի շատ հին եգիպտական զմռսված մարմինը....

Հազար և հազար տարիները այն մարմինը,

կենդանի ևս չլինելով, չէ ոչնչանում, միևնոյն դրութեան մէջ պահպանվում է...։

IX

Վանքից դուրս եկած, կրկին նստելով նաւակը ես նայում էի կղզու ափերից կապոյտ ծովի հեռաւորութեան մէջ, ազատութեամբ ծըծելով խաղաղ օդը...։ Ծայրայեղ զգացմունքը կռւում էին իմ մէջ.—մի կողմից ես չէի կարող չզգալ ջերմ շնորհակալութեան զգացմունքը դէպի մեծ Մխիթարի յիշատակը և նորա հիմնարկութիւնը,—իսկ միւս կողմից տխրութիւն...։

Չգիտեմ ինչի ես յիշեցի երևելի գերմանացի Գէօթէի օրհասական աղաղակը,—լոյս, լոյս...։ Այն րոպէում ես կամենում էի կանչել,—կեանք, կեանք...։

„Հայկ. Աշխ.", 1870, № 5—6.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

I.

Մարդի կամ անասնի մարմինը կամ բոյսը մենք օրգանական մարմիններ ենք անուանում, որովհետև այս մարմինները բաղկացած են զանազան մասերից (գործիքներից), որոնք այլ և այլ պաշտօններ կատարելու նշանակված են [1]։

Մարդկային հասարակութիւնը, եթէ նորան նայենք որպէս մի ամբողջ մարմնին, նմանապէս մի բաղադրեալ, օրգանական կազմուածք է։ Հասարակութիւնը բաղկացած է անհատներից, որոնք հասարակական կեանքում այլ և այլ

[1]) Օրգանական բառի յետագայ մեկնութիւնը քաղում ենք „Հայկ. Աշխ.“ օրագրի մէջ տպված, Ա. Ա. ստորագրված մի գեղեցիկ յօդուածից։ „Օրգանական“ բառը բղխում է յունական օրգանոն բառից, որ նշանակում է գործիք, և գիտութիւնը օրգանական կամ գործիքական բնութիւն անուանում է կենդանիները և բոյսերը, որովհետև երկուքն ևս ունին մարմնի առանձին մասեր, գործիքներ, որոնք կեանքի այլ և այլ պաշտօններին յարմարեցրած են։

պաշտօններ կատարելով, հասարակութեան այլ և այլ դասեր են կազմում։

Աշխատանքը կարելի է բաժանել մտաւոր և նիւթականի, թէև շատ անգամ նոցա մէջ դժուար է մի սահման գտնել, որովհետև մտաւոր աշխատանքը շատ անգամ կարօտ է նիւթականի օգնութեանը և ընդհակառակը նիւթականը մտաւոր աշխատանքի օգնութեանը [1]), բայց դարձեալ այն մեծ զանազանութիւն կայ այս երկու տեսակ աշխատանքների մէջ, որ նիւթականին հանելու համար հարկաւոր չէ մի կ ո չ ո ւ մ (մանաւանդ այժմեան ժամանակում, երբ նաև կօշիկներ, շորեր, գդակներ և այլն մեքենաներ են պատրաստում), իսկ մտաւոր աշխատանքին և այն պաշտօններին հանելու համար, որոնց Եւրոպայում ազատ արհեստներ (ֆրէյէ կիւնստէյն)-ին են անուանում (բժիշկ, փաստաբան, մասնաւոր գիտնական, հեղինակ և այլն) հարկաւոր է մի կոչում, ցայս հարկաւոր է իւր կեանքի կէսը զոհել սովորելու համար, հարկաւոր է մասնաւոր ուսումնարաններում ուսում առած լինելու։

II.

Հասարակութիւնը օրգանական մի կազ-

[1]) Օրինակ, հեղինակի գործը մտաւոր աշխատանք է, բայց դարձեալ նա պէտք է ամբողջ օրը սեղանի մօտ ծռված նստէ, աջ ձեռը շարժելով գրելու ժամանակ, աչքերը փչացնելով կարդալու ժամանակ։

մուածք է, որովհետև նա բաղկացած է այլ և այլ մասերից, անհատներից, որոնք այլ և այլ հասարակական պաշտօնները կատարելու նշանակված լինելով, ձգտում են մի և նոյն ժամանակ դէպի հակառակ ծայրայեղ զօրութիւնների և երևոյթների հաւասարակշռութիւնը։

Հասարակութեան կեանքի երևոյթները նման են օրգանական մարմնի կեանքի երևոյթներին։ Ինչպէս առանձին օրգանական մարմնի, նոյնպէս և հասարակութեան մէջ տեսնում ենք արդիւնաբերութեան (պրօդուկցիօն) և կիրարկութեան կամ սպառման (կօնսօմացիօն) երևոյթները։ Ինչպէս օրգանական անհատի, նոյնպէս և հասարակութեան մէջ նշմարվում է հակառակ գործիչների (ֆակտօր) և երևոյթների կռիւը, որի հետևանքը զօրութիւնների հաւասարակշռութիւն կամ դաշնակցութիւն է (արմօնի)։

III.

Եթէ հասարակութիւնը մի օրգանական կազմուածք է, հասարակական կրթութիւն ևս պէտք է օրգանական կերպով զարգանայ։

Հին ժամանակում, օրինակ, յունական ազատ հասարակապետութիւնների մէջ, ժողովրդի մի մասը, նիւթական աշխատանք կատարողները (ստրուկները) պետութեան քաղաքացիներ չէին, իրաւունք չունենալով հասարակական և քաղաքական կեանքին մասնակցելու։

Այժմեան ժամանակում աւելի ևս աւելի են յայտնվում հասարակական կեանքում ժողովրդի բոլոր մասերի գործիչների մասնակցութեան պահանջմունքը։—Բայց բոլոր ժողովուրդը հասարակական և քաղաքական կեանքի մասնակցութեանը հասցնելու համար, հարկաւոր է ամբոխի [1]), ժողովրդի նիւթական աշխատանքին նուիրված դասի մէջ ևս կրթութիւն տարածել։

IV.

Բոլոր ժամանակակից ազգերը հասկացան թէ հասարակական կրթութեան հիմն ժողովրդական կրթութիւնն է։ Առաջ քան թէ մի որ և է դասին պատկանող անձը նիւթական աշխատանքին կամ մի կոչման է հասնում, նա իւր մանկական հասակում անորոշ ապագայ ունի իւր առաջ։

Կրթութեան բարձր աստիճանին հասած ազգերը պահանջում են այժմ, որպէս հասարակութեան կրթութեան հիմ, մի ազգի բոլոր մանուկների համար ձրի և պարտադիր դաստիարակութիւն։

V.

Ոչ եթէ միայն հնութեան հասարակութիւնները (օրինակ Եգիպտոս) բայց և միջին դարեները (օրինակ Եգիպտոս) բայց և միջին դարե-

[1]) Ամբոխ բառը ես գործ եմ ածում Եւրօպայում ընդունված «մասս» բառի նշանակութեամբ։

րի Եւրոպան արգելք էր դնում հասարակութեան անդամներին փոխել իւրեանց հասարակական դրութիւնը, մի դասից անցնել ուրիշ դասը... զինուորականի որդին զինուորական պէտք է լինէր, արուեստաւորի որդին պէտք է արուեստաւոր դառնար, քահանայի որդին—քահանայ և այլն։ Դասերը բաժանված էին անջնջելի սահմաններով։ Նոցա ներկայացուցիչների մէջ երևում էր դաստիարակութեան, կեանքի, կարծիքների, ձգտողութիւնների, արտաքին ձևերի, տիպի տարբերութիւնը...։

Այժմեան հասարակութիւնը պահանջում է անհատի համար (ինչ դասին և նա պատկանէր) հաւասարութիւն գիտութեան և պետութեան առաջ, հաւասարութիւն թէ գիտնական թէ քաղաքական օրէնքի առաջ։

Այժմեան հասարակութիւնը իւր ամեն մի անհատը ոչ թէ միայն քաղաքացի է համարում, այլ և ամեն մէկին իրաւունք է տալիս թողնել իւր դասը, փոխել իւր դրութիւնը, ձգտել դէպի իւր դրութեան բարւոքումը...։

Հին հասարակութիւններում մարդիկ կարգերի (կաստ) էին բաժանված, որոնց անդամներին արգելված էր իւրեանց վիճակը փոխել,—այժմեան հասարակութիւնները դասեր ունեն և ոչ թէ կարգեր (կաստ)։

—

VI.

Կրթութեան բարձր աստիճանին հասած երկիրներում ամեն մարդը քաղաքացի է։ Մանկական հասակում մարդը անորոշ ապագայ ունի իւր առաջ—նա կարող է աշխատել, ձգտել, յուսալ... Նորա առաջ բաց են ամեն տեսակ հասարակական պաշտօններ և ասպարէզներ։ Ամերիկայի նահանգներում ամեն քաղաքացի կարող է նախագահ դառնալ։

Քաղաքացու ապագայ ձգտողութիւններ և ջանքը նպաստելու համար պահանջում ենք ազգի բոլոր մանուկների համար ձրի և պարտադիր դաստիարակութիւնը (դաստաւութիւնը)։

Սկզբնական ժողովրդական կրթութիւնը հասարակական կրթութեան հիմն է.—սկզբնական կրթութիւն ստանալուց յետոյ մարդը ընտրում է իւր համար մի կոչում և այս նպատակով դառնում է դէպի մասնաւոր ուսումնարանները, ցայս դէպի համալսարանները, բազմարուեստական ուսումնարանները և այլն։

VII.

Բայց ամեն մարդ մի կոչմանը չէ հասնում հասարակութեան մէջ,—այլ ժողովրդի մեծ մասը, ամբոխը բաւականանում է սկզբնական ուսումնարաններում ստացած տարրական դաստիարակութեամբ։ Սակաւներին են հասանելի երկրորդական ուսումնարանները։

Միթէ բաւական է սկզբնական դաստիարակութիւնը նիւթական աշխատանքին նուիրված դասերին հասարակական կեանքին մասնակցելու և քաղաքացի լինելու համար։

Հասարակութեան մէջ անդադար ծնվում են նոր մտքեր, նոր գաղափարներ. հասարակական հարցերը հասկանալու համար, կամ իւր դասի և իւր անձի օգուտները պաշտպանելու համար բաւական չէ սկզբնական դաստիարակութիւնը։

Հարկաւոր է մի ընդհանուր կրթութիւն, որ տարածվէր բոլոր ժողովրդի վերայ։

Հարկաւոր է գտնել ընդհանուր կրթութիւն տարածելու մի զօրեղ միջոց, որ մեկնէր, պարզէր ժողովրդին հասարակական և քաղաքական երևոյթները,—մի միջոց, որ ուղղութիւն տար հասարակական կարծիքին, որը նիւթական աշխատանքին նուիրված մարդին անդադար ուղղէր, թող տար նորան դաստիարակվել ուսումնարանն ևս թողնելուց յետոյ։

Ընդհանուր կրթութեան այս գլխաւոր (չեմ ասում միակ) միջոցը,—օրագրութիւնն է [1]։

VIII.

Հասարակութիւնը օրգանական կազմուածք է, ուստի և հասարակական կրթութիւնը պէտք է օրգանական լինի։

---

[1] Ընդհանուր կրթութեան երկրորդական միջոցներ մենք կարող ենք համարել հրապարակական դասերը, թատրոն և այլն։ Օրագրութիւն բառը մենք գործ ենք ածում „ժուրնալիզմ" բառի մտքով.

Մենք հասարակական կրթութիւնը բաժանում ենք երեք գործիչների.

Սկզբնական դաստիարակութիւն կամ դասատվութիւն։

Կոչում։

Ընդհանուր կրթութիւն։

Առաջինը կատարվում է գլխաւորապէս ուսումնարանների միջոցով (տարրական և երկրորդական)։

Երկրորդը—համալսարանների և բազմարուեստեան ուսումնարանների միջոցով։

Երրորդը իրագործվում է գլխաւորապէս օրագրութեան միջոցով։

„Հայկ. Աշխ.", 1870, № 5.
Վենեցիա.

Կ. ՊՕԼՍԻ ԵՐԵԿՈՆԵՐ

—

Կ. Պօլսի երեկոներ (Լէ սուարէ դը Կօնստանտինօպլ.—Միսմէր. Պարի է Կօնստ. 1870)։

Միսմէրի այս գիրքը, որի հրատարակման մասին ես տեղեկացրի նորերումս «Հայկ. Աշխ.» օրագիրը, աշխատում է ապացուցանել, թէ մահմեդականութիւնը քրիստոնէութենից ստորին աստիճանի վերա կանգնած չէ որպէս հասարակական ուսում։ Պ. Միսմէր, աշխատելով ցոյց տալ մահմեդականութեան առաւելութիւններ և արժանաւորութիւններ, մոռանում է մեր կարծիքով թէ 19 դարի տրամաբանական (լօժիք) մտախորհութեան ամենայարմար ճանապարհը ոչ թէ վերացական ճարտարմտութիւններն են, այլ իրողութիւնների քննութիւն, —ոչ թէ ճարտար մտախորհութենից ծնված փաստերը, այլ իրողութիւնների վերա հիմնված մտախորհութիւնը,—մի խօսքով ոչ թէ իրողութիւնը որպէս մտախորհութեան հետևանք, —այլ ընդհակառակն մտախորհութիւն որպէս փաստի իրողութեան հետևանքը։

Իսկ մի անհերքելի իրողութիւն կայ—այն

է, որ մինչև այժմ ոչ մի պետութիւն, նորա եւրօպական բառի նշանակութեամբ, չէ հիմնվել մահմեդականութիւն դաւանող ցեղերի մէջ։ Մահմեդականութեան հետ միասին մենք միշտ անբաժանելի ենք գտնում օրէնքի բացակայութիւնը, կամապաշտութիւն, բռնաւորութիւն, տգիտութիւն, գերդաստանի և սեփականութեան բացակայութիւն և այլն։

Իսկ ուրիշ կողմի իրողութիւններից տեսնում ենք, որ պետութեան զարգացման մեծ աստիճանին հասել են միայն քրիստոնէութիւն դաւանող ազգերը, մանաւանդ այն քրիստոնէական ազգերը, որոնք քրիստոնէութեան բառով հասկանում են և ընդունում են գլխաւորապէս Քրիստոսի բուն, ճշմարիտ, վեհ ուսումը և նորա բուն խօսքերը—այսինքն Աւետարանը։

Եւ չէ կարելի որ ուրիշ կերպով լինէր։ Քրիստոնէութիւնը, կամ աւելի լաւ ասեմ Աւետարանը, բովանդակում է իւր մէջ երեք մեծ գաղափար, սէր, հաւասարութիւն և ազատութիւն, որոնք ազգերի հասարակական կեանքում ծնել են աշխատանք, օրէնք և անհատութիւն։

Ի հարկէ մահմեդական ազգերի քաղաքական զարգացման ուրիշ արգելքներ ես կան բացի դաւանութեան անշարժութենից։ Նախ քան ցեղեր, որոնք (ինչպէս մահմեդական ազգերի մէջ կայ խառնած սեմիտական և մօնգօլական տարրը) ապացուցին պատմութեան մէջ իւրանց անընդունակութիւնը իրաւունքի վերա

հաստատած պետութիւնը հիմնելու,—երկրորդ կայ մահմեդական ցեղերի մէջ անշարժութեան մի ուրիշ մեծ պատճառ—այն է որ մահմեդական աշխարհը ընդունեց արաբական գրերը։ Տառերը կամ գրերը առաջադիմութեան ենթադրված են, ինչպէս հասարակական ուրիշ երեւոյթները։ Գրերի նախապետական ձևը այն նշաններ են, որոնցից ամէն մէկը արտայայտում է մի ամբողջ գաղափար, ամբողջ բառ և անուանվում է երօգլիֆ։ Առաւել կատարեալ են այն նշանները, որոնցից ամէն մէկը մի վանկ է արտայայտում, վերջապէս ամենակատարեալ գրերն այն գրերն են, որոնք, ինչպէս բոլոր արիական ազգերից ընդունած տառերը, ամէն մի ձայնի համար համապատասխան մի նշան ունեն կամ տառ։ Չինացիներ առաջին աստիճանին (երօգլիֆական) հասած, անշարժ կէտի վերա մնացին,—արաբական (թիւրքերից և պարսիկներից ընդունած) տառերը վանկական (°) կազմութիւն ունեն, իսկ ամէն ձայնին համապատասխան տառերով, եթէ կարելի է ասել այբուբենական գրերը միայն արիական ցեղերի մէջ են ընդունված, որոնք գրվում են ձախ կողմից դէպի աջ կողմը։

Մի գրականութիւնը ճշմարիտ ժողովրդական գործադրութեան հանելու ընդունակ է, երբ այս գրականութեան մէջ գործածված գրեր այբուբենական, տառական գրեր են։

Կարելի է, որ թիւրքերէնը կարողանար ժամանակով բոլոր Փոքր-Ասիայի հասարակական

լեզու դառնալ, եթէ փոխվէին արաբական գրերը, որովհետև այժմ ևս թիւրքերէնը բոլոր Փոքր-Ասիայի մէջ տարածված է։

Այս բոլորը հասկանում է մեր հեղինակը, և համաձայն է սորան... ափսոս է միայն, որ շատ բաների մէջ նորա մտքերը վեր են քան թէ նորա դրական, պատմական իրողութիւնների հմտութիւնը։ Ցաւելով ցոյց կտամ 361 երեսը, որը վկայ է հեղինակի քանի մի բաներում խոտոր տգիտութեանը։ «Քանի տարի առաջ, ասում է նա, հայերը թիւրքեր էին թէ վարքերով թէ լեզւով։ Այժմ իրանց մէջ մտցրած ազգային մի այբուբենի շնորհով, նոքա ևս մշակում են իրանց լեզու, նոքա ևս յոյների նման ձգտում են դէպի մեծ գաղափարը»,

Ուրեմն հեղինակը չգիտէ, թէ մեր այժմեան օրագիրներում գործ ածուած գրերը նոյն են, որոնք IV դարում մեր Գրիգոր Լուսաւորիչն էր գործ ածում իր աստուածաբանական գրքերում։ Զարմացած կարդացինք գրքի մէջ, թէ հեղինակը Կ. Պօլսի մէջ է ապրում...։

Ուրիշ կողմից նա օգտաւէտ մտքեր է յայտնում և միջոցներ է առաջարկում արաբական տառերի վերանորոգման վերաբերութեամբ, յիշելով մանաւանդ որ պէտք է աշխատել ձայնաւորները բաղաձայներից բաժանել։

Թւանշանների հետաքրքիր համեմատութիւն ենք գտնում գրքի 354 և 355 երեսների վերա։

«Չինական երօգլիֆական գրերով մտքերի մի սահմանափակված քանակութիւնը արտա-

յայտնելու համար, հարկաւոր է 130,000 նշանների օգնութիւն խնդրել։

«Արաբական տառերով գիրք կամ օրագիր տպելու համար հարկաւոր են 800 տպագրական նշանները։ Գրաշարը պէտք է հմուտ լինի լեզուին, և քանի մի տարի հարկաւոր է լեզու ուսանելու համար։ Թարգմանութիւն անել շատ դժուար է....

«Այբուբենական ոճով կարելի է ամէն բան տպել բաւականանալ միայն 30 նշաններով։ Քանի մի ժամի մէջ մի մարդ կարող է կարդալ սովորել, մի երեխայ քանի մի ամսում։

«Մի երես կարդալուց յետոյ, կարող էք և բոլոր մնացած գրքերը կարդալ, մարդկային գիտութեան որ ճիւղին և պատկանէին նոքա»։

Իսկ եթէ արաբական տառերով մի գիրք ևս կարդայիք, չէ նշանակում թէ կարող էք մի և նոյն տառերով գրված ուրիշ գիտութեան բովանդակութեան գիրքը կարդալ։

„Հայկ. Աշխ.", 1870, № 7—8.

Բ Ա Ւ Ա Կ Ա Ն Չ Է

I.

Երբ մենք թողինք գրաբար լեզուով գրելու սովորութիւնը, երբ որ ազատվեցանք մեր հասարակութեան մէջ արմատացած նախապաշարմունքից, որը մեզ արգելում էր մեր ժողովրդական լեզու գրականութեան մէջ գործածելու,—այս առաջին քայլ էր դէպի նոր ազգային գրականութեան հիմն։

Այն ժամանակից սկսած մենք մեծ առաջադիմութիւն արինք։—Մեզանում հիմնվեցան օրագիրներ, պարբերական հրատարակութիւնաներ...։ Աշխարհաբար լեզուով գրված գրքերը (մեծ մասամբ թարգմանութիւնները) ժամանակ առ ժամանակ հրատարակվում են...։

Ի հարկէ, ինչ որ թարգմանվող գրքերի քանակութեանը վերաբերվում է, մենք ռուսաբնակ հայերս չենք կարող մեզ թիւրքաբնակ հայերի հետ համեմատել։

Նմանապէս նոքա մեզանից շատ օրագիրներ ունեն...։

Բայց իմ նպատակս չէ այստեղ նոցա վերա

խօսել։ Թող մեզանից ամէն մէկը իւր հասարակութեան, իւր շրջանի երևոյթները քննէ։ Ինչքան որ աղքատ և աննշան լինէին մեր հասարակական երևոյթները, նոքա դարձեալ արժանի են մեր ուշադրութեանը։

II.

Աշխարհաբար լեզու մեր հասարակութեան մէջ մտցնելու առաջին և ամենածանր փորձերից մէկը արել է Մոսկվայի «Հիւսիսափայլ» ամսագրի հրատարակողը։ Այն ժամանակից սկսած շարժումը դէպի ազգային նոր լեզուի մշակութիւնը չյետադիմեց...։ անկարելի է այժմ վերադառնալ մեռած լեզուի գործածութեանը...։

Այս անկարելի է..։ Բայց գրականութեան այժմեան զարգացման աստիճանին և ուղղութեանը հասնելուց յետոյ, անկարելի է նմանապէս մի և նոյն կէտի վերա մնալ։

Մեր օրագրութեան և գրականութեան այժմեան դրութիւնը ինչ է և համապատասխան է արդեօք մեր պահանջմունքին։

III.

Գրականութիւնը պէտք է դաստիարակիչ ազդեցութիւն ունենայ ժողովրդի վերա։

Նա կարող է այս ազդեցութեան հասնել կամ ընդհանուր մարդկային գիտութեան մտքերը, սկիզբները և գաղափարները ժողովրդի մէջ

տարածելով,—կամ ազգին իւր կեանքի երևոյթները վիպասանութեան ձևով ներկայացնելով։

Առաջին դէպքում նա դրսից պէտք է մըտցնէ,—որովհետև մենք հայերս գիտութեան ինքնակայ մշակութեանը դեռ չենք հասել [1])— երկրորդ դէպքում, մեզ մնում է ինքնուրոյն տաղանդների ծննդին սպասել...։

Ցանկալի է մեր գրականութեան առաջադիմութեան համար ինչպէս ինքնուրոյն տաղանդների ծնունդ, այնպէս և գիտնական ճշմարտութիւնների (գիտութեան ամէն ճիւղերի) խըղճմտաբար մշակումների երևումն։

VI.

Գիտութիւնը չունի ազգութիւն. նա ընդհանուր համազգային ստեղծված է։

Եթէ մի ազգութեան մէջ գիտութիւնը չէ մշակվում, այն ժամանակ կարելի է օտար ազգերի գիտնական աշխատութիւնները ամբողջապէս թարգմանած հասարակութեանը առաջարկել։

Մենք տեսնում ենք, օրինակ, որ այս վերջին տաս տարի Ռուսաստանը հարստացաւ այս տեսակ թարգմանութիւններով և համոզված ենք, որ նա մեծ օգուտ քաղեց այս տեսակ հրատարակութիւններից։

Բայց մեր հասարակութեանը ընթերցման դեռ չընտելանալու պատճառով մեզ չէ կարելի

---

[1]) Այս տեսակ գրականական գործունէութեան իրագործութիւնը մենք Եւրոպայում դաստիարակված երիտասարդների միջնորդութեամբ կարող ենք հասնել

մեր միամիտ, ծոյլ և տգէտ ընթերցողին գիտնական աշխատանքների թարգմանութիւնները (թէև ժողովրդական լեզուով գրուած) գրքի ձևով առաջարկել։ Հարկաւոր է գիտնական գրուածքներին մի կարճ, ամփոփած ձևը տալ, այսինքն գիտնական յօդուածները առաջարկել և ոչ թէ գրքերը։

Այս է պատճառը, որ օրագրութիւնը մինչև այժմ միակ ձև է, որ ընդունելութիւն կարող է գտնել մեր ժողովրդի մէջ։

V.

Բայց կարելի՞ է արդեօք բաւականանալ օրագրութեան մէջ օտար ազգերի գիտնական յօդուածների թարգմանութեամբ։

Համապատասխան է արդեօք այսպիսի ուղղութիւնը օրագրութեան հասարակական պաշտօնին։

Օրագրութիւնը պէտք է մի կողմից ժողովրդի կեանքի արտայայտութիւն դառնայ, իսկ ուրիշ կողմից պէտք է դաստիարակիչ, կրթող ազդեցութիւն ունենայ ընթերցողի վերայ։

Եթէ մենք միշտ կբաւականանանք օտար ազգերի կեանքից առած վիպասանութիւնների կամ գիտնական յօդուածների թարգմանութեամբ,—մեր օրագրութիւնը կհասնէ, կարելի է, դաստիարակիչ ուղղութեանը, բայց նա ժողովրդի կեանքի արտայայտութիւնը չի կարողանայ լինել։

Իսկ մինչև այսօր մեր բոլոր աշխատանքը գրականական ասպարէզում թարգմանելու մէջ էր պարունակվում։

Մեր օրագիրների և լրագիրների խմբագրողները կարծում էին թէ իւրեանց պարտաւորութիւնը կատարեցին, երբ մի թերթ կամ տետրակ առաջին երեսից սկսած մինչև վերջինը թարգմանութիւններով լցրած ընթերցողին առաջարկել են...։

Մեր երիտասարդները և օրիորդները կարծում են թէ մեծ օգուտ են բերում ազգին, երբ որ տարին երկու երեք անգամ մի որ և է օտար կեանքից առած, մեր պահանջմունքին անհամապատասխան, ձեռին ընկած առաջին վիպասանութեան թարգմանութիւնը օրագրի թերթերի մէջ հրատարակեցին։

Եւ այս է անուանվում ազգային օրագրութիւն։

VI.

Օրագրութեան այսպիսի ողորմելի դրութեան պատճառը ինչ է։

Պատճառները շատ կան,—բայց գլխաւորը ծագում է այն մեր պակասութենից, որը կարելի է մեր ժողովրդական կեանքի յատկանիշ պակասութիւն անուանել։

Կամենում եմ ասել թէ մեր հասարակական կեանքի բոլոր երևոյթները բարերարութեան

սկզբի վերա են հիմնված, և ոչ ժողովրդի ինքնօգնութեան սկզբի վերա։

Ժողովուրդը կարդալու պահանջմունքը չունի... Նորան պէտք է սովորեցնել։ Ո՞վ պիտի իւր ժամանակը կորցնէ իւր վերա այսպիսի պաշտօնը առնելով...։

Աղքատ մարդը, թէև զարգացած, կրթված և գրելու ընդունակ լինէր, չէ կարող օրագրութիւնը իւր կեանքի միակ պարապմունքը ընտրել,—որովհետև այսպիսի աշխատանքը չէ վարձատրվում հասարակութիւնից... ուստի միայն աւելորդ ժամանակ ունեցող մարդը կարող է իւրեան այսպիսի պարապմունքին նուիրել։

Բնական է մինթէ որ օրագրութեան մէջ ձայն ունեցող և հասարակական կարծիքին ուղղութիւն տուող մարդիկը,—միայն հարուստներ են։

Իսկ այն մարդի ձայնը, որ ինքն աղքատ լինելով, ժողովրդական կեանքի թշուառութիւնները անձնական փորձից ճանաչում է, որը ստիպված է իւր հացը իւր ամենօրեայ աշխատանքով ճարել,—այն մարդի ձայնը, ասում եմ, կորչում է հասարակութեան համար։

Այս է պատճառը, որ մեր մէջ օրագրութեան պարապմունքը ոչ թէ արուեստ է, այլ ժամավաճառութիւն։

Այս է պատճառը, որ մեր օրագրութիւնը այսքան թոյլ, անհամ, աննպատակ և բոլորովին միակողմանի երևոյթ է։

—

VII.

Բարերարութեան սկզբին հաւատարիմ մեր հեղինակները հիմնվելով երևի ռուսական առածի վերա, կարծում են թէ «ընծայած ձիու ատամներին չեն նայում»։

Այսպիսի առածին հետևելով, կարելի է ի հարկէ ժողովրդին ամեն տեսակ անմարսելի գրվածներ առաջարկել և հեղինակ կամ թարգմանիչ դառնալ ոչ թէ միայն մասնաւոր մի գիտութեան հետ ծանօթ չլինելով (որ անշուշտ հարկաւոր է օրագրութեանը իւրեան նուիրող անձին),—բայց և ընդհանուր կրթութեան սկիզբները անգամ չունենալով։

Այնպէս որ մեր գրականական ասպարէզում գործող մարդիկը, ոչ թէ միայն չպատրաստված, այլ և չպատրաստվող գրողներ են։

Եւ ազգային օրինաւոր օրագրութիւնը միայն այն ժամանակ կհիմնվի, երբ խմբագրութիւնը կազմող գրողներից ամեն մէկը գիտութեան մի որ և է ճիւղին մասնաւորապէս տեղեակ կլինի։

VIII.

Այժմ դառնալով դէպի այն մեր հասարակական երևոյթը, որը իւրեան ազգային օրագրութեան փառաւոր անունը սեփականացրել է, ես ասում եմ։

Բաւական չէ անդադար թարգմանութիւնները առաջարկել ազգային օրագրութիւնը հիմնելու համար։ Բաւական չէ օրագրութեան մէջ ժողովրդի միայն հարուստ դասի ձայնը լսել տալ, ազգային կեանքի արտայայտութեան նշանակութեանը հասնելու համար։

Եւ դառնալով դէպի մեր գրողները (օրիորդները և երիտասարդները) ևս ասում եմ։

Բաւական չէ առերես կրթութիւն ստանալուց յետոյ, ոչ մի գիտութեանը մասնաւորապէս տեղեակ չլինելով, քանի մի սովորած օտար լեզուները գործ դնել ժողովրդին անհասկանալի և մեր կեանքին օտար գրվածները թարգմանել, —հեղինակի պաշտօնը կատարելու համար։

Վերջապէս դառնալով դէպի ազգը, ևս ասում եմ.

Բաւական չէ դեռ ևս չհասած հասարակութեան նշանակութեանը, չհասկանալով փոխադարձութեան գաղափարը, չըմբռնելով մտաւոր աշխատանքի օգուտը և ընթերցման պահանջմունքը, —բաւական չէ, ասում եմ, ոգևորվել դատարկ ազգասիրական զգացմունքով, նուիրել այս կամ այն հեղինակին անհամ գովասանքները—ազգային օրագրութիւնը հիմնելու և նըպաստելու համար։

„Հայկ. Աշխ.“, 1870, № 7—8.
Հեյդելբերգ.

ՅՈՒՇԻԿՔ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ

«Յուշիկք Հայրենեաց Հայոց, ի Հ. Ղևոնդէ Մ. Ալիշան, վ. Մխիթարեան. 2 հատոր. Վենետիկ. 1869»։—Նորերումս Ս. Ղազարի մամուլը լոյս ընծայեց Հ. Ղևոնդ Ալիշանի մի նոր աշխատանքը, որը բաղկացած է երկու հատորից և որի բովանդակութիւնը մեր հայրենիքի պատմութենից առած նշանաւոր երևոյթների նկարագրութիւնն է։ Այս պատմական յօդուածները տպվում էին փոքր առ փոքր «Բազմավէպի» մէջ, իսկ այժմ առանձին գրքով հրատարակելով միջոց է տալիս մեզ ծանօթանալ հեղինակի ոգու և ուղղութեան հետ։

Հին հայկական գրողների, մանաւանդ հինգերորդ դարի երևելի պատմիչների յատկանիշ նկարագիրը նոցա բանաստեղծական ուղղութիւնն է, որը հիմնվում է նոցա ազգասիրական վեհ ոգու և քրիստոնէական խոր զգացմունքի վերայ։

Հ. Ալիշանի գիրքը կարդալով մենք համոզված ենք, որ հեղինակը չափազանց հմուտ է մեր հին գրականութեանը, որովհետև բոլոր-

վին սեփականացրել է իւրեան մեր դասական հեղինակների նշանաւոր բանաստեղծական ոգին, որը սկիզբ է առնում նորա մէջ եւ երկու (պտղաբեր) աղբիւրներից.—ազգասիրական ոգուց և քրիստոնէութեան բարձր գաղափարից։

Ես ասում եմ քրիստոնէութեան և ոչ թէ աստուածաբանութեան։

Քրիստոնէութիւնը վեր է քան աստուածաբանութիւնը։

Աստուածաբանութիւնը կարող է փոխվել, տարբերվել, մարդի կազմվածքի և հասկացողութեան կամ կլիմայի համեմատ։— Քրիստոնէութեան սկիզբները անխախտ են մնում։

Աստուածաբանութիւնները բազմաթիւ են։

Քրիստոնէութիւնը մի է։

Քրիստոնէութեան սկիզբները, այսինքն ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրասիրութիւն ամեն մարդի, ամեն կազմվածքի, ամեն կլիմայի, ամեն ազգի, ամեն ցեղի, ամեն ժամանակի համար ճշմարտութիւն են և կմնան…։

Հեղինակի քրիստոնէական խոր զգացմունքին մենք պարտական ենք, օրինակ, այս գրքի առաջին հատորի 7-րդ երեսը։

«Ո՛րչափ փափագելի, որչափ բարեբաստիկ է նոցա վիճակն՝ որ մէկ աչքով կուտեսնեն իրենց իջեանին երկու հանգոյցներն ալ, ծնարանը և քնարանը, հանդերձ միջոցովն, որ կրնար բաւել Գործարանն։

«Ո՛րչափ բարեբաղդ է, կըսեմ, այն ազգն, որ ի սկզբանէ ի վեր իր համալեզու նախնեաց երկրին մէջն է կեցեր. անկէց դուրս տեղ չի գտներ իր նահապետաց ծնարանը, և հոն կուտեսնէ անոնց քնարանը. ինչպէս առանձին մարդ մը՝ որ բնակի այն տունը, ուր իր հարքն և պապքն ալ բնակեր են, և պատրաստէ իր մարմնոյն վերջին հանգստարանը հոն, ուր որ այն հայրերն և պապերն այլ կու հանգչին դա-բերով, ուր իրենց վրայ, հովանացեալ ծառոյն փոքրիկ տերևոց նման, որդիք զորդիս փոխանակելով, քանի մը կամ շատ ցեղեր իրարու ետևէ ընկեր մնացեր են»։

Ազգասիրական զգացմունքով շնչաւորված երեսները բազմաթիւ են գրքի մէջ…։

Կարդացէք 7, 8 և 9 երեսները։

«Կրնամք նախանձելի սեպել երկրիս վրայ այդպիսի ազգի մը բաղդը, որ կու յայտնէ թէ կամ օտար բռնութիւններէ ազատ է մնացեր, կամ մանաւանդ՝ կրցեր է զինքը պաշտպանել անոնցմէ. իրեն նախնեաց աւանդ պահեր է անոնց նշխարացը քով. հայրենեաց զգացումն պէտք է որ շատ զօրաւոր ըլլայ այն ազգին վրայ, ինչու որ աչքովն այլ կու տեսնէ անոնց յիշատակարանները, կու պտըտի անոնց չափած ասպարիզին մէջ, կու գործէ հոն, ուր անոնք գործեցին.—իր կեդրոնն և սահմանքն յայտնի են. հայրենեաց ամեն տեսակ իմաստքն այլ ամփոփուած են մէկ գծով բոլորած սահմանի մէջ. գիծ մը, որ եռանկեան մը պէս կու միացնէ իր

և իր նախնեաց ծնարանին, քնարանին և գործարանին կէտերը։ Կրնայ այնպիսին չգիտնալ իր ազգաբանութիւնը, իր հարց կարգաւ յաջորդութիւնը, բայց գիտէ որ հազար տարիով այլ առաջ իր նախահայրն այն երկրին մէջ բնակեր է. հոն է եղեր իր բոլոր ազգատոհմին նահապետն կամ ազգապետն այլ. և ինչպէս հիմայ իր համազգի ընկերներն են, որ այդ գետինը կումշակեն, այսպէս երկայն դարերով այլ առաջ, նոյն արիւն և նոյն լեզուն ունող ընկերակիցքն, նոյն հողէն նոյնպէս իրենց սնունդ կու հանեն և ի նոյն հող կու դառնան եղեր.—գիտէ որ այն մեծամեծ ծառերն, որոնց տակ քանի մը հասակ զիրար յաջորդելով նստեր են, իրեն նախահարց տնկածներն են, որոնք նոյնպէս իրենց նախնեաց հինաւուրց ձեռատնկոց տակ խաղցեր և հանգչեր են.—այն ապառաժ լեռներն՝ իրենց կողերէն ընծայեր են իր քաղքին և աշխարհին ամենէն հին շէնքերուն նիւթն այլ, որոց ճարտարապետական ձևն և արձանագրութիւնք՝ դեռ իր հիմակուան ոճն և լեզուն կու յիշեցնեն.—այն հին կամուրջը՝ վայրենի ձորակի մը վրայ ձգուած՝ իր գեղին քանի մը երջանիկ նահապետաց ձգածն է.—այն մեծամեծ և հասարակաց կրօնից շէնքերն՝ իր նախնեաց բարեպաշտութեան և մեծագործութեան յիշատակներ են.—այն բարձր և քանդակազարդ կամարքն և կոթողքն՝ իրեն նախնեաց քաջութեան ցուցակքն են և յորդորքն անոնց նմանելու.—այն դաշտերն, ուր երբեմն պատերազմաց դրօշք

բարձրացան և երբեմն ընկան իրենց դրօշակաց ետևէն և անոնց գացողաց հետ, ուր երբեմն յաղթութեան թմբուկքն բոմբեցին, երբեմն յաղթուելու և ետք քաշուելու սրտակտոր փողն հնչեց, այն ամենն այլ իր նախնեաց թէ արեամբք, թէ քրտամբք ոռոգուեր են։

«Եթէ խնդայ հոն և եթէ լայ, անցեալ յիշատակաց համեմատ խնդումն այլ, լացն ալ ոչ միայն սիրով են, այլ և փառօք. վասն զի քաջութեամբ կռուիլն և պաշտպանելն աւելի արժանաւոր է, քան յաղթող դառնալն. միշտ փառք ու պարծանք է իր երկիրն և իր ազգը սեփական լեզուաւ և օրինօք պահելն.—ունենալ յատուկ և բնիկ լեզու մը, սահման մը, քաղաքավարութիւն մը, ծէս մը, և յիշատակարաններ, որոնց համար բարեկամ բարեկամի հետ խօսելով կարենան ըսել մ ե ր ը. այս կատարեալ հայրենիք է, երկրիս որ կողմն այլ որ ըլլայ, ինչ դիրք այլ որ ունենայ»։

Այս ոգևորված ազգասիրական զգացմունքը իւր ամենաբարձր արտայայտութեանը հասնում է 13 երեսի վերա։

«Ասոնց նման քիչ շատ ուրիշ ազգեր այլ ունին իրենց սեփական և սիրուն յիշատակներ, որ իրենց տևողութեան հետ պիտի հնանան, և աւելի քան զգինի և զբարեկամութիւն հնացեալ, հին ախորժ յիշատակքն զօրաւոր և քաղցր են մարդկան, և հասարակաց հաւասար վայելելի ամեն ժամանակ.... Ո՜հ, երբ այսպիսի յիշատակաց վրայ շարժի գրիչն, չի կրնար գոնէ կայ-

ծեր չցատքեցնել. պատմիչն յանկարծ վիպասան կըլլայ, բանադատն՝ բանաստեղծ։ Հայրենեաց հրեղէն հոսանքէն չհալող սիրտն շատ ապառաժ շատ ապառում, շատ այլանդակ և այլանիւթ պիտի ըլլայ...։ Վա՜յ այդպիսի հրէշին. երկիր կու հալածէ զանիկայ, երկինք չի կրնար ընդունիլ սիրտ մը, որ այնքան կարծր դառնած ըլլայ երկրի վրայ. անհնար է որ հայրենատեաց մը և լոկ անհայրենասէր մը՝ առաքինի ըլլայ, թող թէ սուրբ։ Երկնից պատգամ է՝ թէ ընկերը չսիրողն չի կրնար զԱստուած սիրել. հապա բոլոր ընկերները բովանդակող հայրենիքը չսիրողն ինչպէս սիրէ ամէն սիրոյ կենդրոն և շտեմարան հանդերձեալ բնակարանն մաքուր հոգւոց»...։

Բայց որտեղից է առնում իւր ակիզբը այս գրւածի մէջ գտնւող ազգասիրական զգացմունքը։

Մեր հեղինակը հեռու է ապրում մեր հայրենիքից...։ Առնում է նա արդեօք իւր ազգասիրական զգացմունքը դէպի կենդանի հայկական ժողովուրդ ունեցած սէրից... Կարելի է արդեօք սիրել մի ազգ, անկիրթ, մոլեռանդ, ողորմելի, հայրենիք չունեցող, երկպառակութիւն սիրող, միութեան թշնամի մի ժողովուրդ, —չեմ կարծում...։ Այդպիսի ժողովրդի վերա խղճալ կարելի է,—բայց նորան սիրել... հազիւ թէ...

Կարելի է միթէ սիրել այն, ինչ որ սիրելի չէ։

Առաւել հաւանական է ընդունել, որ հայ հեղինակի ազգասիրական խոր զգացմունքը ծագում են մեր հին կեանք հասկանալուց և մեր պատմութեան մօտ ծանօթ լինելուց, մեր անդարձ կորած ազգային կեանքի երեւոյթների նշանաւորութիւնը անկեղծ պաշտելուց։

Սորան վկայ թող լինեն յետագայ տողերը։

«Ա՛րդ ինչ պիտի ըլլայ ուրեմն, ով Հայկակ, այնքան գործոց և յիշատակաց դիմաց այս իմ քեզի ընծայածս—Ցուցիկք Հայրենեաց Հայոց. Եթէ դիպուածոց բազմութեան հետ համեմատեմք, արդարև հազարէն մէկ բիւրէն երկուք են. եթէ գործոց գերազանցութեան հետ, կու փութամ վկայելու, որ և յայսմ մասին ամենէն ընտիր կամ ցանկալի բաներն չեն այս քանի մը տասնեակ պատմածքս, զոր ըստ դիպաց իմն կամ ըստ աւուր պատշաճի յիշեր եմ. և եթէ գրուցուածիս ոճոյն և ձեւոյն նայիս, այն այլ շատ հեղ ըստ զանազան աւուրց կրից կամ ախորժից ըսած եմ, առանց աւելի արժանաւոր ոճի և ձեւի մը մտցնելու ըսածս. մանաւանդ որ ի սկզբան չէի մտածեր առանձին գրքով մ'ամփոփելու և հրատարակելու. ևս առաւել որ մեր ռամկական լեզուով խօսած եմ, որ թէև քեզի աւելի դիւրահասկանալի և ախորժելի է, Հայկակ, բայց ինձի՝ որ աւելի խոր զգացեր եմ հայրենեացս կիրքը, քան թէ բացատրեր,—ինձի՝ որ զպատմութիւն հնութեան մէջ յուզելով մեր նախնիքը մեզմէ շատ աւելի մեծահասակ տեսեր եմ,—ինձի, իմ զգացմանս արդարև այս

աշխարհիկ լեզուս շատ պզտիկ, շատ ցած, շատ անքաւական եկած է. ըսեմ նաև՝ թէև շատ օտարացեալ և այլազգացեալ ի բնիկ հայկական ոճոյ, որ ամենէն աւելի հաճոյն էր ինձի. այնպէս կերևի ինձի, թէ մեծ կրակ մը փտտած քուրջերով ծրարել կուզեմ, երբ այն իմ հին և սրբազան հայրենեացս հրեղէն յիշատակները այսպիսի խեղճուկ լեզուով կաւանդեմ, թողլով իր վսեմական գրոց լեզուն» (երես 19)։

Եւ այն պատճառով ևս հ. Ալիշանի գիրքը շնչաւորված է հին դասական ոգով, որ նա թէև նոր, աշխարհաբար լեզւով է գրված, բայց դարձեալ մեր դասական գրուածներ է յիշեցնում մեզ իւր փառաւոր ոճով։

Հրաւիրում եմ ամեն հայն կարդալ հ. Ղևոնդի գիրքը, նամանաւանդ որ այս գրվածից կարելի է ծանօթանալ մեր պատմութեան նշանաւոր բազում երևոյթների և անձերի հետ։

Սորանով բաւականանում եմ, յիշելով թէ իմ նպատակս չէր հ. Ալիշանի գիրքը քննելու, այլ մեր ընթերցողները այս նշանաւոր աշխատանքի ոգու և քանի մի հետաքրքիր երեսների հետ ծանօթացնելու։

„*Հայկական Աշխարհ*",
1870, № 7—8.

ՆԱՄԱԿ ԴԷՊԻ ԽՄԲԱԳՐՈՂ

(*Հեղինակի պատասխ.*)

Ահա հասայ ես Թիֆլիս։ Թոյլ տուեցէք ինձ, պ. խմբագրող, փոքրիկ և անկարգ այս նամակում ներկայացնել ձեզ առաջին օրերի տպաւորութիւններս...։

Մեծ ճանապարհորդութիւնից յետոյ, երբ մարդս ոչ իր պարապմունքը դեռ օրինաւոր կերպով կարգեց, ոչ ընտելացաւ կլիմային, և առհասարակ բոլոր նորա կեանքը դեռ ևս իւր սովորական շաւղին չի հետևում,—նա առաջին օրերը, կամ գուցէ շաբաթները (կարելի է և ամիսները) անգործութեան մէջ ստիպված է անցնել։

Պտտելով թէ փողոցներում, տեսնելով այն, ինչ որ արժանի էր տեսնել քաղաքում, ես թէ հին ծանօթներս պատահեցի, թէ վերջապէս և նորերի հետ ծանօթացայ, թէ մեր նոր ծխական ուսումնարաններին այցելութիւն արեցի։ Ի՞նչ փոփոխութիւններ կան մեր հայրենակիցների մտաւոր կեանքում. դէպի լաւը կամ դէ-

պի վատը են այդ փոփոխութիւնները... դժուար կլինէր ինձ պատասխանել այս հարցերին։

Ինչի՞ց է բաղկացած մեր սուղ մտաւոր շըրջանը։—Հայկական թատրոն չկայ, հասարակական դասեր մեզանում դեռ ևս երբէք չեն եղել, կան երկու երեք օրագիրներ, կան ծխական ուսումնարաններ, Ներսիսեան դպրոց...։

Ես թերթեցի «Արարատ», «Հայկական Աշխարհ» և «Մեղու Հ-ի», ես այցելութիւն արեցի օրիորդական ծխական ուսումնարաններին, ես խօսեցի Ներսիսեան դպրոցի քանի մի վարժապետների հետ...։

Խօսելով քանի մի անձերի հետ ես հարցրեցի, ինչի՞ աղջիկների և տղաների ծխական ուսումնարանները բաժանված են միմեանցից, և սկսեցի ապացուցանել խառն դաստիարակութեան օգուտը։—Ինձ պատասխանեցին թէ խառն դաստիարակութեան օգուտը ամենքը պարզ հասկանում են, բայց ոչ ոք յանձն չէ առնում իրագործել խառն ուսումնարան մի, որովհետև այս տեսակ դաստիարակութիւնը համապատասխան չէ հասարակութեան մէջ ընդունված սովորութիւններին։

Պտտելով փողոցներում պատահում եմ հին ծանօթներից մինին, որը խօսակցութեան մէջ հարցնում է ինձ թէ ինչի՞ գրում եմ ես... «մեզ, համալսարանում ուսում առածներին ձեր գրվածները ոչինչ նոր գաղափար չեն կարող ներկայացնել, իսկ ժողովուրդը հայերէն կարդալ չգիտէ»։ Ես դժուարացայ որ և է պատասխան

այսպիսի հարցին, քաջ զգալով, որ ինձ ինքնիս բաւական պարզ չէ իմ պարապմունքիս նպատակը։ Ես սկսեցի զննել շրջապատող հասարակական երևոյթները և համեմատելով նոցա ինձ հետ,—համոզվեցայ թէ նոքա ևս (թէ մարդիկ, թէ հիմնարկութիւնները) ինձ նման անորոշ դրութեան մէջ են...։

Հեռու երկրից (Գերմանիայից) մեր երկրի վերաբերութեամբ յօդուածները տպելով, ես կարող էի սկսել և թերթի հայեացքներ ունենալ մեր ժողովրդի կեանքի, մեր հասարակական երևոյթների մասին...։ Սխալվեցայ ես արդեօք կրկնելով թէ մեր հասարակական բոլոր յարաբերութիւնները կայացած են բարերարութեան սկզբի և ոչ ինքնաօգնութեան զօրութեան վերայ.—սխալվեցայ ես արդեօք յայտնելով թէ այն ժողովուրդը հասարակութեան անունին արժանի չէ, որը փոխադարձութեան տնտեսական գաղափարի ըմբռնելուն դեռ ևս չէ հասել...։

Եւ այս բոլոր ասածս կարող է արդեօք վերաբերիլ մեր հասարակութեանը, ունե՞ն արդեօք իմ մտքերս վերաբերութիւն մեր իրական կեանքին...։

Դարձէք, խնդրեմ, մեր օրագիրների և լրագիրների խմբագրութիւնները և դուք այնտեղ կտեղականաք, որ տպած նիւթերի մեծ մասը անվարձ են հրատարակվում, ուրեմն գրողները աւելորդ ժամանակ ունեցող մարդիկ են, ուրեմն կարողութիւն ունեցող, ունևոր դասի ձայն է լսվում միայն օրագրութեան մէջ... ուստի

մեր օրագրութիւնը ժողովրդի արտայայտութիւնը չլինելով, նորա կեանքը արուեստական է։ Կարելի՞ է արդեօք այսպիսի պարբերական հրատարակութիւններին երկար կեանք խոստանալ, կարելի՞ է վերջապէս նոցանից պահանջել գործի հասկացողութիւնը և ուրեմն հասարակութեան համար օգուտը սպասել։

Գնացէք ծխական ուսումնարանները, և դուք այնտեղ ևս մի և նոյն երևոյթը կտեսնէք. պաշտօնները անվարձ են, վարժապետները կամ ձրի կամ այնպիսի չնչին ռոճկով են դասեր տալիս, որ երբէք չէք կարող յուսալ, որ նոքա այս պարապմունքով ապրել կարող էին, ուրեմն զանց պէտք է առնէք հասարակութեան մէջ ծխական (քաղաքային և գիւղական) ուսումնարանների վարժապետների կազմվող դասը տեսնելու։

Այս հանգամանքները աչքի առաջ ունենալով, եզրափակում եմ որ օրագրութեան նման և ծխական ուսումնարանների գոյութիւնն ևս արուեստական է և կլինի (ուրեմն և երկարատև չի լինի), մինչև որ փոխադարձութեան գաղափարը մեր ամեն հասարակական յարաբերութիւններում չիրագործվի։

Ինձ թւում է թէ ուսումնարանների կառավարութիւնները իրանց կրթողական ներգործողութեանը մեծ հաւատ չեն ընծայում,—բայց կրկին շարունակում են իրանց գործունէութիւնը։

Ամեն տեսակ վարժապետների հետ խօսե-

լով, ինձ երևեց իբր թէ նոքա հերքում են իրանց պարապմունքի օգտաւէտ ազդեցութեան կարելութիւնը,—բայց կրկին շարունակում են դասատուութիւն անել...։

Թերթելով մեր օրագիրները և զննելով նոցա ուղղութիւնը կամ խօսելով խմբագրողների հետ ես համոզվեցայ, որ մեր պարբերական հրատարակութիւնների խմբագրութիւնները քիչ թէ շատ թերահաւատ են դէպի իրանց գրական գործունէութեան պտղատու լինելը,—բայց կրկին շարունակում են խմբագրել...։

Մեր օրագրութեան մէջ հրատարակվող նիւթերի ընթերցանութիւնը ինձ վերա այն տպաւորութիւն թողեց իբր թէ հեղինակները (կամ աւելի լաւ ասեմ թարգմանիչները) իրանց մտաւոր ծննդի վերա իրանք կասկածանքով և երկբայութեամբ են նայում...։

Արդեօ՞ք սոքա առանձնացած երևոյթներ են, կամ մի խոր, հաստատ և բնական արմատ ունեն հասարակութեան մէջ.. սոքա անցաւոր դէպքեր են արդեօք, կամ մեր հասարակութեան ընդհանուր օրէնք լինելով, կարող են հայ հասարակութեան յատկանիշ արտայայտութիւնը կոչվել...։

„Հայկ. Աշխ.“, 1870, № 9—10.

ՖՐԱՆՍԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ [1]

(Երկրորդ յօդուած)

Այս յօդուածը սկսելով ներողութիւն պէտք խնդրեմ ընթերցողից, որ այս իմ յօդուածը կարելի է անհետեւաբար, թեթեւ, անկապ լինի... բայց այսպիսի պատերազմական ժամանակին, պատերազմական բեմից ոչ հեռու ապրելով դրեթէ անկարելի է հետեւաբար մտախորհութիւնը։

---

1) Մի յօդուած այս վերնագրով արդէն ուղարկեցի ձեզ և յոյս ունեմ այս վերնագրով մի առանձին բաժին հիմնել ձեր օրագրում, որի մէջ կաշխատեմ շարունակ զանազան կողմերից նայել խնդրի վերա։ Գ. Ա.

Այս բաժնի պատասխանատու մնում է ի հարկէ մեծապատիւ հեղինակը միայն, որովհետեւ անհամաձայն լինելով հայեացքի կողմից երկու մեծ ազգերի պատմագրական նշանակութեան վերա, խմբագրութիւնը լիակատար ազատութիւն է տալիս իր մեծապատիւ աշխատակցին իր մտքերը և ուղղութիւնը յայտնելու։

„Փարիզի նշանակութիւնը“ յօդուածով (Հայկ. Աշխ. № 8) մենք պարզ յայտնեցինք մեր հայեացքը և համակրութիւնները դէպի ազատված Ֆրանսիա, որ դիմել է միշտ հասարակութեան, միութեան և եղբայրութեան։

Խմբ.

Ոչ թէ միայն պատերազմի բեմից հեռու չենք, բայց և ամեն մի րոպէ կարող ենք սպասել այստեղ, Հրէնոսի ձորերում, գերմանական պտղաբեր դաշտերում ֆրանսիական զօրքը իր նոր, կատարելագործված (նոր ձեւի) թնդանօթներով (միտրալիօզ) և իր վայրենի, բարբարոսական, Աֆրիկայից բերած սեւ զինուորականներով, տիւրկոսներով և զուավներով...

Ֆրանսիան հաւաստի էր թէ կ՚յաղթէ Գերմանիա... բայց ով հրաշք—ոչ թէ միայն գերմանական զօրքը առաջինը յարձակվեցաւ, և արդէն չորս կամ հինգ անգամ շարունակ յաղթեց, բայց և պատերազմը շարունակվում է Ֆրանսիայի հողի վերա, և Գերմանիա ոչ մի ֆրանսիական զինուորականը չտեսաւ (բացի գերիները)։

Երեւում է, որ ֆրանսիական զօրքը ամենեւին ընկել է ոգով, յուսահատվել է։

Տասնեւութ տարի շարունակ Ֆրանսիան համարվում էր ամենակրթված, լուսաւորված, կարգաւորված, զօրեղ, անյաղթելի պետութիւն... և այժմ միայն, վճռողական րոպէում երեւում են Նապօլէօնի կառավարութեան բոլոր պակասութիւնները։ Կառավարութիւնը թէեւ յաղթված վախենում է ժողովուրդը զինաւորել թշնամու դէմ, որովհետեւ վախենում է յեղափոխութիւնից, ամեն տեղ վատ կարգաւորութիւններ, ամեն տեղ պաշարի պակասութիւն. զօրքի մէջ գրեթէ սով, կառավարութիւնը անհոգ է, զօրապետները տգէտ են, զինուորական

դիտութեանը ծանօթ չեն, տէրութիւնը և Օլվիէի նախարարութիւնը ապացուցին թէ նոքա Գերմանիա, իրանց հարևան երկիրը չեն ճանաչում, հասարակութիւնը և Ֆրանսիայի օրագրութիւնը իրանց տգիտութեամբ և Գերմանիայի վերաբերմամբ անհաստատ, անհիմն տեղեկութիւններով զարմացնում են բոլոր Եւրոպա։

Նապօլէօնը կարծես անհետացաւ, տէրութիւնը չկայ, Ֆրանսիայի ժողովուրդը դրդըված է, զայրացած է, վրդոված է, զօրքը մեծ մասամբ կռիւներից յետոյ գերմանական զօրքի առաջ անկարգութեան մէջ փախչում է. զօրապետները ամեն օր գրեթէ իրանց տեղերից փոխվում են։—Այժմ զօրքի գրեթէ անսահման անպատասխանատու կառավարիչները երեք մարդ են. Բազէն, Տրօշիւ և Մօնտօբան (Պալիկաօ)։ Քաղաքական կառավարութիւնը փոքր առ փոքր երևի կանցնէ Տիէրի, Գամբէտտայի և Պիկարի ձեռն։

Բոլոր Եւրոպա, բոլոր աշխարհը, իրանք գերմանացիները զարմացած նայում են վերջին անցքերի վրա։ Մի նոր տարր, մի նորահաս զօրութիւնը յարուցանվում է Եւրոպայի մէջ... գերմանական տարրը։

Մարդկութիւնը դեռ ևս այնքան տգէտ և անզարգացած է, որ հարկաւոր էին այսպիսի յաղթութիւնները, այսպիսի ակներև ապացոյցները, որ ազգութիւնների մեծ մասը ճանաչէին գերմանական տարրի առաւելութիւնները։

Տգէտ ազգերի աչքում, որոնց կարգում պատիւ ունենք և մենք և զանազան ուրիշ ցեղերն ևս գտնվելու (մանաւանդ Թիւրքիայի վայրենի բնաւորութեան տակ գտնվող ողորմելի ազգերը) տգէտ ազգերի աչքում, ասում եմ, միշտ առանձին նշանակութիւն է ստանում այն ազգը, որը պատերազմում յաղթող է եղել...։

Եւ ինչ որ ոչ ոք չէր սպասում, կատարվում է. գերմանացիները, բանաստեղծների, գիտնականների, մտածողների ազգը յաղթում է զօրեղ, երևելի զինուորական ազգ մի։

Ֆրանսիայի համար այս օգտաւէտ է...

Բայց ով կարող էր իրան երևակայել, որ Ֆրանսիան մինչև այս աստիճան փոխել է Նապօլէօնի անբարոյական, ամեն ազատութիւն, անհատութիւն ոչնչացնող կառավարութեան տակ։

Ֆրանսիան այն աստիճանին ընկել է այս անընդունակ և անբարոյական կառավարութեան տակ, որ այժմ Գերմանիայի պատերազմը Ֆրանսիայի դէմ կարելի է անուանել ազատութեան պատերազմ ստրկութեան դէմ։

Բաղդի բերմամբ մեզ—Ռուսաստանի հայերիս համար, որոնք աւելի առիթ ունենք հիմնաւոր դաստիարակվելու քան թէ Թիւրքիայի մեր ողորմելի եղբայրները, պարզ էին միշտ, և պատերազմից առաջ ևս Գերմանիայի արժանաւորութիւնները։

«Ապացոյց, որ դուք, Ռուսաստանի հայերը, աւելի զարգացած էք քան թէ Թիւրքիայի մեր

եղբայրները,—ասում էր ինձ անցեալ տարի Փարիզում Մխիթարեան հայրերից մինը,—որ դուք ձեր ուսման ասպարէզը Գերմանիա էք ընտրել, և մեծ մասամբ այնտեղ են գնում ձեր երիտասարդները ուսում առնելու,— իսկ Թիւրքիայի հպատակները միայն Փարիզ են գալիս, Ֆրանսիայի թէթև, առերես կրթութիւնը նախապատուելով»։

Գերմանիան նշանակում է ա զ ա տ ո ւ թ ի ւ ն, իսկ Ֆրանսիան միայն յեղափոխութիւն, ուրեմն Գերմանիան պաշտպանում է արդեան մի գաղափարը, իսկ Ֆրանսիան դժբաղդաբար հետեւում է մի հնացած գաղափարին։

Ուրիշ անգամ կաշխատեմ մեկնել միտքս։

„Հայկ. Աշխ.", 1870, № 9.
Հէյդլբէրգ.

ՖՐԱՆՍԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

(Երրորդ յօդուած)

—

Շատերից լսել եմ և քանի մի լրագիրներում յետադայ միտք պատահել եմ. «Պատերազմի սկզբում, ուրեմն Նապոլէօնի կառավարութեան ժամանակը, Ֆրանսիան կրթված աշխարհի համար համակրութեան առարկայ չէր կարող լինել, բայց այն օրից սկսած, երբ Ֆրանսիան իրան հասարակապետութիւն յայտնեց, շատերի... համակրութիւնները նորան են պատկանում»։

Իմ կարծիքով այսպէս խօսել նշանակում է հ ա ս ա ր ա կ ա պ ե տ ո ւ թ ե ա ն բառով յափշտակվել առանց իրան բաւական աշխատանք տալու այս բառի ճիշդ նշանակութիւնը, նորա հասարակական պաշտօնը, մի ժողովրդի մէջ նորա իրագործման հնարաւորութիւնը, մի խօսքով առանց դրական կերպով հասարակապետութեան... մի ժողովրդի մէջ գործադրութեան բոլոր պայմանները քննելու...

Բայց կարելի՞ է արդեօք համակրել այն ազգին, որի բերանից մենք այս դարի սկզբից թէև ան-

դաղափար ներբողներ ենք լսում, որը իր պատմական ընթացքում քանի մի անգամ արդէն փորձել է յարմարեցնել այս գաղափարը իր քաղաքական կեանքին,—բայց որի նախակայական փորձերի հետեւանքը եղել է միշտ առաւել խիստ և անտանելի բռնաւորութեան հաստատում...

Մենք յետագայ ճշմարտութիւնը երբէք չը պէտք է դադարենք հաստատութեամբ կրկնելու. ինչքան (ընդարձակվում են) բազմանում են մեր իրաւունքները, այնքան աւելանում են մեր պարտաւորութիւնները։

Նոր շնորհված... իրաւունքների իրան արժանի ցոյց տալը նշանակում է այն իրաւունքներին համապատասխան պարտաւորութիւնները կատարել կարողանալ։

Իսկ քաղաքական պարտաւորութիւնները ճշտութեամբ կատարել հեշտ բան չէ։ Պէտք է պատրաստված լինել այս կամ այն պարտաւորութիւն կատարելու համար...

Ի՞նչ են Ֆրանսիայի հիմնարկութիւնները։

Ֆրանսիան ընդհանուր քուէարկութեան իրաւունք ունի, բայց նորա քուէարկողները կարդալ և գրել չեն իմանում, ուրեմն իրանց պաշտօն կատարելու ժամանակ կուրօրէն հպատակում են մի որեւիցէ կուսակցութեան ազդեցութեանը։

Ֆրանսիան հասարակապետութիւն է, բայց մշտական զօրք ունի, և չէ յայտնել երբէք ծառայելու ընդհանուր պարտաւորութիւնը։

Ֆրանսիան իւր ազատ սահմանադրութեամբ

նայելով պէտք է հաւասարութեան սկիզբը ներկայացնէր, բայց նորա պաշտօնեաները վայելում են այնպիսի օրինական արտօնութիւնները, որ չու ի հասարակ քաղաքացի։

Ֆրանսիան հասարակապետութիւն է, բայց նորա գաւառական կառավարութեան իրաւունքները խեղդված են կենտրոնական կառավարութեան զօրութեամբ։

Նա հասարակական գործիչների մէջ հաւասարակշռութիւն պիտի ներկայացնէ, բայց նորա կենտրոնի (Փարիզի) չափազանց ընդարձակված, հրէշաւոր արուեստագործութիւնը չէ թոյլ տալիս գաւառների արուեստագործութեան և երկրագործութեան անհատական, ազատ զարգացմանը նպաստելու։

Ինչ է Ֆրանսիայի հոգեւոր կեանքը։

Ֆրանսիան ազատութեան կուսակից է, բայց նա սաստկութեամբ պատժում է մտաւոր կեանքի ազատ, անհատական արտայայտութիւնը թէ օրագրութեան, թէ գրականութեան և թէ դասատուութեան մէջ։

Նա հասարակապետութիւն լինելով, անհատութեան սկիզբը պէտք է պաշտպանէ, բայց միշտ տարել է կաթոլիկ մոլեռանդ հոգեւորականութեան անսահման ազդեցութիւնը հասարակական կրթութեան վերա, այն հոգեւորականութեան, որի նպատակն է անհատութիւնը սպանել։

Ֆրանսիան հասարակապետութիւն է, բայց եւրոպական բոլոր երկիրներից, թէ

մասաւոր, թէ հասարակական կեանքի վերաբերութեամբ նա, կարելի է, ա մ ե ն ա կ ե ն տ ր օ ն ա ց ա ծ պետութիւն է... Սոքա են, մեր կարծիքով, գլխաւոր պատճառները, որ Ֆրանսիան երբէք չկարողացաւ հասարակապետութեան ձեւին ենթարկվել:

„Հայկ. Աշխ.“, 1870, № 9.
Թիֆլիս.

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ՝ ՆՈՐԱՁԵՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Դիւրին եւ է յարուցանել
զմեռեալս ի գերեզմանաց,
քան թէ միջնորդութեամբ
հնոյն լեզուի զնորն լուսաւորել զժողովուրդ:

Ս. Նազարեան.

I.

Յիշում էք ինչպէս Թիֆլիսի հայերը ման են գալիս փողոցներում... Ահա երկու վաճառական մայթով (տրոտուար) են անցնում իրանց առևտրական գործերի վերա խօսելով...: Տեսէք ինչպէս նոքա ծանրաքայլ կերպով են գնում, ինչպէս բարձրաձայն կանչում են խօսելու ժամանակ, ինչ շարժմունք են անում ձեռներով, ոտներով, երեսով... և ամեն մի րոպէ քղանցքից քաշելով միմեանց կանգնեցնում են, մի որ և իցէ ամենահասարակ միտք մեկնելու համար:

Յիշում եմ նմանապէս ինչպէս մեր ուսուցիչները չեն շտապում դաս տալու, ինչպէս

գործ ունեցող մարդիկ չեն շտապում իրանց գործերը կատարելու, իսկ օրէցօր ձգում են նոցա։

Յիշում եմ ինչքան ժամանակ հարկաւոր է հային մի ամենահասարակ միտք մեկնելու համար, ինչքան դատարկախօսութիւն, աւելորդաբանութիւն հարկաւոր է նորան, օրինակ, իր ծառային մի որ և է ամենահասարակ հրաման տալու համար....

II.

Այս բոլոր երևոյթների պատճառը ինչ է։

Մի կողմից ժողովրդի բնաւորութեան այսպիսի արտայայտութիւնը յատուկ է ամեն հարաւային ազգերին, իսկ միւս կողմից այսպիսի երևոյթը մեկնվում է մեր հասարակական դրութեամբ։

Երկիրը երկար ժամանակ պատերազմական դրութեան մէջ էր գտնվում, նորա հասարակական կեանքը չզարգացվեցաւ։ Կովկասի բնակիչները այժմ միայն սկսում են շունչ քաշել, աշխատել, զարգանալ։ Դեռ ես ճանապարհներ և երկաթուղիներ չկան, արուեստագործութիւնը զարգացած չէ երկրում, վաճառականութիւնը աննչան աստիճանին հասաւ, ուսումնարանները բազմաթիւ չեն, ուսումնական կեանքը չկայ։

Այս պատճառով Կովկասի բնակիչները քիչ պահանջմունք ունեն... Կովկասի բնակիչը աւելորդ ժամանակ ունի, կամ աւելի լաւ ասեմ նա չէ գնահատում ժամանակը։

Նա չէ շտապում գործել, գնալ, գալ, խօսել... նա խօսում է գրեթէ երգելով...

III.

Հին հայկական լեզու արտայայտութիւն է հին հայկական կրթութեան։ Ինչպէս և բարձր լինէր այն կրթութիւնը, նա դարձեալ միակողմանի էր, այն դարերի սուղ պահանջմունքին համապատասխան լինելով։ Վերացական գաղափարները տիրապետում էին այն ժամանակի կեանքին և սորա հետևանք է, որ մեր հին լեզուն չափազանց հարուստ է փոխաբերական ոճերով և խրթնութիւններով։

Իսկ դրական գիտութիւնները դեռ զարգացած չլինելով, մեր գրաբարի մէջ պակաս են բնական, հասարակական, քաղաքական և բազմարուեստական գիտութիւնների վերաբերեալ ասացվածները։

Հին ազգերի կրթութիւնը զուրկ էր այն գիտութիւններից, որոնք արդեան հասարակական կեանքում ամենանշանաւոր դեր են խաղում։

IV.

Լեզուն արտայայտութիւն է ազգի հասարակական կեանքի։ Բոլոր դասական լեզուները փառաւոր են, հարուստ են հնչիւններով և ծաղկեալ ոճերի առատութիւն ունեն... որովհետև

հին կրթութեան գլխաւոր գործիչներից մինը ճարտասանութիւնն էր (ռէտօրիք)։

Կրթութեան մեծ աստիճանին հասած արդեան լեզուների մէջ, ոճերի և ասացվածների դրական ճշդութիւնը ճարտարախօսութեան և փոխաբերական ոճերի տեղ է բռնում։

Թոյլ եմ տալիս ինձ յետագայ հեղինակութեան վերա հաստատել իմ միտքս. «Հին լեզուաց յատուկ ճանչցուած է հզօր բացատրութիւն և գեղեցիկ զարդարուն խօսուածք. այնպէս որ հին ու նոր ազգաց բնաւորութեանց համեմատութենէ ետքը ստոյգ կըմնայ միշտ, որ հիները ճաշակի հետևող եղած են, և նորերը մտաց, այսինքն տրամաբանական խօսուածքի»։ (Հ. Ա. Այտընեան, «Քննական քերականութիւն»—առաջին մասը եր. 264)։

V.

Մեր աղքատ, անտաշ աշխարհաբարը նմանապէս արդիւնք է մեր աղքատ հասարակական կեանքի։

Մի ազգ՝ հասարակական կեանքի զարգացման ժամանակ, զարգանում է և նրա լեզուն

Երբ ազգի մտաւոր և գիտնական կեանքը դեռ զարգացած չէ, նորան պակաս են ճիշդ ասացվածները։ Երբ ոչ գիտնական, ոչ արուեստագործական, ոչ առևտրական, ոչ ընկերական և հասարակական կեանքը ազգի մէջ զարգացման բարձր աստիճանին չեն հասել,—մարդիկ

աւելորդ ժամանակ ունեն, չեն գնահատում ժամանակը, չեն շտապում ապրել, գործել, խօսել, կենդանական յարաբերութիւններ կատարել,—և լեզուն ևս անշարժութեան այս դրութեանը ենթարկվելով, ոչ թէ միայն ասացվածների և ոճերի պակասութիւն ունի, բայց և չափազանց ծանր է, անընդունակ է հասարակական գաղափարներ յայտնելու, պարբերութիւնների դասաւորութիւնը չափազանց նահապետական է, լեզուի կազմութեան մէջ հնչիւնների աւելորդութիւն կայ, բառերը երկար են, այբուբենի մէջ նման տառերի առատութիւն կայ...։

Մենք տեսնում ենք, որ մի ազգի հասարակական զարգացման ժամանակ փոխվում են և այն ազգի բարք ու վարքը... և այս երևոյթը ազդեցութիւն ունի և լեզուի զարգացման վերա... մարդիկը աւելի գործունեայ են դառնում, առաւել գնահատում են ժամանակը, աւելի կարճ, պարզ և ճիշդ պարբերութիւնների կազմութեանը ընտելանում են, սակաւ են խօսում ժամանակի պակասութեան պատճառով կամ բառերը արագ արտաբերելու պատճառով հնչիւնների մի քանիսները կամ ամենևին կորչում են, կամ երկու երեք նոյնանման հնչիւնները մի հնչիւնին միանում են [1])։ Ուղղագրութիւնը փոխ-

[1]) Նշանաւոր է շատ, որ Մխիթարեանները (Վիեննա և Վենեցիա) ոչ թէ միայն (Թիւրքիայի բոլոր բնակիչների նման) սխալ կերպով գ տառը կ տառի տեղ, կամ ծ տառը ձ-ի տեղ, և փոխադարձաբար գործ են ածում,—այլ և նոյնանման հնչիւնների մի քա-

վում է, ինչպէս, օրինակ, ֆրանսիական լեզուի մէջ շարունակ էր փոխվում, կարճանում, հեշտանում,—կամ եթէ միևնոյն է մնում, ժամանակով տառերի մի մասը բառերի մէջ չէ արտասանվում...։

VI.

Հերքել չէ կարելի, որ մեր ազգը քանի մի ժամանակից սկսած հասարակապէս զարգանում է, մանաւանդ Ռուսա-Հայաստանի և Վրաստանի մէջ, որտեղ ռուսական տարրը եւրոպական կրթութեան միջնորդ է դարձել [1]։

Հերքել չէ կարելի նմանապէս, որ արդէն «Հիւսիսափայլի» գործունէութիւնը մեր լեզուին մեծ առաջադիմութիւն անել տուեց, մշակելով աշխարհաբարի ձևերը և մտցնելով բազմաթիւ-տածվածները։

Եւ եթէ նա մի քանի բաների մէջ, օրինակ երկար, չափազանց բաղադրեալ բառերը մոռցնելով, որոնց գործածութեան դէմ իրաւունքով յարձակւում է Հ. Գաբրիէլ Այվազեանը (Մանդարմունք հայկաբանութեան), կարելի է անհետեւաբար էր վարվում,—«Հիւսիսափայլը» այս

նիշները ամենևին չեն զանազանում. Ձ-ն և նոյն կերպով են արտասանում ինչպէս ց, նմանապէս ճ տառը չ-ի նման և այլն։

[1]) Աւելի ևս պէտք է զարգանայ հասարակական կեանքը, երբ կշինվեն երկաթուղիները, կհիմնվեն գործարանները, կմշակվի երկիրը, կմտցնվի գիտութիւնը։

դէպքում ընդհանուր մարդկային յատկութեանը ենթարկվեցաւ։

VII.

Եթէ գրաբար լեզուն և ոճերը արդեան հայ հասարակութեանը չեն յարմարում, եթէ ինքն ժողովուրդը լեզուի իր ամենօրեայ գործածութեամբ բողոքում է գրաբարի ոճերի փառաւոր աւելորդութիւնների դէմ, և նորա բառերի երկարութեան դէմ, եթէ ինչպէս Թիւրքիայի, այնպէս և Ռուսաստանի հայերի մէջ «իւր» դերանունի փոխանակ գեղեցիկ և հասարակ «իր» ձևը գործ է ածվում, եթէ ժողովրդական լեզւում ընդունվեցաւ «նրա» փոխանակ «նորա», «վրա», փոխանակ «վերա», «սա» փոխանակ «այս» և «այլ-ի» տեղ «ալ», ևայլն։ Եթէ հասարակական կեանքի զարգացման ազդեցութեան տակ ընդհանուր ձգտումն նշմարվում է համառօտել ոճերը և բառերը, հասկանալի է, որ և պ. Ստեփանէի փորձը նորաձևութիւնները մտցնելու արժանի է մեր ուշադրութեանը։

VIII.

Նպատակ չունենալով մի լեզուագիտական քննութիւն առաջարկել, այլ հասարակական կողմից միայն նայել խնդրի վերա,—ես չեմ կարող պ. Ստեփանէի նորաձևութիւնների ար-

ժամանաւորութիւնները կամ պակասութիւնները մի առ մի քննել։

Երկուսից մէկը. կամ հայկական լեզուն անընդունակ է զարգանալ հասարակական պահանջմունքի համեմատ, և ուրեմն ժամանակով բոլորովին չի գործածվի երկրի մէջ,—կամ եթէ կշարունակէ գործածվել հայերի հասարակական յարաբերութիւններում, նա պարտաւորված կը լինի մեծ փոփոխութիւններին ենթարկվել...։

Մի լեզուի գոյութեան կռուի համար հարկաւոր են աջողակ հանգամանքը և պայմանները...։

Մեր լեզու հասարակացնելու առաջին պայմաններից մէկը պէտք է լինի գիտնական ասացվածներով հարստացնելը։ Բայց պակաս նըշանակութիւն չպէտք է ունենան նորա գործածութիւնը հեշտացնելու փորձերը։ Այս կողմից նշանաւոր են պ. Ստեփանէի ջանքերը։

Պ. Ստեփանէն, գուցէ և անհետևաբար վարվելով[1]) առաջինն է եղել, որը ըմբռնեց (կարելի է և ներքին զգացմունքով, բնական ազդմամբ, ինստինկտ) ժողովրդական, աշխարհաբար լեզուի պահանջմունքը ազատվել ամեն տեսակ աւելորդութիւններից, հասարակ, ամենօրեայ, հասարակական գործածութեանը հասանելի դառնալու համար,—և աշխատեց դարման տալ այս պահանջմունքին։

---

1) Օրինակ, նա չգիտեմ ինչի, չընդունեց ժողովրդի ամենօրեայ գործածութենից հասանած իր, նրա, վրա, էլ և այլն։

Նորա ջանքը և ձգտմունքը մի խօսքով կարող են սահմանվել,—համառօտել...

Այս է պատճառը, որ պ. Ստեփանէն ուղղագրութիւնը փոխել փորձեց, դուրս ձգելով այն տառերը, որոնք բառերի վերջերում չեն արտասանվում,—աշխատեց պակասեցնել տառերի թիւը, որոնք մի և նոյն կամ նոյնանման կերպով հնչվում են...։

IX

Կարելի է պ. Ստեփանէն անհետևաբար էր վարվում, կարելի է նա շատ բաներում սխալվեցաւ,—կարելի նորանից առաջարկված լեզուի փոփոխութիւններից շատ փոքր թիւը կընդունվի, կարելի է երբէք չի ընդունվի ոչ մէկը.—բայց այնու ամենայնիւ նորանից առաջարկված նորաձևութիւնները ժամանակի ն շ ա ն են, ժողովրդի կենսական պահանջմունքի արտայայտութիւն են։

Հասարակական կեանքի արդեան առաջադիմութիւնը կանչում է դէպի մի հնացած ազգը, և դէպի նորա դասական, փառաւոր, բայց այժմեան կեանքի պահանջմունքին անհամապատասխան լեզուի աւերակները...

«Կամ պէտք է անհետանանք, կամ հիմքից պէտք է փոխվենք...»

X.

Բայց որքան և ինչպէս...։

Ահա մի խնդիր, որը անզօր է լուծել մի մարդի ամբողջ կեանքը, մի անձի աշխատանքը...։

Այս խնդիրը պէտք է լուծէ ժամանակը և ժողովրդի գործնական անդադար լեզուի մշակութիւնը։

Բայց և առանձին, մասնաւոր անձի այսպիսի նորաձևութիւնները չպէտք է արհամարհենք։ Նոքա թէև անգործադրելի լինէին, դարձեալ մեծ նշանակութիւն ունեն որպէս առաջադիմութեան և վերանորոգման համար խթան, որպէս բողոք անշարժութեան դէմ...

XI.

Վերջացնում եմ մի առաջարկութեամբ։

Աշխարհաբարը կարօտ է վերանորոգմանը. այսպիսի աշխատանքը վեր է մի անձի զօրութիւններից։

Հասարակութիւնից ենք սպասում որ նա, հասկանալով այս ճշմարտութիւնը, աշխատէ հայկական լեզուագիտական պարբերական ժողովները հիմնել, որոնց միջոցով կարողանան մշակել նոր լեզուի ձևերը։

Ժողովին կմասնակցեն հայկական գիտնականները, աշխարհաբար կամ գրաբար լեզուով գիրք հրատարակողները, հայկական օրագիրնե-

րի և լրագիրների ներկայացուցիչները,—Վէնեցիայից սկսած մինչև Թիֆլիս,—ուսուցիչները և այլն։

Հասարակութիւնից ենք սպասում, որ նոցա մէջից չորս, հինգ անդամներից մի մշտական մասնաժողով (կօմիտէ) կազմվէր, որի պաշտօն կլինի տարին կամ երկու տարին միանգամ (ինչպէս որ յարմար կլինի և վճռած կլինի առաջին ժողովից) հրաւիրել հայ գիտնականները և գրագէտները մօտ ու հեռու երկիրներից, նշանակված ժամանակին գալ, մասնակցել ժողովին, որի նիստերը միանգամ Թիֆլիս, միանգամ Կ. Պօլիս, միանգամ Երևան և այլն կարող են լինել։

Մասնաժողովի նպատակը և պաշտօնը ժողովի նիստերի բացակայութեան ժամանակ, կարող են սահմանվել և հաստատվել ժողովի վճռով։

„Հայկ. Աշխ.", 1870, № 12.
Հէյդլբերգ.

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒԹԻՒՆ

I.

Փոխանակութեան վերա խօսելով, ես յետագայ տողերը գրեցի մի նամակի մէջ։

«Հարցնում եմ ձեզանից. ինչո՞վ է զանազանվում վայրենի ազգը լուսաւորված հասարակութիւնից։—Նորանով է զանազանվում գլխաւորապէս, որ վայրենի ազգի մէջ անհատներից ամեն մէկը որ և է արդիւնքներ է պատրաստում միայն իր անձի և իր գերդաստանի բաւարարութեան (սատիսֆակսիօն) և պահանջմունքի համար,—իսկ լուսաւորված ժողովրդի մէջ անհատներից ամեն մէկը որ և է արդիւնքը փ ո խ ա ն ա կ ո ւ թ ե ա ն (էշանժ, օրմէն) նպատակով է պատրաստում։ Փոխանակութիւնը կամ փոխարէնը հասարակութեան գլխաւոր յատկութիւնն է.—որտեղ չկայ փոխանակութիւն, չկայ և հասարակութիւն։ Երևակայեցէք ձեզ երկու հարևան բնակող բարեկամները էրանց որդիներով։ Նոքա զանազան պահանջմունք ունեն, ինչպէս ամեն մարդիկ, և ձգտում են այդ պահանջմունքին լրումն կամ բաւարարութիւն տալ։

Օրինակ, նոքա պահանջմունք ունեն ջուր խմելու, և փոխանակ որ այդ մարդիկներից ամեն մէկը ամեն օր առանձին դէպի գետը գնար, ջուրը տուն բերելու,—բարեկամներից մէկը իր վերա է առնում այդ գործի մասին հոգսը և երկուսի համար ես ջուր ճարել։ Իսկ միւսը սորա փոխարէն իր վերա հոգացողութիւն է առնում բարեկամի որդուն դաս տալու։

«Բարեկամներից մէկը այն ծառայութիւն է անում միւսին, որ ջուր է ճարում նորա ամենօրեայ պիտոյքների համար, իսկ միւսը սորա փոխարէն բարեկամի երեխային լուսաւորութիւն է տալիս»։

Այս փոխանակութեան երևոյթի վերա նայում ենք ուրիշ կողմից ևս։

Երբ ժողովուրդը վայրենի դրութեան մէջ է գտնվում, անհատներից ամեն մէկը այնքան արդիւնքներ է պատրաստում, ինչքան հարկաւոր է նորան և նորա ընտանիքի բաւարարութեան համար։ Եւ իր արդիւնքը պատրաստելում նա այն կատարելագործութեան է հասնում, որ ներում է նորան գիտութիւնից զուրկ նահապետական կեանքի փորձը։ Երբ ժողովուրդը լուսաւորվում է, ամեն մի անհատի պահանջմունքը բազմանում են. նա հարկաւորութիւն ունի հագուստ, կօշիկներ, գդակ հագնելու, նորան հարկաւոր է բազմակերպ կերակուր, առաւել կատարելագործված բնակարան։ Վայրենի դրութեան մէջ մարդը անասունների հետ միասին

էր բնակվում,—ինչքան որ նա բարոյապէս և
տնտեսաբար զարգանում է, նա ոչ թէ միայն
անասուններից ջոկ բնակարան է չինում իր
համար, բայց և աշխատում է երկու սեռերին
հնար տալ առանձին բնակարաններ ունենալու։
Վերջապէս մարդը հետզհետէ աւելի է զգում
լուսաւորութեան (գոնէ սկզբնական լուսաւո-
րութեան) օգուտը և կրթութեան պահանջմուն-
քը։ Կին և մարդը, որոնք իւրեանց մէջ բաժա-
նում են կեանքի պաշտօնները, այսինքն որ կի-
նը իր վերա է առնում տնային տնտեսութիւ-
նը, իսկ մարդը—արտաքին գործերի հոգսը,
չեն կարող դարձեալ ամեն բանին ձեռք տալ։
Նոքա չեն կարող մի և նոյն ժամանակ բուրդ
ժանել, մահուդ պատրաստել, չորեր կարել,
կենդանիներ բուծանել, նոցանից առացած կաշին
աղաղել (տանէ), կաշուց կօշիկներ կարել, որթ
տնկել, նորանից գինի պատրաստել, ապակեայ
շշեր չինել, տախտակներ կտրել, քար տաշել,
տուն չինել, արմտիք (սէրէալ, խլեբնեա րաստէ-
նեա) ցանել, ալիւր աղալ, հաց թխել, վուշ
տնկել, կտաւ ոստայնանկել, նորանից ճերմա-
կեղէն կարել և այլն։

Բայց դարձեալ ամեն մի գերդաստանին և
ամեն մի անհատին հարկաւոր են չորեր, կօշիկ-
ներ, միս, հաց, գինի, ճերմակեղէն, գրքեր,
թուղթ և այլն։ Այս պատճառով ամեն մի ան-
հատը ընտրում է մի որ և է պարապմունք,
սահմանափակում է իր գործունէութիւնը մի
առանձին աշխատանքի ճիւղին։ Մէկը իր վերա

է առնում այս մթեր արդիւնաբերելու, միւսը
այն, երրորդը մտաւոր աշխատանք է ընտրում
իր գլխաւոր պարապմունք, հետեւում է գիտու-
թեանը և գիւտեր է անում գիտութեան մէջ։
Եւ որ մարդը կարողանար արդիւնաբերելով
միայն մի տեսակ մթեր լրումն տալ իր ուրիշ
պահանջմունքերին, նա պիտի այս մի տեսակ
մթերից այնքան արդիւնաբերէ, որ իր և իր
գերդաստանի պահանջմունքերին բաւականութիւն
տալուց յետ, կարողանար աւելորդ մնացած մը-
թերը փոխանակել ուրիշ մթերի վերա։ Սանոք
թէ Ա. անունով մարդը կօշիկներ է կարել և
առաջարկում է Բ. մարդին փոխանակել հացի
վերա այս մի զոյգ կօշիկներ։ Բ. թէև ունի կօ-
շիկների հարկաւորութիւն, բայց հաց տալու
միջոց չունի և առաջարկում է վառելու փայտ
նոցա փոխարէն։ Ընդհակառակն Գ. անունով
մարդը ուրախութեամբ առաջարկում է Ա.-ին
հացի խնդրած քանակութիւնը, բայց կօշիկների
հարկաւորութիւնը չունի այս րոպէին, այլ նո-
րան միս է հարկաւոր։ Այնպէս որ մարդիկների
համար դժուար կլինէր փոխանակել իրանց մը-
թերը, եթէ չլինէր մի այնպիսի մթեր, որը հեչ-
տութեամբ է փոխանակում բոլոր ուրիշ մթերի
վերա և որի քանակութիւնը ճիշտ է համեմա-
տել ուրիշ մթերի արժողութեան հետ։
Այդ մթերը փողն է [1]։

[1]) Զանազան ժամանակներում, զանազան ազգերի
մէջ փողը այլ և այլ նիւթերից էր կազմված։ Ամեն

II.

Ինչքան լուսաւորվում է մի հասարակութիւն, այնքան բազմանում են հասարակութեան անդամների պահանջմունքը։ Եւ պահանջմունքը բազմանալով, անկարելի է մի մարդին արդիւնաբերել այն բոլոր մթերները, որոնք հարկաւոր են նորան և նորա գերդաստանի պահանջմունքին լրումն կամ բաւականութիւն տալու։ Ուստի, կտեսնում ենք, մարդը սահմանափակում է իր գործունէութիւնը մի որ և է աշխատանքի ճիւղին, և աւելորդ արդիւնաբերված այս մի տեսակ մթերքի միջոցով առնում է ուրիշ նորան հարկաւոր մթերքը։

Եւ սահմանափակելով իր գործունէութիւնը մի տեսակ աշխատանքին, մարդը առաւել շուտ և առաւել կատարեալ կերպով է կատարում իր աշխատանքը։

Աշխատանքի բաժանութեան արժանաւոր հետևանքները սոքա են.—նախ մարդը միշտ մի տեսակ գործով զբաղած լինելով զարգացնում է իր մէջ ճարտարութիւնը, երկրորդ նա խնայում է ժամանակը, որ նա կկորցնէր անդադար

տեղ փողը կազմված չէ ոսկուց կամ արծաթից, օրինակ Աֆրիկայի քանի մի երկիրներում փողի դերը խաղում են աղի կտորները, իսկ հին Մեքսիկոյի (Ամերիկայում) մէջ փողի տեղ գործ էին ածում կակաո (հնդկանուշ) բոյսի սերմերը.—և այլն։ Եթէ կաջողվի, ժամանակով փողի մասին առանձնապէս կխօսեմ.

Ծ. Հ.

անցնելով մի տեսակ աշխատանքից դէպի միւսը, և երրորդը աշխատանքի բաժանութեան օգնութեամբ նա միշտ ունի գիւտեր անել, մեքենաներ հնարել, որոնք թոյլ են տալիս մի մարդին շատերի չափ աշխատանքը կատարել։ Անգլիացի Ադամ Սմիտը, աշխատանքի բաժանութեան օգուտը ժամանակի խնայելու կողմից ապացուցանելու համար, օրինակ է բերում իր տեսած մի գնդասեղների (քորոց) մի գործարանից, ուր 10 մարդ էին պարապում միայն, բայց որովհետև աշխատանքը բաժանված էր և աշխատողներից մէկը քորոցի մի մասն էր պատրաստում, միւսը գլուխ էր ձևակերպում, երրորդը գլուխը ասեղի վերա կպցնում, և այլն,—այս միջոցով ժամանակ էր խնայվում և տասն մարդը մի օրում 48 հազար գնդասեղ էին պատրաստում (ամեն մէկը 4 հազար)։ Եւ չպէտք է մոռանալ, որ Սմիտի ժամանակը գործարանները առհասարակ դեռ ևս մեծ կատարելագործութեան աստիճանին չէին հասած։

Ուշադրութեան արժանի է, որ հին ժամանակի հասարակութիւնները թէև խիստ կերպով բաժանված էին դասերի կամ կարգերի, որի անդամներին արգելված էր փոխել իրանց վիճակը,—բայց այնու ամենայնիւ աշխատանքի բաժանութեանը չէ հասել հին աշխարհը։ Հին Եգիպտոսի մէջ, օրինակ, քրմերը մի և նոյն ժամանակ բժիշկների և դատաւորների պաշտօն էին կատարում։ Ուրեմն մի և նոյն անձը կրօնի, բժշկութեան և իրաւաբանութեան ներկա-

յացուցիչ էր հասարակութեան մէջ։ Հրէաստանում զինուորական պետերը կատարում էին և դատաւորների պաշտօնը։

Միջին դարերում յաճախ էր պատահում, որ մի և նոյն մարդը (օրինակ սուրբ Դունստըն [1]), հոգևորական և նշանաւոր քաղաքական անձնաւորութիւն լինելով, յայտնի եղաւ մի և նոյն ժամանակ, որպէս ճարտար դարբին, զանգակ ձուլող, և կանանց զգեստների ձևերի նըկարիչ։

Մարդը հեշտութեամբ ևս կարող էր բազմագէտ լինել միջին դարերում, որովհետև այն ժամանակի գիտութիւնների ասպարէզը այնքան նեղ էր, որ մի մեծ հանճար հարկաւոր չէր լինի մարդկութենից արդինաբերված բոլոր հմտութիւնները ըմբռնելու համար։ Միջին դարերի գիտութեան մէջ տիրում էր լատինական լեզու։ Նա մեծ օգուտ է բերել ժամանակին, նորոգելով հին դասական (կլասիքական) աղբիւրների միջոցով Եւրոպայի նորահաս միտքը և գիտութիւնը, բայց երբ եւրոպական գիտութիւնը առաջադիմութիւն անել և հների գիտութենից գերազանցել փորձեց,—լատինական լեզու, մեռած լեզու լինելով, անզօր դարձաւ

1) Սուրբ Դունստըն, անգլիացի հոգևորական, Կէնտըրբըրէրի եպիսկոպոս, ծնվեցաւ 925 թւին։ Երևելի է իր կրօնական բարոյականութեամբ, հմտութեամբ, քաղաքական գործերով և արուեստական անթիւ ընդունակութիւններով։ Հիմնեց 48 վանք։ Մեռաւ 988 թւին։

Հ. Տ.

գիտութեան բոլոր ճիւղերը ընդարձակելու և նոր ձևեր ընդունելու։ Մեռած լեզու մեռած ձև լինելով, չէ կարող առաջադիմութիւններ անել։ Ամեն մի ազգութեան անտաշ լեզու, իր նոր, կենդանի և փոփոխական ձևերով առաւել ընդունակ յայտնվեցաւ մարդկութեան գիտութիւնը առաջադիմութեան ճանապարհին մղելու։

Սորանից ևս պարզ երևում է աշխատանքի բաժանութեան պահանջմունքը և օգուտը։

Հասարակութիւնը զարգանալով և լուսաւորվելով, նորա մէջ գիտութեան և արուեստների ճիւղերն ևս ընդարձակվում էին և բազմանում էին,—և աշխատանքի բաժանութեան երևոյթը յայտնվեցաւ ոչ թէ որպէս մարդի ազատ կամքի գործը, այլ որպէս լուսաւորվող հասարակութեան առաջադիմութեան անհրաժեշտ և բնական հետևանքը։

III.

Քանի մի եւրոպական տէրութիւնները, միջին դարերում հասկանալով աշխատանքի բաժանութեան պահանջմունքը և օգուտը արւեստների համար, այս գործի իրագործելուն ձեռք տուին իրանց հպատակ ազգերի մէջ։

Ֆրանսիայում XIII դարին Լուդովիկ IX-ի հրամանով կազմվեցան մօտ 110 առանձին արուեստների ընկերութիւններ (կօրպօրասիօն, համքար)։ Մի ընկերութեանը պատկանող արւեստաւորը իրաւունք չունէր (նորան պատիժ

էր սպառնում) ուրիշ տեսակ արուեստին պարապել։ Լուդովիկ IX-ի այդ խնդրի վերաբերութեամբ տուած օրէնքը, ասում է պ. Բլանկի, կարելի է մի պարբերութեամբ նկարագրել. «ամեն մի մարդը մի արուեստին կպարապէ, և միայն իր արուեստին, որ նա իր աշխատանքը լաւ կատարէ և ոչ ոք չխաբէ»։

Լուդովիկ IX-ից յետ, Ֆրանսիայի ուրիշ թագաւորները զանազան փոփոխութիւններ արին նորա օրէնքի մէջ։ Առանձին ընկերութիւնները, տէրութեանը փող վճարելով, ստանում էին թագաւորից այս ինչ կամ այն ինչ արդիւնք պատրաստելու կամ արուեստին պարապելու արտօնութիւնը։ Այդպիսի ընկերութիւնները հիմնվեցան տէրութեան հրամանով Ֆրանսիայի բոլոր քաղաքներում։ Առանց մի ընկերութեան պատկանելու մարդը իրաւունք չունէր որ և է արուեստին պարապել։ Մտնելով մի արուեստական ընկերութիւն, աշակերտը անթիւ աստիճաններով էր անցնում մինչև վ ա ր պ ե տ ո ւ թ ե ա ն (մէտրիզ) հասնելը։ Իսկ մեծ մասով չէր հասնում փողի պակասութեան պատճառով, կամ գլխապետի նախանձի արգելքով։ Ինչքան հանճարաւոր մարդիկներ խեղդեցին իրանց անշարժութեամբ արուեստական ընկերութիւնները։

Միջին դարերի արուեստական ընկերութիւններին է պարտական մարդկութիւնը, եթէ դիւտերից շատերը կորան նորա համար։

Եթէ մի որ և է մարդը արուեստական ըն-

կերութեանք չպատկանելով, մի գործիք էր հնարում, նորա դէմ գանգատում էին այն արուեստական ընկերութեան անդամները, որոնք յատկապէս իրաւունք ունէին ձևակերպել այն նիւթը, որից նա օգուտ քաղեց իր նոր գործիք պատրաստելով։

Օրինակ, երբ Արգան լապտերներ կատարելագործեց, հնարելով կրկին հոսանքով լապտերը (ա դուբլ կուրան), նորա դէմ գանգատեցին և նորան դատապարտել պահանջեցին յետագայ ընկերութիւնները. թիթեղնագործներ (ֆերբլանտիէ), կպղագործներ (սէրիւրիէ) և դարբիններ։

Թագաւորը ստիպված էր Արգանին իր հովանաւորութեան տակ առնել և ազատել նորան դատաստանից։ Ուրեմն օրէնքներ հաստատեցին ֆրանսիական թագաւորները, և նոյն իրանք Ֆրանսիայում ծնվող տաղանդները պաշտպանելու համար ստիպված էին անպիտան օրէնքի դէմ գործել։ Ամեն բան կախված էր ուրեմն կամայականութիւնից (պրօյզվօլ) և ոչ թէ օրէնքների արդարութիւնից։

Ոմանք կ'նկատեն, կարելի է, թէ տաղանդաւոր մարդիկ իրանք են մեղաւոր, եթէ նոցա հալածում էին, որովհետև հալածանքից ազատվելու հնար կար, այն է մտնել մի որ և է արուեստական ընկերութիւնը որպէս անդամ։ Բայց մինթէ արուեստական ընկերութիւնը կհամաձայնէր ընդունել վտանգաւոր հակառակորդներ իր անդամների թիւը։

Այսպիսի դրութեան մէջ մնացին արուեստները քանի մի դարեր, երբ վերջապէս երևեցաւ ֆրանսիական մեծ յեղափոխութիւն և ոչնչացրեց արուեստական ընկերութիւնները։

IV.

Աշխատանքի բաժանութիւնը թէև օգտաւէտ լինելով հասարակութեանը, ունի և իր պակասութիւնները։ Աւետարանը ասում է. «Ինչ է շահվում մարդը, եթէ նա, բոլոր աշխարհը ստանալով, իր անձը կորցնում է» (Ղուկ. Թ. 25)։ Աշխատանքի բաժանութիւնը օգտաւէտ լինելով բոլոր մարդկութեանը, կարող է անչափ ընդարձակվելով վնասակար լինել առանձին անհատին։

Աշխատանքի բաժանութիւնը զարգացնում է մարդիս մէջ ճարտարութիւն, բայց խիստ լինելով, նա մի և նոյն ժամանակ միակողմանի կերպով է զարգացնում մարդս։

Համակրելով աշխատանքի բաժանութեան սկզբին, մենք մի և նոյն ժամանակ պէտք է աշխատենք չափը պահպանել նորա գործադրութեան մէջ. պէտք է աշխատենք, որ այդ սկզբի իրագործմանը չզոհվի մարդի անհատական հոգևոր և մարմնաւոր յարմար զարգացումն։

«Վայ այն հասարակութեանը, ասում է գերմանացի գիտնական Ռօշըր, որի հոգևորականները միայն աստուածապաշտ են, որի իրաւաբանները միայն հմուտ են հայրենիքի օրէնքներին, որի զինուորականների մէջ միայն զարգացած է զինուորական ոգին»։

Ռօշըրի կարծիքով ցանկալի է, որ նստողական կեանքը վարող գիտնականը մարմնամարզութեամբ պարապէր, որ ամեն մի քաղաքացի իր պարտաւորութիւնը համարէր սովորել զինուորական արուեստը իր հայրենիք պաշտպանելու համար, որ քաղաքացին մասնակցէր իր հայրենիքի քաղաքական կեանքին և այլն։

V.

Ինչպէս որ հասարակութիւնը կազմված է անհատներից, այնպէս և բոլոր մարդկութիւնը կազմված է ազգութիւններից։ Ազգը մի և նոյն դեր է խաղում մարդկութեան մէջ, ինչ որ առանձին անհատը հասարակութեան մէջ։

Անհատութիւնը մարդիս մէջ ծնվում է մարդի կազմուածքից, բնութիւնից ստացած նորա ներքին յատկութիւններից, ընդունակութիւններից, հակմունքից, և զարգանում է թէ ընտանեկան դաստիարակութեան, թէ հասարակական կրթութեան միջոցով։

Նոյնպէս և մի ազգի անհատութիւնը պայմանաւորվում է նորա ցեղի յատկութիւններով, և նմանապէս արտաքին աշխարհի երևոյթների, կլիմայի, երկրի աշխարհագրական և տեղագրական դրութեան, պատմութեան ընթացքի ազդեցութեամբ։ Մի ազգը հարաւում է ապրում, միւսը հիւսիսում, երրորդը երկրագնդի միջակ

դոտխում։ Մէկը ծովի ափում, միւսը սարոտ երկրում, երրորդը տափակ երկրում...։ Ազգի մէջ ցեղի յատկութիւնները և արտաքին աշխարհի երևոյթների ազդեցութիւնը նորա մէջ զարգացնում են ուրիշ ազգերից տարբեր բնաւորութիւն և կարգում են նորան մի աշխատանքին և արդիւնաբերութեանը (հոգևոր և նիւթական), որը նորա բնաւորութեանը յատուկ է և համապատասխան։

Զանազան ժամանակներում, զանազան ցեղերը և ազգութիւնները այս ինչ կամ այն ինչ արդիւնաբերութեամբ օգտաւէտ եղան մարդկութեանը։ Մենք չենք կարող հերքել, որ սէմիտական ցեղերի մէջ յարուցվեցան, երեք անգամ, մարդկութեան վիճակի վերա ամենամեծ ազդեցութիւն ունեցող երեք կրօն։ Մենք չենք կարող չճանաչել, որ հռոմայեցիները գլխաւորապէս մշակեցին իրաւունքի գաղափարը։ Չենք կարող մոռանալ, որ յոյներին է պարտական մարդկութիւնը ամենանշանաւոր արհեստական արդիւնքներով։

Մարդկութիւնը կազմող զանազան ազգերի և ցեղերի կեանքը և տնտեսական արդիւնաբերութիւնը իրագործում է մարդկութեան մէջ աշխատանքի բաժանութիւնը։

Ո՞վ չէ իմանում որ ազգերը, որոնց երկիրը հարուստ է բնական արդիւնքներով, աւելի հակումն ունեն իրանց երկրից ստացած (հում) արդիւնքը ուրիշ երկիրները վաճառահանել (էքսպորտէ), իսկ բնական արդիւնքներով աղ-

քատ երկիրները մեծ մասով հակումն ունեն արուեստագործական աշխատանքին, այսինքն հում արդիւնքի ձևակերպութեան կամ մշակութեան պարապմունքին։

«Եթէ սա առհասարակ պատմական ճշմարտութիւն է, ասում է Հէյդլբէրգի պրօֆէսօր պ. Կնիս, որ Անգլիայում տիրում է սառն հաշիւը և եսականութիւնը մասնաւոր յարաբերութիւնների մէջ, սորա հետ և ազգային հպարտութիւնը և արհամարհանք դէպի մնացած աշխարհի ազգերը, ինչպէս և ձգտումն դասերի բաժանմունքին, հնացած օրէնսդրութիւնը, աշխատասիրութիւնը և ինքնակառավարութեան զօրութիւնը (սէլֆգօվէրնմէնտ), եթէ հաւասարութեան զգացմունքը, զուարճութիւնների ձըգտումն, նորութիւնների սէրը և լաւ ճաշակը գերազանցում են Ֆրանսիա ուրիշ երկիրներից, եթէ Գերմանիային յատուկ են բաւականացուցիչ աշխատանքը, մարդասիրութիւնը, աշխատասիրութիւնը և հասարակ ընկերական յարաբերութիւնները, եթէ իտալացոց անբաժանելի են ինչպէս արհեստական ընդունակութիւնները, այնպէս և սէր դէպի քաղցր անգործութիւնը և այլն, եթէ սա առհասարակ պատմական ճշմարտութիւն է, կամ թէ այդ ազգերը որ և է յատկութիւններ ունեն, որոնցով նոքա մէկ մէկից տարբերվում են,—այն ժամանակ ամեն մի ազգի մէջ այդպիսի ազգային յատկութիւններին և արժանաւորութիւններին համապատասխան պէտք է լինի թէ նորա տնտեսական կեանքի

երեւոյթները, թէ ազգային տնտեսութեան ընթացքը»։

VI.

Ինչպէս մանկավարժութեան խնդիրը պէտք է լինի գտնել, յարուցանել և զարգացնել երեխայի մէջ անհատական հակումները և ընդունակութիւնները, այնպէս և, աչքի առաջ ունենալով մարդկութեան մէջ աշխատանքի բաժանութեան օգուտը, քաղաքականութեան խնդիրը պէտք է լինի գտնել, յարուցանել և զարգացնել մի ազգի մէջ եւ նորան յատուկ այնպիսի կողմը, որը նորա հոգեկան և տնտեսական կեանքում արդիւնաւոր գործիչ կարողանար դառնալ։

„Հայկ. Աշխ.", 1871, № 1—2.

ԵՐԿՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Բարեկենդան շաբաթը մենք երկու հայկական ներկայացում ունէինք Թիֆլիսում, երկուսն էլ գերմանական կլուբի դահլիճում։

Ուրբաթ օրը ներկայացնողները հին հայկական խմբի դերասաններն էին, որոնք չնայելով մեր հասարակութեան բոլոր դասերի դէպ հայ-թատրոնական գործը անողորմ անտարբերութեանը, փոքր ի շատէ անուն են առացել, որը նոքա թանգ գնով են գնել... տաղանդ, եռանդ և անշահասիրութիւն։

Կիրակի օրը ներկայացնում էր սիրողների (любители) մի խումբ։

Պ. Ամերիկեանի առաջին խօսքերը ծափահարութիւնների արձագանք յարուցին... այդ ինչ է... մեր հասարակութիւնը իրան անպատւում է։ Ի՞նչ—մենք այսքան թանգ վճարում ենք դերասանի նուազ ծառայութեանը,—նորա անշահասիրութիւնը, եռանդը, ճշմարիտ տաղանդը մենք ծափահարութիւններով ենք վարձատրում... այդ շատ շատ է։

Ո՞վ է եղել այն սուտ ասողը, որ թատրոնը,

որ բեմը ազդում է ժողովրդի բարոյական և մտաւոր զարգացման վերա. այդ սուտ է։ Դերասանը ինքն իր ուրախութեան համար է ներկայացնում։ Դերասանը անգործ մարդ է, և հեղինակն էլ, որի սրտաշարժ գրուածը նա աշխատում է մեզ իր խաղով մեկնել, նմանապէս անգործ մարդ է։ Վարձատրել դերասանները ինչ հարկաւոր է։—Նոցա համար վարձատրութիւն է, եթէ հասարակութեան քանի մի անդամներս բարեհաճում ենք նոցա ներկայացմանը ներկայ գտնվելու...։

Հայերը, որոնք մեծ մասով առուտուրով են պարապում,—դրական ժողովուրդ են։ Գործ-գործ, փող առուտուր... Մենք հերքում ենք արհեստը, հերքում ենք, որ նա մարդի բարոյական և մտաւոր զարգացման վերա ազդեցութիւն ունի, մենք արհամարհում ենք հեղինակը, որը երեսի քրտինքում աշխատում է տարիներով միտք մշակել, ձգտում է արդարութեան, մենք ծիծաղում ենք դերասանի վերա, որը կամենում է (այն էլ անվարձ) թարգման դառնալ հեղինակից մշակված մտքերի...

Մենք դրական (ПОЛОЖИТЕЛЬНЫЙ) ժողովուրդ ենք, մենք վաճառականներ ենք, մենք միայն հարկաւոր բաների համար փող ենք մսխում։ Բայց մենք ժլատ չենք,—ամենևին,—մենք ուրախութեամբ մսխում ենք փողերը, և մեծ փողերը, միայն թէ մեր ծախսած փողերի գործադրութիւնը ակներև, շօշափելի լինի։ Մենք չենք հետևում երևակայական գաղափարներին...

արհեստ, թատրոն, գիրք, օրագրեր, բեմական գրված, ուսումնարան... Ինչ հարկաւոր է այսպիսի բաների վերա կորցնել թանկագին րոպէները, երբ մեզ ծանօթ են աւելի դրական և ճշմարիտ ուրախութիւնները։ Մենք ժլատ չենք—ոչ,—մենք ուրախութեամբ մսխում ենք մեր փողերը այնպիսի գործերի համար, որոնք անմիջապէս մեզ զուարճութիւն են պատճառում... փառք, պատիւները, վարձկան կին... և այլն։

Մենք դրական ազգ ենք,—դրական, շօշափելի օգուտներին հետևող ազգ ենք։

Մենք չենք հասել դեռ ևս այն զարգացման աստիճանին, որ, օրինակ, բեմական արհեստի օգուտը ըմբռնէինք,—որովհետև նրանից դրական օգուտ չենք տեսնում։ Նորա տուած օգուտը բ ա ց ա ս ա կ ա ն է։ Հեղինակը մեզ մեր պակասութիւններն է ցոյց տալիս... մեզ ինչ փոյթ։ Դերասանը թարգման է դառնում հեղինակից ցոյց տուած հասարակական պակասութիւնների... մեզ ինչ փոյթ։

—Այս բամբասանք է, պարոն, լսում եմ ես մի կողմից, մենք հասկանում ենք, մենք գնահատում ենք արհեստը, մենք դարման ենք տալիս ամեն տեսակ ազնիւ մտքերին և ձգտողութիւններին։ Արհեստը մեզ բարոյական զուարճութիւն է պատճառում։

Դուք այս բոլորը ասում էք խօսքով, բացարձակ պատասխան եմ տալիս ձեզ.—խօսքը ուրիշ է, գործը ուրիշ։

Մի երիտասարդ, ուսում առնելուց յետոյ

վերադառնում է իր հայրենիքը, կրկին մտնում է այն հասարակութիւնը, որի առօրեայ չոր և եսական անողորմ հաշիւը դէպի եղբայրները, չռայլութիւն և ներողամտութիւն դէպի իր անձը, որին հասանելի չեն թէ վսեմ բարոյական և հոգևոր գաղափարները, և թէ արհեստական զուարճութիւնը, որին մատչելի են միայն կոպիտ, նահապետական զուարճութիւնները... Թուղթ, վարձկան սէր, փողի ագահութիւնը, որը ձեռք բերելու համար ամեն միջոցները ներելի են... Այդպիսի հասարակութիւնը վերադառնում է երիտասարդը և փորձում է առաջին ժամանակը հասարակութեան մէջ կենդանի նախապաշարմունքներին և կրքերին ընդդիմադրութիւն անել։ Նա խօսքով ձգտում է գործունէութեան, աշխատանքին, արդարութեանը, անհատի իրաւունքին։ Բայց նա հասարակութեան ծնունդ է, նորա վերա իրապէս չպատուաստվեցաւ նոր կեանքի ուղղութիւնը։ Առաջին կենսական դժուար խնդրին պատահելիս, նա իր անընդունակութիւնն է ցոյց տալիս մի ծանր կենսական խնդիր բռնելու։ Նա փոքր առ փոքր ենթարկվում է հասարակութեան հոսանքի զօրութեանը, նա բարոյապէս և մտաւորապէս ընկնում է հասարակական մակերևոյթի տակ... Նորա գերազանցութիւնը շրջապատող երևոյթների վերա ցնորք էր։ Նա չընդդիմացաւ հոսանքին. Նա խօսքով բարձր էր, բայց գործով հաւասար է... էլի մէկ զոհ։

Մի օրինակ մի հնացած հասարակութեան

մէջ այնքան զարգացաւ, որ իր սրտի մէջ անհատական, մտածող, ճշմարիտ սէրի նշոյլը գոնէ զգացել է։ Բայց նորա մէջ նախապաշարմունքը, խաւարի աւանդութիւնները, ծնողների տգիտութիւնը և կոպիտ զօրութեան կոյր հընազանդութիւնը այնքան զօրեղ են, մանաւանդ որ ստորադրեալ դրութիւնից նա ելք չունի, հասարակութեան մէջ աշխատանք չգտնելով (և աշխատելն էլ նախապաշարմունքը չէ ներում), —որ նա նախապատւում է ծնողներից աւանդուած սնոտիապաշտութեան անձոռնի զգացմունքին հպատակելը, քան թէ հետևել իր ներքին, անհատական վսեմ զգացմունքների արշալուսին... էլի մէկ զոհ։

Ափսոս որ միայն գրվածի միայն երրորդ գործողութիւնը ներկայացվեցաւ։

Գ. Ամերիկեանի կօմիզմը նորան լաւ դերասանների շարքումն է դասում։

Գ. Զմշկեանը հարուստ վաճառականի դերումը մի խոր տպաւորութիւն թողեց ինձ վերա։

Հարուստ վաճառական Բրիլեանտօվը երկար ժամանակ ներողամիտ է դէպի իր թեթևամիտ որդին։ Հին սերունդը իսկոյն չէ ըմբռնում նոր սերունդի պակասութիւնները, նախագուշակելով, ներքին ազդմամբ, նորերի մէջ հներին անհասանելի հմտութիւնը և նորանից բարձր կըրթութեան աստիճանը։ Բայց հասանում է մի ժամանակ, երբ նոքա մէկ մէկին ճանաչում են...

հին սերունդի ներկայացուցիչը յանկարծ պարզ է տեսնում իր որդու թեթեւամտութիւնը, անբարոյականութիւնը, լրբութիւնը, առերես, վայրիվերոյ կրթութեան հետեւանքը... և կարծես թէ վրէժ հանելով իր սխալմունքից, վրէժ հանելով իր սեփական անձից, որ նա նոր սերունդի հետ պատահելիս կարողացաւ առաջին անգամ սխալվել, խառնվել, չփոթվել,—նա սկսում է յանկարծ այն խստութեամբ և անողորմ բռնաւորութեամբ վարվել երիտասարդի հետ, որ գործ էր դնում նորա հայրն եւ նորա վերաբերութեամբ։

Ներկայացման վերջին գրվածը «Պառաւներին խրատ» ֆարսվօղըվիլի ժամանակը եթէ մենք շատ ծիծաղեցինք, մենք այնքան պարտական չենք գրվածի մտքին, ինչքան տ. տ. Արամեանցի, Սաթինիկի, պ. պ. Ամերիկեանցի և Միրաղեանցի գեղեցիկ խաղին։

Կիրակի օրը, ինչպէս ասացի, ներկայացնում էին սիրողները։ Դէպի սիրողները մենք, ի հարկէ, պէտք է աւելի ներողամիտ լինենք, քան թէ դէպի դերասանները և այս պատճառով յայտնում ենք թէ գնահատում ենք պարոնների ձգտողութիւնը և բարի նպատակը։ Ներկայացրած Ֆաուստը ոչ օպէրէտի նման էր մի կողմից, իսկ միւս կողմից Գէօտէի գրվածի մէջ միտքն եւ անյաջողակ թարգմանութեամբ անճոռնացրած էր։ Այն օրը մենք կրկին ուրախութիւն ունեցանք բեմի վերա մեր չնորհալի

դերասաններին տեսնել... բայց այս անգամ նոցա խաղը կարծես աւելի սառն էր և աննշան... կարելի է այն պատճառով, որ բեմի վերա շրջապատում են նոցա արհեստական գործի մէջ դեռ եւս անփորձ երեխաները։

„Մեղու", 1871, № 7.

ԳԻՏՆԱԿԱՆ ԱՆՍԽԱԼԱԿԱՆՈՒԹԻՒՆ

I.

Երբ անցեալ տարի կաթօլիկ սուրբ հայրերը, գումարվելով Հռօմի մէջ, յայտնեցին իրանց ժողովի բերանով և հաստատեցին պապի անսխալականութեան վարդապետութիւնը, ամբողջ Եւրօպան ծիծաղով պատասխանեց այդ անճոռնի վարդապետութեան յայտնութեանը։

Ի՞նչ է պատճառը, որ ժամանակակից եւրօպական հասարակութիւնը այլ ևս չէ համակրում այդպիսի միջնադարեան գաղափարներին... բոլոր լուսաւորւած երկիրների մէջ ինչ էր այն սաստիկ ծիծաղի շարժառիթը։

II.

Եթէ մենք քննական աչքով նայենք բնութեան երևոյթների, թէ մարդկութեան պատմութեան ընթացքի, թէ անհատի հոգևոր կեանքի վերա,—մենք կհամոզվենք որ ոչ մի տեղ, ոչ օրգանական և ոչ անօրգանական

բնութեան մէջ չկայ անշարժութիւն։ Ոչ թէ միայն բոյսերի և կենդանիների կեանքի մէջ անդադար շարժում կայ, ոչ թէ միայն բոյսերը և կենդանիները ծնվում են, մեծանում են և մեռնում են,—բայց և անօրգանական բնութեան մէջ նշմարվում է անընդհատ շարժում կամ կռիւ։ Քարերը օդի ազդեցութեամբ հողմահարվում են (մաշվում են), երկրի մակերևոյթը փոփոխում է իր ձևը և տեսքը թէ ջրերի, թէ երկրագնդի ներքին կրակի զօրութեան ազդեցութեամբ։ Երկրագունդը շարունակ կերպարանափոխութեան ընթացքի մէջ է գտնվում։ Ինչպէս հաստատում են գիտնականները, քանի մի երկիրներում, որտեղ որ այժմ ցամաք է, առաջ ծով էր գտնվում։ Եւ այժմ ևս հետազօտութիւնները ցոյց են տալիս թէ ցամաքի քանի մի ափերը ընդարձակվում են, իսկ միւսները շարունակ ծածկվում են ովկիանոսի ջրերով։ Յայտնի է, որ կան քաղաքներ, որոնք քանի մի դար առաջ ծովի ափում էին գտնվում, այժմ բաւական հեռու են ծովից... և այլն։

III.

Որտեղ որ նայենք, մենք ոչ մի տեղ ոչ բնութեան, ոչ մարդկային պատմութեան երևոյթների, ոչ կենդանիների կազմակերպութեան, ոչ ևս անօրգանական (անշունչ) բնութեան, ոչ մարդի հոգևոր կեանքի մէջ, չենք պատահիլ կատարելատիպերի (կատարելագործութեան),

բայց ամեն տեղ կնկատենք մշտնջենաւոր ձըգտումն դէպի կատարելագործութիւնը։

Ժամանակակից եւրօպական հասարակութիւնը երկար ժամանակ մշակելով իր մէջ ճիշտ գիտութիւնները, կամաց ակամայ ինքն էլ ենթարկվեցաւ այդ գիտութիւնների ոգու ազդեցութեանը, և եւրօպացու միտքը ընտելացաւ ճիշտ գիտութիւնների մտախոհութեան եղանակին։

Ճիշտ (positif) գիտութիւնների եղանակով ընչաւորած մտախոհութիւնը չ ա փ դարձաւ եւրօպացու համար, նորա ամեն դատողութիւնների մէջ։

IV.

Ի՞նչ է ճիշտ գիտութիւնը։ Եւ մտախոհութեան ինչ եղանակին հետեւում է նա։

Ճիշտ գիտութիւնը բազմակողմանի կերպով քննում է մի երեւոյթ (հոգևոր կամ նիւթական), անում է այն երեւոյթի վերաբերութեամբ փորձեր, աշխատում է ինչքան կարելի է բազմացնել փորձերի թիւը, հաստատում է այդ զանազան փորձերի մէջ պ ա տ ճ ա ռ ա կ ա ն կ ա պը, և վերջապէս հետազօտած երեւոյթների քանակութեան միջակ թուից եզրափակում է այս կամ այն երեւոյթի դրական օրէնքը։ Եթէ գիտութիւնը քանի մի ժամանակից յետոյ համոզվում է, որ նորա հաստատած օրէնքը թերի, անհիմն կամ գոնէ հերքելի է,—նա չյուսահատ-

վելով կրկին նորոգում է փորձերը, կամ հետազօտած երեւոյթը կրկին և կրկին փորձերով վերաստուգում է։ Նա իրան երբէք անսխալ չէ կարծում, նա միշտ աշխատում է արդէն յայտնած ճշմարտութիւնը կրկին բազմակողմանի քննութեան տակ ձգել։ Երբ նա համոզուեցաւ, թէ սխալվել է, նա խոստովանում է իր սխալը։

Եւ այսպէս երբէք կատարեալ չլինելով նա միշտ ձգտում է դէպի կատարելագործութիւնը։

Ա ն ս խ ա լ կարող են լինել միայն կատարեալ գաղափարները, երեւոյթները կամ սկիզբները։

Բայց որովհետեւ կատարեալ բան չկայ ոչ մարդկութեան, ոչ բնութեան մէջ, անսխալ իրան յայտնող սկիզբները իրանք իրանց դատապարտում են անշարժութեան։

V.

Կարծելով ինձ անսխալ, ես հերքում եմ իմ անձի համար լուսաւորվելու, առաջադիմութիւններ անելու, բարուոքելու, ձգտելու պահանջմունք և հարկաւորութիւնը,—ուրեմն ես հասած աստիճանի վերա անշարժ եմ մնում։

Այո, գիտութիւնը և գիտութեան ոգով դաստիարակված եւրօպական հասարակութիւնը ծիծաղելով ընդունեցին Հռոմի պապի անսխալականութեան յայտնութիւնը։ Գիտութեան համար, որին յայտնի է ինչքան տանջանք, աշխատանք, ուսումնասիրութիւն, քրտինք արժէ մի

որ և է ճշմարտութեան հետազօտութիւնը,—գիտութեան համար խորթ է թւում, երբ որ մի սկիզբ, իրան կատարեալ կարծելով, յայտնվում է անսխալ, իսկ իրան անսխալ յայտնելով դատապարտում է ինքն իրան անշարժութեան վիճակին։

Ճիշդ գիտութիւնը անդադար շարժումի մէջ է գտնվում։

Ճիշդ գիտութիւնը սովորեցնում է մեզ անխոնջ ինքնաքննութիւն։

VI.

Այս ընդունված միտք է, որ հայերը երկպառակութիւն սիրող ժողովուրդ են, որ նոքա զրկված են ընկերանալու ընդունակութիւնից, որ հայերի այդ յատկութիւնը մի քանիսների (պատմաբանների) կարծիքով նոցա պատմական ընթացքի ազդեցութեան հետևանք է, կամ ուրիշների (աստուածաբանների) կարծիքով, երկնային անէծք է....

Եւրոպական կրթութեան մեծ արժանաւորութիւններից մէկը նորա ձգտումն է ամեն բանին, ամեն մի պակասութեանը դեղը (կամ միջոց) պտռելու...

Ցանկալի է, որ օրինակ առնելով եւրոպական ինքնաքննութեան ոգուց, մենք ևս մտածէինք հայկական տարրի մէջ այդ պակասութեան գոյութեան պատմական պատճառների և

նորան մեր մէջից վերցնելու հնարաւորութեան մասին։

Մենք չէինք կարող այստեղ պատմական հետազօտութիւններ անել մեր տարրի մէջ այդ յատկութեան զարգացման պատճառների վերաբերութեամբ. մեր դիտաւորութիւնն է միայն առաջարկել ընթերցողին մեր կարծիքը այդ պակասութիւնը մանկավարժական միջոցով վերցնելու կարելութեան մասին։

VII.

Ես ասացի մանկավարժական միջոց—բայց մանկավարժական միջոց կարող է միայն նորահաս սերունդի վերա ազդել...։ Մեր սերունդը չենթարկվեցաւ այդ փորձին...։ կամենում եմ վեասել, թէ այն սերունդի երիտասարդների վերա ևս, որին մենք պատիւ ունենք պատկանելու, չպատւաստվեցաւ ճիշդ գիտութիւններին յատուկ մտախորհութեան եղանակը։

Մեր երիտասարդների մեծ մասի վարմունքի և գործունէութեան առաջնորդող սկիզբը անսխալականութիւնն է։

Ի՞նչ է սորա պատճառը։

Մեր երիտասարդները այնպիսի շրջաններում են մեծանում, դաստիարակվում և կրթվում, որտեղ անխոնջ աշխատանքի գաղափարը դեռ ևս չէ իրագործվել, որտեղ ճիշդ գիտութիւնները, որոնք միշտ խթան են անընդհատ աշխատանքի համար, դեռ ևս մտցրած չեն

և որտեղ ուրեմն անյայտ է անդադար ձգտումն դէպի ինքնաքննութիւնը։

Ուշադրութիւն դարձրէք մեր հասարակական գործերի ընթացքի և նոցա մէջ մասնակցող անձերի վերա (էլ չեմ խօսում ծերերի մասին)—և դուք կնկատէք, որ գործող անձերից ոչ մէկը չէ կարող երբէք միւսին զիջումներ անել։

Պատճառը շատ պարզ է։

Մեզանից ամեն մէկը անշարժ է, և եթէ կամենար էլ, չէ կարող փոխել իր կարծիքը, իր համոզմունքը, ուրիշ ուղղութիւն տալ իր մտախորհութեան ընթացքին։

Մեր սկզբնական դաստիարակութեան և բարձր կրթութեան մէջ պակաս է ճիշդ տարրը գիտութիւնների...։

Թէև մենք տեսաբար հասկանայինք թէ հասարակութիւնը օրգանական կազմուածք է, որի գործիչներից ամեն մէկը նշանակված է մի առանձին դեր խաղալ, մի որոշ պաշտօն կատարել ընկերական և հասարակական կեանքում, —թէև տեսաբար համոզված էլ լինէինք, որ արձակ (absolu, абсолютный) ճշմարտութիւն չկայ, և ճշմարտութիւնը վերաբերական լինելով պիտի կազմվի տարբեր, ծայրայեղ կարծիքներից, որոնք մէկը մէկին օգնելով, մէկը մէկին քննելով և հաւասարակշռելով, ծնում են մի միջակ երևոյթ, որ կարող է (հասարակութեան կարծիք լինելով) միջակ ճշմարտութիւն կոչվել...։

Մենք պէտք է հասնենք այն մտքին, որ մարդկային ոչ մի անհատը արհամարհելի չէ (եթէ նա անբնական չէ) ընդհանուր օգտի համար, երբ նա որ և իցէ աշխատանքի զօրութիւն է ներկայացնում։ Հասարակութեան օրգանական ամբողջի ամեն մի կազմող մասը անհրաժեշտ է... միայն թէ հասարակութեան գործիչներից ամեն մէկը չպիտի սխալվի իր պաշտօնի վերաբերութեամբ, և իր վերա պիտի նայէ որպէս հասարակական ամբողջ մարմնի կազմակերպութեան մի փոքրիկ մասի վերա։

VIII.

Իսկ զարգացման այդպիսի աստիճանին հասնելու համար, մեզանից ամեն մէկին հարկաւոր է հասարակապէս զարգացած լինել։

Ինքնաքննութեանը հասնելու համար հարկաւոր է անհատին երբէք անշարժ չլինել։

Անդադար չաշխատելով, կամ զարգացման և մտաւոր պարապմունքի մի նշանակված կէտին հասնելուց յետոյ անշարժ մնալով—ուրեմն միջոց էլ չունենալով իր անձը անդադար քննութեան ենթարկելու,—մարդը բաւականանում է իր մտաւոր զարգացման աստիճանով, ուրեմն ինքնահաւան է դառնում։ Վայ այն հիմնարկութիւններին և անհատներին, որոնք անշարժ մնալով, ինքնահաւանութեան և անսխալականութեան համոզմունքին են հասնում...։

Թող պապութեան ինքնահաւանութիւնը և

ինքնապաշտութիւնը ծնի անսխալականութեան վարդապետութեան հրէշաւոր երեւոյթը,—բայց գիտութեան անկեղծ կուսակիցների համար անյարմար, հերքելի և դատապարտելի է թւում անսխալականութեան սկիզբը:

Թող մեր ծերերը և նոցա հետ եւ մեր նոր սերունդի երիտասարդների մեծ մասը բոլորովին անընդունակ լինելով անընդհատ աշխատանքի, անցնեն իրանց կեանքի մնացած տարիները անշարժութեան, անձնապաշտութեան, ինքնահաւանութեան ապարդիւն զգացմունքների մէջ, թող անսխալականութեան կուսակիցները դառնան... մենք նոցա համարում ենք հասարակութեան համար կորած մթերք:

Բայց աշխատենք ճիշտ գիտութիւնները և նոցանից մշակված մտախորհութեան եղանակը գոնէ ապագայ սերունդի մէջ մտցնել:

„Մեղու", 1871, № 9.

ՄԷԿ ՄԷԿԻՆ ՄԵՂԱԴՐՈՒՄ ԵՆՔ

I.

«Մի՞թէ դու» «Մեղու», «Հայկ. Աշխ.» կամ «Արարատը» չես կարդում, մի՞թէ հայերէն ոչ մի գիրք անգամ չես կարդում,—հարցրեցի ես մէկից...

—Էհ... բան չունես, պատասխանեց նա:

«Ի՞նչ է պատճառը, որ չես հետաքրքրւում մեր գրականութեամբ»:

Գժուել ես... գրականութեամբ հետաքրքրվել ո՞րն է... Արդեօ՞ք հայերէն կարդալու բան կայ, որ ինձ կարդալ ես առաջարկում... լաւ չէ՞ որ ազատ ժամանակիցս օգուտ քաղեմ օտար մի լեզուով գրած բան, օրագիր կամ գիրք կարդալու, քան թէ ձեր հայերէնը կարդամ... բան չունես...

Ես լռեցի:

Նորերումս պատահում եմ մի պարոնին, որը անգովելի սովորութիւն ունի ժամանակ առ ժամանակ հայկական օրագրներում յօդուածներ տպելու:

«Պարոն, ասում եմ ես նորան, դուք հայերէն

չգիտէք, կամ եթէ գիտէք էլ, ձեր ստեղծած հայերէնը, ինչքան որ կանոնաւոր ու ընտիր լինէր, ժողովրդի գիտեցած հայերէնը չէ, դուք ժողովրդի համար անմատչելի, անհասկանալի, չինծու-ոճով էք գրում...: Բացի սորանից դուք այնպիսի փիլիսոփայական, վերացական նիւթեր էք ընտրում, այնպիսի բարձր գաղափարներ էք յայտնում, որոնք ժողովուրդը մարսել չէ կարող: Ես դուցէ սխալւում եմ, բայց իմ կարծիքս է, որ մեր գրողները և խմբագրողները չեն իմանում իրանց գրուածներում ժողովրդի հասկացողութեանը յարմարվել: Եւ այդ է պատճառը, որ մեր գրուածքը չեն կարդում»:

—Ոչ, պատասխանեց ինքնակոչ հեղինակը, մեր գրականութեան թշուառ դրութեան պատճառը ժողովրդի սառնութիւնն է դէպի մեր աշխատանքը: Միջոց չունենալով ինձ լիապէս գրականութեանը նուիրելու, ես ինչպէս կարող եմ յուսալ, որ երեւելի գրող դառնամ... ես գրում եմ, երբ աւելորդ ժամանակ եմ գտնում. երբ պարապմունքս կամ իմ ապրուստը ապահովելու հոգսը ինձ ներում են գրիչը ձեռս պարապ չանցնել մէկ երկու ժամ...: Թող ժողովուրդը ճանաչէ մեր վաստակի գինը, թող վճարէ, վարձատրէ հեղինակի և խմբագրի աշխատանքը,—և այն ժամանակ մենք օրինաւոր յօդուածներ կառաջարկենք ընթերցողին... և ապահովացրած լինելով ապրուստի կողմից, մեր գրուածներին ես մեր ընթերցասիրութեան, ժողովրդի կեանքի և կարիքների հետազօտութեան

հետեւանք կլինեն... ժողովուրդն է մեղաւոր, որ մենք օրինաւոր լրագիր, օրագիր և գրքեր չունենք:

Ես կրկին լռեցի:

Այդ ինչ պատիժ է... ժողովուրդը մեղադրում է հեղինակին, իսկ հեղինակը մեղադրում է ժողովրդին:

Ո՞վ է արդար, ո՞վ է մեղաւոր:

«Ես չեմ կարդում հայերէն, որովհետև կարդալու բան չկայ»,—ասում է մէկը:

—Ես չափից դուրս աշխատում եմ, ես իմ բոլոր ճիգն եմ թափում քեզ օրինաւոր, հետաքրքիր գրուածներ առաջարկելու... բայց ինչ անեմ, որ չես կարդում, կամ ինչ անեմ որ աշխատանքս չես վարձատրում...—ասում է միւսը:

II.

Մի անգամ, խօսելով մի աղքատ արհեստաւորի հետ, ես հարցրեցի նորան, ինչո՞ւ նա իր երեխաները ուսումնարան չէ ուղարկում:

«Ես հինգ երեխայ ունեմ, պարոն ջան, պատասխանեց արհեստաւորը, մէկին ուսումնարան եմ տուել, ու ամսական երեք րուբլի եմ վճարում նորա ուսման համար: Ասենք թէ երկու վերջին երեխաներս դեռ շատ փոքր են,—բայց դարձեալ մնացած երկուսի համար էլ ամսական 3 րուբլի վճարելու միջոցներս չեն ներում:

Խեղճը երդում էր ուտում, որ կարողութիւն չունի ամիսը 3 րուբլի վճարելու:

«Եթէ մեր հարուստները, աւելացրեց նա փոքր ինչ լսելուց յետոյ, իրանց հարստութիւնը այդքան չխնայէին, ու մեզ պէս խեղճերին օգնել կամենային, իրանց փողով ուսումնարաններ չինէին ու մեր երեխաների համար ուսման վճարը տային,—այն ժամանակ Աստուած վկայ, որ մենք էլ սրտի յօժարութեամբ բոլոր մեր երեխաները ուսումնարան կուղարկէինք ու անուսում չէինք թողնիլ նոցա։ Մենք միթէ չենք հասկանում, որ ուսումը լաւ բան է։

Քանի մի տարի առաջ ես գնացի մի շատ հարուստ պարոնին այցելութիւն, խնդրելու նորանից քանի մի րուբլի բարեգործական նպատակի նուիրելու...

«Աստուած վկայ, չեմ կարող. հրամանքդ իզուր նեղութիւն էք քաշում,—մենք այդ ստորագրութիւններից ու այս կողմ այն կողմ ժողովուրդին օգնելու նպատակով փող տալուց զզվել ենք...։ Ձեզ կարելի է յայտնի չէ, որ ես տարէնը 10 րուբլի Ն... ուսումնարանին եմ նուիրում, 15-ը այն եկեղեցուն և այլն։ Բացի սորանից Կիրակոսովին (շատ լաւ տղայ է, եթէ ճանաչում էք) իմ հաշուով համալսարան ուղարկեցի։ Այսքան տալիս ենք ազգին մեր գրպաններից... գոնէ այդ մեր տուած փողերի գործադրութեան հետևանքը տեսնէինք.... Հրամանքդ դեռ ջահէլ էք—որ իմ փորձի չափ փորձ ունենայիք, կհամոզվէիք, որ մեր ժողովուրդը ծոյլ և անշնորհակալ ժողովուրդ է..։

Ո՞ւմ հաւատաս, աղքատը մեղադրում է հարուստին, հարուստը մեղադրում է աղքատին։

III.

Հիմի ինչ անենք։

Սպասենք, որ ժողովուրդը հասկանալով ընթերցանութեան օգուտը վարձատրի հեղինակին և խմբագրին, կամ սպասենք, որ անշահասէր հեղինակը ու խմբագիրը վարձատրած չլինելով այնչափ զարգանան, որ հետաքրքրական, յարմար և օգտաւէտ գրուածներ առաջարկեն ընթերցողներին։

Սպասենք, որ ժողովուրդը ինքնաօգնութեան սկիզբը ըմբռնի, կամ սպասենք, որ հարուստ դասը իրան նուիրէ ժողովրդական լուսաւորութեան հոգալուն...։

Ի՞նչ անենք։

IV

Բաւական է մէկ մէկին մեղադրել։

Միթէ չկայ մեր մէջ եռանդի, ազնւութեան, դէպի առաջադիմութիւն սիրոյ, դէպի լոյս ձգտման նշոյլն էլ,—որ բոլոր ազգի մէջ չի գտնվիլ գործունեայ մարդիկների մի խումբ, որը յանձն առնէր կազմել մի գումար, և նորան շահեցնելով, կարողանար նպաստել գրականութեան զարգանալուն։

Մի՞թէ չի գտնվիլ աշխատողների մի խումբ, որը օգուտ քաղելով այն գումարից, հրատարակէր ինքնուրոյն ու թարգմանական գրուածքներ, կամ հիմնէր մի օրինաւոր օրագիր, որի աշխատակիցները վարձատրած լինելով, իրանց մտաւոր ոյժը լիապէս նուիրէին մեր նորահաս գրականութեան մշակելուն։

„Մեղու", 1871, № 11.

ՖԱՈՒՍՏ

I.

Ընթերցողը երևի յիշում է, որ խօսելով մի յօղուածի մէջ բարեկենդան շաբթին գերմանական կլուբում տուած երկու ներկայացումների մասին, ես ասացի թէ դէպի սիրողները մենք պէտք է ներողամիտ լինենք, գնահատելով նոցա բարի ձգտումները և նպատակը...: Այժմ այդ սիրողները խումբ դարձան... նոցա գործունէութիւնը դառնում է հասարակական գործունէութիւն և ենթարկվում է ուրեմն օրագրութեան քննադատութեանը և ապա հասարակական կարծիքի դատաստանին։

Կարօղ ենք մենք առաջուայ պէս ներողամիտ լինել դէպի այդ պարոնները...

II.

Այս ապրիլի 8-ին աֆիշայից տեղեկանալով թէ հայերէն «Ֆաուստ» են տալիս, ես գնացի թատրոն, թէև արդէն մի անգամ տեսած էի գերմանական կլուբում.,. Թատրոնի շինութեան

անցքումը պատահում է հին ծանոթներից մինը, որն ինձ հարցնում է,—«Ամերիկեանն էլ կը ներկայացնէ՞ այսօր, չգիտես»։—Ոչ, պատասխանեցի։—Ուրեմն ո՞վ է խաղում»—Ահա քեզ աֆիշա, կարող ես կարդալ։—«Այդ բոլոր անուններից միայն երկուս եմ ճանաչում, տ. Սաթենիկ և պ. Կարապետեան, որոնք առաջ էին խաղում հին խմբի հետ։ Մնացածները ինձ անծանօթ անձեր են...»։

«Ինչի՞ չկայ Զմչկեան, ինչի՞ չկայ Ամերիկեան, այդ հարցը կրկնեցին շատերը...»։

III.

Կար ժամանակ (տաս տարի առաջ), երբ հայկական թատրօնական խումբը ողբերգութիւններ էր ներկայացնում... Սամէլ, Արշակ II..., Վարդան... որոնք որպէս հայկական գրուածներ նշանակութիւն կարող էին ունենալ, բայց եթէ նոցա վերա նայէինք արհեստական աչքով, եթէ համեմատէինք նոցա եւրօպական գրուածների հետ,—նոցա արհեստական արժանաւորութիւնները շատ չնչին մեզ կերևային։ Խումբը սխալվելով, թափառելով կարողացաւ ժամանակով ճանաչել ժողովրդի պահանջները և փոխանակ ողբերգական ու պատմական պիեսների, սկսեց ներկայացնել ժողովրդի կեանքից առած կենդանի թէ ընտանեկան և թէ հասարակական երևոյթները։

IV.

Բայց վերադառնանք ապրիլի 8-ի ներկայացմանը։ Թատրոնի դահլիճում իմ բարեկամիս կողմը նստած, մինչև որ վարագոյրը չբացվեցաւ, ես նայում էի բազմաթիւ հասարակութեան վերայ...։ «Դու պիեսայի հետ ծանօթ ես», յանկարծ հարցրեց ինձ բարեկամս։—Այո, մի անգամ ներկայ եմ գտնվել նորա ներկայացմանը։—«Այդ ինչ տեսակ Ֆաուստ է,—եթէ Գեօթէի գրած ողբերգութիւնն է, ես շատ ուրախ կլինէի նորան մեր բեմի վերայ տեսնելու։ Բայց աֆիշայի վերայ գրած է օ պ է ր է տ կ ա յ, այդ ինչ պէտք է լինի... երևի երաժշտութիւն և երգեր կլինեն»։—Ես զարմանում եմ քո եսականութեան վերայ,պատասխանեցի ես, դու ասում ես, որ ուրախ կլինես Գեօթէի Ֆաուստը տեսնելու, բայց մտածիր փոքր ինչ և ուրիշների վերայ, մտածիր ժողովրդի վերայ։ Գեօթէի ողբերգութիւնը, ի հարկէ անհամեմատ բարձր է դեռ երեխայական հասակում գտնվող մեր արհեստի ստեղծուածներից... բայց իսկ այն պատճառով, որ նա չափազանց բարձր է, որ նա հանճարի ծնունդ է, որ նա հիմնվում է մեր ազգին անծանօթ գերմանական ժողովրդական աւանդութիւնների վերայ—նա գրաւել չէ կարող հայ հասարակութիւնը։

Գեօթէն հրատարակեց Ֆաուստի առաջին մասը 1804 թուին միայն, իսկ Ֆաուստի ժո-

ղովրդական աւանդութիւնը կենդանի էր Գերմանիայում Գեօթէից առաջ։

«Դու ուրեմն կարծում ես, որ մենք գերմանական այն աւանդութեան հետ ծանօթ չլինելով, չենք կարող և Գեօթէի գրվածը հասկանալ...»։

—Այդ բոլորովին ճիշդ է, և ես սորան կաւելացնեմ. որ այն ազգը, որ ինքն իւր աւանդութիւնների յիշատակը կորցրել է, գրեթէ անընդունակ է ըմբռնել և ուրիշ ազգի ժողովրդական աւանդութիւններից մշակուած հանճարեղ գրվածը։ Վերջապէս դու գիտես, որ Գերմանիայում անգամ «Ֆաուստ» կատարելապէս չեն հասկանում, ուր մնաց որ մենք հասկանանք. «Ֆաուստը» մի այնպիսի գրված է, որի մասին հազարաւոր քննադատութիւններ հրատարակվեցան զանազան լեզուներով, որի գաղափարի մեկնութեանը համալսարանի պրոֆէսորներից շատերը երեք, չորս ամսվայ դասախօսութիւններ են նուիրում։

V.

Բայց վարագոյրը բացվեցաւ և մենք դադարեցրինք խօսակցութիւնը։ Խաղը սկսվեցաւ։ Քանի լսում էինք ու նայում էինք, այնքան աւելանում էր մեր զարմացքը...։

Այդ ինչ է վերջապէս, բացականչեցինք երկուսս էլ։ Ոչ օպէրա է, ոչ էլ դրամա... Երաժշտութիւն, իտալական խօրիստների երգեցո-

ղութիւնը... բենգալեան կրակ, հրաշալի դեկորացիաներ և անփորձ դերասանների խաղ, և անշնորհ շարժմունքներ։

Երկու գործողութիւնների մէջ ժամամիջոցում ես բարեկամիս հետ անցքումը մանգալով, հարցրեցի նորան ինչպէս է հաւանում նա այդ հրէշաւոր ներկայացումը։—«Գիտես, պատասխանեց նա, որ այդ մարդիկը գործնական մարդիկ են... նոքա լաւ ըմբռնեցին մեր տգէտ և հնամօլ ժողովրդի պահանջմունքը...։ Այո, դուք սաստիկ կսխալվէք, եթէ կուզենաք ժողովրդին իր կեանքի կենդանի երևոյթները, իր պակասութիւնները ցոյց տալ, եթէ կկամենաք ցոյց տալ նորան ինչպէս նորա ընտանեկան կեանքը լի է նախապաշարմունքներով, ինչպէս կոպիտ հայրը բռնադատում է իր աղջկանը, ինչպէս հարուստը կողոպտում է աղքատին... և այլն։ Հասարակութիւնը չէ համակրում նորան դաստիարակելու այդպիսի ձգտումներին։ Նորան ինչ է հարկաւոր... բենգալեան կրակ, երաժշտութիւն (որի արհեստական արժանաւորութիւնը անգամ նա չէ գնահատում), նորան հարկաւոր է արտաքին ձևեր, աչքի դիպչող երևոյթները, դէկորացիաները, աղմուկ...։ Հարկաւոր է շողոքորթել նորա հակումներին դէպի վայրենի զուարճութիւնները, հարկաւոր է շողոքորթել նորա կրքերը, հեշտասիրութեան զգացմունքին։ Որ «Ֆաուստ»-ը նորան հասկանալի և հաճելի լինի, պէտք է համեստ, սիրող և աշխատասէր գերմանացի Մարգարէտ աղջիկը մի թեթևամիտ

և... կին ներկայացնել,—պէտք է դէպի յաւիտենական ճշմարտութեան ճանաչողութիւնը միշտ ձգտող Ֆաուստի վսեմ անձականութիւնից մի չնչին էակ, միայն հեշտասիրութեան զգացմունքին նուիրված մարդ շինել...։ Նկատել ես դու այդ անճոռնի թարգմանութեան ներկայացման ժամանակ, ո՞րտեղ էր ծափահարում ժողովուրդը... Նա այնտեղ իր ծափահարութիւններով արժանացրեց, երբ Ֆաուստը գրկեց իր սիրեկանը, կամ նմանապէս այնտեղ, երբ Մարգարիտը ասում է. «ինչ սիրուն օրիորդ եմ ես.—այժմ ինձ միայն մի սիրահար է պակաս», կամ նա ծափահարում էր, երբ տեսնում էր բենգալեան կրակ, դէկօրացիօններ, հրաշքներ, երբ լսում էր երգեր, աղմուկ...։

VI.

Վերջապէս մի գործնական խնդիր։ Այդ հրէշաւոր ներկայացումից երևում է, որ պարոնները մեծ ծախսեր են արել... իսկ միւս կողմից մեզ աֆիշայից յայտնի է, որ նոքա Պետերբուրգի ուսանողների օգտի են խաղում... Հասարակութիւնը սիրով ընդունեց այդ ներկայացումը, որովհետև միշտ հետաքրքրվում է ուսանողներով... Նորան ցանկալի է տեղեկանալ, թէ այդ ծախսերից յետոյ որքան ստացան ուսանողները։

Բացի սորանից, նոցա աֆիշայից երևում է, որ նոքա սիրողներ են, իսկ բեմի վերայ մենք

(ինչքան ինձ յայտնի է) վարձկան դերասաններ ենք տեսնում նոցա հետ խաղալիս...։

Եւ նոքա թէ իրանց ընտրած ժամանակով, թէ իրանց ներկայացման ուղղութեամբ, թէ հին խումբի քանի մի անդամները խլելով, արգելք են դնում հին խումբի ներկայացմանը... իսկ սիրողները երբէք չպէտք է արգելք դնեն մշակ դերասանների աշխատանքին։ Ուրեմն նոքա սիրողներ չեն, այլ նոր խումբ են... բայց այն ժամանակ օրագրութեան ձայնը և լուսաւորեալ դասի հասարակական կարծիքը կարող են արդեօք ներողամիտ լինել դէպի նոցանից ընտրած ուղղութիւնը։—Ոչ։

Ինչո՞ւ չեն կարող։

Որովհետև յանձն առնելով հայկական թատրօնական գործը, նոքա մի կողմից պատասխանատու են հին խումբի առաջ, միւս կողմից հասարակութեան առաջ։ Մի կողմից կամենալով քանդել հին խումբը նոքա իրանց վերայ պատասխանատուութիւն պիտի առնեն շարունակել թատրօնական գործը. իսկ միւս կողմից իրանց ներկայացումներին ուրիշ ուղղութիւն տալով, նոքա պատասխանատու են ժողովրդի առաջ։

„Մեղու", 1871, № 15.

ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑԻ «ՊԷՊՕ»

I.

Դուք յիշում էք, սիրելի ընթերցող, որ ես իմ վերջին յօդուածի մէջ խօսում էի մի նոր կազմված թատրօնական խմբի մասին։ Այդ խումբը «Ֆաուստ» օպերէտկայից յետոյ մի ուրիշ պիէսա էլ ներկայացրեց «Վարդ և Սաողիկ» անունով... Այդ արհեստական հրէշի մասին, եթէ յաջողուի ինձ, ուրիշ անգամ կխօսեմ և կը յայտնեմ միտքս...։ Միայն կյիշեմ այստեղ այն խօսակցութիւնը, որ ես ունեցայ մի պարոնի հետ այդ պիէսայի ներկայացման ժամանակ։ «Ի՞նչպէս էք հաւանում այդ ներկայացումը», հարցրի ես պարտէրի՝ մէջ իմ կողմի նստած պարոնից։—Շատ գեղեցիկ է, պատասխան տուեց նա։ «Այսինքն ինչ կողմից գեղեցիկ է, ինչ արժանաւորութիւններ էք գտնում այդ գրուածի մէջ...»։ Իմ պարոնս լռում էր։—«Ես իմ կողմից գոնէ խոստովանում եմ, շարունակեցի ես, որ ոչինչ չեմ հասկանում... իսկ դո՞ւք»։ —Ես էլ ոչինչ չեմ հասկանում, պատասխանեց իմ նոր ծանօթս։—«Բայց գիտէ՞ք ինչ է պատ-

ճառը, որ մենք ոչինչ չենք հասկանում, և չենք հետաքրքրվում այդպիսի ներկայացումներով,—պատճառը այն է, որ նիւթը առնված է մեզ օտար տարրերից, չյիշելով հեղինակութեան անճոռնութիւնը»։—Մեր ժողովրդին առհասարակ դժուար է բաւականացնել, բացականչեց մեր յետևից նստած մի պարոն, խառնվելով մեր խօսակցութեան մէջ,—ինչ ուզում էք ներկայացրէք, ժողովուրդը էլի թատրօն չի գալ։—«Ի հարկէ, եթէ դուք ողբերգութիւններ կներկայացնէք, ժողովուրդը չի գալ, պատասխանեցի ես բողոքող պարոնին»։—Ուրիշ ինչ ներկայացնենք, հարցրեց նա ինձ արհամարհական ժպիտով։—Ժողովրդական կեանքից առած երեւոյթները, ժողովրդի մէջ եղած կենդանի հասարակական խնդիրները, ասացի ես։

Իմ այս պատասխանը ծիծաղ յարուցեց պարոնիս մէջ,—մենք ինքներս մեր կեանքի հետ բաւական ծանօթ ենք, վերջապէս ասաց նա ինքնահաւան կերպով, իզուր նեղութիւն էք քաշում մեզ մեր կեանքը բեմի վերայ ներկայացնելու։

II.

Մարդկային հասարակութեան բազմութիւնը (ամբոխը) առհասարակ անհոգ է, նա իրան աշխատանք չէ տալիս քննել ու գննել թէ ընտանեկան և թէ հասարակական կեանքի պակասութիւնները կամ արժանաւորութիւնները։ Ժողո-

վրդական կեանքի հետ ինքն ժողովուրդը ծա-
նօթացնելու համար, հարկաւոր է նորա կեան-
քից դուրս, արտաքին մի երևոյթի միջնորդու-
թեամբ ազդել նորա կազմուածքի զգայարան-
ների վերայ նորա մէջ ինքնաճանաչութիւնը
զարթեցնելու համար։

Բեմը այդպիսի միջոցներից մէկն է. ժողո-
վրդական կեանքից առած մի պիէսա կարող է
ինքն ժողովրդին իր կեանքի այնպիսի կողմերի
հետ ծանօթացնել, որոնք անյայտ էին նորան...։

Հեղինակը պիտի հասարակութեան և ժողո-
վրդի կեանքի կ ե ն ս ա կ ա ն երևոյթների մէջ
միջնորդ լինի։

«Ես ճանաչում եմ իմ ժողովրդի կեանքը,
ուստի ինձ պէտք չէ բեմի վերայ ներկայացնող
այդ ժողովրդական կեանքի ճիշդ պատկերը», ա-
սում է ինքնահաւան հայը։

Իսկ եւրօպական հասարակութիւնը, որը մե-
զանից անհամեմատ բարձր և զարգացած է,
նայում է ժողովրդական կեանքից առած պիէ-
սաների վերայ, որպէս հասարակական կեանքի
դաստիարակիչ միջոցներից մէկի վերայ...։

III.

Ապրիլի 30-ին ես ներկայ էի գտնվում «Պէ-
պօ»-ի 2 ներկայացմանը։ Ես ծանօթ չէի պիէ-
սայի հետ։ Հայկական ժողովրդական կեանքից
առած բեմական գրուածքները մեծ մասամբ
ծամած և մաշված մեր վաճառականաց դասից

առնված լինելով, ես սպասում էի, որ այդ գը-
րուածն էլ հաւատարիմ կմնայ մի անգամ ընտրած
ուղղութեանը...։ Բայց որքան զարմացայ ես,
տեսնելով բեմի վերայ մի նոր երևոյթ...։ Պիէ-
սայի գլխաւոր նիւթը և տիպերը առնված էին
մեզ անծանօթ և նոր տարրերից, —ժողովրդի
ստորին դասից։

Ահա պիէսայի կարճ բովանդակութիւնը։
կէկէլի (օր. Թագուհի) փեսացու, մի վաճա-
ռական, աղջկան պսակվելու հրապարակապէս
խոստանալուց, նորան պաչ անելուց յետոյ,
հրաժարվում է իր տուած խօսքից, պատճառ
բերելով որ նա կէկէլի մայր Շուշանից (տ. Ա-
ռումեանց) և նորա եղբայր Պէպօից (պ. Զմըռ-
կեան) խոստացած հարիւր թուման բաժինքը
դեռ ևս չէ տուացել։ Այդ փողը Պէպօի հայրը
հարուստ Արութինին (պ. Ամերիկեան) չահով
էր տուել։ Բայց բարաթը կորել է և Արու-
թինը այլ ևս չէ ճանաչում իր պարտքը։ Ամ-
բողջ ընտանիքը դժբաղդութեան մէջ գցելով
Արութինը կարծում է, որ դարձեալ մեծ բա-
րերարութիւն է անում Պէպօյին և ծածկում է
իր անիրաւութիւնը, երբ իր պարտ եղած 1000
ռուբլիի տեղ նա նորան 10 թուման է ընծա-
յում։ Պէպօն չէ ընդունում ընծայ և վրդոված
խփում է այդ փողը Արութինի ճակատին։
Էփէմիայ, Արութինի կինը (տ. Անախ) համո-
զեցնում է իր մարդին անպատիժ չթողնել
յանդուգն յանցաւորին։ Արութինը դանդա-
տում է դատարանի առաջ և ձկնորսին դատա-

պարտել է տալիս բանտարկութեան։ Բայց յանկարծ ծեր Գիքօն (պ. Միրաղեանց) կրկին գտնում է բարաթը...։ Սրութինը կամենալով իր պատիւ ու անունը փրկել հասարակական կարծիքի առաջ, առաջարկում է Պէպօին հաշտութիւն և համաձայնութիւն, բարաթի արժէքից անգամ աւելի առաջարկելով,—բայց իզուր, Պէպօն չէ մոռանում, որ իր պէս մարդիկներից շատերը տանջվում են Սրութինի ձեռքից, և խուլ մնալով թէ իր ընտանիքի աղաչանքներին և թէ իր բարեկամ Կակուլու (պ. Ադամեանց) գործնական առաջարկութիւնների առաջ,—նա գնում է բերդը։

IV.

Հասարակութիւնը օրգանական մարմին է, որը կազմված է զանազան մէկ մէկից տարբեր գործիչներից (факторъ)։ Մենք մինչև այժմ նայում էինք հայկական հասարակութեան վերայ, որպէս մի միակերպ մարմնի վերայ...։ Թէ հայը, թէ օտարազգին հայի անունը տալով ներկայացնում էր իրան կամ մի հաստափոր հարուստ վաճառական, կամ մի ողորմելի մանրավաճառ։ Ամբողջ ազգը կազմված էր վաճառականներից։ Ժողովրդի մնացած գործիչները և տարրերը մենք չէինք արժանացնում մեր քննութեանը։

Հայը մի տգէտ և անկիրթ էակ է, որ թէև չափազանց շատ բնական խելք ունի, բայց որի

համար նիւթական անկախութեան հասնելու ոչ մի միջոց արհամարհելի չէ...։ Հայի ընտանեկան կեանքը խիստ է, բայց ոչ թէ գերմանական ընտանեկան կեանքի պէս խիստ, որտեղ թէ հայրը, թէ մայրը, թէ երեխաները ճանաչում են իրանց իրաւունքները ու պարտաւորութիւնները, — ոչ, — հայի ընտանեկան կեանքի խստութիւնը ծագում է միապետական մի սկզբից։ Հայը չգիտէ սէրը ինչ է նշանակում, նա պսակվում է առանց սիրելու։ Ամուսին դառնալով նա կնոջ վերայ նայում է որպէս իր սեփականութեան վերայ, հայր դառնալով նա իր սեփականութիւն է համարում իր երեխաները։ Մի կամք է իշխում միայն ընտանիքի մէջ,—հօր կամքը,—մի համոզմունք ունի ընտանիքը,—հօր համոզմունքը,—մի խելք,—հօր խելքը։

V.

Հայը հասարակական էակ չէ։ Նորա համար հասարակութիւն չկայ, նա հայ է կանչում իրան միայն այն պատճառով, որ նա հայ դաւանութեան է պատկանում։ Նորա ամբողջ կեանքի և գործունէութեան առաջնորդող զգացմունքը եսականութիւնն է։

Նա հասարակութեան համար չէ հոգում, նա չգիտէ նուիրել հասարակութեանը իր բարոյական աշխատանքը։ Նա հոգում է իր անձի մասին, նա ապրում է իր համար։

Ինչպէս հոգեւոր հանգստութեանը, կեանքի բաւականութեանը հասնելու համար, նա իր ընտանիքի մէջ սպանում է կեանքը, ոչնչացնելով կնոջ և երեխաների անհատութիւնը,— այնպէս և նիւթական անկախութեանը հասնելու համար նա չէ վախենում իր նմանների իրաւունքները ոտնակոխ անելուց։

VI.

Այդ իմ նկարած տարրին պատկանում է Սունդուկեանցի Ս ր ո ւ թ ի ն ը։ Ուրեմն նա մեզ հին ծանօթ է, նա հայ է իր բուն բառի նշանակութեամբ։

Բայց ինչ ասեմ Պ է պ օ յ ի տիպի մասին։ Ես միայն այսքան գիտեմ, որ նա մեր բեմի վերայ նոր երեւոյթ է... Շատերից լսել եմ, որ հեղինակը իրական կեանքից չէ առել այդ տիպը, որ նա նորան հնարել է...։

Հեղինակը եթէ կամենում է ժողովրդական կեանքից առած ճիշդ մի պատկեր ներկայացնել, իրաւունք չունի տիպերը հնարելու։

Նա մինչև անգամ իրաւունք չունի երեւակայական տիպերի մէջ կերպարանաւորել ակիզբը հասարակութեանը նորան, որպէս դաստիարակիչ միջոց ներկայացնելու համար։

Հեղինակը բեմական ժողովրդական ստեղծուածի վերաբերութեամբ մի և նոյն կերպով պէտք է վարվի, ինչպէս վարվում է բնագէտը բնութեան վերաբերութեամբ։ Ինչպէս մի բնա-

գէտից պահանջվում է խոր և խղճմտամար հետազօտութիւնը, որի միջնորդութեամբ նա մի բոյսի կամ կենդանու նոր տեսակ է գըտնում, ներկայացնում քիմիական մի մարմին, կամ, հաստատում է փիզիքական մի օրէնք,— այնպէս և բեմական հեղինակից պահանջվում է գտնել և ներկայացնել հասարակութեան մէջ ձեւացած, բայց դեռ ևս չքննած մի տիպ, կերպել այս ինչ կամ այն ինչ ընտանեկան կամ հասարակական յարաբերութիւն...։

VI.

Սունդուկեանցի պիէսայի մէջ մենք գլխաւորապէս երկու ծայրայեղ զօրութիւն ենք գտնում, մի կողմից հարուստ Սրութինը,— միւս կողմից խեղճ ձկնորս Պէպօ։ Մէկը հարստացել է ամեն տեսակ անիրաւութիւնների միջոցով, աղքատներին կողոպտելով,—միւսը առօրեայ ծանր աշխատանքով է ապրում և իր աշխատանքի արդիւնքով պահում է իր մօր և քրոջը։ Մէկը աղքատները կողոպտելուց յետոյ պառկվում է մի նորահաս, թեթեւամիտ և գեղեցիկ կնոջ վերայ, միայն իր հեշտութեան զգացմունքին լրում տալու համար,—միւսը ոչինչ չունենալով բացի իր ջուխտ ձեռքը, զոհում է իր անձը իր քրոջ բաղդը գլուխ բերելու համար։

Ունեւորի տենչացած գաղափարն է վայելել հեշտասէր և յարմար կեանքը. չքաւորի կեան-

քի նպատակն է իր կարողութեան չափ օգնել և բաղդաւորացնել իր նմաններին։ Մէկը զուրկ է ընտանեկան զգացմունքից,—միւսը թէև տգէտ է և կոպիտ, իդէալական սէր ունի դէպի ընտանիքը։ Արութինը, իր նիւթական անկախութեանը հասնելու համար, երբ առիթ է պատահում, ոտնակոխ է անում ուրիշների իրաւունքները,—Պէպօն ցանկացած նիւթական բաւականութեանը հասնելուց յետոյ էլ, իր նմանների վիճակին և նոցա անտանելի դրութեանը համակրելով, պատրաստ է զոհել իր անձը, նոցա համար վրէժխնդիր լինելու....

VII.

Նոցա, որոնք չեն հաւատում, թէ Պէպօն կենդանի մարդ է, ես կպատասխանեմ թէ պ. Սունդուկեանցի նախընթաց խղճմտաբար գործունէութիւնը մեզ կատարեալ իրաւունք է տալիս կարծել, թէ Պէպօի տիպը մեր հասարակութեան կեանքի խոր հետազօտութեան արդիւնք է։

Մեզ մնում է շնորհաւորել հեղինակին, որ նա մեր ա ն հ ա ս ա ր ա կ ա կ ա ն տարրի մէջ մի հասարակական երևոյթ է գտել, մի հասարակական գործիչ է ներկայացրել։

VIII.

Ես ասացի թէ կան անհատներ, որոնք կարծում են թէ Պէպօի տիպը կենդանի չէ հայ հասարակութեան մէջ։ Բայց եթէ խոր կերպով քննենք Պէպօի բնաւորութիւնը, չնայելով նորա ազնւութեանը, հասարակական արժանաւորութիւններին, չնայելով թէ որքան նա վսեմ և համակրելի անձնաւորութիւն է,—մենք նորա մէջ դարձեալ կգտնենք հային յատուկ և խոշոր պակասութիւնները։ Պէպօն բաւական չէ ըմբռնել, իմ կարծիքով, աշխատող (մշակ) դասի ազնիւ նշանակութիւնը, որովհետև (կամ տգիտութիւնից, կամ հային յատուկ փառասիրութիւնից) նա անշուշտ աշխատում է իր քօյրը մի այնպիսի մարդին տալու (վաճառականին), որը նորա դասից բարձր է։ Այդ կողմից Կակուլին Պէպօից, կարծես, բարձր է, որովհետև անդադար կրկնում է նորան, թէ «купецъ»-ը մեր բան չէ։ Մինչև անգամ և այն ժամանակ, երբ փեսան նոցա խաբել է, աղջըկան անպատւել է (նորա պաչը ուրիշին տալով), երբ նա փողի չոր հաշիւը իր խոստացած սէրից բարձր է դասում,—մինչև անգամ այն ժամանակ, երբ փեսան ընտանիքին ապառնում է թէ ուրիշ աղջկայ վերայ պիտի պսակվի, եթէ այսօր և եթ չի ստանայ խոստացած բաժինքը,—այն ժամանակն էլ Պէպօն չտապում է Արութինից իր փողերը ստանալու,

որ կարողանայ այն վաճառականին տայ իր քոյրը։ Այստեղ ես Կակուլին Պէպօին գերազանցում է, ինչ որ վերաբերում է աշխատող դասի վիճակի գնահատելուն. «Աստուած մեզ թռչունգի համզըն է տւիզծի, ասում է նա Պէպօին, օր դադենք, օր ուտենք»։

IX.

Բայց, կարելի է, ես իզուր եմ մեղադրում Պէպօին։ Արդեօք ընթերցողներից մէկը այդ տողերը կարդալով, չի ասիլ ինձ, թէ ես հայ ժողովրդական կեանքին ծանօթ չեմ...։

Միթէ դուք, պարոն, չէք իմանում, լսում եմ ես ընթերցողի ձայնը, որ մեր թէ ստորին, թէ բարձր դասի ընտանեկան կեանքումը աղջիկը մարդուն տալը եղբօր գործ չէ, այլ մօր գործ է։

Շուշանն է շինել գործը, նա է խոստացել իր Կէկէլը վաճառականին,—իսկ աղջկայ եղբայրը (Պէպօն) հպատակում է ընդունված սովորութեանը, նա հպատակում է կատարած իրողութեանը, ինչպէս և երևում է շատ անգամ խօսքերից—«բանը բանեմէն անց է կացի»։ Պէպօն իր բոլոր ազնիւ յատկութիւններով, իր անկախ բնաւորութեամբ կարօղ է արդեօք, հայ լինելով, ամենևին ազատ լինել ամէն հայի մէջ արմատացած նախապաշարմունքներից։

Դուք նմանապէս կսխալվիք, կարծելով թէ Պէպօն այն պատճառով շտապում է, որ անպատճառ վաճառականին տայ իր քոյրը,—ոչ,—նա միայն մի բանին է հոգում,—թոյլ չտալ իր քրոջ անպատւութեանը։ Մի և նոյն զգացմունքը և Շուշանի մէջ է նշմարվում, մի և նոյնը արտայայտվում է և Կէկէլի գանգատներից և լացից։ Նորա խօսքերից չէ երևում, որ նա լաց լինէր սիրած մարդու կորուստի կամ անհաւատարմութեան վերայ,—ոչ, նոցա գանգատների մէջ տիրապետող զգացմունքը միայն այն է, որ նա անպատուած է, և չգիտէ ինչպէս պիտի այժմ նայէ իր ընկերուհիների երեսին...։

Իսկ Կակուլին, որը, ինչպէս ասում է Պէպօն, խելքին զօր է տալիս, միթէ մի նման դէպքում տարբեր կվարվէր,—կարելի է...։

X.

Ներկայացումից յետոյ ես առիթ ունեցայ խօսակցութիւններ լսելու. Արութինը Կիրակոսին նման է, ասում էր մէկը, ոչ, նա Մարկոսին նման է, պատասխանում էր միւսը և այլն...։ Մի կողմից սա բնական է, որ ժողովրդական կեանքից առնված գրուածքի մէջ ներկայացրած տիպերը նմանութիւն ունենն ծանօթ կենդանի անձների հետ. եթէ ոչ, պիէսան էլ կենդանի ժողովրդական երևոյթ մեզ չէր

ներկայացնել,—իսկ միւս կողմից ես ցաւելով մտածում եմ այն բանի վերայ, թէ որքան... և անզարգացած է մեր հասարակութիւնը (մինչև անգամ հասարակութեան բարձր դասը), որ նորան այնքան չէ հետաքրքրում գրուածի գաղափարը, ինչքան այս ինչ մարդի ա ն ձ ն ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը...։

Ափսոս, որ հասարակութիւնը, փոխանակ հեղինակի գաղափարը քննելու և ըմբռնելու, նայում է նորա ստեղծուածքի, որպէս մի որ և է անձնաւորութիւնը ներկայացնելու միջոցի վերայ։

„Մեղու“, 1871, № 19.

Վերջ առաջին հատորի

ՖՐԱՆՍԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ [1])

(Առաջին յօդուած)

—

Պատերազմ... այժմ ուրիշ բանի վերա խօսել չէ կարելի։ Յօդուածի նիւթը այսպիսի ժամանակում պէտք է պատերազմի խնդիր լինի։— Ֆրանսիային հաճելի չէ Գերմանիայի անումը։ Ֆրանսիայի տէրութեանը (չեմ ասում ազգին) հաճելի չէ, որ Գերմանիա ձգտում է դէպի միութիւնը, դէպի ուրիշ տէրութիւնների ազդեցութիւնից անկախութիւնը։

Երբ որ առաջին յեղափոխութենից յետոյ Ֆրանսիայի զօրքը Եւրոպայով էր անցնում, նա համակրութիւն էր գտնում բոլոր ազգերի մէջ... Թշնամիներն անգամ անյօժարութեամբ

---

1) Տպելով այս յօդուածը, պատասխանատուութիւնը թողնում ենք հեղինակի վերա։ Մեր հայեացքը Ֆրանսիայի համաշխարհային նշանակութեան վերա ուրիշ է։ Ֆրանսիայի կեանքի առաւել խորին ուսումնասիրութիւնը ուրիշ եզրակացութիւնների է բերում։ Ժամանակաւոր մութ վարագոյրը, որ պատել է Ֆրանսիայի կեանքը, թեթև, թոյլ աղջամուղջ է, որ իսկոյն պիտի չքանայ առաւօտեան ուրախ արշալոյսի փառահեղ ծագմամբ։ Խմբ.

պատերազմում էին նորա դէմ,—որովհետև ֆրանսիական զօրականների սրտերի մէջ դրոշմված էին ազատութեան և հաւասարութեան յաւիտենական գաղափարները…

Այժմ Ֆրանսիան կռւում է կայսրութեան դրօշակի տակ, …։ Ֆրանսիայի զօրքը առանց մի որ և իցէ գաղափարի պատերազմի է գնում։

Ընդհակառակն նա պիտի կռւի մի մեծ և արդար սկզբի դէմ։ Պատերազմի խնդիրն է արգելել Գերմանիայի ներքին և քաղաքական զօրութեան աճման։

Ուրեմն նա գնում է մի մշտնջենաւոր իրաւունքի դէմ, մի ազգի իւր անկախութիւնը հիմնելու, իւր միութիւնը հաստատելու իրաւունքի դէմ։

Եւ ի՞նչ ազգը, ի՞նչ տարրը…

Այն տարրը, որը իւր վայրենի, բայց բարոյական զօրութեամբ ոչնչացրեց հեթանոս Հռօմի անբարոյական կրթութիւնը։ Այն տարրը, որ քրիստոնէութեան զարգանալուն ամենապատեհ հող դարձաւ Եւրօպայում։ Այն տարրը, որ միշտ հակումն էր ցոյց տալիս դէպի ընտանեկան անհատական կեանքը։ Այն ազգը, որը իւր վանքերի մէջ մշակեց ընդհանուր գիտութեան և փիլիսոփայութեան սկիզբները, որը հեթանոս Հռօմի քաղաքական զօրութեան սահման դնելուց յետոյ, օգուտ քաղեց, սեպհականացրեց իւրան և զարգացրեց նորա արհեստը, գիտութիւնը և իրաւունքը։

Այն ազգը, որը առաջինը բողոքեց կա-

թօլիկ Հռօմի դէմ, երբ նա հեռացած սկզբնական մաքուր քրիստոնէութիւնից, զեղծում էր քրիստոնէական սկզբները և ուղարկում էր իւր նուիրակները Եւրօպա, մեղքերի թողութիւնը ժողովրդին փողով ծախելով…։ Այն ազգը, որի մէջ փիլիսոփայութիւնը տեսական կերպով մշակեց անհատութեան և ազատութեան գաղափարները, որին յատուկ են խիստ ընտանեկան կեանքը, համայնքի (օբշչինա) անկախութեան և անձնական սեփականութեան տնտեսական ձևերը։

Այն երկիրը, որ մտաւոր աշխատանքի ասպարէզում բազմաթիւ երևելի մարդիկներ արդիւնաբերեց… Գուտէնբէրգից սկսած մինչև Հէլմհօլցը…

Գերմանիան արդիւնաբերեց երաժշտական ամենախոր զգացմունքը, որը հաւասար է նորա փիլիսոփայական և բանաստեղծական զգացմունքին։

Գերմանիան դարձաւ բոլոր աշխարհի գիտութեան կենտրոնը։ Գերմանիայի մէջ այժմ ուրիշ երկիրներից ամենայաջողակ կերպով մշակվում են գիտութիւնները, նորա անկախ և ազատ համալսարանների միջոցով, մանաւանդ բնական գիտութիւնները, որոնց զարգացումը մի հասարակութեան մէջ վկայ է միշտ հասարակական կրթութեան բարձր աստիճանին…

Մի՞թէ Ֆրանսիայի ազգին, այն ժողովրդի ազգին, որը իւր յեղափոխութեան միջոցով յայտնել է մարդկութեանը անհատական և հա-

հասարական իրաւունքի բարձր գաղափարները, —Գերմանայի պէս արդիւնաւոր տարրը իրաւունք չպէտք է ունենայ միութեան ձգտել։

Մինչ մարդկային իրաւունք պաշտպանող ազգութիւնը պէտք է արգելք դնէ հարևան ժողովրդի ազգային շարժմանը։

Այժմ Ֆրանսիայի դրօշակը չէ նշանակում ինչպէս առաջ ազատութիւն, այլ նշանակում է բռնաւորութիւն։

Սա այն դրօշակ է, որի օգնութեամբ Ֆրանսիա Մէքսիկայի հասարակապետութիւնը, ընդդէմ ժողովրդի կամքի, զօրով կայսրութեան ձևի դարձրեց, և պատասխանատու դարձաւ Մէքսիկայի կայսրի դժբաղդ մահին,—այն դրօշակը, որի հովանաւորութեան տակ այս օրերս Հռոմի ժողովը յանդգնեց աբեղային Աստուծու յատկութիւնը շնորհել, Հռոմի պապի անսխալականութիւնը յայտնելով։

Եւ Ֆրանսիայի զօրքը կազմված չէ Գերմանիայի զօրքի պէս բոլոր քաղաքացիներից, չինականներից և ազնուականներից, արուեստաւորներից և համալսարանի ուսանողներից, —ոչ, Ֆրանսիայի զօրքը ժողովրդի մի առանձին դաս է, որի համար զինուորական կոչումը արուեստ է, որին օտար են ազգի օգուտները... այս այն զօրքն է, որը վաղուց վարժվել է քաղցած մշակները կամ անզէն հայրենակից բնակիչները փողոցներում կոտորել։

„Հայկ. Աշխ.", 1870 № 7–8.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

1 Բնական գիտութիւնների նշանակութիւնը դաստիարակութեան մէջ . . . 1
2 Երկու խօսք աղջկերանց դաստիարակութեան վերայ 15
3 Ազգային դրատուններ 27
4 Աշխատենք 41
5 Գերդաստանի ազդեցութիւն և համալսարան. 50
6 Բանի մի մտքեր 63
7 Ի՞նչ է կնամարդ 75
8 Երկուսից ո՞րն է լաւը 92
9 Նամակ դէպի խմբագրող 101
10 Կրկին համալսարանի մասին . . . 108
11 Գրականութիւն չկայ 120
12 Իդէալիստներ 139
13 Պիլօդօ դանլիճի ժողովները 151
14 Շարունակենք թէ ոչ 157
15 Ինչի՞ չենք հիմնում 167
16 Նամակ դէպի խմբագրութիւն . . . 180
17 Ցիւրիխի համալսարան 186
18 Հայկական քնարի առիթով 193
19 Կանանց աշխատանք Ֆրանսիայում . 202
20 Բարոյականութեան արտօնութիւն . 218
21 Գերմանացի իրաւաբանների ժողով . 228

22 Նամակ դէպի խմբագրութիւն . . . 234
23 Խառն ուսումնարանների խնդիր Հէյդլբերգում 237
24 Նամակ Փարիզից 242
25 Երկրորդ նամակ Փարիզից 249
46 Նոր-տարի 256
27 Մտքեր յայտնելու իրաւունք . . . 262
28 Նամակ դէպի խմբագրութիւն . . 267
29 Կօմս դը Մօնտալամբեր. 270
30 Հասկանանք վերջապէս 274
31 Մեծ Մխիթարի մահի տարեդարձը սուրբ Ղազարի վանքում. 285
32 Հասարակական կրթութիւն 292
33 Կ. Պօլսի երեկոներ 300
34 Բաւական չէ 305
35 Ցուցիկք հայրենեաց հայոց 313
36 Նամակ դէպի խմբագրող. 321
37 Ֆրանսիա և Գերմանիա 326
38 Ֆրանսիա ւ Գերմանիա 331
39 Աշխարհաբար նորաձևութիւնների հասարակական նշանակութիւն. . . . 335
40 Աշխատանքի բաժանութիւն. 346
41 Երկու ներկայացում 361
42 Գիտնական անսխալականութիւն . . 368
43 Մէկ մէկին մեղադրում ենք . . . 377
44 Ֆաուստ 383
45 Սունդուկեանցի «Պէպօ» 390
46 Գերմանիա ւ Ֆրանսիա 403

Гос. Библиотека
им. А. Мясникяна

«Մ Շ Ա Կ»

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է նոյն պրօգրամով և նոյն ուղղութեամբ, ամէն օր, բացի տօներին յաջորդող օրերից։

Տարեկան բաժանորդագինը 10 *րուբլի, կէս տարվանը* 6 *րուբլի։*

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Мшакъ»,
Արտասահմանից՝ Tiflis, Rédaction «Mschak».

Գինն է Ա րուբլի

«Մշակի» բաժանորդները այս հատորը ստանում են ձրիաբար՝ ուղարկելով ճանապարհածախսի համար 25 կոպէկ (մարկաներով)։

ՀՀ Ազգային գրադարան
NL0326347

22005